*Տպագրվում է «ՖԼՈՐԱ ՖԱՄԻԼԻ» հիմնադրամի հովանավորությամբ և «ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական հիմնադրամի օժանդակությամբ*

*This survey is published by financial assistance of the «Flora Family» fund and under sponsorship of the «Hayastan» All Armenian fund*

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ
№ 23

ТОРОСЯН Р.М.,
ХНКИКЯН О.С., ПЕТРОСЯН Л.А.

# ДРЕВНИЙ ШИРАКАВАН

(результаты раскопок 1977-1981гг.)

Издательство «ГИТУТЮН» НАН РА
Ереван-2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
№ 23

ԹՈՐՈՍՅԱՆ Ռ.Մ.,
ԽՆԿԻԿՅԱՆ Օ.Ս., ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ.Ա.

# ՀԻՆ ՇԻՐԱԿԱՎԱՆ

(1977-1981թթ. պեղումների արդյունքները)

А II 88932
Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն
Երևան - 2002

ՀՏԴ 902/904 (479.25)
ԳՄԴ 63 4 (2 Հ)
Թ 822

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Պ.Ս. Ավետիսյան

Թ 822 Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա. «Հին Շիրակավան». - Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, 259 էջ:

Աշխատանքում ընդգրկված են Շիրակավանի մ.թ.ա. III-I հազարամյակների նորահայտ ամրոց-բնակատեղիի և երեք դամբարանադաշտերի ուսումնասիրության արդյունքները: Բնակատեղիի և ամրոցի շերտագրական տվյալների և դամբարաններից հայտնաբերված հետաքրքիր նյութերի համադրությամբ որոշված է հուշարձանների ժամանակագրությունը: Հարավկովկասյան, առաջավորասիական և հարևան այլ երկրների համաժամանակյա հուշարձանների տվյալների օգտագործմամբ պարզված է Հին Շիրակավանի տեղը տվյալ համակարգում:

Գիրքը նախատեսվում է հնագետների, պատմաբանների և Հին Արևելքի պատմության ու մշակույթի մասնագետների համար:

Թ $\frac{0504000000}{703(02)-2002}$ 2002թ. ԳՄԴ 63.4 (2 Հ)

ISBN 5-8080-0501-9

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

# ՆԱԽԱԲԱՆ

1977թ. սկսված Ախուրյանի ջրամբարի շինարարությունը հրամայական դարձրեց Ջրափի - Երազգավորս գյուղերի միջև գտնվող տարածքի պատմամշակութային հուշարձանների հետազոտության և դրանք ոչնչացումից փրկելու խնդիրը, որի իրագործմանը և ձեռնամուխ եղավ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը: Մանրազնին ուսումնասիրելով նշված տարածքը, արշավախումբը Երազգավորս, Բայանդուր, Շիրակավան, Աղին, Ջրափի գյուղերի մերձակայքում հայտնաբերեց տարբեր դարաշրջանների բնակավայրեր ու դամբարանադաշտեր (***Р.М.Торосян, О.С.Хнкикян, Л.А.Петросян***, 1979, էջ 526): Այդ հուշարձանների շարքում առանձնանում է ծովի մակերևույթից 1480մ բարձրության վրա գտնվող դարավանդի լանջերին ու գագաթի հարթության վրա տեղադրված, ներկայիս Նոր Շիրակավան գյուղի հարևանությամբ, ինչպես և անմիջականորեն նրա տարածքում գտնվող բազմաշերտ հուշարձանը: Այն պեղվեց 1977-1981թթ. Պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման ու օգտագործման վարչության և նրա գիտաարտադրական արվեստանոցի միջոցներով: Պեղումներն իրականացրեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վազ հնագիտության բաժնի ջոկատը: Վերջինիս կազմում, գլխավորությամբ Ռ.Մ. Թորոսյանի (1977- 1981թթ.), ընդգրկված էին հնագետներ Օ.Ս. Խնկիկյանը (1977-1981թթ.), Լ.Ա. Պետրոսյանը (1977-1981թթ.), Լ.Ն. Բիյագովը (1977թ.), ՀՊՊԹ-ից հրավիրված Հ.Հ. Մնացականյանը (1977թ.), ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ա.Կ. Մեժլումյանը (1977-1981թթ.) և ճարտարապետներ Հ.Սանամյանն ու Ա.Գյուլամիրյանը: Լուսանկարները կատարել են Ռ.Թորոսյանն ու Ե.Վասիլյանը, իսկ գրչանկարները՝ Օ.Խնկիկյանը: Նյութերը վերականգնվել են արշավախմբի անդամների ու ՀՊՊԹ վերականգնման աշխատանոցի վարիչ Վ.Ղազազյանի կողմից: Օգտվելով առիթից հեղինակներն իրենց հաճելի պարտքն են համարում խորին շնորհակալություն հայտնել Լուսաղբյուր և Շիրակավան գյուղերի ղեկավարությանը, հատկապես Վ.Բարսեղյանին, Հ.Սանուկյանին, Բ.Միքայելյանին, Ս.Ալեքսանյանին և Կ.Մեծոյանին, որոնք իրենց ամենօրյա հոգատար վերաբերմունքով ու գործնական աջակցությամբ մեծապես նպաստեցին հնագիտական աշխատանքների անխափան ընթացքին: Այս տեսակետից հազիվ թե հնարավոր է գերագնահատել և Ախուրյանի շինտրեստի ղեկավարների, հատկապես աշխղեկ Մամիկոն Գրիգորյանի ուշադիր վերաբերմունքը Շիրակավան գյուղի հնագիտական հուշարձանների հանդեպ, ինչը և

պայմանավորեց դրանց մի զգալի մասը ավերումից ու ոչնչացումից փրկելը, քանի որ շինարարական աշխատանքները ծավալվել էին ոչ միայն ջրամբարի տարածքում, այլև՝ վերոհիշյալ դարավանդի վրա, ուր գտնվում էին տարբեր դարաշրջանների պատկանող, հիմնականում վերգետնյա նշաններից զուրկ դամբարաններ և այլ կառույցներ: Հուշարձանի և վերգետնյա նյութերի նախնական հետազոտությունը ցույց տվեց, որ այն ընդգրկում է ոչ միայն բարձունքի գագաթի հարթությունը, այլև՝ արևմտյան լանջերն ու ձգվում դեպի Հին Շիրակավան ընկած շուրջ 10 հա ընդգրկող տարածքը: Մշակութային շերտերի հզորությունն ու շերտագրությունը վեր հանելու նպատակով ստուգողական խրամատներից բացի օգտագործվեցին և հուշարձանի տարածքով անցնող հեղեղատների կտրվածքները: Հայտնաբերված նյութերը փաստեցին հուշարձանի բազմաշերտ լինելը: Կախված ռելիեֆից, հողմնահարությունից և բնակչության գործունեության ձևերից ու ինտենսիվությունից, տարբեր հատվածներում հնագիտական շերտերի հզորությունը տատանվում էր 0.3-3մ միջև: Դրանցից հայտնաբերված նյութերը թվագրվում են մ.թ.ա. III-I հազ., ինչը և հնարավորություն է տալիս հետևել նյանքի զարգացման ընթացքին բրոնզի և երկաթի դարաշրջանների տարբեր փուլերում: Մշակութաին շերտերի ժամանակագրական հաջորդականության, բնակավայրի ճարտարապետական-հատակագծաին առանձնահատկությունների, բնակչության կենցաղի, նրա նյութական և հոգևոր մշակույթի, այլ հարցերի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով, հուշարձանի տարբեր հատվածներում առանձնացվեցին երեք պեղավայր (տե՛ս ընդհանուր հանույթը, նկ. 1): Դրանցից *առաջինն* ընդգրկում էր բլրի արևմտյան լանջի մի հատվածն ու իջնում վերջինիս ստորոտը: Պեղված տարածքի ընդհանուր մակերեսն այստեղ կազմում է շուրջ 1700մ$^2$: Այս հատվածում աշխատանքներն ընթացան 1978-1981 թթ.: Պեղումներից պարզվեց, որ սկիզբ առնելով մ.թ.ա. III հազ., կյանքն այստեղ տարբեր հաճախականությամբ հարատևել է մինչև մ.թ.ա. I հազ. I քառորդը, որից հետո, մ.թ.ա. VIII-VIIդդ. հուշարձանի այս հատվածը վերածվել է դամբարանադաշտի:

*Երկրորդ պեղավայրը* գտնվում է նախորդից շուրջ 200մ արևելք և զբաղեցնում ավելի քան 1500մ$^2$ մակերես, որի տարածքով անցնող հեղեղատը այն երկու մասի էր բաժանել: Վերջիններս պայմանականորեն անվանված են աջակողմյան և ձախակողմյան հատվածներ: Մշակութային շերտն այստեղ տարածվում է բարձունքի երկթեք լանջերին:

*Երրորդ պեղավայրը կամ «ամրոցը»* գտնվում է դարավանդի գագաթին: Այս մասում հուշարձանը հյուսիս-արևմտյան կողմից կտրվում է զառիթափով, հարավում հասնում լանջերին տարածված բնակատեղին, իսկ արևելքից ու հյուսիսից շրջափակված է Նոր Շիրակավանի տներով ու վարելահողերով: Հուշարձանի այս մասում, որը ռազմական տեսակետից առավել անպաշտպան է, նախքան պեղումներն սկսելը, ուրվագծվում էին պարսպի և առանձին կառույցների հատակներ: Պեղումների համար ընտրվեց «Մինասի դար» կոչվող տարածքի հարավ-արևմտյան հատվածը, ուր 1979-1981թթ. պեղվեց մոտ 1500մ$^2$ մակերես:

Այս աշխատանքներին զուգահեռ ջոկատը ձեռնամուխ եղավ և բնակավայրի տարբեր կողմերում գտնվող երկու դամբարանադաշտերի հետազոտությանը (պեղվեցին 124 դամբարան): Դրանցից առաջինը գտնվում է բնակավայրից հյուսիս-արևելք տարածվող ընդարձակ հարթության վրա, ուր ներկայումս կառուցված է Նոր Շիրակավան գյուղը: Այս դամբարանադաշտի արևելյան սահմանը հասել է Գյումրի-Երևան երկաթգիծը, արևմուտքում՝ գրեթե բնակավայրի տարածքը, հարավում ընդհատված է վարելահողերով, իսկ հյուսիսում տարածվում է մինչև նորակառույց ավանի կենտրոնական հատվածը:

Երկրորդ դամբարանադաշտը գտնվում է բնակավայրից հարավ ընկած «ճերմակ հողեր» կոչվող հանդամասում: Այն արևելքից կտրվում է քարհանքով, հարավում՝ Լուսաղբյուր-Հին Շիրակավան գյուղամիջյան ճանապարհով, իսկ արևմուտքում ձգվում դեպի Հին Շիրակավան, հասնելով մինչև անտիկ ժամանակաշրջանին պատկանող Շիրակավանի հնավայրը, որի մերձակայքում հայտնաբերվեցին միջին բրոնզեդարյան երեք դամբարան: Ստորև ժամանակագրական հաջորդականությամբ քննենք պեղավայրերն ու դամբարանադաշտերը*:

* Շիրակավանի արշավախմբի մյուս ջոկատը պեղումներ կատարեց Ջրափի գյուղի մոտ գտնվող դամբարանադաշտում: Այդ աշխատանքները ղեկավարում էր Լ.Ն.Բիյագովը: Հայտնաբերված նյութի քննությունը դուրս է ներկա աշխատանքի շրջանակներից:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՎԱՂ ԵՎ ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

### 1. ՎԱՂ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐ

Գտնվում են առաջին պեղավայրի տարածքում (պեղ՝. Ռ.Մ.Թորոսյան, Օ.Ս. Խնկիկյան, Լ.Ա.Պետրոսյան), որտեղ, ինչպես պարզվեց պեղումների ընթացքում, առկա էրն տարրեր դարաշրջանների պատկանող շինություններ: Դրանցից ուշ ժամանակաշրջանին պատկանողները գգալիորեն վնասել էին վաղ բրոնզեդարյան կառույցների առանձին հատվածները, ինչը և խոչընդոտում էր վերջիններիս հատակագծային պատկերի ամբողջացմանը: Այդուհանդերձ առկա էին և անխաթար պահպանված կացարաններ, որոնց պեղումները բացահայտեցին ճարտարապետական հետաքրքիր մանրամասներ. պեղված երեք կացարանները կառուցված էրն բլրի լանջն ի վեր աստիճանաձև տեղադրված հարթակների վրա (*Ռ.Մ.Թորոսյան, Օ.Ս.Խնկիկյան, Լ.Ա.Պետրոսյան*, 1979, էջ 10-12):

*Կացարան առաջին* - գտնվում էր բարձունքի ստորոտում՝ պեղավայրի հարավ-արևմտյան եատվածում և իրենից ներկայացնում էր 6x7.5 մ չափերի քառանկյուն կառույց: Վերջինիս մուտքը, ամենայն հավանականությամբ, գտնվել է հյուսիս-արևմտյան չպահպանված մասում: Այստեղ, ենթադրվող մուտքից 55սմ հեռավորության վրա, արտաքին պասին էր միանում միաշար քարերով կառուցված, 3մ երկարությամբ ձգվող կորացող պատ, որը կարող էր կացարանը պաշտպանել դիմահար քամուց, ձյունից և անձրևից: Այս թույլ պատի արտաքին կողմում բացվեց սալաքարով ծածկված հոր (№ 1): Ինչ վորարերում է 45մ² տարածք զբաղեցնող կացարանի կառուցողական առանձնահատկություններին, ապա այստեղ կացարանի համար անհրաժեշտ հարթությունը ստացված էր բլրի լանջից անհրաժեշտ խորության (1.6մ) հողաշերտ հեռացնելու եղանակով. կացարանի արևելյան միաշար պատը (լայն. 45-50սմ), որի մակերեսի առանձին հատվածներում պահպանված էրն 6-8սմ հաստություն ունեցող կավածեփի շերտեր, հենված էր հողի կտրվածքին:

Կացարանի հյուսիսային և արևմտյան պատերի պահպանված բարձրությունը տատանվում էր 0.3-0.5մ միջև: Կացարանի հարավային կեսում, արևելք-արևմուտք առանցքով ձգվում էր երկշար քարերով պատրաստված, 50սմ լայնություն և 30-40

սմ բարձրություն ունեցող քարաշեն միջնորմ: Առանձնացված նեղ հատվածը հավանաբար ունեցել է տնտեսական նշանակություն: Թափված քարերի բացակայությունը նշված պատի երկու կողմերում կարող է փաստել, որ միջնորմը ցածր է եղել: Կացարանի այս առանձնացված հատվածում հայտնաբերվեցին նավակաձև աղորիքների (աղ. VI, 18), գավաթների (աղ. I, 5,6), հենակի (աղ. I, 8), կափարիչների (աղ, I, 10,11), սաջի (աղ. I, 9) ու գլանաձև իրանով անոթի (աղ. I, 12) մասեր: Կացարանի հյումիսային հատվածում, արևելյան պասփ երկայնքով, պատրաստված էր 17-20սմ բարձրություն և 40-50սմ լայնություն ունեցող հարթակ, որի վրա ձգվում էր կողք-կողքի դրված հինգ կարասների ռեկիրներ: Այդ ռեկորներից հնարավոր եղավ մասնակիորեն վերականգնել միայն կարասներից երկուսը (աղ. I, 1.2): Մեկ այլ, համեմատաբար ցածր (բարձր.10-15սմ), 2մ երկարություն և 60սմ լայնություն ունեցող հարթակ պատրաստված էր հյուսիսային պաափ տակ. հավանաբար այն հանդիսացել էր նստարան-մահիճ: Կացարանի կենտրոնում, միջնորմից ոչ հեռու, հատակի մեջ պատրաստված էր շրջանաձև ծիսական օջախ, որի տրամագիծը 135սմ էր, իսկ եզրերի բարձրությունը՝ 15սմ: Կավակերտ, խնամքով պատրաստված այս օջախի կենտրոնում ձագարաձև անցք էր արված: Օջախի շրջակայքում, ինչպես և դրա մեջ, ընկած էին կենդանագլուխ ելուստներով զարդարված եղջերավոր հենակների մասեր (աղ. II, 6-11): Դրանցից մեկը գրեթե ամբողջական էր (աղ. II, 8): Այստեղ գտնվեց և կավեց պատրաստված ճախարակաձև իր, որի կենտրոնում ընդերկայնական միջանցիկ անցք էր բացված (աղ. I, 5): Այս օջախի անմիջական հարևանությամբ, հատակի մեջ բացվեց ևս մեկը, որը լցված լինելով մոխրով, իրենից ներկայացնում էր փոքրիկ, միջին չափերի քարերով շրջափակված փոս: Սենյակի առանձին հատվածներից հայտնաբերված նյութերն են ոսկիե հերունը (աղ. V, 2), ոսկիից պատրաստված չորս իլիկների գլուխները (աղ. V, 4-7), գլաքարե սանրկոթերը (աղ. V, 8-9), կիկիչը (աղ. V, 12), տարատեսակ խեցանոթների մասերը (աղ. I, 3,4,7, III1-4), վանակատե ներդիրն (աղ. V, 13) ու ազնվացեղ եղջերուի եղջյուրը: Պեղումները ցույց տվեցին, որ կացարանը լքվել է երդեհի հետևանքով (նկ. 2, հանույթ II):

*Կացարան երկրորդ* - գտնվեւմ էր առաջինի հարավ-արևելյան անկյունից 3մ արևելք պատրասաված երկրորդ հարթակի վրա, որն առաջին կացարանի հատակից բարձր էր 2.2մ: Հարթակը արևմտյան կողմից ամրացված էր հյուսիս- արևելքից հարավ-արևմուտք 7մ երկարությամբ ձգվող, կենտրոնում թեքևակի կորացող, 0.6-0.7մ բարձրություն ունեցող միաշար պատով: Վերջինս կասեցնում էր հարթակի թեքությունները վերացնելու համար լցված հողի սահքը: Այստեղ ակնհայտ էր հարթակի ստացման այլ եղանակ. այն պատրաստված էր ոչ թե հողը հեռացնելու, փորելու ճանապարհով: այլ՝ առկա անհարթությունները, թեքությունները հողով ծածկելով ու այդ հողի սահքը կասեցնելու համար հենապատ կառուցելով: Հարթակների ստացման նշված եղանակները տեսնում ենք և Կառնուտի բնակատեղիում (***Бадалян Р.С.***, 1986): Նման հենապատ պատրաստված էր և նշված հարթակի հարավային կողմում: Վերջինս ձգվում էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Այս հենապաափ կենտրոնական հատվածը ավերվել էր ուշ ժամանակաշրջանի պատկանող № 13 հորի

կառուցման ընթացքում: Նշված հենապատից 0.7մ հեռավորության վրա ձգվում էր մեկ ուրիշը, որը պատկանելով ուշ ժամանակաշրջանի, ծածկել էր վաղ բրոնզի դարաշրջանին պատկանող № 11-12 իրար միացած հորերը (տրամագծերը՝ 1.1-1.3մ, խորությունները՝ 0.5-0.6մ): Այդ հորերից հայտնաբերվեցին խոշոր եղջերավոր անասունների 9 վեգ, կիսագնդաձև խուլ կանթ և անոթի բեկոր (աղ. III, 4): Ուշ ժամանակաշրջանի պատկանող հենապատի առկայությունը ցույց է տալիս, որ ինչպես վաղ բրոնզի դարաշրջանում, այնպես էլ հետագայում, բնակիչները հարթակները պատրաստել են նաև հողալիցքի միջոցով լանջի անհարթությունները վերացնելով և այդ հողալիցքը հենապատով ամրացնելով, Երկրորդ կացարանի միաշար քարաշեն պատերից պահպանված էրն հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածները (բարձր. 0.6-0.8մ): Ցավոք, երկրորդ կացարանի վատ պահպանվածությունը, որը հետևանք էր մ.թ.ա. I հազ. շինությունների և հորերի կառուցման, հնարավորություն չտվեց ամբողջական պատկերացում կազմել II կացարանի ներքին մանրամասների վերաբերյալ: Կարող ենք նշել միայն, որ պահպանված մշակութային շերտի հզորությունը կազմում էր 20-30սմ: Այս կացարանը ևս հրդեհված էր. կավածեփ հատակին ակնհայտ էրն հրդեհի հետքերը, ուր և ցրված վիճակում հայտնաբերվեցին գավաթների, հաստ պատերով ամանների, բաժակի, տարատեսակ քրեղանների բեկորներ, անվակի մանրակերտի մաս (աղ. III, 16), եղջյուրից պատրաստված գործիք (աղ. V, 1) և ոսկիից պատրաստված, հավանաբար պաեպանակ հանդիսացած իր (աղ V, 3):

*Կացարան երրորդ* - գտնվում էր նախորդից շուրջ 3մ արևելք և զբաղեցնում էր մոտ 60մ² տարածք: Այս կացարանի հարթակը պատրաստված էր լանջի հողաշերտը հեռացնելու եղանակով: Այս դեպքում ևս, կացարանի միաշար քարե պատր արևելյան մասում հենված էր եռղի կտրվածքին: Դիտվեց հետաքրքիր մանրամաս. հողի կտրվածքի և պատի միջև առկա էր կարծր կավազանգվածի շերտ, որը մատնանշում է հոսքային ջրերի մուտքը կացարան կասեցնելու ձգտումը: Այս կացարանից պահպանվել էին մինչև 2.3մ բարձրություն ունեցող երեք պատ, իսկ արևմտյանը, ուր հավանարար մուտքն է գտնվել, ավերված էր մ.թ.ա. I հազ. պատկանող կառույցովւ Կացարանի այս հատվածում, հատակի մեջ իջեցված էրն ուշ շրջանի պատկանող ուղղանկյունաձև ու շրջանաձև երեք փոս (խորությունը հաաակից՝ 20-25սմ), որոնք լցված էրն կավւսշաղախով (դրա մեջ գտնվեցին երկաթեդարյան խեցանոթների բեկորներ): Դրանց մոտ բացվեց մեկ հոր, որի մեջ գտնվեցին մ.թ.ա. I հազ. սկզրին պատկանող խեցանոթների բեկորներ, կենդանիների ոսկորներ: Դրանց մասին կխոսվե համապատասխան գլխում, այստեղ նշենք միայն, որ սենյակի հարավային պատի վրայով, հատակից 1.1մ բարձր, անցնում էր ուշ ժամանակաշրջանի պատի հատված: Կացարանի արևելյան, համեմաաարար անխաթար պահպանված մասում (շերսւի հզորությունը՝ 0.5-0.7մ), հատակից շուրջ 20սմ բարձրություն ունեցող հարթակի վրա, իրար զուգահեռ, երկու շարքով, կողք-կողքի, իրարից մոտ 0.5մ հեռավորության վրա փորված էին 12-15սմ տրամագիծ ունեցող փոսիկներ, որոնք հավանարար, ինչպես և առաջին կացարանում, նախատեսվել էրն կարասների ամրացման համար, չնայած կարասների բեկորներ այստեղ չհայտնաբերվեցին: Այս

փոսիկների և հորի միջև ռացվեց իրար միացած կիսաշրջանների տեսք ունեցող երկմասանի կավսկերտ օջախ: Վերջինիս պայտաձև, հատակից 20-30սմ ռարձրություն ունեցող կողերի միջև առկա էր 12-15սմ հաստության մոխրի շերտ: Այս կացարանում ևս հրդեհի հետքեր դիտվեցին: Այստեղից հայտնարերված նյութերն են գավաթների, կափարիչի, քրեղանների, այլ անոթների ռեկորները, հենակ-պատվանդանի, եռոտանի հենակի մասերը, կաիիկը, գլաքարից պատրաստված սանդկոթն (աղ. IV) ու մանգաղի ներդիրը (աղ. V, 11): Հաշվե առնելով, որ երեք կացարանների նյութերը համաժամանակյա են, նպատակահարմար ենք գտնում դրանք համատեղ հետազոտել:

*Կարասներ*- մեկը սև փայլեցրած մակերեսով, կարմիր աստառով, հաստ պատերով խեցանոթ է, որն ունի ուղիղ վիզ և դրսից հարթ կտրած շուրթ: Կարասի իրանը վերին մասում կլորանում է և վզին միացման եատվածում ձևավորում նեղ հարթակ, ուր և տեղադրված է կեսազնդաձև, զանգվածեղ կանթը: Ստորին կեսում իրանը շեշտակի նեղանում է: Նման կառուցվածքը իրանին ցածրադիր ու փքուն տեսք է հաղորդում (աղ. I, 1): Կարասներից մյուսի ձվաձիր իրանը դրսից շագանակագույն, իսկ ներսից կարմիր մակերես ունի: Անոթն ունի հարթ հատակ և գլանաձև վիզ: Իրանի հակադիր կողմերում ամիացված են կեսազնդաձև կանթեր (աղ.I, 2): Նման կարասներ հայտնի են Հառիճից, Շենգավթից, Էլառից, Կառնուտից և այլ վայրերից (Խանզադյան Է.Վ., 1967, էջ 62, նկ. 11: *Սարդարյան Ս.Հ.,* 1967, էջ 179: ***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 60-61, նկ. 16): Նշելով, որ նման կարասներ, զարդարված ուռուցիկ և ուռուցիկ - ներճկված զարդերով հայտնի են և Քորուջու-թեփեի մ.թ.ա. 2600-2100թթ. թվագրվող V շերտից և այլ վայրերից, Է.Վ.Խանզադյանը գտնում է, որ այդ եղանակով զարդարված կարասներն ու անոթները բնորոշ են դառնում մ.թ.ա. III հազ. II կեսում (*Խանզադյան Է.Վ.*, 1979, էջ 30):

*Գավաթներ* - ներկայացված են երկեւ տարբերակով, Առաջիններն ունեն եռամաս իրան ( աղ. I, 5-7, III, 1,2, IV, 4), իսկ երկրորդներն առանձնանում են համեմատաբար սահուն անցումներով (աղ. I, 4 IV, 1-3): Այդուհանդերձ երկու տարբերակների համար ընդհանուր են լայն բերաններն ու կարճ վզերը, որոնք ավարտվում են բարակող կամ թեթևակի դուրս թեքված շրթով: Առանձին նմուշների վզերի վրա պահպանված են կիսազնդաձև կանթեր: Անոթների մեծ մասը եարթաեատակ է. բացառություն է կազմում մեկը, որն ունի գոգավոր հատակ (աղ. IV, 4): Կարմիր աստառով, սև կամ շագանակագույն փայլեցրած մակերեսով (աղ. I, 5, III, 2,6, IV, 6) այս անոթների գերակշռող մեծամասնությունը անզարդ է: Առանձին նմուշների վզերը (աղ. IV, 5,6), մեկ դեպքում և իրանը, զարդարված են երկրաչափական (շեղանկյունիներ, եռանկյունիներ, գծեր) ու կենդանակերպ նուրբ փորագիր պատկերներով:

Ուշագրավ են մի քանի նրբախեցի բեկորներ, որոնց սև փայլեցրած մակերեսները զարդարված են ուռուցիկ (աղ. II, 2, III, 5-7, IV, 11), փոսիկավոր (աղ. III, 4) ու մեանդրներ հիշեցնող, գծերով լցված, փորագիր զարդերով (աղ.III, 8), շեղանկյունիներով ու եռանկյունիներով, որոնք ոչնչով չեն տարբերվում վերը նկարագրված նմուշից (աղ. III, 10): Ինչ վերաբերում է ուռուցիկ, հավելադիր զարդերին (դրանք հեշտութ-

յամբ պոկվում են անոթի հարթ մակերեսից), ապա դրանք հիմնականում ներկայացնում են գալարապարույրներ, զուգահեռ տարված գծեր, որոնց միջև երբեմն արված են հատիկածև զարդեր (աղ. III, 7): Վերջին երկու բեկորներից մեկը զարդարված է փայլեցմամբ ստացված ցանցապատկերով (աղ. III, 12), իսկ մյուսը՝ թույլ ծալքավորված մակերեսով եռանդագուռի ունի (աղ. III, 11) : Փայլեցրած զարդով մակերես ունեցող խեցանոթի զուգահեռը վաղ բրոնզեդարյան նյութերի շարքում հայտնի է Հառիճից (*Хачатрян Т.С.,* 1975, էջ 81), իսկ ծալքագոտիներով զարդարված անոթներ տեսնում ենք Շենգավթի II-IV շերտերում (*Սարդարյան Ս.Հ.,* 1967, աղ. L, 2, LXXX, 4):

Հանդիսանալով վաղ բրոնզի դարաշրջանի բնորոշ նյութերից մեկը, սահուն անցումներով իրան, եարթահատակ, կիսագնդաձև կանթեր ունեցող այս անոթները հանդիպում են և վաղ շրջանի համալիրներում: Այդ են փաստում Էլառի վաղ խմբի հիմնահողային դամբարաններից ու P.1 փոսորակից (*Խանզադյան Է.Վ.* 1979), Ջրահովտի IX- III շերտերից, Արկիկի ստորին շերտից*, Վանա լճի շրջակայքի հուշարձաններից (Burney C., 1958), Քյուլ-թեփե II (*Абибулаев О.А.,* 1965, աղ. II5-9), Օզնիից (*Куфтин Б.А,* 1948, աղ. XXXI, XL, XLIV) և այլ եուշարձաններից հայտնաբերված նյութերը: Շիրակավանում, սակայն, այս նյութերի հետ հայտնաբերված են և եռամաս իբանով, փոքրիկ գագավորվող եատակներով ու փորագիր զարդերով անոթներ: Վերջիններիս զուգահեռներն արդեն հանդիպում են Ջուջևան գյուղի մոտ գտնվող Ջաղացատեղ, Այրումի՝ Փոքր Շահլամ բնակավայրում (*Есаян С.А.,* 1976, էջ 17-33, 99-100), Ջրահովտի V-III շինարարական հորիզոններում, Արևիկի IV շերտում, Էլառի P, 3 փոսորակում և վաղ բրոնզի դարաշրջանի միջին փուլին պատկանող դամբարաններում (*Խանզադյան Է.Վ.,* 1979, էջ 50-55), Հառիճում (*Хачатрян Т.С.,* 1975, էջ 59-81) և մ.թ.ա. III հազ. II կեսով թվագրվող այլ հուշարձաններում, ինչը և թույլ է տալիս այդ թվագրությունն ընդունել և Շիրակավանի նյութերի համար: Նույն ժամանակով են թվագրվում և Կառնուտից եայտնաբերված, շիրակավանյան նմուշներին պատճենող նյութերը (*Бадалян Р.С.,* 1984, էջ 229-237): Նույն երևույթն է դիտվում և Քյուլ-թեփեում, որտեղ պեղող հնագետի խոսքերով արտահայտված. «ուռուցիկ զարդանախշերի տարրերը եանդես են գալիս առաջին շերտում և հանդիպում են II շերտի բոլոր հորիզոններում, իսկ փորագիր զարդանախշը դիտվում է միայն II շերտի վերին հորիզոններում» (*Абибулаев О.А.,* 1982, էջ 196):

*Քրեղաններ* - ներկայացված են սև (աղ. II, 1,3, III, 14,15,17-19, IV, 10), կարմիր (աղ. III, 20), շագանակագույն (աղ. IV, 8) ու բոսորագույն (աղ. IV, 9) փայլեցրած մակերեսներ ու կարմիր աստառ ունեցող ամանների մասերով: Դրանք սահուն անցումներ ունեցող կլորացող իրանով անոթներ են, որոնք ավարտվում են դուրս թեքված, անկյուն կազմող բարակող (աղ. II, 1,3, III, 14,15, IV, 8-10) կամ համեմատաբար զանգվածեղ, կտրվածքում եռանկյունաձև շրթով (աղ. III, 19): Մյուսների մոտ դրանք վերին մասում հարթ են կտրված (աղ. III, 17-18), իսկ վերջինների շրթերը երկթեք տեսք ունեն (աղ. III, 20): Բեկորների մի մասն անզարդ է, մյուսները զար-

* Պեղումները Է.Վ.Խանզադյանի: Նյութը հրատարակված չէ:

դարված են փորագիր երկրաչափական զարդերով (աղ. II, 3, IV, 9), ուռուցիկ նախշով (IV, 8), առանձին դեպքերում՝ սեղմմամբ ստացված գծապատկերներով (աղ.III, 17-18): Բեկորներից մեկի վրա առկա է փոսիկ և ուղղանկյունաձև ելուստ (աղ.II, 1), իսկ մեկ այլ նմուշ ունի ելուստաձև կեղծ կանթ (աղ. III, 14):

Նկարագրված տարրերակներից դուրս թեքված ռաբակռող շուրթերով քրեղաննեի զուգահեռները հայտնի են հետազոտվող ժամանակաշրջանի ինչպես վաղ (օր. Մեծամոր, Էլառ և այլն, տե՛ս *Է.Վ.Խանզադյան, Կ.Մկրտչյան, Է.Պարսամյան*, 1973, նկ.16-18), այնպես էլ ուշ փուլերում: Երկրաչափական նուրբ փորագիր զարդերով, անկյուն կազմող զանգվածեղ ու երկթեք կտրած շուրթերով թասերն ու քրեղանները, սակայն, տեսնում ենք վաղ բրոնզի դարաշրջանի ուշ փուլին պատկանող նյութերի շարքում (Գառնի, Էլառի P, 3 փոսորակ, Ջրաեռվտի վերին շերտ և այլն, *Է.Վ. Խանզադյան*, 1969, նկ. 62: Նույնի, 1979, 34-36, ***Есаян С.А.,*** 1976, աղ. V, 1) ինչը կրկին փաստում է Շիրակավանի տեղը վաղ բրոնզի դարաշրջանի ուշ փուլում:

Խոսելով երկթեք կտրած շուրթով քրեղանների մասին, նշենք և նույնաձև շրթով ամանը, որը փռված իրանի, ցածր նստուկի ձևով առանձնանում է վերը նկարագրվածներից (աղ. II, 4): Նման շուրթ ունի և ձգված իրանով անոթը, որի շուրթի տակ միջանցիկ անցքեր են բացված (աղ. I, 3): Վերջինիս սակավաթիվ զուգահեռները հայտնի են Այրումի II Շահլամից (***Есаян С.А.,*** 1976, էջ 24, աղ. 10, 5), Քեթիից և այլն:

*Գլանաձև աման և սաջ* - սաջն ունի ցածր կողեր, ուղիղ կտրած շուրթ և սև փայլեցրած մակերես (աղ. I, 9): Վերջինիս վաղ ձևերն են Ժեղուտի էնեոլիթյան բնակավայրից հայտնաբերվածները (*Թորոսյան Ռ.Մ.*, 1976, նկ.14), իսկ վաղ բրոնզեդարյան մշակույթում այդպիսիները հայտնի են Ջաղացատեղի ամիոցից (***Есаян С-А.,*** 1976, աղ. IV, 1-3), Դվինից (***Кушнарева К.Х.,*** 1977, նկ.2), Շենգավթից, Յառիճից (***Хачатрян Т.С.,*** 1975, նկ.22-29), Թրիլիսիից (***Абрамишвили В.М., Султанишвили И., Кахиани К., Окропиридзе Н.,*** 1978, նկ. 8,13) և այլ վայրերից: Դկինից, III հազ. II կեսով թվագրվող նյութերի շարքում (***Кушнарева К.Х.,*** 1977, նկ. 4) իր զուգահեռներն ունի և ամաններից երկրորդը, որը նախորդից տարբերվում է դեպի ներքև թեքվակի լայնացող կողերով ու մակերեսի գորշ անփայլ գույնով: Ամանի հարթ կտրած շուրթի տակ տերևաձև փոսիկ է արված, որի տակ տարված են անկանոն փորագիր գծեր: Ամանի արտաքին մակերեսը հարդարված է լաքով կամ խոստ գուղձով (աղ. I, 12):

*Կափարիչներ* - սև կամ կարմիր փայլեցրած մակերեսով սկավառակաձև իրեր են, որոնց կենտրոնում ամրացված է կիսագնդաձև կանթը: Դրանցից մեկը արտաքինից զարդարված է զույգ-զույգ անկյունաձև տարված փորագիր գծերով (աղ. IV, 12): Կափարիչներից մյուսի արտաքին մակերեսը զարդարված է ուռուցիկ համակենտրոն շրջաններով (աղ.I, 10) Այս կափարիչների զուգահեռներն են Գառնիից, Էլառից, Ջաղացատեղի ամրոցից, Յառիճից, Քեթիից և բազմաթիվ այլ վաղ բրոնզեդարյան հուշարձաններից եայտնաբերվածները (*Խանզադյան Է.Վ.*, 1969, նկ. 66: Նույնի, 1967, նկ.19: ***Есаяан С.А.,*** 1976, աղ. IV: ***Хачатрян Т.С.,*** 1975, նկ. 34):

*Բաժակ*- կարմիր փայլեցրած մակերեսով, հարթաեատակ, դեպի վեր թեքևակի

լայնացող կողերով անոթ է, որն ավարտվում է շեշտակի առանձնացող, կողից ելուն-դագոտու տեսքով անջատվող շուրթով: Վերջինիս վրա պահպանված է կիսագնդաձև կանթ (աղ. III, 13): Խեցանոթների այս տեսակի հայտնի է Շենգավիթից, Գառնիից, Դվինից, Էլառից, Բարա-Դերվիշից, Գալգալաթլի I, Շերոհայի դամբարանադաշտից (*Խանզադյան Է.Վ.*, 1979 , էջ 53, նկ. 76: Նույնի, 1969, էջ 57, նկ. 54: ***Кушнарева К.Х.,*** 1977, էջ 10 նկ. 10: ***Исмаилов Г.С.,*** 1977, աղ. III: ***Мунчаев П.М.,*** 1975, նկ.29) և այլ հուշարձաններից: Այդուհանդերձ իիշատակված նմուշները այս կամ այն մանրամասնով (որոշ դեպքերում զուգավորված կամ ուղիղ կողեր, շուրթի ոչ ընդծվածություն և այլն) տարբերվում են Շիհակավանի նմուշներից, որը լրացնում է մինչ այժմ հայտնի ձևերը:

*Հենակ-պատվանդաններ* - մի քանի տարբերակի են բաժանվում: Դրանցից մեկը միածածկ, եռոտանի պատվանդանի մաս է, որի եռանկյունաձև հարթակի արտաքին մակերեսին պահպանված է ուռուցիկ գալարազարդի հատված (աղ. II, 6): Նման պատվանդաններ հայտնի են Դվինից, Շենգավիթից, Շրեշ-բլուրից, Հառիճից, Շահիլամի ամրոցից, Գառնիից և այլ հնավայրերից:

Այլ խումբ են կազմում երկճյուղ տեսք ունեցող հարթահատակ հենակները: Սրանց վեր ձգվող եղջյուրներն ավարտվեւմ են կենդանագլուխ ոճավորված քանդակներով (աղ. II, 7-11): Այս տարբերակե զուգահեռները ոչ միայն վերը թվարկված հուշարձաններում են, այլև՝ Փոքր Ասիայում, Կիլիկիայում և Պաղեստինում (*Diamont S.* and *J. Rutter* 1969, էջ 147- 177):

Հենակ-պատվանդանների մյուս տարբերակի ճախարակաձև է, որը կենտրոնում միջանցիկ անցք ունի (աղ. II, 5): Այս իրի ձևն են հիշեցնում Շենգավիթից, Գառնիից, Շրեշ-բլուրից և այլ վայրերից հայտնաբերված «բրգաձև» կամ «կոնաձև» հենակ-պատվանդանները:

Հենակ-պատվանդանների վերջին խումբն են կազմում լայնաբերան, դուրս թեքված շրթով, կլորացող իրանով անոթները, որոնցից մեկի սև փայլեցրած մակերեսին սանրաձև գարդանախշ է պահպանված (աղ. IV, 7): Նման հենակներ հայտնաբերվել են Էլառի դամբարաններում, Շրեշ-բլուրում, Բջնիում, Շենգավիթում և բազմաթիվ այլ հուշարձաններում (տե՛ս *Խանզադյան Է.Վ.*, 1969, էջ 69-70):

*Այլ նյութեր*- պեղածոների վերջին խումբն են կազմում անվակի մանրակերտը, ծանրոց - կախիկը, ոսկրե հերուններր, պահպանակի, իլիկների գլուխները, կոկեչները, սանդկոթերը, մանգաղի ներդիրը և այլ գործիքներ: Թվարկվածներից անվակի մանրակերտը պատրաստված է կավից. ունի կարմիր մրոտված մակերես (աղ. III, 16): Մանրակերտն իրենից ներկայացնում է կենտրոնական թմբուկով զանգվածեղ անիվ: Նշենք, որ Հառիճից հայտնաբերված է կավակերտ սայլի ամբողջական մանրակերտ:

Վաղ բրոնզեդարյան պեղավայրերում հաճախ են հանդիպում կախիկ-ծանրոցներ, որոնք պատրաստված են ինչպես թեթև քարերից, այնպես էլ խեցաբեկորներից: Շիրակավանից հայտնաբերվածը պատրաստված է սև փայլեցրած մակերես ունեցող ամանի բեկորից: Իրը թերի է. պահպանված մասում առկա է միջանցիկ անցքի հատվածը (աղ. IV, 15):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում ոսկուց պատրաստված գլանաձև իրը, որն ամենայն հավանականությամբ ականջօղ է եղել և անասունի վզին է կապվել: Այն կենտրոնում փոքր-ինչ կորացող տեսք ունի. ծայրերից մեկը հարթ է կտրված, մյուսը կիսաշրջանաձև հանվածք ունի: Իրի եզրի մոտ միջանցիկ անցք է շաղափված (աղ. V, 3): Այս իրը զուգահեռն է Ռաս-Շամրայի մոտ գտնվող Քալաաթ-Էր-Ռուսից՝ Կիրբեթ - Կերակյան նյութերի հետ հայտնաբերվածը (*Schaeffer Cl.*, 1948, էջ 41, աղ. XV, 4): Ինչ վերաբերում է ոսկուց պատրաստված իլիկների գլուխներին (աղ. V, 4-7), եղջյուրից և ոսկորներից պատրաստված եերուններին (աղ.V, 1-2), գլաքարե սանդկոթ-ծեծիչներին (աղ. IV, 13, V, 8-9), կոկիչին (աղ. V, 12), նավակաձև աղորիքներին (աղ. VI, 18), մանգաղի ներդիրներին (աղ. V, 11), անդեզիտո-բազալտից (աղ. V, 10) և վանակատից պատրաստված քերիչներին (աղ. V, 13), ապա դրանց զուգահեռները սփռված են բոլոր հուշարձաններում և գոյատևման երկար ժամանակաշրջան են ընդգրկում:

Հանրագումարի բերելով նյութերի քննության արդյունքները, տեսնում ենք, որ դրանց մի մասը հանդիպելով բոլոր դարաշրջաններում, թվագրության համար էական նշանակություն չունի, իսկ մյուսները, բայց հատկապես խեցեղեն արտադրանքի առանձին նմուշներ, հանդիպում են ինչպես հետազոտվող ժամանակաշրջանի ավելի վաղ, այնպես էլ հետագա փուլերում: Ինչպես տեսանք, այդպիսիներից են սահուն անցումներով իրան, կիսագնդաձև կանթեր և հարթ հատակ ունեցող ամանները: Այս նյութերին զուգահեռ առկա են և իրանի եռմասանի անցումներով, սիրամարգի երկրաչափական ու հավելադիր զարդերով տարբեր տեսակների խեցանոթների բեկորներ, որոնք հանդես են գալիս մ.թ.ա. III հազ. II կեսում: Հետևաբար պեղված կացարանները կարող են թվագրվել մ.թ.ա.. III հազ. III քառորդով,

## 2. ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Այս ժամանակաշրջանին են պատկանում չորրորդ կացարանն ու դամբարաններից երեքը (կացարանի պեղող Օ.Ս.Խնկիկյան):

Չորրորդ սենյակը բացվեց երրորդ կացարանի հյուսիսային պատի հարևանությամբ, նույն հարթության վրա, ինչը և ցույց է տալիս, թե № 4 սենյակը կառուցողները կտրել, հեռացրել են վաղ բրոնզեդարյան շերտը: Այդ են ապացուցում և № 4 սենյակի հատակի տակից հայտնաբերված վաղ բրոնզեդարյան խեցանոթների սակավաթիվ բեկորները: Չորրորդ սենյակի 9մ երկարություն ունեցող արևելյան պատը ձգվելով հյուսիսից հարավ, կիրանում էր հարավային անկյունում, որտեղ և, անկյունից 2.5մ դեպի հյուսիս, 1.4մ լայնությամբ ուղղանկյունաձև բացվածք կար: Ամենայն հավանականությամբ այս բացվածքը մուտք էր հանդիսանում, որով IV սենյակի հաղորդակցվել է արևելյան կողմում գտնվեղ հարևան սենյակի հետ: Վերջինս պեղել չհաջողվեց: Սենյակի արտաքին մուտքը բացվեց հարավային՝ արևելքից-արևմուտք 7մ երկարությամբ ձգվող պատի մեջ: Թեթևակի խաթարված, 1.5մ բացվածք ունեցող այս մուտքի մոտ բացվեցին 15-20սմ բարձրություն ունեցող երկու կավա-

կերտ ասափճան: Ցավոք, IV սենյակը ևս զգալիորեն խաթարված էր ուշ շրջանի կառույցների պատճառով: Այդուհանդեձ պեղումներից պարզվեց, որ այս կացարանում առկա են շինարարական երկու հորիզոն, որոնց միջև, սակայն, ժամանակագրական որևէ ընդհատում չի եղել: Ստորին՝ առաջին հորիզոնում, մշակութային շերտի հզորությունը կազմում էր 0.7մ, իսկ երկրորդ՝ վերին հորիզոնում՝ 0.5մ: Պեղումներից պարզվեց, որ այս կացարանը սկզբնապես տնտեսական նշանակություն է ունեցել: Այդ էին փաստում ստորին հորիզոնի շինարարական մանրամասները. 70սմ հզորություն ունեցող այս շերտում, արևելյան պասյի մեջ բացված մուտքից փոքր-ինչ հարավ, տեղադրված էր հատակագծում քառանկյունաձև, 1.2x1մ չափերի գետնափոր օջախ: Վերջինիս եարևանությամբ, մինչև կառույցի անկյունն ընկած տարածքը, ծգվում էր ամբողջությամբ մոխրով լցված փոս: Օջախում պարզ նկատվում էր կրակի երեք շերտ: Դրանցից առաջինը՝ ստորինը, առաջացել էր բարակ ճյուղերի, վերին երկուսը՝ քակորի այրման հետևանքով: Վերջիններս միմյանցից բաժանված էին 2-3սմ հաստություն ունեցող, հողի հետ խառնված մոխրի շերտով: Բնական է, որ օջախի մեծությունը կարող էր պայմանավորված լինել սենյակը որոշակի ջերմությամբ ապահովելու ծգտմամբ:

Կացարանի հյուսիսային հատվածում բացվեցին տարրեր ձևերի փոսեր, որոնք իրարից անջատված էին մայր հողի բարակ պատերով: Այդ փոսերից մեկը (№ 22), որ գրեթե ուղղանկյունաձև էր, ձգվում էր արևելյան պասփ երկայնքով:

Այստեղից հայտնաբերվեցին խեցանոթների բեկորներ (աղ. VII, 3,8,13) և կենդանիների ոսկորներ: Այս փոսի վրայով: հյուսիսից հարավ ձգվում էի ուշ շրջանի կառույցի պատի հատված, որից պահպանված էր արևելքից արևմուտք տարված մասը: Նշված փոսից (№ 22) արևմուտք և հյուսիս, կողք-կողքի պատրաստված էին ևս չորս փոս (№ 18-21), որոնցից եայտնաբերվեցին տարրեր խեցանոթների բեկորներ (աղ. VII): Ի՞նչ նպատակի են ծառայել կացարանի տարածքը փոքրացնող և մարդուն ազատ շարժվելու հնարավորությունից զրկող այս փոսերը, դժվար է ստույգ պատասխանել: Կարելի է ենթադրել միայն, որ սրանք տնտեսականից բացի (օր. մթերքների ամբարում), կարող էին ունենալ և այլ նշանակություն. չի բացառվում նորածին կենդանիների համար տաք անկյուն ստեղծելը (այստեղից էլ մեծ օջախի և որոշակի ջերմության անհրաժեշտությունը), ինչպես այդ դիտված է Ուչ-թեփեի համանման կառույցում (*Иессен А.А*, 1965, էջ 111): Ակնհայտ է նաև, որ այս փոսերի կարիքը IV սենյակի բնակիչները երկար չեն զգացել (հավանաբար դրանք պետք են եղել մինչև նորածինների մեծանալը), որովհետև որոշ ժամանակից հետո նրանք լցնելով այդ փոսերը, տվադել են հատակի և սենյակը վերափոխել բնակելի տարածքի: Ժամանակագրական այս անընդմեջությունը ակնհայտ է դառնում IV սենյակի ստորին և վերին հորիզոններից հայտնաբերված նյութերի քննության ընթացքում: Համեմատության համար այդ նյութերը ներկայացվում են ըստ հորիգոնների չրացառելով, որ նախքան փոսերը ծածկելը, դրանց մեջ կարող են լցված լինել և կոտրված ամանների բեկորներ: Այս դեպքում դիտակցարար շրջանցվում են վանակասից պատրաստված գործիքներն ու տարրեր ձևերի ցլեպները: Նշենք միայն, որ

վանակատի այս արտադրանքը ներկայացված լինելով միջուկներով (աղ. VI, 19), ներդիրներով (աղ.VI, 20,23,29,30), քերիչներով (աղ. VI, 21,22,24-28) ու այլնայլ ցլեպներով, կազմում է 475 նմուշ: Արտադրական թափոնի նման առատությունը կարող է խոսել վանակատի տեղում մշակելու մասին: Թվագրող չեն և նավակաձև աղորիքը (աղ. VI, 18), գլաքարից պատրաստված կոկիչ-հղկիչները (աղ. VI, 10,11,16) ու սանդկոթերը (աղ. VI, 12,17): Նույնը կարելի է ասել և բազալտից պատրասված տարբեր ձևեր ու մեծություններ ունեցող սանդերի մասին (աղ. VI, 3-6): Սովորական են և, այսպես կոչված, «անվակների մանրակերտերը»: Դրանցից մեկը (I շերտ) պատրաստված է վաղ բրոնզեդարյան հաստալսեցի անոթի բեկորից (աղ. VI, 13): Նույն չափերն ունեն և տուֆից պատրաստված համանման իրերը (աղ. VI, 14,15): Չժխտելով այս նյութերի «անվակի» մանրակերտ հանդիսանալը, նշենք որ այդպիսիները կարող էին օգտագործված լինել և ջուլհակության բնագավառում որպես ծանրոց-կախիկներ կամ իբրև իլիկի գլուխ: Չի բացառվում, օրինակ, և այս նյութերի որպես զայլիկոնի բաղադրիչ մաս (առավել խոշորները) ծառայած լինելը: Քարից պատրաստված նյութերի շարքում առանձին հետաքրքրություն են ներկայացնում «աղամանն» ու թասը. դրանց կանդրադառնանք հետագա շարադրանքում: Այստեղ նշենք, որ գոյատևման երկար ժամանակաշրջան են ընդգրկում և ոսկրից պատրաստված իրերը: Վեջիններիս շարքում, կիրառման տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում ողկված մակերեսով և երկու ծայրերում տաշած, խողովակաձև սնամեջ իրը, որի նշանակությունն առայժմ պարզ չէ (աղ. VIII, 21): Այս իրի հետ երկրորդ շերտից հայտնաբերվեց և եղնիկի եղջյուրից պատրաստված գործիք, որի մեկ եզրը երկու երեսներից տաշված էր ու սրված (աղ. VIII, 23): Նույն ձևն ուներ և I շերտից հայտնաբերված, մանր եղջերավոր անասունի եղջյուրից պատրաստված համանման իրը (աղ. VII, 19): Հետաքրքիր է և եղջյուրից պատրաստված մեկ այլ գործիք: Այն կիսված և հղկված է երկայնական առանցքով (աղ. VIII, 22): Գործիքներից մյուսի մեկ ծայրն է հարթ կտրված (աղ. VIII, 25): Ամենայն հավանականությամբ ջուլհակության բնագավառում է օգտագործվել եղնիկի եղջյուրից պատրաստված, հղկված մակերեսով իրը, որի մեկ երեսին պարզ երևում են թելի շփումից առաջացած կտրվածքներ (աղ. VIII, 26): Ինչ վերաբերում է ոսկրից պատրաստված մյուս նյութերին, ապա դրանք ներկայացված են հիհսի գլխով (աղ.VIII, 24) և աշխատանքային ծայրը կոտրած հերունով (աղ. VII, 20):

Առավել հազվադեպ հանդիսացող նյութերից են II շերտից հայտնաբերված զուրգի կոսյակն ու բազալտե խոշոր մուրճը: Դիորիտից պատրաստված զուրգը տանձաձև է: Իրի կենտրոնով անցնող միջանցիկ անցքը ստացված է միակողմ շաղափման եղանակով (անցքի տրամագիծը վերևում 8մմ է, իսկ հիմքում՝ 1.3սմ, տե՛ս աղ. VI, 1): Ինչ վերաբերում է մուրճին, ապա այն վերին մասում հորիզոնական և ուղղահայաց ակոսներ ունի կոթն ամրացնելու համար (աղ.VI, 2): Նման մուրճեր հայտնի են Կողբի և Նախիջևանի հնագույն շահագործման հետքեր ունեցող աղահանքերից (*Лев Д.М.,* 1934, էջ 19), Ձվարթնոցից, Շրեշ-բլուրից և այլ վայրերից (*Гуммель Я.И.*, 1938, էջ 19: *Սարդարյան Ս.Հ.,* 1947, նկ. 47, 4):

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

Վաղ բրոնզեդարյան հուշարձաններում իր զուգահեռներն ունի և գուրգի կրսյակը, որը լավագույնս փաստարկվում է էջմիածնից գտնված նմուշով (*Սարդարյան Ս.Հ.,* 1967, աղ. LV, 1): Նման զուրգեր հայտնի են Շենգավիթից, Թրիալեթիից, Կարմիր-Վանքից և միջին բրոնզեդարյան այլ հուշարձաններից (***Куфтин Б.А.,*** 1941, էջ 101, աղ. CXV: ***Пиотровский Б.Б.,*** 1949, էջ 48):

Նյութերի հաջորդ խումբն են կազմում խեցանոթները: Դրանք ստորին հորիզոնում ներկայացված են կճուճներով: քրեղաններով, թասերով և զավաթներով: Թվարկված տեսակներից կճուճները հայտնաբերված են առավել կամ նվազ չափով ամբողջացող իրենց նմուշով և որոշակի ձև չտվող առանձին անոթների բեկորներով: Անոթներից երկուսն ունեն գնդաձև իրան, կարճ, թեթևակի գոգավորվող վիզ և դեպի դուրս կլորացող շուրթ: Կճուճներից մեկը, որը գտնվեց № 22 փոսից, զարդարված է ալիքաձև փորագիր գծով: Անոթի սև, անփայլ մակերեսը միոտված է, որի վրա ռփտվում են խոտի գույծով կամ յաթով վոկելու, իսկ ներքին մակերեսին առկա են անիվի պտույտից առաջացած հետքեր (աղ. VII, 3): Ինչ վերաբերում է մյուս կճուճին, ապա դրա սև փայլեցրած մակերեսը զարդարված է վզի հիմքն ու ուսը երկու շարքով գոտևորող հորիզոնական և ալիքաձև ըջջաշար ժապավեններով (աղ. VII, 4): Կճուճներից մյուս երկուսի իրանները փքուն են և ավարտվում են դուրս ճկված ու թեք կտրած շուրթով: Դեղնադարչնագույն, միոտված մակերեսներով այս կճուճները զարդարված են վերադիր զոսփներով, ակոսագծերով ու փորագրմամբ ստացված խաչաձև գծերի շարքով: Վերջիններս առկա են և անոթների շրթերին (աղ. VII, 1,2): Կճուճներից վերջինը գունազարդ անոթի բեկոր է: Այն ունի գնդաձև իրան և դուրս թեքվող շուրթով ավարտվեղ կարճ վիզ: Անոթի կարմիր ներկած մակերեսը զարդարված է սև ներկով արված հորիզոնական գծով: որին գագաթներով հպվում են եռանկյունաձև պատկերներ ու գալարներ (աղ. VII, 6):

*Քրեղաններ*- ներկայացված են չորս տարբերակով: Առաջին տարբերակում ենք դասում չորս նմուշ: Դրանք միանման՝ կլորացող իրաններով, կարճ, ուղիղ բարձրացող վզով ամաններ են, որոնց սև փայլեցրած (աղ. VIII, 12,15), դեղնականաչավուն (աղ. VII, 11) ու սև անփայլ (աղ. VII, 13) մակերեսները զարդարված են կետագծերով ստացված անկյունաձև ու կամարաձև գոտիներով (աղ.VII, 12,15) և կամ բջջաշարով ու փորագրմամբ ստացված, նույն ձևն ունեցող ժապավեններով: Վերջին դեպքում ժապավենը լցված է փորագիր գծիկներով:

Քրեղանների երկրորդ տարբերակը է ներկայացնում սև փայլեցրած մակերեսով ամանը, որը նույնպես կլորացող խոր իրան ունի, բայց այս դեպքում այն դուրս ճկվող, կլորացող շրթին է միանում թեթևակի գոգավորվող բարձր կողով: Ամանի ուսը գոտևորված է ելունդաժապավենով, որից ցած կետիկներով ստացված ալիքապատկերը օղակում է ամանի իրանը: Ալիքների միջև կետերով ստացված զույգ-զույգ գծեր են իջեցված (աղ. VII, 16): Ներս զոգավորված վիզ և դեպի դուրս թեքվող, թեթևակի կլորացող շուրթ ունի և քրեղաններից հաջորդը, որի իրանը վզին է միանում համեմատաբար շեշտված անցումով: Ամանի դարչնագույն փայլեցրած մակերեսը ուսի մասում զարդարված է փորագիր հորիզոնական գծերով և անկյունաձև պատկերներով: Վեր-

ջինները լցված են փորագիր հատվող գծերով (աղ. VII, 10): Բեկորներից 'վերջին երկուսը գունազարդ են: Դրանցից մեկը դեղնավարդագույն մակերեսով, կլորացող իրանով խոր աման է, որն ավարտվում է դուրս ճկված շուրթով, Ամանի ուսը զարդարված է դարչնաբոսորագույն ներկով ստացված, թեք գծերով լցված շեղանկյունաձև պատկերների շղթայով (աղ. VII, 8): Բեկորներից վերջինը դուրս թեքվող շուրթ ունի: Ամանի մակերեսի կարմիր հիմնագույնի վրա առկա է սև ներկով ստացված, կրկնասակրի տեսք ունեցող պատկեր, որը հատվելով ուղղահայաց գծով, լցված է ցանցկեն զարդանախշով (աղ. VII, 9):

*Թասեր, գավաթներ* - մի քանի նմուշով հայտնաբերված այս անոթները ներկայացված են առանձին տարբերակներով: Դրանցից գավաթը սև, ազաթափայլ մակերեսով անոթ է, որի սահուն անցումներով, գոտկամասում լայնացող և կլորացող իրանն ավարտվում է դուրս թեքված սրվող շրթով: Անոթի գոտկամասում առկա են ելուստազարդեր (աղ. VII, 7): Այս անոթի ձևը շատ մոտ է վաղ բրոնզեդարյան գավաթ-կճուճներին:

Ամանների հաջորդ խումբն են կազմում երկու տարբերակով ներկայացված թասերը: Սրանք մի դեպքում համեմատաբար ուղիղ կողերով, սրվող շուրթով, բացդարչնագույն մակերեսով ամաններ են, որոնցից մեկը իրանի ստորին մասում հավելադիր ալտկրկազարդեբ ունի (աղ. VII, 14,18), իսկ մյուսում՝ ձևավորում են դեպի վեր լայնացող կողերով լայնաբերան աման (աղ. VII, 17): Պայմանականորեն թասերի խմբում ենք դասում և ուղիղ կողերով, սրվող շրթով ամանը, որի մակերեսը բացդարչնագույն է: Այս հարթահատակ ամանը նախորդներից տարբերվում է ստորին մասում փոքր-ինչ լայնացող և հարթ հատակ ձևավորող տեսքով (աղ. VII, 21):

Խոսելով I շերտից հայտնաբերված ամանների մասին, նշենք և քարից պատրաստվածները: Դրանցից մեկը տուֆից է և կրկնում է թասերի I տարբերակի ձևը այն տարբերությամբ, որ սրա ուղիղ կողերը միանում են փոքր-ինչ կլորացող հատակին (աղ. VI9): Ամաններից մյուսը բազալտից է պատրաստված և ձևով պատճենում է քրեղանների I տարբերակը՝ ինչպես ուղիղ բարձրացող կարճ շրթով, այնպես էլ իրանի կլորացող ձևով (աղ. VI, 8):

Ավարտելով I հորիզոնից հայտնաբերված նյութերի քննությունը, նշենք և սպիտակ գույնի, մեջը դարչնագույն երիզներ ունեցող քարից պատրաստված ռաժանաքը: Այն ուղղանկյունաձև, ստորին մասում փոքր-ինչ գոգավորված, իսկ վերինում՝ բըգաձև զարդ է: Իրի ստորին եզրերը ատամնավոր են, իսկ կողերին առկա են երկու անցք (աղ. VII, 22): Այս իրի զուգահեռները, ինչպես և բազալտից պատրաստված քրեղանինը, ներկա տվյալներով, համաժամանակյա հուշարձաններում մեզ հայտնի չեն: Թվագրության համար էական են մյուս նյութերը: Այսպես, կարմիր հիմնագույնի վրա սև կամ բոսորադարչնագույնով ստացված զալարապարույրներով, սանրատամ շեղանկյունիներով ու կրկնասակրի ձևով զարդեր ունեցող ամանների զուգահեռները բազմաթիվ են մ.թ.ա. XVIII-XVIIդդ. թվագրվող հուշարձաններում (***Мартиросян А.А.,*** 1964, նկ. 15-17: ***Хачатрян Т.С.,*** 1975, նկ. 52: ***Խանզադյան Է.Վ.,*** 1979, էջ 68-69): Մ.թ.ա. XVIII-XVIIդդ. թվագրվող հուշարձաններում պարուրա-

զարդ և սանրատամ շեղանկյունիներով զարդարված խեցանոթները ուղեկցվում են ատամնավոր «քայլող» դրոշմիչով զարդանախշված խեցանոթներով: Նույն երևույթն է դիտվում և Շիրակավանում:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում սև փայլեցրած մակերեսով գավաթի (աղ.VII, 7) և փորագիր զարդեր ունեցող քրեղանների բեկորները (աղ.VII, 10,13), որոնց կապը վաղ բրոնզի դարաշրջանի խեցեգործության հետ ակնհայտ է: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում և էլառի № 29 դամբարանից հայտնաբերված քրեղանը, որի ուսերը զարդարված են վաղ բրոնզի ձևերը կրկնող, բայց արդեն սև ներկով կատարված, փոքր ու մեծ գծածածկ ժապավեններով: Այս անոթի հետ հայտնաբերված են Շիրակավանի թասիկներից չտարբերվող նմուշներ: Վերջիններս գտնված են էլառի այլ դամբարաններում, որոնք թվագրված են մ.թ.ա. II հազ. սկզբով (*Խանզադյան Է.Վ.*, 1979, էջ 62-64, նկ. 86): Միջին բրոնզի դարաշրջանի վաղ փուլի նյութերում իր զուգահեռները ունի փորագիր բեկյալներով զարդարված քրեղանի բեկորը (աղ. VII, 13): Զարդի այս ձևը նույնպես կապվելով վաղ բրոնզեդարյան ավանդույթներին, հանդես է գալիս Գառնիի ամրոցից, Արթիկից, Զանջառիսից հայտնաբերված խեցանոթների վրա (*Խանզադյան Է.Վ.*, 1969, նկ. 91): Հետաքրքիր են Հառիճի նյութերը, որոնց շարքում առկա է և մի քրեղան (***Хачатрян Т.С.***, 1975, էջ 105-109, նկ. 46, 49): Այն ձևով ռիշեցնում է Շիրակավանի նմուշը (աղ. VII, 16), տարբերվելով նրանից ալիքաձև կետազարդերի բացակայությամբ: Այս զարդերը, սակայն, առկա են Հառիճի համաժամանակյա այլ դամբարաններից (№ 108, 111 և այլն) հայտնաբերված խեցանոթների վրա: Հառիճից հայտնաբերված նյութերի շարքում առանձին հետաքրքրություն է ներկայացնում № 108 դամբարանից հայտնաբերված կճուճը, որը ուղեկցվելով գունազարդ անոթներով, ուսերին հասիկազարդ ունի: Այդ նյութերը հեղինակի կողմից թվագրված են մ.թ.ա. XIX-XVIIIդդ.: Խոսելով Հառիճի դամբարանադաշտից հայտնաբերված նյութերի մասին նշենք, որ այստեղ բացվել են դամբարաններ, որոնցից հայտնաբերված խեցանոթների շարքում գերակշռում է կետազարդը: Տվյալ դեպքում նկատի ունենք №№ 50, 93, 111 և այլ դամբարաններից հայտնաբերված նյութերը, որոնք կապվելով Շիրակավանի նմուշների հետ, թվագրվում են մ.թ.ա. XVIII-XVIIդդ.: Իրոք, Հառիճից հայտնաբերված նյութերը ներկայացված են նույն՝ կետերով ստացված ալիքաձև գծազարդերով: ինչպես և սանրատամ բեկյալներով: Նմանությունները, սակայն, այս խմբի խեցեղենի հետ վերոհիշյալ գծերով չեն սպառվում: Հառիճի այս խմբի նյութերը զարդարված են հավելադիր ելունդագոտիներով, կամարաձև կետապատկերներով (դամբ. № 111) և այլն (***Хачатрян Т.С.***, 1975, էջ 106-109): Նշենք, որ Հառիճի նյութերը զարդարված են սպիտակ ընդելուզված նախշերով: Ինչպես կտեսնենք ստորև, զարդանախշի ստացման այդ եղանակը առկա է Շիրակավանում: Այստեղ նշենք միայն, որ սպիտակ նյութով լցված զարդեր ունեն և Ուզերլիկ-թեփեի՝ շերաազրական հստակ պատկեր ունեցող բնակավայրի II շինարարական հորիզոնից հայտնաբերվածները (***Кушнарева К.Х.***, 1965, էջ 74-99, նկ. 23-31): Նման նյութեր են հայտնաբերված և Սևանգէսի, Գավառի, Լճաշենի № 6 դամբարանաթմբից և այլ հուշարձաններից: Վերջիններիս շար-

քում են նույն՝ սև փայլեցրած, բջջաշար ալիքազարդերն (հմմտ. աղ. VII, 4,5 Սևանգէսի նյութերի հետ) ունեցող կճուճները, սպիտակ նյութով լցված կետազարդ ու գունազարդ անոթները, որոնք, ինչպես ուզերլիկյան նմուշները, թվագրված են մ.թ.ա. XVIII-XVIIդդ. (*Мартиросян А.А.,* 1964, էջ 56-60: *Խանզադյան Է.Վ.,* 1960, էջ 65-77): Հայտնաբերված նյութերը վաղ հատկանիշներ դրսևորելով հանդերձ (աղ. VII, 7,10,13), այնուամենայնիվ երևան են բերում նոր գծեր (բջջաշար զարդ, ելունդագոտիներ, փորագիր խաչեր և այլն), որոնք լայն տարածում են ստանում հետագայում: Դիտվող առանձնահատկությունները, ինչպես և բերված զուգահեռները թույլ են տալիս I հորիզոնի նյութերը թվագրել մ.թ.ա. XVIII-XVIIդդ.:

*Վերին՝ II հորիզոնի խեցեղենը*- այստեղ ևս գերակշռողը կճուճներն են, քթեդաններն ու թասերը: Կճուճներից երկուսը փքուն իրանով, կարճ վզով անոթներ են: Դրանցից մեկն ունի թեթևակի դուրս կլորացող շուրթ (աղ. VIII, 4), մյուսի կարճ վիզը ուղիղ է (աղ. VIII, 5): Անոթներից առաջինի մակերեսը սև, ագաթափայլ է, երկրորդինը՝ գորշ, թույլ փայլեցրած: Այս անոթները, ինչպես և I հորիզոնից գտնվածը, կոտրվածքում ամբողջությամբ սև են: Կճուճներից մյուս երեքից երկուսն ունեն դուրս ծկված շուրթ և կլորացող իրաններ (աղ. VIII, 1,2), իսկ երրորդի վիզը ուղիղ է (աղ. VIII, 3): Անոթների սև (աղ. VIII, 2,3) և կարմրադեղնավուն (աղ. VIII1) մրոտված մակերեսները զարդարված են թույլ ակոսագծերի մեջ լցված կարճ փորագիր գծերով, եռանկյունազարդով, ալիքներով և կամ սոսկ հատիկազարդով, որոնց վաղ զուգահեռներն են Հառիճի № 108 դամբարանից հայտնաբերվածները: Կճուճներից հաջորդ երկուսի շագանակագույն ու դեղնամոխրագույն անփայլ մակերեսները նույնպես մրոտված են: Այս անոթների իրանները թեթևակի երկկոնիկ տեսք ունեն. ավարտվում են դուրս թեքվող կարճ վզով, որոնցից մեկի շուրթը թեթևակի սրվում է (աղ. VIII, 8), մյուսինը՝ դեպի դուրս թեք է կտրված (աղ. VIII, 6): Այս կճուճներից մեկի ուռուցիկ մասով հավելադիր ելունդագոտի է անցնում, իսկ ուսը զարդարված է կետերով ստացված անկյունաձև պատկերներով (աղ. VIII, 8): Այս խեցանոթի զուգահեռներն են Հառիճի № 93 և այլ՝ մ.թ.ա. XVIII-XVIIդդ. թվագրվող դամբարաններից հայտնաբերվածները: Կճուճներից վերջինի իրանը ունենալով նույնպես թույլ երկկոնիկ տեսք, նախորդներից տարբերվում է վերին մասի թեթև կլորացող ձևով, իսկ ուղիղ բարձրացող կարճ վիզն ավարտվում է դուրս ծկված շրթով: Անոթի դարչնաբոսորագույն, թույլ փայլեցրած մակերեսը վզի մասում զարդարված է սեղմմամբ ստացված ուղղահայաց կարճ գծազարդերով (աղ. VIII, 7): Բոլոր կճուճների բեկորները կտրվածքում սև կամ դարչնագույն են:

*Քթեղաններ*- ներկայացված են մի քանի տարբերակով: Դրանցից երկուսը սև, ագաթափայլ մակերեսներով ամանների մասեր են, որոնք առանձնանում են իրանների շեշտված անցումներ ունեցող եռամաս տեսքով: Ամաններից մեկն ունի կարճ, ուղիղ շուրթ (աղ. VIII, 18), մյուսի մոտ այն թեթևակի դուրս է ծկված (աղ. VIII, 17): Ամաններից երկրորդը ուսի մասում զարդարված է վատ պահպանված, սպիտակ նյութով լցված, ալիքաձև տարված սանրատամ զույգ գծազարդերով (աղ.VIII, 17): Վերը խոսվեց սպիտակ նյութով զարդանախշի մասին: Այստեղ նշենք միայն, որ այս ամա-

նի ձևն է կոկնում Սևանգէսից հայտնաբերվածը, որի հետ գտնված այլ անոթների զարդանախշը (բզզաշար ալիքներ, զալարապարույր և այլն) կոկոն երևան է գալիս և Շիրակավանի բնակավայրի այս շերտում: Քրեղաններից վերջին երկու բեկորնե-րից մեկը կոկնել ով I շերտից հայտնաբերվածներին, կիսագնդաձև իրանով և կարճ, ուղեղ վզով աման է, որի ստորին մասով հավելյալ ել ունղագուռի է անցնում: Ամա-նի դարչնագույն մակերեսը վերին մասում զարդարված է կետերով ստացված ան-կյունաձև պատկերով (աղ. VIII, 16): Ինչ վերաբերում է քրեղաններից վերջինին, ապա այն նույն ձևի իրան ունի, որը, սակայն, դուրս ծկված շուրթով է ավարտվում: Ամանի սև փայլեցրած մակերեսն անզարդ է (աղ. VIII, 19): Այս նյութի ճշգրիտ զուգահեռը, երկկոնիկ իրանով, ինչպես և ակոսազարդերի միջև տարված փորագիր թեք գծերով զարդեր ունեցող կճուճների և այլ՝ մ.թ.ա. XVIII-XVIIդդ. թվագրվող նյութերի ուղեկ-ցությամբ հայտնի է Հառիճի № 93 դամբարանից և այլ վայրերից:

*Թասեր, գավաթներ*- ներկայացված են ինչպես I շերտից հայտնի, այնպես էլ նոր ձևերով: Առաջինների թվին է պատկանում վարդագույն, անփայլ մակերեսով, հարթահատակ, գրեթե ուղիղ բարձրացող կողերով (աղ. VIII, 14), ինչպես և դեղնա-գորշավուն մակերեսով, դուրս թեքվող իրանով անոթը, որն ավարտվում է սրվող շրթով (աղ.VIII, 12): Այս անոթների զուգահեռները կոկին Հառիճի դամբարաններից (№№ 4, 63, 104) հայտնաբերված նյութերումն են ու թվագրվում են մ.թ.ա. XIX-XVIII դդ.: Հառիճի № 4 դամբարանում իր զուգահեռներն ունի և վարդագույն թասիկը, որի սրվող շրթով ավարտվող կլորացող իրանը ստորին մասում գոգավորվում է դեպի ներս և ավարտվում հարթ հատակեվ (աղ. VIII, 11): Վերին մասում ներս թեքված կողեր և թեքևակե սրվող շուրթ ունի և սև փայլեցրած մակերեսով հարթահատակ թասը (աղ. VIII, 15): Սև, թույլ փայլեցրած մակերես ունի և թասիկներից մեկ ուրիշի բեկորը, որի երկթեք իրտնը ավարտվում է դուրս թեքվող ու սրվող շուրթով (աղ. VIII, 9): Անոթներից դեղնակարմրավուն մակերեսով, գլանաձև իրանով, ուսի մասում ներս հակված և դեպի դուրս թեքվող, սրվող շուրթով ավարտվող փոքր կճուճի աեսք ունի (աղ. VIII, 10):

*Նավակաձև ամաններ* - խեցանոթների այս տեսակը երկու հակառիր կողմե-րից թեքևակի ներս ծկված կողեր ունի: Երկու բեկորով ներկայացված այս ամաննե-րից մեկն ունի սև, ագաթափայլ մակերես և շագանակագույն աստառ: Ամանի վերին մասը գոտևորված է զույգ ակոսներով (աղ. VII, 23): Բեկորներից երկրորդի մակերե-սը նույնպես սև փայլեցված է (աղ. VII, 24): Այսօրինակ ամաններր գոյատևման երկար ժամանակաշրջան են ընդգրկում, հայտնի են վաղ-ուշ բրոնզեդարյան հու-շարձաններում և թվագրության համար էական նշանակություն չունեն: Թերևս, տվյալ դեպքում, նյութի վաղ աարիքը կարող է եուշել խեցու կոտրվածքում դիտվող, թույլ արտահայտված երկգույն երանգը (շագանակագույն աստառ և սև մակերես), որը վաղ բրոնզի դարաշրջանի խեցեղեն արտադրանքի բնորոշ հատկանիշներից է: Բե-կորներից վերջինը կարմիր մակերես ունի, որի վրա պահպանված են դարչնակարմրա-վուն գույնով ստացված կամարաձև պատկերների եատվածներ: Նույն գույնով ար-ված ցանցկեն գծերով լցված այս պատկերներր վերին մասում եզրված են ալի-քաձև գոտիով (աղ. VIII, 13):

Ավարտելով հայտնաբերված նյութերի քննությունը, նշենք և կենտրոնում փոքր-ինչ հաստացող և ծայրում կիսագնդաձև գլխիկով ավարտվող, որոնցյա ծողից պատրաստված գործիքը, որը հավանաբար դրոշմիչ կամ հարթիչ է եղել (աղ. VIII, 20): Հնարավոր է, որ գործիքի հակառակ՝ կոտրված ծայրը սրված է եղել ու ծառայել միաժամանակ և որպես դուր: Այդպիսիների առավել զարգացած նմուշները հայտնի են Սաչխերիում (***Куфтин Б.А.,*** 1941, էջ 13-14, նկ.10), իսկ վաղ օրինակները տեսնում ենք Թրիալեթիում մ.թ.ա. III հազ. թվագրվող նյութերի շարքում (***Жоржикашвили Л., Гогадзе Э.,*** 1974, աղ. 46, 337, աղ..48, 337):

Հանրագումարի բերելով չորրորդ սենյակից հայտնաբերված նյութերի քննության արդյունքները, նկատում ենք, որ չնայած մի շարք վաղ հատկանիշների, դրանք երևան են բերում նոր գծեր, որոնք սկիզբ առնելով մ.թ.ա. XVIII-XVIIդդ., բնորոշ են դառնում հետագայում: Հաշվի առնելով այս նյութերին հատկանշական կատարյալ տեսքը, նոր զարդանախշերի զուգորդումները, առաջին և երկրորդ հորիզոնների նյութերը թվագրում ենք մ.թ.ա. XVIII-XVIIդդ.:

Հետազոտելով Շիրակավանի միջին բրոնզեդարյան նյութերը, նշենք և III սենյակի վերին՝ 1-1.5 մ խորության վրա տարածվող խառը շերտից, մ.թ.ա.I հազ. սկզբին պատկանող խեցեղենի բեկորների հետ հայտնաբերվածները, որոնք ամենայն հավանականությամբ թափոն են հանդիսացել: Բեկորներից երեքը կարասների, իսկ մեկը՝ քրեղանի մասեր են: Վերջինիս սև փայլեցրած մակերեսը, ինչպես և IV սենյակից գտնվածներինը, զարդարված է ալիքաձև բջջաշարով (աղ. IX, 7): Ինչ վերաբերում է կարասներին, ապա դրանցից երկուսն աղյուսագույն, անփայլ մակերեսներով, փքուն իրաններով, կարճ վզով և դուրս ճկված շուրթով անոթներ են, որոնցից մեկի ուսը զարդարված է եռանկյունիների մեջ լցված, հակադիր տարված եղնաշար խազվածքներով, իսկ մյուսը՝ ալիքաձև դասավորված եատիկազարդով (աղ. IX, 3): Բեկորներից վերջինը կարմիր գույնի մակերես ունի, որն ուսի մասում զարդարված է սև գույնով ստացված ալիքներով ու դրանցից ներքև տարված սանրաձև պատկերներով, Անոթի վզի վրա պահպանված են չորս շարքով տարված ուղղահայաց գծեր (աղ. IX, 2): Նյութերից վերջինը սանդկոթ է (աղ. IX, 17):

Համանման իրեր հայտնաբերվեցին և II սենյակի հարթակի հարավ-արևմտյան կողմը եզերող հենապատին զուգահեռ ձգվող սյատի մոտ ընկած տարածքի (V կառույց) վերին շերտից: Այդ նյութերը ներկայացված են առանձին խեցանոթների բեկորներով, վարդագույն կայծքարից պատրաստված մանգաղի ներդիրով (աղ. IX,19) ու վանակաաե քերիչով (աղ. IX, 18):

Հայտնաբերված խեցանոթների բեկորներից քրեղաններին պատկանողները մի դեպքում սև փայլեցրած մակերեսով, կլորացող իրանով և դուրս ճկված շուրթ ունեցող ամաններ են, որոնցից մեկն առանձնանում է մակերեսի ղեղնավուն, անփայլ մրոտված գույնով (աղ. IX, 4): Ձևով այս բեկորից փոքր-ինչ տարբերվում է դարչնասևագույն, թույլ փայլեցրած մակերեսով մեկ այլ քրեղանի մաս: Վերջինիս կլորացող իրանն ուսի մասում շեշտված անցումով միանում է ուղիղ բարձրացող կարճ շրթին (աղ. IX, 6): Շուրթի և իրանի նույն ձևն ունի և մեկ այլ քրեղանի բեկոր. որի սև,

անփայլ մակերեսը միոտված է (աղ. IX, 5): Այս նյութերի հետ հայտնաբերվեցին և այլ անոթների բեկորներ: Դրանցից մեկն ունի կլորացող իրան, որի սև փայլեցրած մակերեսը զարդարված է երկշար բջջանախշով, որոնց միջև ափայլագիծ է տարված, իսկ բջջազարդից ներքև ելունդագոտի է անցնում (աղ. IX, 12): Բեկորներից հաջորդի սև, ագաթափայլ մակերեսը զարդարված է եռաշար կետագծերով ստացված կամարաձև պատկերով, որի կենտրոնական մասով իջնում են սանրատամ զույգ անկյունաձև գծեր. վերջիններս ստորին մասում հատվում են կետերով ստացված եռաշար ինչ-որ զարդի մասով, Այս զարդերը լցված են սպիտակ նյութով (աղ. IX, 11): Կետազարդերով ստացված պատկերների հատվածներ են առկա և մյուս բեկորների վրա: Դրանցից մեկի վրա, որն ունի սև, թույլ փայլեցրած մակերես, առկա է փորագիր կրր գծազարդից պահպանված հատված, որի մի ծայրին է միանում խորը, խոշոր կետերով ստացված, զույգ գոտիներից կազմված զարդապատկերը (աղ. IX, 10): Բեկորներից մյուսը, որը դարչնադեղնավուն լոսած մակերես ունի, զարդարված է կետերով ստացված եռանկյունաձև պատկերով, որը գագաթով ներքև է ուղղված (աղ. IX, 15): Անոթներից հաջորդն է ձեռքով պատրաստված դեղնավուն, թաղարաձև, միոտված մակերես ունեցողը, որն ավարտվում է դուրս թեքված, սրվող շրթով (աղ. IX, 8): Հաջորդը դարչնագույն, միածածկ մակերեսով, վերին մասում ծալքավորված տեսք ունեցող երկկոնիկ իրանով գավաթ է, որն ավարտվում է նեղ բերան ձևավորող կարճ շրթով: Անոթի ներքին մակերեսին արված են խորդուբորդություններ, փոսորակներ (աղ. IX, 9):Բեկորներից վերջին երկուսը գունազարդ անոթների մասեր են: Դրանցից մեկի կարմիր ներկած մակերեսը զարդարված է մուգ կարմիաշագանակագույն ներկով արված, թեք գծերով լցված շեղանկյունաձև պատկերներով ու դրանց վերևով անցնող եռաշարք ալիքաձև գծերով (աղ. IX, 14), իսկ մյուսը՝ սև ներկով ստացված, իրար միացող կրսաշրջանների ու կրկնասակրի պատկերով, որոնք իրարից անջատվում են ներկով աբված հորիզոնական հոծ գոտիով (աղ. IX, 16):

Ավարտելով III սենյակր վերին շերտից և V կառույցի տարածքից հայտնաբերված նյութերի նկարագրությունը, նկատում ենք, որ դրանց մի մասը կրկնում է IV սենյակից գտնվածներին: Տվյալ դեպքում նկատի ունենք սանրատամ նախշով, դուրս ծկված կամ ուղիղ շրթով զարդարուն և անզարդ քրեղանները. դրանք առկա էին և IV սենյակրց եայտնաբերված նյութերում: Վերջիններիս շարքում էին և հատիկազարդով ու շեղանկյունիներով, ինչպես և կրկնասակրի պատկերով զարդարված բեկորներն ու կետերով ստացված, տարատեսակ զարդեր ունեցող ամանները: Ինչ վերաբերում է մյուս խեցանոթների զարդերին, ապա դրանք առավել բնորոշ են բրոնզի դարաշրջանի վերջին փուլի խեցեգործական արտադրանքին: Այսպես, զույգ ալիքաձև բջջաշարով և ուռուցիկ զոտեզարդով իրեցու բեկորներ առկա են Մեծամորում, Գառնիի ամրոցում, Օշականում, իսկ Ուզերլիկ-թեփեում այդպիսիք գտնվել են սանրատամ շեղանկյունիների զարդանկարներով խեցանոթների հետ միջին և վերին շերտերում և այլուր (*Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, էջ 25, նկ. 24-25: *Խանզադյան Է.*, 1969, աղ. XXXII: ***Кушнарева К.Х.,*** 1965, էջ 92-93,

նկ. 24): Թվագրման տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և կետերով ստացված եռանկյունաձև ու նուրբ սանրատամ նախշով արված բեկորները: Վերջիններիս զուգահեռները տեսնում ենք Ուզերլիկ-թեփեի վերին շերտում, Վանաձորի, Գավառի ուշ ժամանակաշրջանի նյութերում և այլ հուշարձաններում: Ինչ վերաբերում է կետերով ստացված եռանկյունաձև զարդեր ունեցող անոթներին, ապա դրանք առկա են Հառիճի մ.թ.ա. XVII-XVդդ. թվագրվող այնպիսի դամբարաններում ինչպիսիք են №№ 78, 24 և այլն: Խոսելով այդ զարդաձևերի առանձնահատկությունների մասին, Տ.Ս.Խաչատրյանը նշում է, որ այս փուլի եռանկյունաձև պատկերները ուղղված լինելով գագաթներով ներքև, տարբերվում են վաղ զարդերից ավելի ծգված տեսքով և իրենց մեջ լցված խոշորահատիկ կետերով (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 112, նկ. 69,73,75,76):

Զուգահեռների մյուս խումբն են Լոռի-բերդեց մ.թ.ա. XVI-XVդդ. թվագրվող նյութերի հետ հայտնաբերվածները (***Деведжян С.Г.,*** 1981, աղ. I, II): Հայտնաբերված նյութերի առանձնահատկություններն ու բերված զուգահեռները թույլ են տալիս դրանք թվագրել մ.թ.ա. XVII-XVI դդ.:*

Ավարտելով միջին բրոնզեդարյան նյութերի քննությունը, նշենք և II դամբարանադաշտի տարածքում գտնվող երեք դամբարաններից հայտնաբերվածները: Այդ դամբարանների տարածքը վարելահողերի վերածվելու ընթացքում զրկվել էին արտաքին նշաններից: Դամբարանները եայտնաբերվեցին շինարարական աշխատանքների ժամանակ:

## 3. ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ
## (պեղ.՝ Լ.Ա. Պետրոսյան)

*Դամբարան № 40* (8-79թ.) ** - գտնվում էր Շիրակավան գյուղից 400-450մ հարավ: Պեղման առիթ հանդիսացան գետնի մակերեսին սփռված մանր և միջին չափերի քարերի հավասար կուտակումները: Հիմնահողային դամբարանախուցը (չափ.՝ 2x1x0.7մ, ուղղութ.՝ հյուսիս-արևմուտքից եարավ-արևելք) գուրկ էր ծածկասալերից: Ննջեցյալը թաղված էր դամբարանի հարավային կեսում, աջ կողքի վրա, ձեռքերն ու ոտքերը խիստ կծկված, գլուխը դեպի հյուսիս ուղղված վիճակում: Դամբարանի հյուսիսային կեսում դրված էին 4 խեցանոթ (աղ. X, 12-15), իսկ կենտրոնական մասում հայտնաբերվեց խոշոր եղջերավոր կենդանու ոտքի ոսկոր:

*Դամբարան № 41* (9-79թ.)- գտնվում էր նախորդից 10-11մ դեպի հյուսիս: Այս խաթարված դամբարանը ևս ռիմնահողային էր և մոտավորապես ունեցել էր 3.4մ

---

**Լ.Ա.Պետրոսյանի* կարծիքով Շիրակավանի IV կացարանի երկու հորիզոնների նյութերը ընդրոշ են միջին բրոնզի վերջին փուլին և պետք է թվագրել մ.թ.ա. XVII - XVI դարի I կեսով:

**Դամբարանների համարները տրված են ընդհանուր համարակալմամբ: Փակագծերում նշված համարները համապատասխանում են դաշտային համարակալմանը:

երկարություն, 1.2մ լայնություն, 1.1մ խորություն: Այստեղ գտնվեցին զգալի քանակությամբ փայտածուխի մնացորդներ: Դամբարանի հյուսիսային պատի մոտ դրված էր խոհանոցային կճուճ, որի կողիրին քարեր էին հենած (աղ. X, 1 ձևի): Հետագայում պարզվեց, որ այս դամբարանի նյութերի մի զգալի մասը հավաքվել և տրամադրվել է ԵՊՀ-ի հնագիտական թանգարանին, որոնք հրատարակվել են Ա.Փիլիպոսյանի կողմից (*Ա.Փիլիպոսյան,* 1999, աղ. 24):

*Դամբարան № 42* (10-79թ.)- գտնվում էր նախորդից 30-35մ դեպի հարավ-արևմուտք: Գետնի մակերեսին նշմարվում էին սալերի առանձին մասեր: Հյուսիս - արևելքից հարավ-արևմուտք ուղղված հիմնահողային դամբարանը (չափ՝ 2.8x1.5 0.6մ) ծածկված էր երեք սալաքարով: Դամբարանի հատակին դրված էին 11 խեցանոթ (աղ. X, 1-11), որոնցից 6-ը կճուճներ են, իսկ 5-ը քրեղաններ: Դամրարանափոսի հյուսիսնային մասում և արևմտյան պատի երկայնքով դրված էին խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ: Այստեղ մարդկային կմախքի մնացորդներ չհայտնաբերվեցին:

Հաշվի առնելով դամբարանների համաժամանակյա լինելը, ինչպես և նյութերի նմանությունը, կոկնողություններից խուսափելու նպատակով, նպատակահարմար ենք գտնում դրանք համատեղ քննարկել:

*Կճուճներ* - ութ նմուշով ներկայացված այս անոթները բաժանվում են չորս տարբերակի: Առաջինում ենք դասում մեկը (աղ. X, 12), որն ունի փայլեցրած մակերես, ուռուցիկ, քիչ ձգված իրան, ցածր, ուղիղ վիզ, կտրած շուրթ: Ուսերը զարդարված են փայլեցմամբ արված ուղղահայաց զծերով, որոնցից ներքև ակոսագոտի է անցնում: Այս կճուճը իր ձգվածությամբ և փայլանախշի առկայությամբ նման է Հառիճի № 24 և № 44 դամբարաններից հայտնաբերվածներին (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 112, նկ. 67, էջ 119, նկ.73): Վերջիններին ուսերը զարդարված են կետերով: Նման իրանով մի խոհանոցային կճուճ է հայտնի նաև միջին բրոնզի վերջին փուլին պատկանող Քեթիի դամբարաններից մեկում (***Петросян Л.А.***, 1989, աղ. 42): Հարկ է նշել, որ Շիրակավանի նմուշը ռերված զուգահեռներից տարբերվում է կտրած շուրթով, որը կոկնում է Շիրակավանի բնակատեղիի միջին բրոնզեդարյան շերտից և նույն ժամանակաշրջանին պատկանող Հառիճի դամբարաններից հայտնաբերվածներին (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 94-123):

Երկրորդ տարբերակում ենք դասում կճուճներից երեքը: Դրանցից մեկը պատրաստված է խոշորահատիկ ավազախառն կավից. ունի գորշ և դարչնագույն երանգներով հարդարված մակերես, կլորացող իրան, ցածր վիզ, դուրս ճկված շուրթ: Վզի և իրանի միացման մասում արված են երկու ակոսագոտիներ, իսկ շուրթը, ուսը և հատակը եզրերը զարդարված են հատինազարդով (աղ. X, 13): Նման ձևերով և ուսերը հատիկներով զարդանախշված կճուճներ են հայտնի Շիրակավանի բնակատեղիր միջին բրոնզեդարյան շկւաից, Հառիճի մ.թ.ա. XVIII-XVII դարերով թվագրվող № 85 դամրարանից (***Хачатрян Т.С.***, 1975, էջ 106, նկ. 62, էջ 120, նկ.74) և այլ հուշարձաններից: Շուրթերի և հասկաւկես հտտակի զարդանախշմամբ մեր օրինակը առավել մոտ է միջինից ուշ բրոնզին անցման ժամանակաշրջանին պատկանող Օլէի

№ 11 և № 13, Գաղրեկլիի № 6, Բայբուրտի դամբարաններից և Լիլոյի № 5 դամբարանաբլուրից հայտնաբերվածներին (*Пицхелаури К.Н.,* 1979, աղ. LIII, 21, LIV, 1, LV, 2, LVI, 1, LVII, 1), որոնք առավել լայն տարածում են գտնում հետագայում:

Կճուճներից մյուս երկուսը մի դեպքում զարդարված են ակոսագոտիով և փորագիր ալիքագոտիով (աղ. X, 1), մյուս երեքը՝ ակոսագոտիներով (աղ. X, 2): Ինչպես հատիկներով, այնպես էլ ալիքագոտիներով և հորիզոնական ակոսներով զարդարված խեցեղենի վաղ նմուշները երևան են գալիս մ.թ.ա. XVII-XVI դարերից, և ինչպես վերը տեսանք, դրանք հայտնի են Հառիճի համաժամանակյա մի շարք դամբարաններից, Վերին Նավերի № 24 դամբարանաբլուրից (*Симонян А.Е.,* 1983, էջ 91, նկ.1): Այդպիսիք հայտնի են նաև Շիրակավանի բնակատեղիի մ.թ.ա. XVII-XVIդդ. թվագրվող շերտից և Վրաստանի՝ միջինից ուշ բրոնզին անցման փուլին պատկանող դամբարաններից:

Երրորդ տարբերակում ենք դասում կճուճներից երեքը (աղ. X, 4-6): Դրանք սև, արծաթափայլ մակերեսով, ուռուցիկ իրանով, ցածր վզով, դուրս թեքված կլորացող շուրթով, հարթ հատակով անոթներ են: Վերջիններս զարդարված են շուտ մաքրվեղ սպիտակ և կարմիր գույնի ներկերով արված մեանդրներով, որոնց զուգահեռները հայտնի են Լճաշենի և Արթիկի՝ մ.թ.ա. XVI-XV դարերին պատկանող դամբարաններից: Ինչ վերաբերում է ուսումնասիրվող կճուճների ձևերին, ապա դրանք սկիզբ առնելով միջին բրոնզի վաղ փուլերում, առավել լայն տարածում են գտնում հետագա դարերում: Այդպիսիք հայտնի են ինչպես վերը նշված Շիրակավանի բնակատեղիի շերտից, այնպես էլ Հառիճից (*Хачатрян Т.С.* , 1975, էջ 97, նկ. 46,47, էջ 98, նկ. 49, էջ 103 նկ. 54), Էլառից (*Խանզադյան Է.Վ.* 1979, էջ 64, նկ. 38), Դիլիջանից (*Есаян С.А.,* 1976, էջ 106, աղ. 85, նկ.4), Ուզերլիկ-թեփեի II-III շերտերից (*Кушнарева К.Х.,* 1965, էջ 90, նկ. 22, էջ 91. նկ. 23) և այլ վայրերից: Այս կճուճները կրկնում են միջին բրոնզի դարաշրջանի վերջին փուլին պատկանող, վերը հիշատակված Քեթիի № 18, Վրաստանի՝ անցումային ժամանակաշրջանին պատկանող (Ձեմո-Բոդբե, Օլէ, Ցխինվալի, Գաղրեկիլի, Լիլո) հուշարձաններից հայտնաբերվածներին, որոնք առավել լայն տարածում են գտնում Հայաստանի և Անդրկովկասի ուշ բրոնզեդարյան հուշարձաններում: Կճուճների չորրորդ տարբերակն ունի սև փայլեցված մակերես, կլորացող իրան, ուղիղ կանգնած ոչ բարձր վիզ, կլոր շուրթ: Վիզը զարդարված է փայլեցմամբ արված ուղղաեայաց գծերով (աղ. X, 3): Սա իրանի ձևով նման է վերոհիշյալ հուշարձաններից (Հառիճ, Գառնի, Դիլիջան, Ուզերլիկ-թեփե) հայտնաբերվածներին, ինկ շուրթով՝ Հառիճի և Շիրակավանի նմուշներին: Ներկայացվող օրինակը տարբերվում է վլին արված փայլանախշերով, որի զուգահեռները հայտնի են Քեթիի № 18 և Թրիալեթիի № 7 և № 15 դամբարանաբլուրներից (*Гогадзе Э.М.,* 1972. աղ. 19, նկ. 10, աղ. 22, նկ. 30,32), Մեծամորի ուշ բրոնզի վաղ փուլով թվագրվող շերտից (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.Ն., Պարսամյան Է.Ս.,* 1973, աղ. 6-7), Լոռի-Բերդից (*Деведжян С.Г.,* 1981, աղ. 10, նկ. 4), Արթիկից (*Хачатрян Т.С.,* 1975, էջ 191-196, նկ. 93-109) և այլ վայրերից հայտնաբերվածներին:

*Քրեղաններ* - ունեն սև փայլեցված մակերես, ուռուցին գնդաձև իրան, ոչ բարձր

ույիդ վեզ, կլոր շուրթ, հարթ հատակ (աղ. X, 7-10,14,15): Մեկո իրանի ուռուցին մասը զարդարված է երկու շարք ակոսազոտիներով, մյուսի վրա պահպանված են թրծումից հետո սպիտակ և կարմիր գույնի, շուտ մաքրվող կրային մածուկով արված մեանդրանման զարդեր: Քրեղաններից մյուսն էլ գունազարդ է (աղ. X, 8): Նշենք, որ սպիտակ և կարմիր ներկորով զարդարված խեցեղեն մեծ քանակությամբ հայտնի է Լճաշենից (*Մնացականյան Հ.Հ.,* 1965, էջ 105): Այդպիսիք առկա են Քարաշամբի № 60 դամբարանում և Շամիրամի № 5 դամբարանաբլուրում (***Арешян Г.Н., Оганнесян В., Мурадян Ф., Аветисян П., Петросян Л.***, 1990, էջ 60 և 62), Լոռի-Բերդի № 9 դամբարանում (***Деведжян С.Г.***, 1981, նկ. 15): Նշված բոլոր զուգահեռները, բացառությամբ վերջինի, թվագրված են միջինից ուշ բրոնզին անցման շրջանով: Նշենք, որ այս թվագրությունը վերաբերում է միայն երկգույն խեցեղենին, քանզի միայն սպիտակ ներկով զարդարված խեցեղեն հայտնի է միջին բրոնզի դարաշրջանից:

Գունազարդ քրեղանի կարմիր մակերեսը զարդարված է սև ներկով արված կրկնասակոների և իրար մեջ ներգծված ուղղանկյունաձև պատկերներով (աղ. X, 8): Այս զարդապատկերները բնորոշ են Կարմիր վանքի (Թազաքենդյան) տիպի գունազարդ խեցեղենին (***Кушнарева К.Х.,*** 1960, էջ 140-141, նկ. 2,3) և հայտնի են Հառիճից (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 102-106, նկ. 52-62), Էլառից (Խանզադյան Է.Վ., 1979, էջ 68-69, նկ. 92-94), Վերին-Նավերից (*Սիմոնյան Հ.Ե.*, 1983, էջ 91, նկ.1), Այգևանից (*Եսայան Ս.Ա.,* 1979, էջ 4) ու այլ վայրերից: Նման զարդապատկերներով խեցեղեն հայտնի է նաև միջին բրոնզի վերջին փուլին պատկանող հուշարձաններից, Քեթիր № 18 (***Петросян Л.А.,*** 1989, աղ. 42), Գլանջա-չայի № 3 (***Гуммель Я.Н.,*** 1939, էջ 40, նկ. 4) դամբարաններից: Արարատյան դաշտավայրում պեղված բնակատեղիների (Զքահովիտ, Մեծամոր) շերտագրական տվյալները եկան հստակեցնելու այս պատկերը: Նշված հուշարձաններում վերոհիշյալ գունազարդ խեցեղենը շագանակագույն, սև ազաբափայլ, կետազարդ և կոպիտ խոհանոցային խեցեղենի ուղեկցությամբ հարատևում է մինչև միջին բրոնզի վերջին փուլը (*Խանզադյան Է.Վ,* 1979, էջ 68-69):

Ուսումնասիրվող խեցանոթների շարքում առկա է ավազախառն կավեց պատրաստված, կոպիտ, վարդագույն մակերեսով, գլանաձև թեքևակի կլորացող շուրթով, հարթ հատակով փոքրին անոթ (աղ. X, 11): Տարբեր չափերի նման խեցանոթներ հանդիպում են երրորդ և երկրորդ հազարամյակո մշակույթներում:

Ինչպես տեսանք, ուսումնասիրվող դամբարանների նյութերը բնորոշ լինելով միջին բրոնզեդարյան մշակույթին, դրսևորում են նոր հատկանիշներ (բարձր ուսեր, հատկապես կարմիր և սպիտակ ներկերով արված զարդեր, փայլազծեր, հատակի հատինաշարերով և բազմաշար ակոսներ): Զարդանախշման այս ձևերը առավել բնորոշ են միջին բրոնզի վերջի և միջինից ուշ բրոնզին անցման ժամանակաշրջանին և լայն տարածում են ստանում հետագա դարերում (բացառությամբ շուտ մաքրվող ներկով արվածների): Նշված փաստերը թույլ են տալիս Շիրակավանի № № 40-42 դամիարանները թվագրել մ.թ.ա. XVII - XVI դարի առաջին կեսով:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Բնակավայրի պեղված հատվածներում հետազոտվող դարաշրջանի անխաթար պահպանված կառույցներ չեն հայտնաբերված. հետագա դարաշրջանների շինարարական աշխատանքներն ավերել էին ուշ բրոնզեդարյան կառույցները: Այդ են փաստում I պեղավայրի պեղումների արդյունքները:

Վերը նշվեց, որ III կացարանի հարավային պատը մասամբ ավերվել էր հյուսիս-հարավ ուղղությամբ ձգվող պատով: Վերջինս, հարավային մասում անկյուն տալով, թեքվում էր արևմուտք: Այս պատերի միջև եղած տարածքը (VII սենյակ) ամբողջությամբ ծածկված էր փոքրիկ սալերով: Ուշ ժամանակաշրջանի պատկանող այդ կառույցի սալածածկ հատակի, որտեղից ոչ մի նյութ չհայտնաբերվեց, III սենյակի հատակից բարձր էր 1.1մ: Ուշ բրոնզեդարյան նյութերը, որոնք ներկայացված են կարասի, քրեղանների, կճուճի բեկորներով ու հերունով (աղ. XI, 1-4,7), հայտնաբերվեցին սալահատակի տակ ընկած մշակութային շերտից 0.6 մ խորության վրա՝ III կացարանի հատակից 0.5մ բարձր: Ուշ բրոնզեդարյան նյութերից ցած մայր հողն էր. հետևաբար III սենյակի հարավային պատը հենված է եղել մայր հողի կտրվածքին, որի մեջ և խորացել էր ուշ բրոնզեդարյան շերտը, որն ամբողջությամբ պեղել չհաջողվեց: Ելնելով առկա տվյալներից, կարող ենք նշել միայն, որ VII կիսակառույց կացարանը (այստեղ ավերածության հետքեր չդիտվեցին) ուշ բրոնզի դարաշրջանին չի պատկանում: Այդ դարաշրջանին է պատկանում նախորդ գլխում հիշատակված, IV սենյակի հատակից 0.9-1.1մ բարձրության վրա բացված՝ ավերված կառույցի ռ-ձև հատվածը, որտեղից հայտնաբերվեցին ազնվացեղ եղջերվի եղջյուրների մասեր, քրեղանի, թասերի, կճուճների բեկորներ (աղ. XI, 5, 6, 8-10):

Հայտնաբերված նյութերից կարասը, սև փայլեցրած մակերեսով, ձգված, փքուն ուսերով իրան ունի և դուրս ճկված, կլորացող շուրթ: Կարասի ուսը զարդարված է զույգ եռանկյունիների միջև ձգվող, սեղմմամբ ստացված ալիքներով, իսկ իրանը ուղղահայաց փայլագծերով (աղ. XI, 1): Ինչ վերաբերում է քրեղաններին, ապա դրանցից երկուսը կլորացող իրանով ու դուրս ճկված, կլորացող շուրթով ամաններ են, որոնց սև փայլեցրած մակերեսները մի դեպքում զարդարված են եռանկյունիներով ու ցանցկեն փայլանախշով, մյուսում՝ փայլեցմամբ ստացված լայն ժապավենով ու դրանից իջնող փայլագծերով (աղ. XI, 2,4): Քրեղաններից երրորդի՝ փոքր-

ինչ երկթեք, սև, թույլ փայլեցրած մակերեսով իրանը վերին մասում զարդարված է իրար հաջորդող թույլ ճկվածքագոտիներով: որոնք մակերեսին ալիքավորված տեսք են տալիս: Այս ամանը ևս կլորացող շուրթ ունի (աղ. XI, 10):

Միատեսակ են և երկու թասերը. ունեն կիսագնդաձև իրան և սրվող շուրթ: Մեկի մուգ շագանակագույն փայլեցրած մակերեսը զարդարված է ակոսագոտիով ու դրանից իջնող փայլագծերով, իսկ մյուսի սև փայլեցրած մակերեսը անզարդ է (աղ. XI, 5,6):

Գրեթե միանման են և երեք կճուճները: Սև անփայլ (աղ. XI, 7), դարչնագույն (աղ. XI, 8) ու կարմիր, գորշ բծերով ծածկված (աղ. XI, 9) այս անոթների մակերեսները մրապատ են: Կճուճների ուսերին իրանները զարդարված են հասփիկներով և կամ հավելադիր պարանազարդով ու փորագիր գծերով: Անոթներից երկուսն ունեն դուրս կլորացող, իսկ մեկը՝ դեպի դուրս թեք կտրած շուրթ (աղ. XI, 9):

Նյութերից վերջինը՝ ծայրում սրվող ոսկրե հերունը, վերին՝ լայնացող մասում, կողքից ելնող մեջանցքին անցք ունի (աղ. XI, 3):

Կրկնողություններից խուսափելու նպատակով այստեղ չենք ծանրանա քննված նյութերի առանձնահատկությունների, բնորոշ գծերի վեր հանման և զուգահեռների թվարկման վրա: Այդ հարցերին կանդրադառնանք հետազոտվող դարաշրջանին պատկանող դամբարաններից հայտնաբերված համանման նյութերի քննության ժամանակ:

## 1. ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ
(Պեղ. Ռ.Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ.Պետրոսյան)

Զբաղեցնում են առաջին դամբարանադաշտի հյուսիսային հատվածը: Բոլոր դամբարանները, բացառությամբ մեկ դեպքի (սալարկղ), հիմնահողային են: Այդ դամբարանների մի մասի վերգետնյա նշանները վերացվել էին շինարարական աշխատանքների ընթացքում: Անխաթար պահպանված դամբարաններից երևում էր, սակայն, որ դրանք ևս ծածկված են եղել հողի ու մանր քարերի խառնուրդից կազմված ցածր՝ 20-50սմ բարձրություն ունեցող դամբարանաթմբերով: Այս դարաշրջանին են պատկանում պեղված դամբարաններից 58-ը:

***Դամբարան № 2 (2-77թ.*)-*** խարամուղու շինարարությամբ վնասված դամբարանախցում (չափ.՝ 1x0.8x0.7մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ), գլխով հյուսիս ուղղված

*Փակագծում նշված թվերից առաջինը տվյալ տարվա պեղված դամբարանի հերթական համարն է, երկրորդը՝ տարեթիվը:

կմախքը թաղված էր ձախ կողքի վրա: Դամբարանի հյուսիս-արևելյան անկյունում՝ կմախքի գանգի առջևում, սափոր էր դրված, իսկ ոտնաթաթերի մոտ գտնվեցին երկու կճուճ (աղ.XII, 1-3):

*Դամբարան № 14 (1-78թ.)*- սալարկղ էր, որի հարավային պատը կազմող խոշոր սալը (չափ. 1.7x1.5մ) տեղաշարժվել էր հողահարթեցման ընթացքում: Բացակայում էին և վերգետնյա նշանները ու ծածկի սալերը: Այս դամբարանախցում (չափ. 2.4x1.4x1.7մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) ևս կմախքը գլխով հյուսիս էր ուղղված, բայց աջ կողքի վրա էր թաղված, վերջույթները կծկած վոճակում: Դամբարանի հարավային պատի մոտ, անմիջապես կմախքի ոտնաթաթերի կողքին վեց խեցանոթ էին դրված, իսկ կոնքոսկրի հարևանությամբ բրոնզե օղ էր ընկած (աղ. XII, 4-10): Դամբարանի արևելյան և հյուսիսային պատերի մոտից հայտնա-բերվեցին խոշոր եղջերավոր անասունի վերջույթների ոսկորներ:

*Դամբարան № 15 (2-78թ.)* - ծածկված էր 5մ տրամագիծ և 0.5մ բարձրություն ունեցող դամբարանաթմբով: Դամբարանախուցը ծածկող երկու սալերը դրված էին դամբարանախցի (չափ.՝ 2x1.1x1.2մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) անկյուններում տեղադրված ոչ մեծ քարերի վրա: Աջ կողքի գտնվող, գլխով հյուսիս ուղղված կմախքի ծալված ոտքերի մոտ, դամբարանի հարավային պատի դիմաց գտնվեցին երեք խեցանոթ, իսկ գանգի մերձակայքում՝ դամբարանի հյուսիսն-արևմտյան անկյունում, հայտնաբերվեցին բրոնզե կոճակներ ու դաշույն: Այս նյութերը դրված էին խոշոր եղջերավոր անասունի կողոսկրերի վրա: Կմախքի կոնքոսկրի մոտ ընկած էին վանակատե 12 նետասլաք, բրոնզե «գուրզ», փոքրին կոճակ և բրոնզե օղ (աղ. XIII, 1-11): Դամբարանից հայտնաբերվեցին նաև ձիու կմախքի առանձին մասեր. կենդանու գանգը դրված էր արևելյան պատի մոտ:

*Դամբարան № 16 (3-78թ.)* - երկու սալով ծածկված դամբարանախցում (չափ՝ 1.8x1x1.1, ուղղութ՝ հյուսիս-հարավ) կմախքը աջ կողքի վրա էր գտնվում և գլխով հյուսիս էր ուղղված: Կմախքի կոնքոսկրի մոտ դրված էր մեկ խեցանոթ, ինկ մյուսը՝ թիակոսկրերի հարևանությամբ: Խեցանոթներից երրորդը դրված էր գլխի, իսկ վերջինը՝ ոտքերի մոտ: Նյութերից վերջինը՝ բրոնզե դաշույնը, գտնվեց ձեռքի մոտ (աղ. XIII, 12-16):

*Դամբարան № 17 (4-78թ.)* -երկու սալով ծածկված այս դամբարանախցում ևս (չափ.՝ 1.7x0.8x1.2, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) աջ կողքի գտնվող կմախքը գլխով հյուսիս էր ուղղված: Դամբարանի հարավ-արևելյան անկյունում դրված էր բրոնզե կաթսա, որի մեջ հայտնաբերվեցին խոշոր եղջերավոր անասունի ոսկորներ և սափոր: Կմախքի աջ ձեռքի մոտ ընկած էր զինվորի, առյուծի և թռչունների արձանիկներից կազմված, խարսխաձև հիմքի վրա ձևավորված արձանախումբ, իսկ ձախ ձեռքի վրա բրոնզե թասն էր (աղ. XIV, 1-4):

*Դամբարան № 18 (5-78թ.)* - երկու սալով ծածկված այս դամբարանախուցը (չափ.՝2.1x1.5x1.6մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) զուրկ էր վերգետնյա նշաններից: Նախորդի հարևանությամբ գտնվող այս դամբարանում ևս կմախքը աջ կողքի վրա էր, գլխով՝ հյուսիսին: Կոնքոսկրի վրա ընկած էր երկաակ ծալած կաշվե գոտու մաս, որի

տակ բրոնզե դաշույնն էր: Վերջինս դրված էր բրոնզե ծայրապանով ավարտվող փայտե պատյանի մեջ, որի մեկ երեսն էր պահպանված: Ոտնաթաթերի մոտ հայտնաբերվեցին երկու քրեղան և մեկ սափոր (աղ.XIV, 5-10):

*Դամբարան № 19 (6-78թ.)* - ծածկասալերը բացակայում էին: Այս դամբարանում ևս (չափ.՝ 1.8x0.8x1.4մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը աջ կողքի վրա էր գտնվում և գլխով հյուսիս էր ուղղված: Կոնքոսկրի վրա գտնվող աջ ձեռքի մոտ (ծալը դեմքի առջևում էի) քրեղան էր դրված, իսկ ոտքերի կողքին՝ կճուճ (աղ. XV, 1,2):

*Դամբարան № 20 (7-78թ.)* - Նախորդի պես զուրկ էր վերգետնյա նշաններից ու ծածկասալերից (չափ.՝ 1.5x1x1.4մ, ուղղութ.՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք), ինկ կմախքը ձախ կողքի վրա էր գտնվում: Վերջինիս մոտ հայտնաբերվեցին երկու խեցանոթների բեկորներ, որոնցից հնարավոր եղավ մասնակիորեն վերականգնել մեկը: Կրծքավանդակի մոտ բրոնզե շքասեղ գտնվեց (աղ. XV, 3-4):

*Դամբարան № 21 (8-78թ.)* - երկու սալով ծածկված այս դամբարանում (չափ՝ 1.8x0.8x1.1մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը աջ կողքի վրա էր, գլխով՝ հյուսիսին: Կրծքավանդակի մոտ գտնվեցին բրոնզից, սարդիոնից, ծարիրից, մածուկից պատրաստված ուլունքներ և երկու կոճակ: Թևերին հագցված էին երեք բրոնզյա ապարանջան: Այս նյութերից բացի գտնվեցին հինգ խեցանոթ, որոնցից երկուսը դրված էին գլխի, ինկ երեքը՝ ոտքերի մոտ (աղ. XVI):

*Դամբարան № 22 (9-78թ.)*- ամբողջությամբ ավերված այս դամբարանի նյութերը՝ սափոր, կճուճ, թաս, նիզակ (աղ. XIV, 11-14) և փշրված ոսկորներ, հայտնաբերվեցին խրամասի եզրին թափված հողի մեջ:

*Դամբարան № 23 (10-78թ.)*- հյուսին-արևելքից հարավ-արևմուտք ուղղված այս դամբարանում (չափ.՝ 1x0.9x0.8մ) կմախքն աջ կողքի վրա էր գտնվում և գլխով ուղղված էր հյուսիս-աբևելք: Գանգի տակ գետաքար էր դրված: Դամբարանի հարավային կողմում՝ ոտնաթաթերի մոա, հայտնաբերվեցին երկու սափոր, կարաս, թաս ու քբեղան (աղ. XVII): Այս խեցանոթների մոտ դըված էին խոշոր եղջերավեր անասունի առանձին ոսկորներ:

*Դամրարան № 24 (11-78թ.)* - ծածկասալերից մեկն էր պահպանված: Դամբարանում (չափ.՝ 2.2x1.3x1մ, ուղղութ.՝ հյուսին-հարավ) կմախքը աջ կողքի վրա էր գտնվում և գլխով հյուսիս էր ուղղված: Կրծքավանդակի մոտ գտնվեցին բրոնզյա փոքր կոճակներ (36 հատ), սարդիոնից, ծարիրից ու մածուկից պատրաստված ուլունքներ, բոժոժանման և թռչնաձև կախիչներ: Մատների ոսկորներին հագցված էին բրոնզյա մատանիներ (4 հատ), իսկ այտոսկրի վրա ընկած էր բրոնզյա լարից պատրաստված ծռմռված գարդ, որն ամենայն հավանականությամբ օձագալար պատկերով քունքազարդ է եղել: Ոտնաթաթերի մոտ երկու կճուճ էին դրված (աղ. XVIII):

*Դամրարան № 26 (13-78թ.)* - ուներ 6մ տրամագծով և 0.2մ բարձրությամբ դամրարանաթումբ: Դամբարանախուցը (չափ.՝ 1.8x1x1.3մ, ուղղութ.՝ հյուսին-հարավ) ծածկված էր երկու սալով: Ուշագրավ էի այն հանգամանքը, որ այս հիմնահողային դամրարանը 0.9մ խորությունից հետո, ևս 0.4մ խորացված էի տուֆի բնական շերտի

մեջ, ինչը և մատնանշում էր որոշակի խորություն ստանալու ձգտումը: Դամբարանի հարավային հատվածում, 0.8մ խորության վրա, գտնվեց խոշոր քրեղանի մաս, որից ցած, տուֆի շերտում, հայտնաբերվեցին մարդու կոնքոսկրն ու ստորին ծնոտը: Դրանց մոտ ընկած էին կճուճի բեկորներ ու քրեղանի մաս (աղ. XIX, 1-2): Տպավորությունն այնպիսին էր, որ այստեղ թաղվել են դիակի առանձին մասերը, որոնց հետ դամբարան էին նետվել նախապես կոտրված խեցանոթների բեկորներ:

*Դամբարան № 28 (15-78թ.)* - պահպանվել էին ծածկասալերից երկուսը, իսկ երրորդը հեռացվել էր հողահարթեցման ժամանակ:

Հյուսիս-հարավ ուղղված դամբարանում (չափ.՝ 3x1.8x2.2մ) կմախքն աջ կողքի վրա էր գտնվում, գլխով հյուսիս ուղղված: Ոտքերի և կոնքոսկրի մոտ դրված էին երեք կճուճ և չորս քրեղան, իսկ կիծքավանդակի շրջանում ընկած էին սարդիոնից, բրոնզից, մածուկից պատրաստված ուլունքներ: Դեմքի առջևում հայտնաբերվեց իլիկի գլուխ (աղ. XIX, 3-11):

*Դամբարան № 30 (17-78թ.)* - հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղված դամբարանախուցը մասնակիորեն ավերվել էր շինարարության ընթացքում (պահպանված չափերը՝ 1.3x1x0.8մ): Գլխով հյուսիս-արևմուտք, ձախ կողքի վրա գտնվող կմախքի շուրջը դրված էր չորս քրեղան: Երեք այլ քրեղանների, կարասի ու երկու կճուճի բեկորներ ընկած էին ոտնաթաթերի մոտ և երևում էին խրամաձևի կտրվածքում: Այդ նյութերի մյուս մասերը փշրվել և նետվել էին խրամատը փորելու ժամանակ (աղ. XX):

*Դամբարան № 37 (5-79թ.)* - ավերված էր: Հողի կտրվածքում ուրվագծվող պատերի պահպանված մասերը ցույց էին տալիս, թե խցի լայնությունը 1.1մ, իսկ խորությունը 1.5մ է եղել: Պահպանված հատվածից գտնվեց մեկ կճուճ (աղ. XIX,13):

*Դամբարան № 38 (6-79թ.)* - նախորդից 8մ հյուսիս գտնվող այս դամբարանը ևս կիսավեր էր (պահպանված էր 0.8մ լայնություն և 1.2մ խորություն ունեցող մի հատված): Դամբարանում գտնվեց մեկ կճուճ (աղ.XIX, 12):

*Դամբարան № 43 (11-79թ.)* - մեկ սալով ծածկված այս դամբարանն (չափ.՝ 1.2x0.9x1.1մ) ուներ արևելք-արևմուտք ուղղվածություն, ինչը Շիրակավանում հազվադեպ է դիտվում: Աջ կողքի գտնվող և գլխով արևմուտք ուղղված կմախքի գլխի և ոտքերի մոտ դրված էին երկուական ամաններ (XXI):

*Դամբարան № 44 (12-79թ)* - հյուսիս- արևելքից հարավ-արևմուտք ուղղված այս դամբարանը (չափ.՝ 4.4x1.6-1.8x1.6մ) ծածկված էր երեք սալով: Վերջիններիս միացման տեղերը խցանված էին մանր ու միջին չափերի քարերով: Սալերից 10սմ խորության վրա գտնվեց փոքր թաս (աղ. XXII, 9), ինկ 25-30սմ խորությունում հայտնաբերվեցին 2-3սմ լայնություն և մոտ 1սմ հաստություն ունեցող փայտերի բեկորներ: Նման բեկորներ մեծ քանակությամբ գանվեցին դամբարանի արևմտյան հատվածում՝ երկայնական պատերի մերձակայքում: Դրանց միջև հայտնաբերվեց քառանկյունի թափք: Ամենայն հավանականությամբ թափքն ունեցել է նշված փայտիկներից կազմված ծածկ, որը բարձրացել է 30սմ բարձրություն, 0.9մ երկարություն և 2-3սմ հաստություն ունեցող կողերի վրա: Թափքի վրա, գլխով հյուսիս, վերջույ-

թները կծկված վրճակում, աջ կողքի պառկած կմախք հայտնաբերվեց: Վերջինիս կոծքավանդակին դրված էր 7սմ լայնություն ունեցող կաշվե գոտի, որի մակերեսը զարդարված էր կոճգամներով ստացված տարբեր պատկերախմբերով: Գոտու տակ հայտնաբերվեցին բրոնզե ծայրապանով ավարտվող փայտե պատյանի մեջ դրված բրոնզե դաշույն և դանակ-քերիչ: Կոնքոսկրի մոտ գտնվեց ոյ որում պռչուկով անվականձև իր: Թափքի առջև, ուղղահայաց դիրքով կտնգնեցված էր բրոնզե թիթեղներով երեսապատված և առանձին հատվածներում կաշվե փոկերով օղակված լայնալիճ աղեղ, որն ամբողջականն վրճակում առաջին անգամ է հանդիպում (նկ. 3,4): Դամբարանի կենտրոնում դրված էին տարատեսակ խեցանոթներ, որոնց մոտ հայտնաբերվեցին երկճյուղ տռեղի մնացորդներ: Դատելով պահպանված մասերից, առեղը կազմված է եղել 8-10սմ տրամագիծ և 2.1մ երկարություն ունեցող փայտերից: Լոեղի անկյունաձև բացվածքում, խեցանոթների կույտի հյուսիսային կողմում հայտնաբերվեցին երկու երեխայի կմախք: Դրանցից մեկը պառկած էր աջ կողքի վրա և գլխով ուղղված էր արևելք: Անմիջապես գլխի մոտ նետասլաք հայտնաբերվեց: Կմախքներից մյուսը գտնվում էր ձախ կողքի վրա և գլխով արևմուտք էր ուղղված: Երեխաների ոտքերի ոսկորները մրախառնված էին: Դամբարանի արևելյան եատվածում, առեղի առջևում, բացվեցին երկու ձիու կմախքների առանձին մասեր: Ձիերից մեկի գանգի մոտ դրված էին երկու սանձ և բրոնզե կոճակներ: Առեղի առջև գտնվեց կաշվե փոքրիկ տոպրակ, որի մեջ բրոնզե «զուրզ» էր դրված: Վերջինիս անցքում պահպանված էր կաշվի փոկի հանգույց ագված ծայրը, ինչը փաստում է այս զենքի գործողության շառավղը կաշեփոկի երկարությամբ մեծացնելու հանգամանքը (*Խնկիկյան Օ.,* 1977, էջ 90): Տոպրակի մոտ կսպարճից պահպանված մասեր հայտնաբերվեցին: Դրանք կաշվով երեսպատված փայտե մասեր էին, որոնց վրա ամրացված էին տարբեր ձևերի բրոնզե թիթեղներ (աղ. XXII, 22-28): Դժբախտաբար իրի խիստ վատ պահպանված վրճակը թույլ չտվեց վերականգնել դրա նախնական տեսքը: Կաշվից, փայտիկներից և բրոնզե թիթեղներից առաջացած այդ փոքրին կույտում հայտնաբերվեցին վանակատից և բրոնզից պատրաստված նետասլաքներ, որոնցից մի քանիսն ամրացված էին ոսկրից պատրաստված մաքոքաձև ամրակալներ‌ի մեջ: Լոեղի ծայրամասում գտնվեց հարթ տապարիկի ձև ունեցող իր: Յայտնաբերված նյութերի շքեղությունն ու ճոխությունը (աղ. XXII) կասկած չեն թողնում, որ պեղված դամբարանը պատկանել է ցեղային ավագանու ներկայացուցչի:

***Դամբարան № 47 (15-79թ.)*** - ծածկասալերը բացակայում էին: Յյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղված դամբարանախցում (չափ.՝ 1.3x0.6x0.8մ) կմախքը գտնվում էր ձախ կողքի վրա, գլխով դեպի հյուսիս-արևմուտք: Գանգի մոտ փոքր քրեղան էր դրված, իսկ այտոսկրերի վրայից բրոնզե օղեր եայտնաբերվեցին: Թևին հագցված էր բրոնզե ապաբանջան, իսկ մատոսկրներից մեկին՝ բրոնզյա օղ (աղ. XXIII):

***Դամբարան № 48 (16-79թ.)*** - գետնի մակերեսին երևում էին երկու սալի առանձին եատվածները: Յարավ-արևմուտքից հյուսին-արևելք ուղղված դամբարանում (չափ.՝ 2.2x2x1.9մ) աջ կողքի վրա պառկած և գլխով արևմուտք ուղղված կմախքը

հայտնաբերվեց հարավային պատի մոտ: Գանգից ոչ հեռու, դամբարանի հարավ-արևմտյան անկյունում, դրված էր փոքր կարաս, որի մոտ խոշոր եղջերավոր անասունի ազդրոսկր ոայտնաբերվեց: Կմախքի ձախ ազդրոսկրի մոտ գտնվեց բրոնզե պատյանի մեջ դրված դաշույն: Վերջինիս հարևանությամբ եղջյուրից պատրաստված աղեղնաձև իրն էր ու բրոնզե կաթսան: Չորս այլ խեցանոթ գտնվում էին դամբարանի հյուսիսային պատի մոտ: Դրանց տակ, դամբարանի երկայնքով, բրոնզե թերթիկներով երեսպատված աղեղ հայտնաբերվեց: Ամբողջական վիճակում գտնված, 1.68մ թևերի բացվածք ունեցող այս զենքի կորացած հատվածներում ամբացված էին ճ-ձև ելուստներ, որոնց հեռավորությունն իրարից կազմում էր 88սմ (աղ. XXIV և նկ. 5):

*Դամբարան № 49 (17-79թ.)* - արևելք-արևմուտք ուղղված դամբարանախցում (չափ.՝ 2.5x1.5x1.4մ) մարդու կմախք չհայտնաբերվեց: Չդիտվեցին և դիակիզման հետքեր: Յավանաբար սա հուշադամբարան էր, որի մեջ գտնվեցին խոշոր ու մանր եղջերավոր անասունների ոսկորներ, տարատեսակ խեցանոթներ և սակռաձև ելուստով շքասեղ (աղ XXV): Տեղում նկարված այս իրի վատ վիճակը թույլ չտվեց այն պահպանել:

*Դամբարան № 51 (19-79թ.)* - ծածկասալերից մեկն էր պահպանված (դամբ. չափերը 1x0.7x0.8մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ): Աջ կողքի վրա, գլխով հյուսիս ուղղված կմախքի կոծքավանդակի մոտ ընկած էիս գարդավահանիս, բից և «գուրզ», իսկ կոնքոսկրի հարևանությամբ հայտնաբերվեցիս վեց բրոնզյա նետասլաք (աղ. XXVI):

*Դամբարան № 52 (20-79թ.)* - մեկ սալով ծածկված այս դամբարանում (չափ.՝ 1.8x1.3x1մ, ուղղութ.՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք) երեխա էր թաղված: Վատ պահպանված կմախքից երևում էր, որ հյուսիս-արևելյան պատի երկայնքով դրված կմախքը պառկած է եղել գլխով հյուսիս, աջ կողքի վրա: Կմախքի թիկունքում՝ դամբարանի հարավ-արևմտյան հատվածում, երեք խեցանոթ էր դրված (աղ. XXVII):

*Դամբարան № 53 (21-79թ.)* - երեք սալով ծածկված այս դամբարանի (չափ.՝ 5.2x2.1x2մ, ուղղութ.՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք) արևելյան պատը դեպի դուրս փոքր-ինչ կորանալով բութ անկյուն էր ձևավորում: Դամբարանախցի կենտրոնում, գլխով հյուսիս ուղղված, աջ կողքի վրա գտնվող կմախքի դեմքի առջևում դրված էին չորս քրեղան, իսկ ծնկների մոտ՝ երկու կճուճ և երկու քրեղան: Նյութերից վերջինը, այս ամենաընդարձակ դամբարանախցում գտնվածներից, կոնքոսկրի մոտ ընկած վանակատի ցլեպն էր (աղ. XXVIII, 1-9):

*Դամբարան № 54 (23-79թ.)* - մեկ սալով ծածկված այս փոքրիկ դամբարանախցում (չափ.՝ 1.8x1.6x1.6մ, ուղղութ.՝ արևելք-արևմուտք) աջ կողքի վրա գտնվող և գլխով արևելք ուղղված կմախքի դիմացիս և ծոծրակային մասերում գտնվեցին կրակում տաշած փայտերի երեք բեկոր, իսկ արևելյան պատի տակ լծափայտի մաս էր դրված: Դամբարանախցի արևելյան պատի երկայնքով շարված էր ութ խեցանոթ (XXVIII, 10-18).

*Դամբարան № 55 (24-79թ.)*-երկու սալով ծածկված դամբարանախցում (չափ. 1.4x0.9x0.9մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը աջ կողքի վրա էր գտնվում և գլխով

հյուսիս էր ուղղված: Կրծքավանդակի մոտից գտնվեցին մբճիկածև կախիկ և երկու օղ, իսկ դամբարան դրված հինգ խեցանոթներից երկուսը գտնվում էին հյուսիս-արևելյան անկյունում, մեկը՝ դեմքի առջևում, իսկ վերջին երկուսը՝ կոնքոսկրի մոտ (XXIX):

*Դամրարան № 56 (25-79թ.)* - մեկ սալով ծածկված այս դամբարանում (չափ.՝ 1x0.7x0.2մ, ուղղութ.՝ հարավ-հյուսիս) կմախք չհայտնաբերվեց: Անմիջապես սալի տակ դրված էրն երեք քրեղան, որոնց մոտ ընկած էին խոշոր եղջերավոր անասունների 23 վեգ (աղ. XXX,1-3):

*Դամբարան № 58 (27-79թ.)* - երկու սալով ծածկված դամբարանախցում (չափ.՝ 1.3x0.9x0.9մ, ուղղութ.՝ հարավ-հյուսիս), աջ կողքի պառկած և գլխով հյուսիս ուղղված, վատ պահպանված կմախքի կիծքավանդակի մոտ գտնվեց որոնգե րից, իսկ ոտքերի մոտ դրված էրն երկու քրեղան և մեկ կճուճ (աղ. XXX, 4-7):

*Դամրարան № 61 (31-79թ.)* - մասնակիորեն ավերված դամբարանախցում (չափ.՝ 1.3x0.7x0.9մ, ուղղութ.՝ հարավ-հյուսիս) մարդու կմախք չհայտնարերվեց: Դամբարանախցի կինտրոնում գտնվեցին իրար վրա դրված երկու կճուճ, որոնց մեջ մանր եղջերավոր անասունների ոսկիրներ կային (աղ.XXXI,1-2):

*Դամբարան № 62 (32-79թ.)* - երկու սալով ծածկված դամբարանախցում (չափ.՝ 1.3x0.8x1մ, ուղղութ.՝ հարավ-հյուսիս) կմախքը ձախ կողքի վրա էր, գլխով ուղղված հյուսիս: Հայտնարերված երեք կճուճներից մեկի դրված էր դամբարանի հարավային պատի մոտ, իսկ երկուսը՝ հարավ-արևելյան անկյունում (աղ. XXXI, 3-5):

*Դամրարան № 63 (33-79թ.)* - այս դամբարանից պահպանված էր 65սմ երկարություն, 0.8մ լայնություն և 0.9մ խորություն ունեցող մի հատված, որտեղ և հայտնարերվեցին ոտքերի կոտրտված ոսկորներ ու փոքր կարաս (աղ. XXXI, 6):

*Դամբարան № 65 (35-79թ.)* - վնասվել էր խրամատը բացելու ընթացքում: Դատելով պահպանված մասերից (չափ.՝ 1.08x0.9մ), դամբարանախուցը ուղղված է եղել հյուսիսից հարավ, որից հյուսիսային հատվածն էր պահպանված: Այդտեղ հայտնարերվեցին գանգը, կրծքավանդակի և թևերի առանձին ոսկորներ, որոնցից երևում էր, թե կմախքը գլխով հյուսիս է ուղղված եղել: Հյուսիսային պատի տակ, անմիջապես գանգի մոտ, դրված էրն կճուճ և երեք քրեղան (աղ. XXXII, 1-4):

*Դամբարան № 66 (36-79թ.)* - պահպանվել էր 0.7մ լայնություն, 0.3մ երկարություն և 0.8մ խորություն ունեցող մի հատված, որի մեջ կիտրված սափոր հայտնարերվեց (աղ. XXXII, 5):

*Դամրարան № 67(37-79թ.)* - կիսով չափ ավերված այս դամբարանախցից (պահպանված չափ.՝ 0.7 x0.9x1մ) հայտնաբերվեցին չորս քրեղան (աղ. XXXII, 6-9):

*Դամբարան № 69 (39-79թ.)* - պահպանված էր 0.3մ երկարություն, 0.6մ լայնություն ունեցող հատված, որտեղից եայտնարերվեց երկու քրեղան (աղ. XXXII, 10-11):

*Դամրարան № 70(1-80թ.)* - ծածկասալերից մեկի հեռացվել էր, իսկ մյուսի վրա (չափ.՝ 1.7x1.1x0.3մ) պահպանված էր 0.3մ բարձրություն ունեցող դամբարանաթմբի մի մասը: Դամբարանախցում (չափ.՝ 1.4 x1x1մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) հայտնարերվեցին գլխով հյուսիս ուղղված կմախքի վատ պահպանված մնացորդ-

ներ: Դամբարանախցի հարավային պատի մոտ դրված չորս կճուճներից մեկի մեջ հայտնաբերվեցին մանր եղջերավոր կենդանու ոսկորներ (աղ. XXXI, 7-10):

*Դամբարան № 71(2-80թ.)* - վնասվել էր հարավային կեսի վերին շերտը: Հյուսիս-հարավ ուղղված դամբարանախցում (չափ.՝ 1.1x1x2մ) կմախքը ձախ կողքի վրա էր գտնվում և գլխով հյուսիս էր ուղղված: Ձախ ձեռքի միջնամատին հագցված էր բրոնզե մատանի, իսկ թիակոսկրերի և կոնքի շրջանում ընկած էին մածուկից, սարդիոնից և ոսկուց պատրաստված ուլունքներ: Կրծքավանդակի մոտ հայտնաբերվեցին երկու թռչնաձև կախիկ: Դամբարանի արևմտյան պատի մոտ դրված էին երեք խեցանոթ, իսկ հյուսիս-արևմտյան անկյունում՝ քրեղանի ձև ունեցող քամիչ (աղ. XXXII, 12-22):

*Դամբարան № 76(7-80թ.)* - գտնվում էր Շիրակավանի և Գյումրի-Հոկտեմբերյան մայրուղու միջև ընկած վարել ահողերի տարածքում: Անխաթար պահպանված այս դամբարանը (չափ.՝ 1.5x1x0.8մ, ուղղութ՝ հյուսիս-հարավ) ուներ 7մ տրամագիծ և 0.5մ բարձրությամբ, հող ու քարից կազմված դամբարանաթումբ, որը հեռացնելուց հետո բացվեց երկու ծածկասալ: Աջ կողքի վրա պառկած կմախքը գլխով հյուսիս էր ուղղված: Կոնքոսկրի մոտ հայտնաբերվեց վանակատե նետասլաք, իսկ կծկված ոտքերի թաթերի վրա քրեղան ու կճուճ էին դրված: Թերի վեճակում գտնվող կճուճը բերանքսիվայր էր դրված: Դամբարանախցի հարավ-արևմտյան անկյունում սափոր հայտնաբերվեց (աղ. XXXII, ա):

*Դամբարան № 77(8-80թ.)* - ծածկասալերից մեկն էր պահպանված: Հյուսիս-հարավ ուղղվածություն ունեցող այս դամբարանախցում (չափ.՝ 3.5x1.6x1.2մ) հայտնաբերվեց երեք կմախք, որոնցից մեկր երեխայի, երկուսը՝ մեծահասակների: Երեխայի և մեծահասակներից մեկր կմախքները գտնվում էին դամբարանախցի հաբավային հատվածում: Հավանարար դրանք մոր ու զավակի կմախքներ էին, որոնցից մեծահասակի պառկեցված էր ձախ կողքի վրա, գլխով հյուսիս, իսկ երեխայի կմախքը գտնվում էր մեծահասակր թիկունքում և պառկեցված էր աջ կողքի վրա: Մեծահասակր գանգի և կրծքավանդակր շրջակայքում գտնվեցին սարդիոնից, շաղափից ու ոսկե թերթիկներով երեսպատված մածուկե ուլունքներ, բաժանարարներ և կախիկներ, իսկ կրծքավանդակր վրայից հայտնաբերվեց բրոնզե գլանիկ: Երեխայի մոտ դրված էր չորս խեցանոթ: Մեծահասակներից մյուսի կմախքը դամբարանախցի հյուսիսային մասում էր: Այս կմախքը ևս գլխով հյուսիս էր ուղղված, բայց պառկեցված էր աջ կողքի վրա: Այս կմախքի կոնքոսկրի մոտից հայտնաբերվեցին դանակ-քերիչ, դանակ և դուր: Դամբարանախցի կենտրոնում, այսինքն կմախքների միջև եղած տարածքում, դրված էր քարայծի չորս արձանիկ և երեք խեցանոթ (աղ. XXXIII):

*Դամբարան № 78 (9-80թ.)* - ծածկասալերը հեռացվել էին դաշտային աշխատանքների ժամանակ: Դամբարանախցում (չափ.՝ 1.4x0.8x1մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) մարդու կմախք չհայտնաբերվեց: Հարավային պատի մոտ դրված էր հինգ խեցանոթ (աղ. XXXIV, 1-5), իսկ արևմտյան պատի տակ գտնվեցին խոշոր եղջերավոր անասունի առանձին ոսկորներ:

*Դամբարան № 80 (11-80թ.)* - մեկ սալով ծածկված այս դամբարանախցում (1.4x0.8x1մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը պառկած էր ձախ կողքի վրա, գլխով հյուսիս: Դեմքի առջևում դրված էր քրեղան, իսկ կրծքավանդակի մոտ ուլունքներ էին ընկած: Երկու կճուճ և մեկ քրեղան դրված էին ոտքերի մոտ (աղ. XXXV, 1-6):

*Դամբարան № 81 (12-80թ.)*- երկու սալով ծածկված դամբարանում (ուղղութ.՝ հյուսիս-հարավ, չափ.՝ 1.5x0.7x0.8մ) կմախքը աջ կողքի էր պառկած, գլխով ուղղված հյուսիս: Աջ թևին հագցված էր ապարանջան: Գլխի մոտ դրված էր կճուճ, իսկ կոնքոսկրի հարևանությամբ՝ երկու քրեղան (աղ. XXXV, 7-10)

*Դամբարան № 82 (13-80թ.)* - պահպանված էր ծածկասալերից մեկը: Դամբարանախցում (չափ.՝ 1.3x0.9x1.2մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը պառկած էր հյուսիսային հատվածում ձախ կողքի վրա, գլխով՝ հյուսիս: Վերջինիս ոտնոսկրերի վրայից գտնվեց օձագլխավոր պաճուճանքով երկու քունքազարդ: Կրծքավանդակի մոտ ընկած էին սարդիոնից, շաղախից և բրոնզից պատրաստված ուլունքներ, օղեր, իսկ թևերին ապարանջաններ էին հագցված: Դամբարանախցի հարավային պատի տակ դրված էր չորս խեցանոթ, որոնցից մեկը (աղ. XXXV, 16) ծածկված էր կափարիչով (աղ. XXXVI):

*Դամբարան № 83 (14-80թ.)* - հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղված դամբարանախցում (չափ.՝ 1.2x0.6x0.7մ) կմախքը պառկած էր ձախ կողքի վրա, գլխով ուղղված հյուսիս-արևելք: Դամբարանախցի հարավ-արևմտյան հատվածում հայտնաբերվեց երկու կճուճ և քրեղանի բեկոր (աղ. XXXV, 11-13):

*Դամբարան № 84 (15-80թ.)* - երկու սալով ծածկված այս դամբարանախցում (չափ.՝ 1.3x0.8x1մ, ուղղութ.՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք) կմախքը ձախ կողքի վրա էր գտնվում, բայց գլխով հյուսիս էր ուղղված: Դամբարանախցի հարավ-արևմտյան պատի տակ չորս կճուճ էր դրված, իսկ հյուսիս-արևմտյան անկյունում մեկ: Կճուճներից վերջին երկուսը գտնվում էին գլխի մոտ (աղ. XXXVII, 1-7):

*Դամբարան № 85 (16-80թ.)* - այս դամբարանախցում ևս (չափ.՝ 1x0.7x0.7մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը ձախ կողքի վրա էր, գլխով՝ հյուսիս: Ծնկների մոտ դրված էր երկու քրեղան (աղ. XXXVII, 8,9):

*Դամբարան № 88 (1-81թ.)* - պահպանվել էր մի փոքր հատվածը, որտեղից գտնվեցին շքասեղ, ապարանջան և օղ, իսկ դամբարանախցից նետված հողի մեջ ընկած էին կճուճի և երեք քրեղանի բեկորներ (աղ. XXXVIII, 1-7):

*Դամբարան № 89 (2-81թ.)* - արևելք-արևմուտք ուղղվածություն ունեցող դամբարանախցից պահպանված էր 0.6x0.6x0.8մ չափերի մի հատված, որտեղից հայտնաբերվեց ամբողջական և կոտրատված հինգ խեցանոթ (աղ. XXXVIII, 8-12):

*Դամբարան № 93 (6-81թ.)*- ամբողջությամբ ավերված այս դամբարանի նյութերը հայտնաբերվեցին և հավաքվեցին խրամատի եզրին թափված հողի մեջից: Դրանք երկու կճուճի ու մեկ քրեղանի բեկորներ էին (աղ. XXXVIII, 15-17):

*Դամբարան № 94 (7-81թ.)* - պահպանված էր արևելյան 0.2x0.8x0.7մ չափեր ունեցող հատվածը, ուր և հայտնաբերվեց քրեղանի բեկոր: Դամբարանախցից թափ-

ված հողի մեջ գտնվեցին քրեղանների ու կճուճի բեկորներ, դաշույն, ապարանջան և երկու օղ (աղ. XXXIX, 1-8ա):

*Դամբարան № 95 (8-81թ.)*- արևելք-արևմուտք ուղղվածություն ունեցող այս դամբարանախցի (չափ.՝ 1.1x0.7x0.3մ) ծածկասալերը բացակայում էին: Կմախքը խիստ վատ էր պահպանված, ինչը և թույլ չտվեց պարզել վերջինիս դիրքը: Դամբարանախցի հարավային պատի հրկայնքով դրված էր երեք քրեղան, իսկ արևելյան պատի տակ՝ երկու կճուճ ու սափոր: Իրերից վերջինը սպիտակ շաղախից կմիքը, գտնվեց կմախքի մոտ (աղ. XXXIX, 9-15):

*Դամբարան № 96 (9-81թ.)* - արևելք-արևմուտք ուղղված դամրարանախցում (չափ.՝ 1.6x1x1.3մ) հայտնարերվեցին մի քանի ատամ, ձեռքերի ու ոտքերի առանձին ոսկորներ: Դամբարանախցի արևմտյան պատի տակ ընկած էին քրեղանի ու սափորի բեկորներ (աղ. XXXVIII, 13-14):

*Դամբարան № 104 (17-81թ.)* - ծածկասալերից մեկն էր պահպանված: Դամբարանախցում (չափ.՝ 3.3x1.5x1.6մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) հայտնաբերվեց գլխով հյուսիս ուղղված երկու կմախք: Դրանցից մեկի պառկած էր աջ, մյուսը՝ ձախ կողքի վրա: Աջ կողքի պառկածի ծործակի մոտ դրված էին սափոր և կճուճ, իսկ կմախքների միջև եղած տարածքում՝ երեք քրեղան և մաքրքաձև նիրդիրի մեջ ամբացված նետասլաք (աղ. XL, 1-7)

*Դամբարան № 106 (19-81թ)* -այս դամբարանախցում (չափ.՝ 1.8x1.4x0.8մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախք չհայտնաբերվեց: Զդիտվեցին և դիակիզման հետքեր: Արևելյան պատի մոտ դրված էր 10 խեցանոթ, իսկ դամբարանախցի կենտրոնում հայտնարերվեց դրի ձև ունեցող երեք քարե գործիք (XLI):

*Դամբարան № 108 (21-81թ.)* - այս կիսավեր դամբարանախցի (պահպանված չափերը՝ 1.3x0.4x0.3մ, ուղղութ.՝ հարավ-արևելքից հյուսիսի-արևմուտք) հարավ-արևելյան տնկյունում գտնվեց (աղ. XLII, 16) ձևն ունեցող քրեղան :

*Դամբարան № 113 (26-81թ.)* - ծածկասալերից մեկն էր պահպանված: Դամբարանախցի (չափ.՝ 2.5x1.6x1.1մ, ուղղութ.՝ հյուսիս- արևելքից հարավ-արևմուտք) հյուսիսային մասում գտնվող կմախքը աջ կիդքի էր պառկած, գլխով ուղղված հյուսին: Ծործակի մոտ դրված էր ևս մեկ գանգ: Դամբարանախցի հարավային հատվածում հայտնաբերվեց չորս քրեղան, կճուճ և սարդիոնից ուլունք (XL, 8-13):

*Դամբարան № 116 (29-81թ.)* - դամբարանախցի կենտրոնական հատվածն էր պահպանված (չափ.՝ 1.1x0.9x1մ), որից երևում էր թե դամբարանախուցը ուղղված է եղել հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Գլխով հյուսիս-արևմուտք ուղղված կմախքը պառկած էր աջ կողքի վրա: Գանգի մոտ դրված էր երկու կճուճ և մեկ քրեղան, իսկ կինքոսկրի վրա՝ դաշույն: Վերջինին հարևանությամբ, դամբարանախցի հատակին, ընկած էին բրոնզից և վանակաաից պատրաստված 11 նետասլաք ու ոսկիե հերուն: Կրծքավանդակի մոտից հայտնաբերվեցին եղջյուրից պատրաստված փամփշտաձև երկու իր (աղ. XLII, 1-18):

Ավարտելով հետազոտվող դարաշրջանի վաղ փուլին պատկանող դամբարանների քննությունը, նշենք, որ գույքի հարստությամբ առանձնացողները (№№ 15-18,

44, 48, 49, 77) խմբավորված էին դամբարանադաշտի հյուսիս-արևմտյան հատվածում, ինչը և ցույց է սալիս սոցիալական գործոնի դերը թաղման ժամանակ: Ուշագրավ է և այն հանգամանքը, որ այդ դամբարաններից հայտնաբերված նյութերը բնորոշ են հետազոտվող դարաշրջանի վաղ փուլին: Ինչ վերաբերում է այդ դամբարաններից արևելք և հարավ-արևելք գտնվող դամբարաններին (դրանց գերակշռող մեծամասնությունը շարքային համայնականների է պատկանում), ապա դրանցից հայտնաբերված նյութի տեսականին դրսևորում է ժամանակաշրջանի առաջընթացով պայմանավորված նրբին առանձնահատկություններ, ինչը և դիտվում է նյութի քննության ընթացքում:

## 2.ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ԴԱԱԲԱՐԱՆՆԵՐԻ ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զենքերը ներկայացված են դաշույններով, սաղեղներով, նետասլաքներով, «զուրզերով»:

*Դաշույններ* - երեք տեսակիվ ներկայացված բրոնզաձույլ այս զենքերը ութն են: Առաջին տեսակիում ենք դասում տերևաձև շեղբ և դաստակի ամրացման համար կարճ, տափակ լեզվակ ունեցողները: Լեզվակների եզրերին հանվածքներ կան, որոնցում, ինչպես այդ երևում է դամբարանադաշտի տարածքից պատահականորեն հայտնաբերված նմուշից (աղ. XLII, 19), բրոնզե թիթեղներ են դրվել դաստակին լրացուցիչ ամրություն սալու համար: Վեր բարձրացող և կամ ցած թեքվող ուսեր ունեցող այս նմուշների շեղբերի կենտրոնով ընդերկայնական ողեր են տարված (աղ. XXXIX, 1, XLII, 1): Իրենց նախաձևը դեռևս վաղ բրոնզի դարաշրջանում ունեցող այս դաշույնները վաղ օրինակներից տարբերվում են մի շարք հատկանիշներով (կենտրոնում նեղացող շեղբ, ընդերկայնական ող, լեզվակի հանվածքներում բրոնզե երիցներ): Այս դաշույնների զուգահեռներն են Արթիկից, Էլառից, Վանաձորից, Գյումրիից, Սամթավրոյից և մ.թ.ա. XIV-XIդդ. թվագրվող այլ հուշարձաններից հայտնաբերվածները (*Խանզադյան Է.Վ.,* 1979, էջ 81, նկ. 112, ***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 198-199: ***Есаян С.А.,*** 1966, էջ 61, աղ. XI7: ***Пицхелаури К.Н.,*** աղ. XXXI, 10):

Դաշույնների երկիրորդ տեսակում ենք միավորում չորս նմուշ, որոնք ունեն եռանկյունաձև շեղբ և կիսազնդաձև գլխամասով ավարտվող գլանաձև դաստակ: Ըստ դաստակի ձևի, այս տեսակը բաժանվում է երկու տարբերակի: Դրանցից երեքը, որ I տարբերակն են ներկայացնում, ունեն ծալված թևիկներով դաստակ, որի կենտրոնով միջնապատ է անցնում: Միջնապատի թևիկների միջև զոյացած ազատ տարածության մեջ փայտյա ներդիրներ են դրված, որոնք երկու կողմերից ծածկում են միջնապատի կիսաշրջանաձև գլխինը: Այդ ներդիրները ամրացված են բրոնզյա գամեկապով (աղ. XIII, 1, 12, XXII, 17): Ինչ վերաբերում է երկրորդ տարբերակին, ապա սրա միաձույլ գլանաձև դաստակի վերին և ստորին հատվածներում եռանկյունաձև անցքեր են բացված (աղ. XXIV, 1): Դաշույններից երկուսն ունեն պատյաններ: Դրանցից մեկի ամբողջությամբ պատրաստված լինելով թերթ բրոնզից, մեկ երեսում զարդարված է տարբեր մեծություն ունեցող եռանկյունաձև անցքերով, մյուսում՝ եռի-

զոնայկան և ուղղահայաց տարված սեպաձև բացվածքներով ու դրանց միջև սողացող երկգլխանի օձի ուռուցիկ պատկերով (աղ. XXIV, 2): Պատյաններից մյուսը փայտից է պատրաստված եղել, որի բեկորները պահպանված էին եռանկյունաձև բրոնզյա ծայրակալի մեջ: Վերջինս ավարտվում է կոշկաձև ելուստով, որից վեր ակնոցաձև ելունդազարդեր են արված. դրանց միջև շեղանկյունաձև պատկեր կա: Ծայրակալի մնացած մասը ուռուցիկ գոտիներով երկու մասի է բաժանված, որոնց միջև բացված են եռանկյունաձև ու շեղանկյունաձև անցքեր (աղ. XXII, 16): Խողովակաձև դաստակով դաշույնների նշված տարբերակները երևան են գալիս ուշ բրոնզի դարաշրջանի I փուլում և լայն տարածվում Հայաստանի և հարևան հանրապետությունների համաժամանակյա հուշարձաններում (տե՛ս *Խնկիկյան Օ.Ս.*, 1991, էջ 82-84, աղ. 2):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում դաշույններից վերջինը, որը եզակի է իր տեսակում: Այն իր առանձին մանրամասներով կոկնում է դաշույնների II տեսակը, տարբերվելով, սակայն, ընդհանուր տեսքով: Այս նմուշի ծզված շեղբը երկու երեսներից զարդարված է ցանցկեն գծերով լցված շեղանկյունաձև պատկերների ընդերկայնական գոտիով, իսկ երկճյուղ դաստապանը սահուն անցում է կատարում կենտրոնում լայնացող և ծայրերում գոգավորված դաստակին, որի ծալված թևիկների միջև ստացված շեղանկյունաձև ու եռանկյունաձև տարածություններում ամիացված փայտյա ներդիրները զարդարված են բրոնզե մեխերով. Դաստակն ավարտվում է եռանկյունաձև անցքերով զարդարված կիսագնդաձև գլխիկով. Դաշույնի փայտե պատյանը, որի միայն մեկ երեսն է պահպանված, զարդարված է բրոնզե մեխերով ստացված երեք շարքով և խաչաձև պատկերով: Պատյանը ավարտվում է բրոնզե ծայրակալով, որի մակերեսը զարդարված է եռանկյունաձև անցքերով, ինկ ծայրն ունի սկավառակաձև տեսք (աղ. XIV, 6,7): Դաշույնի այս տեսակի ճշգրիտ զուգահեռները մեզ հայտնի չեն. որոշ նմանություն ունի Կալար-Դաշտից մ.թ.ա. X-IXդդ. նյութերի հետ հայտնաբերվածը: Այն միայն դաստակի ձևով է նման շիրակավանյան նմուշին (*Vanden Berghe*, 1959, աղ. I): Շիրակավանի դաշույնը, սակայն, իր առանձին մանրամասներով կիկնում է տեղական ձևերը: Իրոք, այս նմուշի շեղբի զարդն ոճն ու ձևը առկա է Հառիճի № 44 դամբարանի նիզակի վրա: Նույն զարդն ունեն և Արթինից, Կարմիր-բերդից ու Դիլիջանից հայտնաբերված դաշույնները (***Хачатрян Т.С.***, 1975, էջ 112, նկ. 67, էջ 199, նկ.112: ***Арешян Г.Н.***, 1970, աղ. I: Տես և ՀՀ ԱԹ, գույք № 2135/26): Տեղական արմատներ ունի և Շիրակավանի նմուշի դաստապանի ձևը, որի ապացույցն են Լճաշենի մ.թ.ա. XIV-XIIIդդ. թվագրվող նմուշները (***Мнацаканян А.Д.***, 1957, էջ 146-153): Այդ ձևը հարատևում է և հետագայում (Անի, Ակներ, Ծալկա և այլն): Ինչ վերաբերում է դաստակի ծալված թևիկներին, ապա դրանք բնորոշ են ուշ բրոնզի դարաշրջանին: Այս դիտարկումները ենթադրել են տալիս, որ Կալար-Դաշտի նմուշի արմատները Հայաստանում են:

*Նիզակ* - ունի վետրաձև մարտական ծայր և փոքր-ինչ եռացած եզրերով, զրեթե ուղիղ խողովակաձև կոթառ: Խոշոր չափերի ( 43սմ) այս օրինակի խոցող մասի կենտրոնով ընդերկայնականող է տարված (աղ. XIV, 14): Տարբերվելով դարավերջին բնորոշ նիզակներից մի շարք հատկանիշներով, այս օրինակի իր զուգահեռներն է

գտնում մ.թ.ա. XIV-XIդդ. թվագրվող հուշարձաններից հայտնաբերված նյութերի շարքում (Լճաշեն, Կարմիր-բերդ, Գյումրի, Կողր, Այրում, Ենոքավան և այլն: Տե՛ս **Мартиросян А.А.,** 1964, էջ 104, աղ. IX7, էջ 122-123, նկ.49: **Арешян Г.Н.,** 1970, էջ 245, նկ. 33-35: **Есаян С.А.,** 1976, նկ. 8, 44 և այլոք):

*Նետասլաքներ* - ներկայացված են վանակապից և բրոնզից պատրաստված նմուշներով: Վանակապից պատրաստվածները նշաձև են և հիմքում ունեն ուղղանկյունաձև հանվածք (աղ. XIII, 3,4, XXII, 31,33, XL, 2, XLII, 9-12), իսկ բրոնզյա նմուշները երկու տարբերակով են ներկայացված: Առաջին տարբերակոն պատկանողները եռանկյունաձև սայրով: սրվող թևիկներով զենքեր են, որոնք ավարտվում են կարճ ու լայն, հիմքում անկյունաձև հանվածք («ծիծեռնակապոչ») ունեցող պոչիկով (աղ. XXII, 30,34,35):

Երկրորդ տարբերակի նետասլաքներն ունեն երկար, աստիճանաբար նեղացող պոչին (աղ. XXVI, 4-8, XLII, 2-8) և նախորդների պես պատրաստված են միափեղկ կաղապարների մեջ (դրանց մեկ երեսը կոկնում է կաղապարի բոլոր մանրամասները, իսկ մյուսն ամբողջությամբ հարթ է): Նետասլաքներից մի քանիրի վրա պահպանված ոսկրե մաքրքաձև ամրակալները ցույց են տալիս այսօրինակ իրերի նշանակությունը (աղ. XXII, 32, XL, 1): Ծիծեռնակապոչ նետասլաքները ներկայումս հայտնի են Լճաշենի և Արթիկի՝ մ.թ.ա. XIV-XIIդդ թվագրվող դամբարանային համալիրներից (Լճաշենը տե՛ս ՀՊ ԱԹ, գույք ? 2049 / 182,146, իսկ Արթիկի նյութերը տե՛ս **Хачатрян Т.С.,** 1975, էջ 181, նկ.89, էջ 201, նկ. 115): Պայմանականորեն նյութերի այս խմբում ենք դասում և ոսկրից պատրաստված փամփշտաձև երկու իրերը: Ենթադրում ենք, որ սրանց սնամեջ իրաններում (աղ. XLII, 14,15) փայտե ձողիկներ են ամրացվել և օգտագործվել իրրև նետասլաք:

*Աղեղներ*- Անդրկովկասի և Առաջավոր Արևելքի համաժամանակյա հուշարձաններում իրենց զուգահեռները դեռևս չունեցող այս զենքերի (մեկի ճշգրիտ ձևն ու չափերը վերցված են տեղում. այն ունի 1.68մ թևերի բացվածք, մյուսինը կազմում է մոտավորապես 1.72մ) փայտե մրջուկները երեսապատված են բրոնզե նուրբ թիթեղներից պատրաստված, իրար մեջ հագցված առանձին գլանիկներով: Այդ գլանիկներից ազատ է մնում աղեղի կենտրոնական հատվածը, որը ներծկված տեսք ունի: Աղեղների ծայրերին ամրացված են կոշկաձև (աղ. XXII, 13 և տե՛ս նկ. 3, 4) ու կոնաձև (աղ. XXIV, 5 և նկ. 5) բրոնզյա ծայրակալներ, որոնցում ամրացվել է աղեղի լարը: Աղեղներից մեկի վրա ամրացված են Ճ-ձև երկու բրոնզյա զարդեր: Վերջիններս իրենց զուգահեռներն ունեն Լճաշենի՝ մ.թ.ա. XIV-XIIIդդ. թվագրվող դամբարաններում: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Լճաշենում Ճ-ձև զարդերը նույնպես ամրացված են եղել բրոնզե թիթեղով երեսապատված փայտե իրերի բեկորների վրա, որոնք ենթադրաբար սայլի մասեր են համարվել: Նման Ճ-ձև իրեր հայտնաբերված են և Ջաղաստ գյուղի մոտակայքում գտնվող «Գլուր-Սառնա» վայրից, որոնք նույնպես թվագրված են մ.թ.ա. XIV-XIIIդդ (**Мартиросян А.А.,** 1964, էջ 110, աղ. X, 2): Նույն ժամանակաշրջանով են թվագրվում և Լոռի Բերդի № 7 դամբարանից հայտնաբերվածները (**Девджян С.Г.,** 1981, էջ 32-33, աղ.V, 1-3):

*Կապարճ* - հայտնաբերված են բաղադրամասերը: Դրանց մի մասը բրոնզե թիթեղներ են, որոնք կենտրոնական մասում բարձրանալով ձևավորում են կամրջակաձև մեջք (աղ. XXII, 26-28): Նման մեջք ունի և ռաջորդ թիթեղը, տարբերությամբ որ սա լայն է և եզրերում ատամնավոր (աղ. XXII, 25): Այս իրերի կենտրոնական մասում, կամրջակների մեջ պահպանված են նուրբ տաշած փայտիկներ և կաշվի մնացորդներ: Այս իրերի հետ հայտնաբերվեցին և բրոնզե թիթեղներից պատրաստված 11 կիսախողովակներ, որոնց մեջ պահպանված փայտիկներն ու կաշին ամրացված էին բրոնզե մեխերով (աղ. XXII, 22,23): Սրանց հարևանությամբ գտնվեց բրոնզե լայն թիթեղ, որի մեկ եզրը ծալված է, իսկ մյուսի վրա փոքր մեխ է պահպանված (աղ. XXII, 24): Այս թիթեղների մոտ գտնվեցին նետերը: Այս բաղադրամասերով ստացված կապարճի ամբողջական տեսքը, սակայն, անհայտ է մնում: Այս տեսակետից առանձնահատուկ նշանակություն է ստանում արձանիկի (աղ. XIV, 1) ձախ թևատակում տեղադրված ձևավոր կապարճը և հավանական է, որ գտնված թիթեղները ամրացված են եղել փայտերից ու կաշվեց պատրաստված նման բարդ կապարճի վրա: Նման թիթեղներ, մեխերով հանդերձ, հայտնաբերվել են և Լոռի Բերդե համաժամանակյա դամբարաններում:

*«Գուրզեր»* - երեք նմուշով ներկայացված բրոնզաձույլ այս իրերը գնդաձև են և ստորին մասում կարճ ելուստ ունեն: Միջանցիկ անցքը ստորին մասում շրջանաձև է, իսկ վերինում՝ քառանկյուն: Այս իրերից երկուսի մակերեսները հարթ են (աղ. XIII, 2; XXVI, 1), իսկ մեկինը զարդարված է կիսագնդաձև ու քառանկյունի ելունդներով, որոնց վրա ցանցապատկերներ են արված (աղ. XXII, 10): Այս զենքերի քարից պատրաստված օրինակները, ինչպես նշվեց, հայտնի են դեռևս վաղ բրոնզի դարաշրջանից, իսկ բրոնզից պատրաստվածները լայն տարածում են ստանում ուշ բրոնզի դարաշրջանի I փուլից: Ինչպես հարթ, այնպես էլ ելունդավոր մակերեսով բրոնզե գուրզեր հայտնի են Լճաշենից, Գավառից, Արթիկից, Ստեփանավանից, Ջեմր-Բողբեից և այլ՝ մ.թ.ա. XIV-VIIIդդ. թվագրվող համալիրներից, ինչը մատնանշում է այսօրինակ զենքերի երկարատև գործածությունը (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 104: ***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 181, 203: ***Пицхелаури К. Н.,*** 1979, աղ. VI, IX և այլք): Այդ են փաստում և Վանաձորի ու Մակարաշենի դամբարաններից հայտնաբերվածները, որոնք թվագրվում են մ.թ.ա. X-VIIIդդ (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 143, 205: ***Ղաֆադարյան Կ.Գ,*** 1941, նկ. 5): Գնդաձև, հարթ և ելունդավոր մակերեսներով գուրզեր հայտնի են բազմաթիվ հուշարձաններից և ընդգրկելով գոյատևման խոշոր ժամանակաշրջան, տռանձին վերցված, կայուն թվագրող նյութ չեն կարող դիտվել:

*Աշխատանքի գործիքներ* - ըստ կիրառության բնագավառների բաժանվում են տարբեր խմբերի: Դրանցից դուրերը ներկայացված են մի քանի օրինակով: Սրանք կտրվածքում քառանկյուն կամ կլոր բրոնզյա ձողեր են, որոնք ավարտվում են կամ երկու կողմից տափակեցված (աղ. XXII, 19,21) և կամ մեկ կողմը տափակեցված, իսկ մյուսը բրգաձև տեսք ունեցող ծայրերով (աղ. XXXIII, 4): Գործիքների այս խմբում ենք դասում և սրված ծայրերով ավարտվողը, որը կտրող էր և բից ծառայել (աղ. XXVI, 3): Նման դրեր, նախատեսված նուրբ փորագրությունների և այլ մտնր աշխա-

տանքների համար, հայտնի են Արթիկի № 3 և Ձառիճի № 78 դամբարաններից (մ.թ.ա. XIV-XIIIդդ): Նշենք, որ Արթիկի № 3 դամբարանից հայտնաբերված է և հարթ տապարիկ, որը չտարբերվելով լճաշենյան նմուշներից, որոշակի նմանություն է ցուցաբերում Շիրակավանից գտնվածին: Վերջինս, ինչպես և համեմատաբար վաղ ժամանակաշրջանի մյուս հարթ տապարիկները, առանձնանում է իրանի լայն և աշխատաբերանի զրեթե ուղիղ տեսքով, որով կիշեցնում է Վանաձորի միջին բրոնզեդարյան նմուշը: Այդուհանդերձ Շիրակավանի օրինակը (աղ. XXII, 15) իր ամբողջական տեսքով առանձնանում է մյուսներից: Այդ դրսևորվում է վերջինիս նեղ և երկար պոչուկի, ուռուցիկ պարանազարդ ուսերի ձևերում: Այս նմուշի իրանը զարդարված է եռանկյունաձև ուռուցիկ զարդերով: Ուշագրավը, սակայն, իրի նեղ և երկար պոչիկի ձևն է, որը հեռավոր նմանություն է ցուցաբերում Կեսարիայից (մ.թ.ա. III հազ.), Իրանից (Շոշ) ու Պաղեստինից (Գազա) գտնվածների (մ.թ.ա. XVI-XIVդդ) հետ (*Deshayes J.,* 1960, նկ. 756-757, 1042): Ձնամենի տեսք ունի և Շիրակավանից գտնված դանակը, որը ուշ օրինակներից առանձնանում է ցած թեքված սուր քթիկի և կենտրոնում կորացող բերանի ձևով (աղ. XXXIII, 2): Այս գծերով Շիրակավանի օրինակը մերձենում է Բելուջիստանից (Շահ-թումբ) մ.թ.ա.II հազ.սկզբով և Պաղեստինից (Գեզեր II) հայտնաբերված, մ.թ.ա. II հազ. կեսերով թվագրվող օրինակներին (*Deshayes J.*, 1960, նկ. 2348, 2639): Գործիքների այս խմբում ենք միավորում և դանակ-քերիչները, որոնք առանձնանում են լայն, ստորին մասում փոքր-ինչ նեղացող հարթ, բոլոր եզրերից սրված աշխատաբերանով: Վերջիններս լայնացող հիմքի կենտրոնում խողովակաձև դաստակ ունեն, որոնցից մեկի մեջ ամրացվել է սեպաձև անցքերով զարդարված, կիսազնդաձև, բրոնզաձույլ գլխինով ավարտվեղ փայտե կիթը (աղ. XXXIII, 1): Գործիքներից մյուսի բրոնզաձույլ դաստակի գլանաձև է: Վերջինիս վերին և ստորին հատվածներում եռանկյունաձև անցքեր են բացված, իսկ հիմքում պարանաձև ուռուցիկ զոտեզարդեր են տարված: Դաստակն ավարտվում է կիսագնդաձև բրոնզե գլխիկով (աղ. XXII, 29), որը բնորոշ են դաշույններին: Նման դանակ-քերիչներ հայտնի են Լճաշենից ու Լոռի բերդի մ.թ.ա. XIV-XIIIդդ. թվագրվող դամբարաններից (***Деведжян С.Г.,*** 1981, էջ 34, աղ. VII, 12):

Գործիքների վերջին խումբն են կազմում բրոնզից պատրաստված տարբեր չափերի ասեղները (աղ. XXXII, 17, XXXIII, 5,6), ոսկիե եերունները (աղ. XI3, XI_II, 13), իլիկի գլուխը (աղ. XIX, 10) և եղջյուրից պատրաստված աղեղնաձև, մեկ երեսը հարթ տաշված և վերին՝ լայնացող մասում անցք ունեցող իրը (աղ. XXIV, 4): Այս նյութերի վաղ նախաձևերը բնակավայրի վաղ շրջանի նյութերի շարքում են:

*Սանձեր* - բրոնզաձույլ այս միանման իրերը երկուսն են. պատկանում են անվակաձև այտաճաններ ունեցող սանձերի տեսակին: Այտաճանները զարդարված են եռանկյունաձև ու շրջանաձև երեքական եանվածքներով: Ինչ վերաբերում է կամարաձև գլխիկներով ավաբտվող շարժական լկամին, ապա դրա երկիւ ծայրեբը միացված են իրար մեջ ներառված օղակների միջոցով (աղ. XXII, 12): Նման սանձեր մ.թ.ա.. XIV-XIIդդ. թվագրվող նյութերի միջավայրում հայտնի են Լճաշենի № 2, Արթիկի № 79 դամբարաններից (***Мнацаканян А.О.,*** 1957, էջ 153: ***Хачатрян Т.С.,*** 1975, էջ

218), Քվեմո-Սասիրեթիր համաժամանակյա գանձից (*Коридзе Д.Л.*, 1965, աղ. X), այլ հուշարձաններից: Բնորոշ լինելով ուշ բրոնզի դարաշրջանի առաջին փուլի համար, այս սանձերը առանձին վերցված, ստույգ թվագրող նյութ չեն հանդիսանում, քանի որ հանդիպում են և մ.թ.ա.. I հազ. պատկանող համալիրներում (այդ ժամանակաշրջանին է պատկանում և Լոռի Բերդի դամբարաններից մեկում հայտնաբերվածը), իսկ Ալավերդուց (ՀԱՊԹ, գույք, ? 759/3) և Ե.Լալայանի պեղումներից հայտնաբերվածները (*Լալայան Ե.*, 1931) Հ.Ա.Մարտիրոսյանը թվագրում է մ.թ.ա. II հազ. վերջով (*Мартиросян А.А.*, 1964, էջ 225):

*Գոտիներ* - երկու օրինակով ներկայացված այս նյութերը պատրաստված են կաշվից, որոնցից պահպանված հատվածների մակերեսները զարդարված են բրոնզյա փոքրիկ կոճակների կիսագնդաձև գլխիկների միջոցով ստացված զանազան պատկերներով: Դրանք մի դեպքում ձևավորում են իրար զուգահեռ տարված հինգ հորիզոնական գծեր (աղ. XIV, 5), մյուսում՝ հորիզոնական երկշարք եզրագծերի միջև պատկերված եռանկյունիներ, անկյունաձև պատկերներ ու կեռ խաչեր (աղ. XXII, 14):

*Կարասներ և թաս* - բրոնզից պատրաստված երկու կաթսաները միանման են. ունեն դեպի ցած աստիճանաբար լայնացող վիզ, որը շեշտված անցումով միանում է կիսագնդաձև իրանին: Կաթսաներն ունեն երկուական կամարաձև կանթեր, որոնք մի դեպքում ամրացված են շրթին, մյուսում՝ շրթից սկսվելով, իրանին են միանում (աղ. XIV, 2, XXIV, 3): Երկու օրինակների վրա էլ կանթերից մեկը բացակայում է: Կաթսաներից մեկի հետ հայտնաբերված է կիսագնդաձև իրանով բրոնզյա թաս, որի հարթ հատակը երիզված է ցածր գոտիով (աղ. XIV, 4): Նման կաթսաներ հայտնի են Լճաշենի № 1 և Լոռի Բերդի № 2 դամբարաններից ու թվագրվեւմ են ուշ բրոնզի վաղ փուլով (*Мнацаканян А.О.*, 1957, էջ 149-150: *Деведжян С.Г.*, 1981, էջ 33, աղ.VI, 2): Ավելի ուշ (մ.թ.ա. I հազ. սկիզբ) ժամանակով է թվագրվեւմ Ղըդիր «Բուղա-քար» կոչվեդ վայրից հայտնաբերվածը, որի կոտրված կանթը հետագայում փոխվել է այլ ձկի կանթով, ինչը և ցույց է տալիս այմանի սերնդե-սերունդ փոխանցվելը (*Есаян С.А.*, 1976, էջ 142, աղ. 1317): Նման կաթսաներ հայտնաբերված են և Օրխևիից ու Գադրեկիլիր № 10 դամիարանից ու թվագրվում են մ.թ.ա. XIV-XIIդդ. (*Пицхелаури К.Н.*, 1979, աղ. XXI: Նույնի, 1969, աղ. IV): Բրոնզյա կաթսաներ հայտնի են Ջովդարից և այլ հուշարձաններից (*Քեսամանլի Գ.*, 1968, էջ 70), ինչը փաստում է ուշ բրոնզի դարաշրջանի I փուլում բրոնզյա ամանեղենի լայն կիրառությունը: Նույն ժամանակաշրջանի հուշարձաններում (Արթիկի դամի. № 575) իր զուգահեռն ունի և բրոնզյա թասը (*Хачатрян Т.С.*, 1975, էջ 220, նկ.131), որի արմատները, սակայն, վաղ բրոնզի դարաշրջանում են: Դրա ապացույցն է Մեջվրիսխևիից գանվածը (*Куфтин Б.А.*, 1941, նկ.17): Թասերի այս տեսակը տեսնում ենք և ուրարտական հուշարձաններում:

*Արձանիկներ, պերճանքի առարկաներ և այլ իրեր* - բարձր վարպետություն և նուրբ աշխատանքի արդյունք հանդիսացող այս իրերը ներկայացված են մի քանի տեսակներով: Դրանցից արձանիկները, նպաստելով նախնյաց աշխարհայաց-

քի նրբությունների ռացահայտմանը, արվեստի ռիասքանչ նմուշներ են հանդիսանում: Դրանց շարքում առանձին հետաքրքրություն է ներկայացնում մարդու, առյուծի և թռչունների քանդակներից կազմված արձանախումբը, որը ներկայումս եզակի է իր տեսակում: Հանդիսանալով նուրբ աշխատանքի արդյունք, այս նմուշը կազմված է երկաստիճան խարսիսաձև պատվանդանից, որի ստորին թևերի վրա տեղադրված են թռչունների արձանիկներ, իսկ վերին թևերին՝ իրենց առանցքի շուրջը պտտվող, առանձին պատրաստված հարթակների վրա ամրացված, մարդու և առյուծի քանդակներ: Մարդը, որը ձախ ծնկում ճառագայթաձև գծերով զարդարված սկավառակաձև վահանին ունի, մերկ է: Այդ մերկությունը, որըց երևում է նրա երկնեռ լինելը, չեն ծածկում գալարներով զարդարված գոտին և ուսագոտին, որից և ամրացված է ձախ թևի տակ տեղադրված կապարճը: Ուսակապից ցած երևում է ընդգծված կուրծքը: Մարդու աջ թևը ծալված է արմունկամասում, իսկ ձեռքը բռունցք է արված, որի մեջ ամենայն հավանականությամբ զենք է եղել, որը պահպանված չէ: Արձանիկի ոտքերին վեր ռարձրացված քթերով կոշիկներ կան, իսկ գլխին սաղավարտի ելուստ է քանդակված: Հանդիստ վեճակում է կանգնած և առյուծը, որի մարմինը զարդարված է եռանկյունաձև անցքերով, իսկ աչքերը, ինչպես և մարդունը, ընդելուզված են երկնագույն շաղախով: Գազանի ժանիքների արանքից փոքր-ինչ դուրս է ցցված լեզուն, իսկ կեռված պոչը ցած է իջնում: Գիշատչի ոտքերն ավարտվում են չոված մատներով (աղ. XIV, 1): Ամիոդջությամբ վերցված, դեռևս միակը հանդիսացող այս արձանախումբը առանձին մանրամասներով կապվում է ինչպես հետազոտվող, այնպես էլ ավելի վաղ ժամանակաշրջանի համանման նմուշներին, ինչը և ցույց է տալիս այս արձանախմբի տեղական արտադրանք լինելը: Այսպես, խարսիսաձև պատվանդանի նմանակները առկա են Լճաշենում, Արթիկում, Լոռի Բերդում և այլն, իսկ զինվորի արձանիկը նմանվում է Լոռի Բերդում հայտնաբերվածին: Նույն նմանությունն է դիտվեւմ և Այրումից, Նավուրից, Պառավաքարից հայտնաբերված, բայց ավելի ուշ ժամտնակաշրջանի պատկանող վինվորների արձանիկների համեմատական հետազոտության ընթացքում, որը խոսում է դարերից եկող ավանդույթների պահպանման մասին (***Есаян С.А.,*** 1976, նկ. 146, 148, 149, 151): Խոըն են և առյուծի քանդակի արձանները: Հիշատակենք Վանաձորի դամբարանի գավաթը, Ցոռլիի № 2 դամբարանից (Ալազանի գետահովիտ) գտնված առյուծի ոսկյա արձանիկի, որը թվագրվում է մ.թ.ա. III հազ. վերջով (***Пиотровский Б.Б.,*** 1949, էջ 46-47: ***Мартиросян А.А.,*** 1964, էջ 64-66: ***Пицхелаури К.Н., Дедабришвили Ш.Ш.,*** 1979, էջ 15, աղ. I2): Այդուհանդերձ շիրակավանյան նմուշի ամենամոտ զուգահեռը, ձևաբանական առումով, Ճաշենից [illegible] է, որը թվագրվում է մ.թ.ա. XIV-XIIIդդ. (***Есаян С.А., Мартиросян А.А.,*** 1975, էջ 259, աղ. II, 2): Նույն ժամանակաշրջանով է թվագրվում և Մեղրաձորի շրջանտձև ռերանով սակիը, որի մեջքը զարդարող առյուծի քանդակը [illegible] նմուշին (***Биятов Л.Н.,*** 1984, էջ 84): Նույն ժամանակաշրջանի նյութերում են եանդիպում և քարայծերի արձանիկներ: Դրանցից մեկը կոնաձև, ստորին մասում եռանկյունաձև անցքերով զարդարված հենակի վրա ամրացված թռռնկածույլ քանդակ է: Կենդանու մարմինը զարդարված է եռանկյունաձև անցքերով և

ուռուցիկ կամարաձև զարդերով (աղ. XXXIII, 26): Աբձանիկներից մյուս երեքից երկու-մի եռակները ստորին մասում սեպիկներ ունեն, ինկ մեկի հեռակը թերի է պահպան-ված (աղ. XXXIII, 23-25): Այս արձանիկների ճշգրիտ զուգահեռն է Արթիկի № 79 դամբարանից հայտնաբերվածը, որը հեղինակը թվագրում է մ.թ.ա. XII-XIդդ. Նշելով միաժամանակ, որ այն, ինչպես և այդ դամբարանից գտնված մյուս նյութերը. «իրենց մի շարք հատկանիշներով չեն կարող ներառվել այդ հիմքի նյութական մշակույթում» (*Хачатрян Т.С.,* 1975, էջ 217-218, նկ.129): Իրոք, այս արձանիկների մյուս զուգա-հեռներն են Լճաշենից և Քվեմո-Սասիրեթիից հայտնաբերվածները, որոնք թվագրվում են մ.թ.ա. XIV-XIIIդդ.: Այդ ժամանակաշրջանի նյութերի շարքում են հանդիպում և թռչնաձև կախիկների վաղ նմուշները: Դրանցից Շիրակավանում հայտնաբերված են երեքը. երկուսը երկարապոչ, սնամեջ իրանին եռանկյունաձև անցքեր ունեցող կախիկներ են, որոնց վզի իրմքում օղակ է արված: Կախիկների այս տարբերակի (աղ. XIII, 3, XXXII, 12) զուգահեռները բազմաթիվ են Հայաստանի և հարակից տա-րածքների համաժամանակյա հուշարձաններում (Լճաշեն, Արթիկ, Կարմիր-բերդ, Լոռի Բերդ, Գետաբեկ-Կալաքենդ, Բայան, Խաչբուլաղ և այլն): Նույնը չի կարելի ասել կախիկներից երրորդի վերաբերյալ: Վերջինս կարճ վզով, կլորացող իրանով կախիկ է, որի օղակը տեղադրված է կոծքի վրա (աղ. XXXII, 13): Կախիկների այս տարբե-րակի զուգահեռները եալտնի են Կոբանյան մշակույթին պատկանող հուշարձաննե-րում: Համեմատության համար իրշատակենք Տլիրց հայտնաբերվածները, որոնց մի մասը բացված թևիկներ ունի, ինկ մյուսների մոտ դրանք բացակայում են: Այդ նմուշնե-րի, ինչպես և հյուսիսային Կովկասի այլ հուշարձաններից հայտնաբերված նման-օրինակ կախիկների համար ընդհանուրը կոծքի վրա տեղադրված օղակն է (*Техов Б.В.,* 1977, նկ.112, 8-9): Այդ օղակը, Արևելյան Վրաստանից հայտնաբերված օրինակ-ների վրա (օր. Սամթավրո, Գադրեկիլի, Գուլգուլա և այլն), տեղադրված է գլխի մասում: Հայաստանի և Կոբանյան մշակույթի միջև եղած կապերը, դիտված է և այլ նյութերի քննությամբ (տե՛ս *Мартиросян А.А.,* 1964, էջ 82, 123-124), փաստվեւմ են և Շիրա-կավանից հայտնաբերված բրոնզյա շքասեղներից մեկի ուսումնասիրության ընթաց-քում: Վերջինս վերին մասում ավարտվում է մեջքին երեք սեպաձև ելուստներ ունե-ցող սակրաձև հավելվածով, որից ցած՝ շքասեղի ծողի վրա, օղակ է պատրաստված (աղ. XXV, 1): Այսօրինակ իրեր հայտնի են Տլիրց և հետազոտողի կողմից թվագրված են մ.թ.ա. XVI-XIIIդդ. (*Техов Б.В.,* 1977, էջ 39-41, նկ. 43): Նման սակրաձև ելուստներ ունեն և Կոբանից հայտնաբերվածները, որոնց ետին մասում, սակայն, թռչունների կամ կենդանիների քանդակներ են արված (*Уварова Т.С.,* 1900, աղ. XXIX, 3, XXXIX, 7): Սակրաձև զարդ ունի և Բայբուրդից գտնվածը (մ.թ.ա. XV-XIVդդ. ըստ *Վ.Ն.Փիցխ-ելաուրիի* թվագրության), որը Բ.Ա.Կուֆտինը համարում է Առաջավոր Ասիայից եկ ող ազդեցությամբ պատրաստված իր (*Куфтин Б.А.,* 1941, էջ 76, նկ. 871): Հեղինա-կը գտնում է, որ Առաջավոր Ասիային բնորոշ են և կենդանիների քանդակները: Այս կարծիքին առարկում է Բ.Տեխովը նկատելով, թե կենդանիների քանդակները սամե-նևին էլ օտար չեն բուն Կոբանյան մշակույթին: Չառարկելով այս դիտողությանը, մենք հակված ենք սակրաձև կախիկների զարդաձևը տեսնել հարավից հյուսիս

տարածվող ազդեցության հետևանք, քանի որ սակոերը, հանդիսանալով «Կենտրո-նաանդրկիվեապան» մշակույթի բնորոշ զինատեսակներից մեկը (*Խնկիկյան Օ.Ս.*, 1981, էջ 136-147), հազվադեպ են հանդիպում Կոբանյան մշակույթում, իսկ սեպաձև ելուստներ ունեցող սակրերը և դրանց կաղապարները ամենևին էլ եզակի չեն Կուր դետից հարավ գտնվող հուշարձաններում: Հետևաբար այն հանգամանքը, որ ներկա-յումս նման շքասեղներ դեռևս Հայաստանում չեն հայտնաբերվել, չի նշանակում, թե Շիրակավանի նմուշը Կոբանից է Շիրակ թափանցել և կամ թե Կոբանյան մշակույթի ազդեցությամբ է տեղում պատրաստվել: Շիրակավանից հայտնաբերված շքասեղնե-րի երկրորդ տարբերակը ոլորուն գլխամաս ունի (աղ. XXX, 7, XXXVIII, 3): Այս պար-զունակ շքասեղները ուշ բրոնզի վաղ փուլին բնորոշ և լայն տարածում գտած նյութե-րից են հանդիսանում. դրանց զուգահեռները բազմաթիվ են հետազոտվող ժամանա-կաշրջանի հուշարձաններում (Արթիկ, Լճաշեն, Ջուլֆա, Խաչբուլաղ, Մաղնիսճալա և այլն):

Նյութերի այս խմբում ենք պայմանականորեն դասում և ոսկոից պատրաստված երկու իր: Դրանցից մեկը քլունգաձև է և կինտրոնում մբջանցիկ անցք ունի (աղ. XXIX, 6), իսկ նյուսը վերին մասում քառակող գլխամաս ունի, ուր և միջանցիկ անցք է բացված (աղ. XLII, 13):

Հետազոտվող ժամանակաշրջանի բնորոշ նյութերից են բրոնզե լարից պատ-րաստված շրջանաձև քունքաւզարդերը, որոնց մեկ ծայրը օձագլուխ իջնում է օղակի կենտրոնով: Այս զարդերից մեկի փոքր-ինչ ծռմռված է (աղ. XVIII, 5), իսկ մյուս երկուսը նախնական տեսքով են պահպանված (աղ. XXXVI, 1,2): Զարդերի այս տեսակը իր բազմաթիվ զուգահեռներն ունի մ.թ.ա. XIV-XIIդդ. թվագրվող հուշարձաններում (Լճա-շեն, Արթիկ, Գառնեկիլի և այլն). եետազայում այդպիսիները հազվադեպ են հանդի-պում: Շիրակավանի հետազոտվող ժամանակաշրջանին պաականող դամբարան-ներից հայտնաբերված նյութերի շարքում բավական մեծ խումբ են կազմում օղերը, որոնք պատրաստված լինելով բրոնզե լարից կամ թիթեղից, ավարտվում են իրար վրա ոերված, մոտեցող կամ հեռացող ծայրերով: Առկա են և պարուրաձև փաթաթված օղեր (աղ. XII, 7, XIII, 8, XVIII, 9-12, XXIII, 2-4, XXIX, 7,8, XXXII, 14-16, XXXVI, 6-9, XXXVIII, 2, XXXIX, 2,8,9): Նշված տարբերակների զուգահեռները բազմաթիվ են բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններում: Այս տեսակետից առավել հետաքրքիր են «մեկուկես պտտաշրջան» ունեցող բրոնզյա օղերը, որոնք Շիրակավանում չորս օրի-նակիվ են ներկայացված (երեքը գտնվել են շինարարական աշխատանքների ժա-մանակ): Սրանք ներսից հարթ, իսկ արտաքին երեսից կլորացող, կտրվածքում կի-սաշրջանաձև, ծվածիր եզրազծով զարդեր են, որոնք վերին մասում նեղ և բարակ լինելով, աստիճանաբար լայնանում են ստորին եատվածում ու ձևավորում իրար կողքով անցնող թկիկներ (աղ. XXXVI, 10): Իրենց նախաձևը վաղ բրոնզի դարաշրջա-նում (օր. Շենգավթի զարդը: Տե՛ս *Սարդարյան Ս.Հ.*, 1967, նկ. 452) ունեցող այս օղերը առավել բնորոշ են ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլին: Հեաաքրքիր է, որ նման երևույթ է դիտվում և Կոբանյան մշակույթին պաականող հուշարձաններում: Այս կապակցությամբ Բ.Վ.Տեխովը նշում է, թե չնայած դրանց արմատները մ.թ.ա. III

հազ. մշակույթում են, բայց. «դրանք հաակավես մեծ քանակությամբ են հանդես գալիս Կոբանյան մշակույթում մ.թ.ա. XIV-XIIIդդ.: Հետագայում այդպիսիները առավել սակավ են հանդիպում» (*Техов Б.В.,* 1977, էջ 170-171, աղ. 114, նկ. 2-4):

Գոյատևման երկար ժամանակաշրջան են ընդգրկում և տարատեսակ ապարանջաններից կտրվածքում շրջանաձև, մոտեցող ու իրար վրա բերված ծայրերով ավարտվող օրինակները (աղ. XVI, 7-9, XXX, 8,10): Դրանց զուգահեռները բազմաթիվ են բրոնզ-երկաթի դարաշրջաններին պատկանող հուշարձաններում: Այս առումով ուշագրավ են նույն ձևն ունեցող, բայց արտաքին երեսը թեք կամ ուղիղ գծիկներով զարդարված ապարանջանները (աղ. XXXIII, 1, XXXVI, 3), ինչպես և եղնաձև զարդ ունեցող, բայց բրոնզե թիթեղից պատրաստված նմուշները, որոնցից մեկի թերի է պահպանված (աղ. XXXVI, 4,5): Այսօրինակ ապարանջանների վաղ նմուշները հայտնի են ուշ բրոնզի դարաշրջանից և թվագրվում են մ.թ.ա. XIV-XIIդդ. (Արթիկ, Գադրեկիլի և այլն: Տե՛ս *Хачатрян Т.С.,* 1975, նկ. 91, 122: *Пицхелаури К. М.,* 1979, աղ. XX, 2-3: Մանրամասները տե՛ս *Եսայան Ս.Ա.,* 1964, էջ 83-84): Այս ապարանջանները լայն տարածում են գտնում երկաթի դարաշրջանում (Լոռի Բերդ, Էլար և այլն): Ասվածից հետևում է, որ ապարանջանների քննված տեսակները առանձին վերցված, ստույգ թվագրող նյութ հանդեսանալ չեն կարող: Նույնը կարելի է ասել և կիսագնդաձև կամ ծալքավոր մակերես ու ետին մասում նեղ կամրջակներ ունեցող բրոնզյա կոճակների վերաբերյալ (աղ. XIII, 5-7, XVI, 6, XVIII, 7-8, XXII, 18-20): Հետաքրքիր է կոճակաձև զարդը, որի եռանկյունաձև անցքերում վայտիկներ են ընդելուզված, ինկ իրի ետին մասում ամրացված ոլորուն ձողիկի ազատ ծայրը օղակով է ավարտվեւմ, որը հավանարար կախելու համար է նախատեսվել (աղ. XXII, 11): Այս զարդը հեռավոր նմանություն ունի «Կաղնի ծառ» հուշարձանից հայտնաբերված նմուշի հետ, որը գտնված է մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրված համալիրից (*Есаян С.А.,* 1976, աղ. 132, 8):

Պերճանքի առարկաների շարքում փոքր խումբ են կազմում ոսկուց պատրաստվածները: Դրանցից երկուսը սկավառակաձև կախիկներ են: Մեկի մակերեսը զարդարված է սեղմմամբ ստացված գնդիկների երկու շրջանով, որոնցից մեկը գոտևորում է իրի եզրը, մյուսը՝ կենտրոնական հատվածը: Այդ շրջանների մեջև գտնվեղ տարածքում պատկերված են վեց ծառաձև զարդ, որոնց ճյուղերի հակադիր կողմերից մեկական գնդիկներ են արված: Վերջիններս, ինչպես և ծառերը, ստացված են սեղմելու եղանակով: Ծառերի միջև պատրաստված են հատուկ, բարձր կողերով շրջանաձև բներ, որոնց մեջ շաղախ է ընդելուզված: Բներից վերջինը տեղադրված է կենտրոնական շրջանի մեջ (աղ. XXXIII, 17): Կախիկներից մյուսը կազմված է 2.7սմ տրամագիծ ունեցող երկու սկավառակաձև թիթեղներից, որոնց մակերեսները, ինչպես և նախորդ դեպքում, զարդարված են սեղմմամբ ստացված գնդիկների երկու շրջանով: Այս դեպքում, սակայն, գնդիկները իրարից հեռու են տեղադրված: Նշված շրջանները միմյանցից անջատված են հոծ շրջանագծով, որը նույնպես սեղմմամբ է ստացված: Նույն եղանակով է ստացված և իրի կենտրոնական մասը զարդարող կիսագնդիկը: Կախիկն վերին մասում եղած անցքում պահպանված է ոսկե լարից պատրաստված

օղակր: Կախիկր փեղկերի մրջև մածուկ է լցվել, որը և կախիկրն զանգվածեղ տեսք Է հաղորդել (աղ. XXXIII, 18,19): Պատրաստման նույն եղանակն ենք տեսնում և ոսկե թերթիկներով երեսպատված բաժանարարների վրա, որոնց մրջուկր կրկրն շաղախն է: Շաղախը երեսպատող ոսկյա թերթիկները լրացուցիչ ամրացվել են ոսկյա թերթիկ-ամրակալներով, որոնցից մեկե անզարդ է, իսկ մյուս երկուսիկը զարդարված է ոսկյա թելիկրվ ստացված հասկածև պատկերով: Նման զարդ ունի և կենտրոնական ամրակալը: Ամրակալների միջև եղած տարածությունը զարդարված է ոսկե թելիկով ստացված գալարներով (աղ. XXXIII, 21): Բաժանարարներից մյուսի վրա այդ տարածությունները զարդարված են փորագրմամբ ստացված թեք գծերի ու անկյունների պատկերներով: Վերջիններիկ մրջև մնացած հատվածները լցված են կետերով (աղ. XXXIII, 20): Առանձին գեղեցկությամբ, բայց և պատրաստման նրբությամբ են առանձնանում արցունքաձև կամ կաթիլաձև ականջօղերը: Սրանք վերիկ մասում նեղ և ապա աստիճանաբար լայնացող ու ստորիկ կեսում կրկրն նեղացող ու սրվող, կտրվածքում շրջանաձև շաղախե միջուկներ են, որոնց հակադիր կողմերից ամրացված են ոսկյա նեղ թերթիկներ: Վերջիններս իրի ներքևում խաչաձև միանում են: Միացման տեղում ամրացված են ոսկյա գնդիկներ: Զարդերից երեքի թերթիկները անզարդ են (աղ. XXXIII, 10), իկկ մյուս երեքի վրա հատիկներ են ամրացված (աղ. XXXIII, 11): Հատիկներով զարդարված կախիկերը ստորին մասում ամրացված են երեք, իսկ անզարդ թերթիկնեը ունեցողները՝ մեկական հատիկներով: Թերթիկներր իրերի վերիկ մասում ամրացված են հորիզոնական տարված ոսկյա զոտեկապ-թերթիկնեըով, որոնց մեջ և ամրացված են օղակների ծայրերը:

Ոսկյա զարդերի մյուս նմուշները ուլունքներն են, որոնց մր մասը պատրաստված է բարակ լարերից, մյուսնեըը՝ թերթիկներից: Լարերից պատրաստվածնեըը պարուրաձև փաթաթած խողովակի ու տակառիկր տեսք ունեն, իսկ թերթիկներով պատրաստվածների մրջուկր կրկրն շաղախն է: Սրանք գնդաձև են ու խորանարդաձև (աղ. XXXIII, 22): Գլանիկե տեսք ունի և ոսկե թերթիկից պատրաստված ուլունքներից վեըջիկը, որի հակադիր եզըերում չորս պարույրներ են ամրացված (աղ. XXXII, 18): Այս ուլունքի վաղ նմուշը հայտնի է Ֆիլակոպիից և թվագրվում է մ.թ.ա.. III հազ. (*Barton-Brown T.*,1970, էջ 164): Մ.թ.ա. III հազ. II կեսով է Կ.Շեֆֆերը թվագրում Տրոյա II հայտնաբերվածը, եասցնելով դրա վերին սահմանը մ.թ.ա. XIXդ. (*Schaeffer Cl.*, 1948, նկ.1654): Հայաստանում նման ուլունքներ հայտնի են Լճաշենից, Լոռի Բերդից և թվագրվում են մ.թ.ա. XIV-XIIIդդ. (***Мнацаканян А.О.***, 1957, էջ 151*: **Деведжан С.Г.***, 1981, նկ. 27): Նշենք, որ Լճաշենից ու Լոռի Բերդից հայտնաբերված ոսկե զարդերի թվում են և սկավառակաձև կախիկներն ու զարդերի մյուս տեսակներր: Խոսելով Տրոյայից և Կրետե-Միքենյան աշխարհից և ընդհանրապես Առաջավոր Ասիայից (Ալաջա-Հույուկ, Թել-Բրակ և այլն) գտնված խողովակաձև ուլունքների մասին, Գ.Չայլդը նշում է, թե. «դրանք ցույց են տալիս ոչ միայն Տրոյայի հարստությունը, այլև նրա առևտրական կապերի լայն ցանցը» (***Чайнд Г.***, 1952, էջ 76-78, 115): Իրավացի է Հ.Ա. Մարտիրոսյանը, երր դիտել է տալիս, թե. «չպետք է զարմանալ Հայաստանից գտնված ոսկե իրերի նման առատության վրա, որովհետև այն գտնվում էր պերճ-

անքի նման իրերի արտադրության երկու խոշոր (Միջագետք և Առաջավոր Ասիա-Օ.Խ) կենտրոնների միջև, և նախկինից եկող այդ ձևերն են, որ կրկին հանդիպում են ետերկաթեդարյան ժամանակաշրջանի մշակույթում (***Мартиросян А.А.***, 1964, էջ 106)»: Իրոք, գնդաձև ու պարուրաձոգայար ուլունքներ, կախիկներ հայտնի են և Օձունից, Թրիալեթիի № 16,17 դամբարաններից *(Դևեջյան Ս.,* 1966, էջ 100-109: ***Куфтин Б.А.,*** 1941, էջ 99, նկ. 105, 106): Դրանց է պատկանում Կարճաղբյուրի դամբարանից հայտնաբերվածը (1974թ.), որը բրոնզից է պատրաստված և գտնվել է մ.թ.ա. VIII-VIIդդ. թվագրվող նյութերի միջավայրում (Հ.Հ. Մնացականյանի պեղումներից: Նյութը հրատարակված չէ): Զարդերի մյուս խումբն են սարդիոնից, շաղախից, բրոնզից ու ծարիրից պատրաստված ուլունքներն ու կախիկները: Կախիկներից երկուսը ծարիրից են պատրաստված: Մահիկաձև այս կախիկների օղակները չեն պահպանված (աղ. XXXIII, 13,14): Այս զարդերը նույնպես գոյատևման լայն ժամանակաշրջան են ընդգրկում: Դեռևս միջին բրոնզի դարաշրջանից հայտնի այս կախիկները ուշ բրոնզեդարյան նյութերի շարքում հայտնի են Լճաշենից, Լոռի Բերդից, Անիից, էլարից, Վանաձորից, իսկ Մեծամորի՝ մ.թ.ա. I հազ. շերտում հայտնաբերված է նման կախիկ պատրաստելու կաղապար (*Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,* 1973, էջ 55, նկ.78: *Խանզադյան Է.,* 1979, էջ 111, նկ.141, աղ. XXVII: *Դևեջյան Ս.,* 1966, աղ. I, 3): Նման զարդեր հայտնի են Հայաստանին սահմանակից հանրապետությունների բազմաթիվ հնավայրերից, ինչը և մատնանշում է դրանց լայն տարածված լինելը:

Հաջորդ խումբն են սարդիոնից, ագաթից, բրոնզից և շաղախից պատրաստված տարատեսակ ուլունքները: Սարդիոնից պատրաստվածները գնդաձև են (աղ. XVIII, 6, XXXII, 18, XXXV, 6), տակառաձև (աղ. XVIII, 6, XIX, 11, XXXV, 6, XL, 13) ու «հատած» (աղ. XVI, 10, XIX, 11), իսկ ուլունքներից մեկը վեցանիստ է, որի կողերով ընդերկայնական ակոսներ են տարված (աղ. XXXIII, 16): Վեցանիստ ուլունքները հետագոտվող ժամանակաշրջանի վաղ շրջանի բնորոշ զարդերից են և բազմաթիվ օրինակներով հայտնի են Լճաշենից, Լոռի Բերդից, Արթիկից, Գեղարոտից, Կերմելիից և մ.թ.ա. XIV-XIIդդ. թվագրվող այլ հուշարձաններից (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 91, նկ.43, 3: ***Хачатрян Т.С.,*** 1975, նկ. 92: ***Пицхелаури К.Н.,*** 1979, XXIX, 12): Ինչ վերաբերում է սարդիոնից պատրաստված մյուս ուլունքատեսակներին, ապա դրանք գոյատևման առավել մեծ ժամանակաշրջան են ընդգրկում: Նույնը կարելի է ասել և բրոնզե թերթիկներից պատրաստված գլանաձև (աղ. XVI, 10, XIX, 11, XXXVI, 13) ու բրոնզից, ծարիրից և շաղախից պատրաստված, կենտրոնական ուռուցիկ խողովակ ունեցող սկավառակաձև ուլունքների վերաբերյալ (աղ. XVI, 10, XVIII, 6, XXXII, 18): Խոշոր խումբ են կազմում շաղախից պատրաստվածները: Սրանց մի մասը շեղանկյունաձև է (աղ. XVI, 10, XVIII, 6, XIX, 11), մի քանիսը երկկոնիկ՝ կողային փոքրիկ ելուստներով (աղ. XVI, 10), մյուսները օղակաձև (աղ. XXXV, 5,6) ու ձողիկաձև են (աղ. XVIII, 6): Շաղախից են պատրաստված և գլանաձև ու եռանիստ ուլունքները, կնիքները: Դրանց մակերեսները զարդարված են ցանցկեն, խաչաձև հատվող ու եղևնաձև պատկերներ ձևավորող փորագիր գծերով (աղ. XXXII, 18, XXXVI, 11,

XXXIX, 15): Նկարագրված ուլունքատեսակները հայտնի են բրոնզ-երկաթի դարաշրջանների տարբեր փուլերի հուշարձաններից և մանրամասն հետազոտված են մասնագիտական գրականության էջերում (*Խանզադյան Է.*, 1979, էջ 87-114: *Փիլիպոսյան Ա.*, 1998, էջ 27-30, 64-65 և այլոք): Ուլունքներից վերջինը պատրաստված է ծովային խխունջից (աղ. XXXIII, 12):

*Խեցեղեն արտադրանք* - ներկայացված է կճուճներով, քրեղաններով, կարասներով և այլ տեսակներով,

*Սափորներ* - բաժանվումեն երկու տարբերակի: Առաջին տարբերակում ենք դասում սափորներից մեկը: Այն գլանաձև բարձր վզով, վերին մակերեսը հարթ կտրած շուրթով և ուսի մասում փքուն իրան ունեցող անոթ է, որի շրթից ուսն է իջնում կանթը: Վերջինս շրթի հետ միացման հատվածում ձևավորում է եռանկյունաձև եարթակ: Անոթի սև փայլեցրած մակեբեսը ուսի մասում զարդարված է փայլեցմամբ ստացված ցանցկեն պատկերներով ու եռանկյունաձև դրոշմազարդերով: Այդ պատկերախումբը ստորին մասում սահմանագծված է փորագիր ալիքագարդերով ու ակոսագծերով, որոնցից ցած ուղղահայաց փայլագծեր են տարված, որոնք և զարդարում են իրանի ստորին մասը (աղ. XXVIII, 10): Այս սափորի կոկնօրինակներն են Արթիկից, Գադրեկիլիր № 26, 66, ինչպես և Սամթավրոյի № 160 դամիարանից հայտնաբերվածները: Այդ նյութերը թվագրվում են մ.թ.ա. XIV-XIIIդդ:

Երկորրդ տարրերակին պաւականող սափորները կոկնելով նախորդի ձևը, զուրկ են կանթից: Յարկ է նշել, որ ձևական ընդեանրությամբ հանդերձ, նկատվում է, որ սափորների մի մասի իրանը կլորացող, ուսի մասում փոքր-ինչ փքուն տեսք ունի (կիկնում է I տարբերակի ձևը), մինչդեռ մյուսների մոտ այն թեթևակի ձգված է. ուսերի թեքվածությունը դեպի ցած ավելի է ընդգծված (աղ. XII, 3, XVI, 3, XVII, 5, XXXII, 5,19, XXXII, 4ա, 5, 19, XL, 3): Այս սափորների գերակշռող մեծամասնությունն ունի սև կամ գորշ իաամիած մակերես. սև փայլեցրած մակնրեսը, որը բնորոշ է փքուն իրան ունեցողներին, այս անոթների վրա հազվադեպ է եանդիպում: Ուշադրություն է գրավում և այս անոթնեռի շրթի ձևը, փքուն իրան և սև փայլեցրած մակեռես ունեցող սափորներին հաակաևշական է շրթի վերին մասի հարթ կտրած ձևը, որը միջին բրոնզեդարյան իսեցեգործության բնորոշ հաականիշներից է, մինչդեռ երկիորդների շուրթը կլորացող է: Դիտվում է ևս մեկ մանրամասն. եարթ կարած շուրթ, կլորացող (փքուն) իրան և սև փայլեցրած մավերես ունեցող սափորների զարդանախշը (ցանց, անկյունաձև հատվող գծեր, եռանկյունիներ, ուղղահայաց գծեր, լայն ժապավեն) կատարված է բացարձակապես փայլեցման եղանակով (աղ. XII, 4, XIV, 9, XVII, 2, XIX, 3.12,13, XXII, 1,3, XXIV, 6, XXV, 2-11, XXXIV, 2,3,5), մինչդեռ խամիած մակերեսով սափորների զարդանախշում գերակշռում է փորագրման եղանակը. փայլեցմամբ արված զարդե այդ անոթների վրա սակավ է հանդիպում (աղ. XII, 3, XVII, 5 փորագիր է): Այս սափորներից առանձնանում են փքուն իրանով անոթները, որոնց սև, գորշ, երբեմն դարչնագույն խամրած մավերեսները (հազվադեպ թույլ փայլեցված) զարդարված են ալիքաձև տարված մեկ-երկու փորագիր գծերով, տկոսներով (աղ. XIII, 13,14, XIV, 3,11, XIX, 2, XXXIII, 28, XXXVI, 15): Սափորների այս խմբին ունի ինչպես

հարթ կտրած, այնպես էլ կլորացող շուրթ և ձևարանորեն յուրատեսակ մրջանկյալ օղակ է հանդիսանում սև փայլեցրած փքուն և անփայլ, ծգված իրան ունեցողների միջև:

Սափորների քննված տեսակը հանդիսանալով ուշ բրոնզեդարյան մշակույթի բնորոշ նյութերից մեկը, իր բազմաթիվ զուգահեռներն ունի մ.թ.ա. XV-XIդդ. թվագրվող հուշարձաններում: Մ.թ.ա. XV-XIVդդ. (օր. Լճաշեն, Լոռի Բերդ, Ջեմո-Բոդբե, Բրիմածղալի և այլն), սակայն, այդ սափորների հետ հանդես են գալիս և երկգույն ու սպիտակ ներկով ընդելուզվածներ, որոնք մ.թ.ա. XIV-XIIIդդ համալիրներում հազվադեպ են հանդիպում: Շիրակավանում ալդպիսիները բացակայում են. հետևաբար Շիրակավանի վաղ խմբի դամբարանները, որոնք գերակշռող մեծամասնությունն են կազմում, կարող են թվագրվել մ.թ.ա. XIV-XIIIդդ.: Այդ թվագրությունը հաստատվում է և ռադիոկարբոնային անալիզների տվյալներով: Մելաանիի «Պևրեբի» հուշարձանից հայտնաբերված, Շիրակավանի նյութերին պատճենող նմուշների հետ գտնված փայտյա իրերից վերցված անալիզների արդյունքները ցույց են տվել մ.թ.ա. XIVդ. վերջ - XIIIդ ընկած ժամանակաշրջանը (***Абдушелишвили М.А.,*** 1980, էջ, 71, աղ. XII-XIII): Այդ ժամանակաշրջանով են թվագրվում և Լճաշենից, Աղթիկից, Կարմիր բերդից, Էլառից, Ն.Գետաշենից և բազմաթիվ այլ վայրերից հայտնաբերված, սև փայլեցրած մակերես ու փայլեցմամբ ստացված զարդանախշ ունեցող փքուն իրանով սափորները, որոնք ամենևին չեն տարբերվում շիրակավանյան նմուշներից: Շիրակավանի մի քանի դամբարաններից (№ 23,76,95) հայտնաբերված սափորներր, սակայն, առանձնանում են մակերեսի խայտաբղետ գույնով, փոբագըելու և կամ սեղմելու եղանակով ստացված զարդերով, մ.թ.ա. XII-XIդդ. խեցեղեն արտադրանքին բնորոշ այլ հատկանիշներով (***Мартиросян А.А.***, 1964, էջ 120,129): Այս անոթների զուգահեռները տեսնում ենք Էլառում, Դիլիջանում, Գյումրիում, Երևանի մաքրման կառույցների մոտ գտնվող դամբարաններից հայտնաբերված հիցանոթների շարքում (***Խանզադյան Է,*** 1979, էջ 85, աղ. XVII, 3: ***Եսայան Ս.,*** 1969, աղ. 32 և այլոք), համաժամանակյա այլ հուշարձաններում:

***Սափորաձև խոշոր անոթներ*** - ունեն դեպի դուրս կլորացող շուրթով ափարտվող գլանաձև կտրճ վիզ և համեմատաբար խոշոր, ուսի մասում փքուն իրան: Այս անոթներից երկուսի փորի վրա երկեւակյան օղակաձև կանթեր են ամրացված (աղ. XXIX1, XLI1). մյուսները զուրկ են դրանցից (աղ. XIII, 9, XV, 4, XVII, 2, XXV, 17,18): Մնացած մանրամասներում (սև փայլեցրած կամ խամրած մակերեսին ակոսազոտիներ, փորագիր ալիքներ և փայլեցմամբ արված գծրդեր) սափորներին կրկնող այս անոթների զուգահեռները հայտնի են վերը նշված հուշարձաններից: Վերջիններիս շարքում (օր. Գյումրի, Մադնիսճալա, Գադրեկիլի, Կեդելի և այլն: Տե՛ս ***Мартиросян А.А.,*** 1964, նկ. 51, էջ 129: ***Пицхелаури К.Н.,*** 1979, աղ. XIX, 8, XXI, 3,12, XXII, 5, XXVII, 8, 9,13,15, XXIX, 4: ***Тушишвили Н.Н.,*** 1972, աղ. XXX և այլոք) առկա են և երկու կանթ ունեցողները, որոնք հանդես գալով ուշ բրոնզի դարաշրջանում, լայն սարածում են գտնում հետագայում:

Զարդանախշի ձևերում դիտվող պարզեցումը և ընդհանրապես ավելորդ, լրացուցիչ

աշխատանքից խուսափելու միտումը դիավում է և հեցանոթների մյուս տեսակների քննության ընթացքում:

*Կճուճներ* - ներկայացված են, այսպես կոչված, «խոհանոցային» և «շքեղ, ճաշասենյակային» տեսակներով, Առաջինները լայնարերան, դուրս ճկված կլորացող կամ ուղիղ կտրած շրթով, գոգավորվող, սակավ՝ կսրոն ուղիղ վզով (աղ. XXXI, 1,2, XXXV, 12), կլորացող և փքուն իրանով անոթներ են, որոնք ավարտվում են հարթ, երբեմն՝ թույլ կլորացող հատակներով, Դրանց մի զգալի մասի շուրթը, ինչպես և միջին որոնգեդարյան նմուշները, ակոսազոտի ունի, որը և կտրվածքին աստիճանի ձև է եաղորդում (աղ. XVIII, 1, XXVII, 2, XXIX, 2, XXXI, 4, 6, XXXIV, 1, XXXV, 11, XXXVII, 2, XXXVIII, 8, XLI, 7,10): Միջին որոնգեդարյան խեցեգործության ավանդույթների հետ է կապվում և շրթի զարդանախշումը (աղ. XXXI, 6): Ինչ վերաբերում է լրացուցիչ հարդարանքից զուրկ, սև անփայլ, գորշ կամ բացդարչնագույն մակերեսներին մրի հետքեր նրող այս անոթների գարդարանքին, ապա այն հիմնականում հատիկների շարքն է, ուռուցիկ պարանազարդը, փորագիր ալիքազոտին ու ակոսազարդը: Անոթների հատակները եաճախ զարդարված են փորագիր գծերով կամ հատիկներով (աղ. XI, 7-9, XII, 1, XIV, 12, XV, 1, XVI, 1-2, XVIII, 1, XX, 1, 2, XXI, 1, XXV, 13,14, XXVII, 2, 3, XXVIII, 6,16,17, XXIX, 2, XXX, 4, XXXIV, 1, 4, XXXV, 11,12, XXXVI, 14, XXXVII, 2, 5, 6, XXXVIII, 8, 9, XXXIX, 3, 10, XLI, 5, 7,10, XLII, 18), որի արմատները նույնպես միջին որոնգի դարաշրջանում են: Այս անոթները հայտնաբերված են հետազոտվող դարաշրջանին պատկանող բոլոր դամբարաններում և իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն ժամանակաշրջանի տարրեր փուլերով թվագրվող հուշարձաններում: Ինչ վերաբերում է կճուճների երկրորդ խմբին («շքեղ»), ապա սրանք ևս կլորացող կամ փքուն իրանով անոթներ են, որոնք հիմնականում ավարտվում են դուրս ճկվող, կլորացող շուրթով (ուղիղ վիզ ունեցողները հազվադեպ են հանդիպում), որը զուրկ է, սակայն, ակոսազոտուց (վստ խմրի դամբարաններից հայտնաբերվածների շուրթը վերին մասում հարթ է): Այս անոթների հատակներին բացակայում են հատիկազարդերն ու փորագիր գծերը, իսկ նմուշներից մեկը օղակաձև այսակ ունի, որը ցածր նստուկի ձևով օղակում է եատակը (աղ. XXXII, ա1): Այս կճուճների սև փայլեցրած (առանձին դեպքերում և անփայլ կամ խամրած, աղ. XX, 3, XXXVIII, 4, XXXII, ա1, XXXIX, 9) մակերեսները զարդարված են մի քանի շարքով տարված ակոսազոտիներով, ալիքներով, բայց գերազանցապես՝ փայլեցմամբ ստացված ուղիղ և անկյունաձև միացող գծափնջերով, երբեմն՝ ցանցապայակերով ու սեպաձև դրոշմազարդերով (աղ. XIII, 11, XVI, 4, XXI, 4, XXV, 12, XXVII, 3, XXVIII, 11,12, XXXIII, 30, XXXII, 1, XXXV, 2, XXXVII, 1, 7, XL, 4,8): Անոթներից մեկի վրա փայլազծերի ու ակոսների հետ արված են խումր-խումր իջնող մատնեքազարդեր (աղ. XII, 2), իսկ գնդաձև իրանով կճուճներից մեկի գորշ խամրած մակերեսը զարդարված է թեք տարված, միմյանց հաջորդող ճկվածքագոտիներով (աղ. XX, 3):

Արտաքին ձևավորմամբ այս կճուճներից առանձնանում են երկուսը: Մեկը ուսի վրա երեք կանթ ունի և իրանի վերին հատվածում զարդարված է դրոշմելու եղանակով ստացված սեպերի, անկյունաձև գարդերի ու գալարների պատկերներով (աղ.

XXXII, 20), իսկ մյուսը՝ անկյունաձև հատվող գծիկներով, ալիքներով ու մեանդր հիշեցնող գծիկների շարքով: Ուղիղ բարձրացող վզով այս անոթի հակադիր կողմերում երկուական բռնակ-ելուստներ են ամրացված (աղ. XXIV, 9): Այս կճուճի ճշգրիտ զուգահեռներն են Արթիկի I խմբի դամբարաններից հայտնաբերվածները, իսկ դրոշմամբ ստացված սեպիկներ ու շրջանաձև զարդով անոթներ տեսնում ենք ոչ միայն Արթիկո վաղ շրջանի դամբարաններում, այլև՝ Կարմիր բերդի, Լոռի Բերդի, Պնդեբիի, Սամթավրոյի, Գադրեկիլիի և մ.թ.ա. XIV-XIII դդ. թվագրվող հուշարձաններից հայտնաբերված նյութերի շարքում, որոնցում կճուճների II խմբին պատկանողները սովորական են հանդիսանում (*Хачатрян Т.С.,* 1975. էջ 190, նկ.97, 98, էջ 221: *Деведжан С.Г.,* 1981, էջ 46-47, աղ. XIV, XVI: *Арешян Г. Н,* 1979, աղ. I, 9: *Пицхелаури К.Н.,* 1979, աղ. XV, 2, XXIII, 32, XXVIII, 20): Վերջիններիս շարքում հարկ է առանձնացնել մատնեքմամբ զարդարվածը (աղ. XII, 2), որի զուգահեռը Մեծամորի № 1 (1969թ.) համաժամանակյա դամբարանից հայտնաբերվածն է: Խոսելով այդ դամբարանից գտնված նյութերի մասին և մատնանշելով վերջիններիս կապը վաղ տարիք ունեցողների հետ, Է.Վ. Խանզադյանը իրավացիորեն ցույց է տալիս, թե այդ դամբարանում (մ.թ.ա. XIII-XIIդդ.) հանդես են գալիս և նյութեր, որոնք իրենց զարդանախշով, «օրինակ՝ շեշտված ուռուցիկ իրանով կանեյ ուրւազարդ կճուճը», ընորոշ են դւսռնում ուշ բրոնզի հւսջորդ փուլում (*Խանզադյան Է.Վ , Մկրտչյան Կ., Պարսամյան Է..* 1973, էջ 31, աղ. VIII, 3):

*Կարասներ-* դեպի դուրս կլորացող կամ կտրած շուրթով ավարտվող այս լայնաբերան անոթներն ունեն ձգված, ուսի մասում փքուն իրան և հարթ հատակ: Կարասների գերակշռող մեծամասնությունը, ինչպես և խոհանոցային կճուճները, առանձնանում է լրացուցիչ մշակումից զուրկ, զորշ կամ դեղնագորշավուն մակերեսով, Այս խմբին պատկանող կարասների ուսերը զարդարված են հավելադիր պարանաւզարդով կամ պարզ ելունդազոտիներով, ակոսներով, փորագիր ալիքներով, հատիկներով ու գծերով, որոնք սովորաբար օղակում են և հատակների եզրերը: Մեկ դեպքում առկա է հավելադիր նետաձև զարդ, որի երկու կողմերից գնդիկներ են արված (աղ. XVII, 1, XIX, 9, XX, 1, XXIV, 10, XXV, 20, XXVII, 1, XXIX, 2, XLI, 8, 9, XLII, 17): Կարասների մի մասի շուրթի վրա ակոս է հանված: Կարասների մյուս խումբն ունի սև փայլեցրած կամ որոշ չափով խամբրած մակերես: Այս խմբի կարասները զարդարված են ելունդագոտիներով, փորագիր ալիքներով, ակոսներով, որոնք մշտապես ուղեկցվում են փայլեցմամբ ստացված ցանցապատկերներով, անկյունաձև միացող գծերով (աղ. XI, 1, XXV, 19, 21, XXXV, 1, 7). խեցանոթներից երկուսն ունեն ցածր նստուկներով ավարտվող հատակներ (աղ. XI, 1, XXV, 19, 21, XXXV, 1, 7): Փայլազարդ ունեցող կարասները հանդիպում են առավել վաղ տարիքի դամբարաններում, մինչդեռ առաջինները, ինչպես և խոհանոցային կճուճները, առկա են ինչպես վաղ, այնպես էլ ուշ խմբի դամբարանային համալիրներում և իրենց զուգահեռներն ունեն ուշ բրոնզի դարաշրջանի տարրեր փուլերով թվագրվող հուշարձաններում:

***Քրեղաններ*** - իրանի և շուրթի ձևով մի շարք ենթատարբերակների բաժանվող այս ամանները խմբավորում ենք հինգ տարբերակի մեջ: Առաջին տարբերակում

ենք մրավորում դուրս ճկված, կլորացող շուրթով ավարտվող քրեղանները, որոնք իրանի կառուցվածքով երեք ենթատարրերակում են խմբավորվում: Առաջինին պատկանողների իրանը կլորացող է: Հիմնականում սև փայլեցըած մակերես ունեցող այս ամանները զարդարված են ելունդագոտիներով, իրաըից հեռու տարված ակոսներով, տարրեր ձևերի փայլանախշ պատկերներով: Վերջիններս լայն ժապավեններ են, ուղղահայաց տարված և կամ անկյունաձև մրացող գծափնջեր (աղ. XI, 2, 4, XII, 6, 8, XIII, 10, 15, XV, 2, XVII, 3, XIX, 1, 5 ,8, XX, 5, XX, I3, XXII, 4, 8, 9, XXIV, 8, XXVIII, 3, 5,13-16, XXIX, 3-5, XXX, 1, 2, 6, XXXII, 2, 3, 6,11, 21, XXXIII, 31, 32, XXXV, 3, 8, 9, 13, XXXVII, 8, 9, XXXVIII, 6, 7, 11,13,15, XXXIX, 4, 6,12,13, XL, 5, 7, 9-12, XLII, 16): Այս ենթատարրերակին պատկանող, բայց չափերով խոշոր քրեղանները, առանձին դիպքերում զարդարված են կոճակաձև ելուստներով, թռչունների ու կենդանիների ծեփվածքներով, (աղ. XXII, 6, 7): Այլ նմուշների իրանների հակադիր կողներում ամրացված են կոնաձև ելուստնեը (աղ. XXV, 22, 23, XXVIII, 13, XXXIII, 29): Պայմանականորեն քրեղանների այս խմբում ենք դասում և քամրչը, ոըը նույն՝ փոքր չափերի քրեղանն է, որի հատակոն անցքեը են բացված (աղ.XXXII, 22): Այս ամանների զուգահեռնեըը ըստմաթիվ են մ.թ.ա. XIV-XIIդդ. թվագրվող հուշարձաններում:

Քրեղանների քննված տարրերակո II ենթատարրերակը առանձնանում է իրանի շեշտված անցումներով, Այս ամաններր գերազանցապես ունեն սև կամ գորշ խամրած մակերես. փայլեցված մակերեսով ամանները համեմատարաը սակավ են հանդիպում: Վերջիններս զարդարված են իրաըից հեռու տարված ակոսազոտիներովւ Դրանք հանդես են գալիս և խամրած մակերես ունեցողների վրա, ոըոնք զարդարված են ամանի մակերեսին ալիքավորված տեսք տվող, իրար հաջորդող ակոսագոտիներով, Զաըդեըի վերը նշված մյուս տեսակեերը այս ամանների վրա խիստ հազվադեպ են հանդիպում և կատարված են ոչ թե փայլեցման եղանակով, այլ՝ սեղմելով (աղ. XI, 10, XX, 4, 9, XXIII, 5, XXVI, 18), որն անծանոթ է վաղ խմրի դամրարաններից հայտնարերված ամանների զարդի ստացման եղանակոն: Այս ամանները թե մակերեսի գորշ խամրած գույնով, թե իրար հաջորդող թույլ ակոսագոտիներով, իրենց ճշգըիտ զուգահեռներն ունեն էլառի P3 փոսորակի վերին՝ 0.8մ հաստություն ունեցող շերտից հայտնարերված (այն հետազոտողը թվագրում է մ.թ.ա. XII-XIդդ) նյութերի շարքում (*Խանզադյան Է.Վ.,*1979, էջ 80, աղ.XVI, 12) Խուրջին հողերի № 22 դամրարանում,որը հետազոտողի կողմից թվագրված է ուշ բրոնզի դարաշրջանի վերջով (*Есаян С.А.,* 1976, նկ. 92, 5) և համաժամանակյա այլ հուշարձաններում: Նշված առանձնահատկությունները թույլ են տալիս Շիրակավանի այդ դամրարանները թվագրել մ.թ.ա. XIIIդ. վերջ - XIIդ: Վերջիններիս համեմատարար երիտասարդ տարիքն են մատնանշում և այդ դամրարաններից հայտնարերված մյուս նյութերը: Տվյալ դեպքում նկատի ունենք ոչ միայն խեցանոթների սև, ավելի շուտ գորշ խամրած գույնը, այլև՝ թեք ծալքագոտիներով զարդարված կճուճը (աղ. XX, 3), ատամնավոր մակերեսով ապաըանջանը (աղ. XXIII, 1), որոնց զուգահեռները սովորական են մ.թ.ա. XIIդ. հուշարձաններում: Նշված առանձնահատկությունները և նյութերի զուգահեռները

թույլ են տալիս IV սենյակի վերին շերտում բացված կիսավեր կառույցը թվագրել մ.թ.ա.. XIIIդ. վերջ- XIIդ., իսկ VII սենյակե սալահատակի տակ ընկած շերտը՝ մ.թ.ա. XIV-XIIIդդ.:

Քրեղանների երրորդ ենթատարբերակում ենք դասում կեղին հատվածում թեքևակի գոգավորվող կողեր ծնավորող ամանը, որը մնացած մանրամասներում կոկնում է վերը քննվածներին (աղ. XIII, 16):

Քրեղանների II տարբերակը իրանի ձևով, մակերեսի գույնով, զարդերի ձևերով ու դրանց ստացման եղանակներով կիկնում է առաջինին, տարբերությունը շրթի սրվող կամ հաբթ կտրած ձևն է (աղ. XII, 6, XIV, 10,13, XVI, 5, XXVIII, 7-8, XXXIII, 27, XXXV, 4, XXXIX, 19, XLI, 4): Պայմանականորեն ամանների այս խմբում ենք դասում ևս երկու քրեղան, որոնցից մեկը օղակաձև կանթ ունի (աղ. XVII, 4), իսկ մյուսի շրթի տակից տարված ակոսը ստեղծում է կլորացող և դուրս ճկված շրթի պատրանք (աղ. XX, 10): Այս ամանները ևս սովորական են վերը թվարկված հուշարձաններում և հանդիսանում են հետազոտվող ժամանակաշրջանի բնորոշ նյութերից մեկը:

Քրեղանների մյուս տարբերակները եզակի նմուշներով են ներկայացված: Դրանցից մեկը, որը դասում ենք III տարբերակի մեջ, վերին մասում փքուն իրան և ուղիղ վիզ ունի (աղ. XXI, 2), իսկ սև փայլեցրած մակերեսը զարդարված է ակոսազոտիներով և դրանցից վեր տարված փորագիր ալիքագծերով:

Չորրորդ տարբերակում ենք միավորում ամաններից երկուսը: Դրանք նույնպես ունեն թեքևակի կլորացող և վերին հատվածում գրեթե ուղղվող կողեր որոնք, այս դեպքում արդեն, ավարտվում են դուրս թեքվող, սրվող շուրթով: Ամաններից մեկն ունի սև անփայլ (աղ. XXXVIII, 5), մյուսը՝ սև փայլեցրած մակերես (աղ. XXXIX, 14):

Հինգերորդ տարբերակում ենք դասում փռված կողերով ամանը, որի դեպի ներս թեք կտրած, հարթ մակերեսով շուրթի վրա թույլ ակոս է հանված (աղ. XXXVIII, 10): Միջին բրոնզի դարաշրջանում իր արմատներն ունեցող այս զարդը, ինչպես տեսանք և այլ խեցանոթների քննության ժամանակ, հարատևում է և ուշ բրոնզի դարաշրջանում:

***Եռոտանի ամաններ*** - դրանցից մեկը իրանի ձևով կոկնում է քրեղանների հինգերորդ տարբերակը: Արտաքինից սև փայլեցրած, իսկ ներսից խամրած մակերես ունեցող այս ամանի հատակին, որը դրսի կողմից զարդաբված է համակենտրոն շրջաններով, ոտիկներ են ամրացված: Ամանի հատակը ներսի կողմից զարդարված է սեղմամբ ստացված քառանկյունի պատկերով, որի մեջ ամրացված է նույնաձև վանդակատի բեկոր: Ամանի հարթ կտրած շրթի տակ միջանցիկ անցք է արված (աղ. XXVIII, 17): Ինչ վերաբերում է ամաններից երկրորդին, ապա այն կոկնում է կլորացող իրան և դուրս ճկված, կլորացող շուրթ ունեցող կճուճների ձևը: Ամանի շրթի հակադիր կողմերում ամրացված երկու բռնակ-ելուստների վրա միջանցիկ անցքեր կան, որոնք համընկեում են այս ամանի վրա դրված կափարիչի կողքերից առանձնացող սեղանաձև թիկների վրա բացված անցքերին: Կափարիչի սև փայլեցված մակերեսը զարդարված է փորագիր (աղ. XXXVI, 17), իսկ ամանինը՝ փայլեցմամբ ստացված պատկերներով և փորագիր անկյունաձև գծերով (աղ. XXXVI, 16): Իրենց նախաձևը

դեռևս վաղ բրոնզեդարյան հուշարձաններում (օր. Բեյչեսուլթանի XIII-XIV շերտեր) ունեցող այս խեցանոթները (*Mellaart J.*, 1958, նկ.2), որոնք ամենայն հավանականությամբ ծիսական արտրողությունների ժամանակ են օգտագործվել (այս առումով հետաքրքիր է և վանակատի առկայությունը), հետազոտվող ժամանակաշրջանին պատկանող հուշարձաններում սակավ են հանդիպում: Այռպիսիք հայտնի են Արթիկե II խմբի դամբարաններից (***Хачатрян Т.С.,*** 1975, նկ.143, 144), իսկ Լոռի Բերդից և այլ վայրերից (օր. Սամթավրո, Մելիգելե և այլն) հայտնաբերվածները թվագրվում են մ.թ.ա. XIII-XIդդ. (***Деведжан С.Г.,*** 1981, աղ. XVI, 8: ***Пицхелаури К.Н.,*** 1973, աղ. LXIX, 1, 23): Հետագայում ամանների այս տեսակը առավել հաճախ է հանդիպում:

Հետազոտված դամրարաններից հայտնաբերված նյութերի քննությունն, այսպիսով, թույլ է տալիս վերջիններս թվագրել մ.թ.ա. XIV-XIIդդ.: Ակեհայտ է, սակայն, որ հայտնաբերված նյութերի մի մասը դրսևորում է համեմատաբար ուշ ժամանակաշրջանի խեցանոթներին բնորոշ հատկանիշներ (գորշ կամ սև խամրած մակերես, փորագիր զարդանախշ, թեք ճկվածքաերիզներ և այլն), որոնք մատնանշում են դամբարանների մի մասի (օր. №№ 23, 30, 47, 76, 95,116 և այլն) համեմատաբար երիտասարդ լինելը: Էական է, որ դամբարանների II խումբը տարածվում է I խմբից արևելք և ինչպես կտեսնենք ստորև, ծայրը արևելքում գտնվողները կապվում են հաջորդ փուլի նյութերի հետ: Հաշվե առնելով վերը նշված առանձնահատկությունները, հետազոտված դամբարանների վաղ խումբը թվագրում ենք մ.թ.ա. XIV-XIIIդդ, իսկ մյուսները՝ XIII-XIIդդ. նշելով միաժամանակ, որ նման բաժանումը որոշ չափով պայմանական է, քանի որ I և II խմբերի միջև եղած անցումը սահուն է և աննկատելի: Այս դեպքում կարևոր նշանակություն է ստանում յուրաքանչյուր դամբարանի տեղադրությունը և տեղին է նշել, որ II խմբի դամրարանները (բացառությամբ № 23 և 76) հիմնականում զբաղեցնում են դամբարանադաշտի կենտրոնական և դիպի արևելք ընկած տարածքները: Ինչ վերաբերում է դրանցից արևելք գտնվող դամրարաններին, ապա վերջիններս սերտորեն կապվելով II խմբի հետ, դրսևորում են հաջորդ փուլին բնորոշ հատկանիշներ: Անմիջապես նշենք, որ Գյումրի-Հոկտեմբերյան մայրուղու և Նորակառույց երկաթգծի մերձակայքում գտնվող այդ դամրարանները ևս հիմնահողային են: Դրանցից պեղվեցին 15-ը:

*Դամբարան № 3 (3-77թ.)*- երկու սալով ծածկված դամբարանախցում (չափ.՝ 1.1x0.7x0.9մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը թաղված էր ձախ կողքի վրա, գլխով՝ հյուսիս: Դամբարանախցի հյուսիսային մասում կճուճ էր դրված, իսկ ոտքերի մոտ հայտնաբերվեցին երկու քրեղան (աղ. XLIII, 1-3):

*Դամբարան № 4(4-77թ.)*- հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղված դամբարանախցում (չափ.՝ 1.3x0.8x0.6մ) կմախքը ձախ կողքի վրա էր գտնվում, գլխով՝ հյուսիս: Դամբարանախցից գտնված վեց խեցանոթներից երկուսը (կճուճ և խնոցի) դրված էին կմախքի ոտքերի մոտ, իսկ դիմային մասում, այսինքն դամբարանախցի արևելյան պատի մոտ՝ երեք քրեղան ու միականթ սափոր: Վերջինիս վզի վերին հատվածը շրթով հանդերձ, կոտրված էր (աղ. XLIII, 4-9):

*Դամրարան № 6 (6-77թ.)*- հյուսիս- հարավ ուղղվածություն ունեցող այս դամ-

բարանաիցում (չափ.՝ 1.4x1.1x0.8մ) կմախքը աջ կողքի վրա էր, գլխով ուղղված հյուսիս: Ձախ ձեռքին հագցված էին երեք բրոնզյա ապարանջան, որոնցից մեկը մակերեսը զարդարուն էր (աղ. XLIII, 19): Կրծքավանդակի մոտ գտնվեցին գյաքարից, ոսկուց (աղ. XLIII18բ), կապույտ ապակուց (աղ. XLIII18ա), սպիտակ շաղախից (աղ. XLIII, 18գ) և սարդիոնից (աղ. XLIII, 18դ) պատրաստված ուլունքներ, բրոնզյա դաշույնի շեղբ: Գլխի մոտ դրված էին երկու քրեղան, իսկ ոտքերից ոչ հեռու սկուտեղաձև երկու աման (աղ. XLIII, 10-19):

*Դամբարան № 79 (10-80թ)*- երկու սալով ծածկված դամբարանաիցում (չափ.՝ 1.3x0.8x1մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ), կմախքը, որից բացակայում էր գանգը, թաղված էր աջ կողքի վրա, սովորականի պես վերջույթները կծկած վիճակում: Կրծքավանդակի մոտ հայտնաբերվեցին սարդիոնից, սպիտակ շաղախից, ապակենման մածուկից պատրաստված ուլունքներ, վեց ծարիրե կոճակ, իսկ ձախ թևին բրոնզե ապարանջան էր հագցված: Այս նյութերից բացի, դամբարան էին դրվել վեց քրեղան ու մեկ կճուճ (աղ. XLIV):

*Դամբարան № 90 (3-81թ.)*- այս կրսավեր դամբարանից գտնվեցին մի քանի խեցանոթների փոքր բեկորներ և գորշ գույնի անփայլ քրեղան (աղ. XLV, 6): Նույն արդյունքները տվեցին և դամբարանաղաշտի արևմտյան հատվածին մոտ գտնվող (միակ քրեղանի գուգահեռները II իմբում են) *№ 91(4-81թ) դամբարանի* պեղումները (աղ. XLV, 7):

*Դամբարան № 92 (5-81թ.)*- ավերված էր դամրարանախցի (չափ.՝1.5x0.6x0.8մ, ուղղութ.՝ հյուսիս- հարավ) արևելյան հատվածը: Դամրարանախցի վերգետնյա նշանները ու սալերը բացակայում էին: Այստեղ թաղված էին չորս կմախք, որոնցից առանձին մասեր հայտնաբերվեցին: Կմախքներից մեկը, որից պահպանված էին գանգն ու կրծքավանդակը, գտնվեւմ էր հարավային պատի մոտ: Կրծքավանդակի մոտ թափված էին սարդիոնից ու գորշ նյութից պատրաստված ուլունքներ: Այս կմախքի կրդքին հայտնարերվեց երկրորդը, որը պառկած էր բերանքսիվայր և գլխով ուղղված էր հարավ-արևմուտք: Վերջինիս այտոսկրի մոտ գտնվեց ծարիրից պատրաստված խոշոր ականջօղ, որի ծայրերին անցքեր էին բացված: Այս կմախքից բացակայում էին ոտքերի ոսկրրները: Կմախքներից երրորդը գտնվրում էր դամբարանախցի կենտրոնում և գլխով հյուսիս էր ուղղված: Ձախ կրդքի պառկած այս կմախքի ոտքերի ոսկրները երկրորդի կրծքավանդակի տակ էին:Այս կմախքի այտոսկրի տակ գտնվեց յոթ բրոնզյա ուլունք: Չորրորդ կմախքից պահպանված էին ոտքերի ոսկրներն ու կրծոսկրը. գանգը և կրծքավանդակի մասերը երևի դուրս էին նետվել խիբամատը փորելու ընթացքում: Դամրարանիցի հյուսիսային պատի մոտ դրված էր երկու կճուճ (աղ. XLV, 1-5):

*Դամբարան № 99 (12-81թ.)*- երկու սալով ծածկված դամրարանախցում (չափ.՝ 1.4x1x1մ, ուղղութ.՝ արևելք-արևմուտք) կմախքը գտնվրում էր աջ կողքի վրա, գլխով ուղղված արևելք: Յյուսիսային պատի երկայնքով դրված էր երեք քրեղան, որոնցից մեկի թերի էր: Կրծքավանդակի մոտ հայտնաբերվեց սարդիոնե ուլունք և բրոնզե քառակող բիզ, որի վերին մասում պահպանված էր փայտի փոքրիկ բեկոր (աղ. XLV, 8-12):

*Դամբարան № 102 (15-81թ.)* - հյուսիս-հարավ ուղղված դամբարանախցում (չափ.՝1.8x1.5x1մ) կմախքը ձախ կողքի վրա էր գտնվում և գլխով ուղղված էր հարավ, որը հազվադեպ երևույթ է Շիրակավանում: Այտոսկրերի մոտ հայտնաբերվեցին ծարիրե օղեր, իսկ ոտքերի մերձակայքում ՝ դամբարանախցի հյուսիս-արևմտյան անկյունում և արևմտյան պատի մոտ դրված էր երեք քրեղան, կճուճ և երկկանթանի անոթ (աղ. XLVI, 1-7):

*Դամբարան № 103 (16-81թ.)* - արևելք-արևմուտք ուղղված այս դամբարանախցի (չափ.՝ 1.4x1.1x0.8մ) արևմտյան պատի տակ դրված էր երեք կճուճ և դինգ քրեղան (աղ. XLV, I8-15): Դամրարանախցում մարդու կմախք չհայտնաբերվեց: Չգտնվեցին և կենդանիների ոսկորներ: Չդիտվեցին և դիակիզման հետքեր: Ամենայն հավանականությամբ սա հուշադամբարան էր:

*Դամրարան № 109 (22-81թ.)* - կիսավեր վիճակում գտնվող այս դամբարանախցում (պահպանված չափերը՝ 1x0.8x0.8մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը աջ կողքի էր պառկեցված, գլխով ուղղված հյուսիս-արևմուտք: Դեմքի առջև դրված էին մեծ կճուճ և երկու քրեղան, իսկ ոտքերի մոտ գտնվեց վանակատե ցլեպ (աղ. XLV, 13-16):

*Դամբարան № 110 (23-81թ.)* - հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղված դամբարանախցում (չափ՝ 1.9x0.8x0.8մ) հայտնաբերվեց յոթ խեցանոթ, որոնցից մեկում մարդու թևի ոսկորներ գտնվեցին: Այդ ոսկորներից մեկի վրա հագցված էր բրոնզե ապարանջան: Դամբարանախցի կենտրոնում ընկած էին սև սաթից պատրաստված ուլունք և վանակատի ցլեպ. վերջինիս մեկ եզրը հարդարված էր (աղ. XLVI, 16-25):

*Դամրարան № 111 (24-81թ.)* - հայտնաբերվեց էլեկտրական համար փորված փոսորակում: Արտաքին նշաններից զուրկ, վարելահողերի տարածքում գտնվող այս դամբարանից (այն զգալիորեն վնասվել էր աշխատանքների ընթացքում. պահպանված չափերը.՝ 1.2x1x0.6մ, ուղղութ.՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք) հայտնաբերվեցին հինգ քրեղանի բեկորներ, որոնք ընկած էին արևելյան պատի տակ (աղ. XLVII, 15-19): Դամբարանախցի պահպանված մասում կմախքի մնացորդներ չհայտնաբերվեցին:

*Դամբարան № 112 (25-81թ.)* - այս դամբարանախուցը (չափ.՝ 1.5x1.1x0.5մ ուղղութ.՝ արևելք-արևմուտք) գտնվում էր նախորդից 50սմ ցած. դամբարանի հարավ-արևելյան կեսը գտնվում էր № 111 դամբարանի կենտրոնական հատվածի տակ: Կմախքն այստեղ ձախ կողքի վրա էր, գլխով ուղղված հյուսիս: Կմախքի շուրջը դրված էր վեց կճուճ և հինգ քրեղան, իսկ այտոսկրի վրա ընկած էր ոլորված ծայրեր ունեցող բրոնզե օղ: Կրծքավանդակի մոտից գտնվեցին բրոնզե ասեղ և սարդիոնից պատրաստված ուլունքներ (աղ. XLVII, 1-14):

*Դամբարան № 114 (27-81թ.)* - վեասվել էր շինարարության ընթացքում (պահպանված չափերը՝ 1.5x1.2x0.4մ, ուղղութ.՝ արևելք-արևմուտք): Բարեբախտաբար անցնող խրամատը առանձնապես շատ չէր վեասել դամբարանախուցը, որի կենտրոնում գտնվող կմախքը ձախ կողքի վրա էր պառկած, գլխով՝ հարավ-արևելք: Դե-

տաքրքիր էր այն համգամանքը, որ ծնոքերը ոչ թե բարձրացված էին դեպի դեմքը, ինչպես նախորդ դեպքերում, այլ ծգվում էին կմախքի երկայնքով և հանգչում կոնքոսկրի մոտ: Ինչ վերաբերում է ոտքերի ոսկորներին, ապա դրանց դիրքը նախկինն էր ծնկներում ծալված: Կրծքավանդակի մոտից գտնվեցին դաշույն, սարդիոնից և խխունջներից պատրաստված ուլունքներ, իսկ այտոսկրի մոտ ընկած էին բրոնզյա օղեր: Մատոսկրների վրայից հայտնաբերվեցին բրոնզից և սպիտակ նյութից պատրաստված մատանիներ: Կրծքավանդակի մերձակայքում դրված էր խինցի, իսկ դամբարանախցի հարավ-աբևելյան ու հարավ-արևմտյան անկյուններում հայտնաբերվեցին մեկական կճուճ (աղ. XLVIII, 1-9):

Հետազոտված դամբարաններից հայտնաբերված նյութերի գերակշռող մեծամասնությունը անկախ տեսականուց, թե ձևով, թե զարդանախշով և, թե մակերեսի գորշ կամ սև խսմրած զույնով, ամենևին չի տարբերվում դամբարանների II խմբից հայտնաբերվածներից. կոկնողություններից խուսափելու նպատակով չենք ծանրանա դրանց քննության վրա: Նշենք միայն, որ այդ նյութերի շարքում են տերևաձև շեղբով բրոնզաձույլ դաշույնները, օղերն ու տարատեսակ ապարանջանները, սարդիոնից ու շաղախից պատրաստված ուլունքները, քրեղանների զգալի մասը, երկկանթանի անոթները, կճուճները և այլն: Ավելին, առկա է նույնիսկ թույլ փայլանախշ ունեցող մեկ քրեղան (աղ. XLIV, 10), իսկ երկուսի հատակները զարդարված են փայլեցմամբ ստացված խաչաձև պատկերներով (աղ. XLIII, 15,17): Այս նյութերի բնորոշ զարդեբից են և փորագիր ալիքները, ակոսները, իսկ խոհանոցային կճուճների շրթերի վրա տեսնում ենք ակոսագոտիները: Այս և այլ հատկանիշներ ցույց են տալիս տվյալ խմբում ներառված, կառուցվածքով նախորդներից ամենևին չզանազանվող դամբարաններից հայտնաբերված նյութերի անմիջական կապը մ.թ.ա. XIII-XIIդդ. թվագրվածների հետ: Այդուհանդերձ հայտնաբերված նյութերի շարքում տեսնում ենք և այնպիսի ձևեր ու հատկանիշներ, որոնք անհայտ լինելով նախորդ փուլում, լայն տարածում են ստանում ու բնորոշ դառնում երկաթի դարաշրջանում: Այսպես, պերճանքի առարկաների շարքում ուշադրություն է գրավում սև զլաքարից պատրաստված խորանարդաձև ուլունքը, որի կողերին համակենտրոն շրջաններ են փորագրված: Վերջիններս ընդելուզված են եղել սպիտակ նյութով (աղ. XLIII, 13): Այս զարդաձևը, ինչպես անսանք, խոր արմատներ ունի, բայց ուլունքի ընդհանուր տեսքը հիշեցնում է մ.թ.ա. I հազ. սկզբից լայն տարածում ստացած խորանարդաձև, ինչ-որ տեղ" «դոմինոյաձև» ուլունքները, որոնց մակերեսները նույնպես զարդարված են փորագիր զծիկներով, համակենտրոն շրջաններով (Արթիկ, Նորատուս, Գյումրի, Թեյշեբաինի և այլն: Տե՛ս ***Мартиросян А.А.,*** 1961, էջ 64-66: Նույնի՝ 1964, էջ 210: ***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 243, նկ.155 և այլոք): Շիրակավանի նմուշը, սակայն, ի տարբերություն ավելի ուշ շրջանի պատկանողների, զուրկ է կողային զոզավոր հանվածքներից և ընդհանուր ձևով մերձենում է Արթիկից, Ակներից (Ն.Յա. Մառի պեղումները) և այլ վայրերից հայտնաբերվածներին (***Мартиросян А.А.***, 1954, էջ 85: ***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 243, նկ.155): Ավելորդ չէ նշել, որ Թումանյանի շրջանի Մամխորի-Կալ կոչվող տեղամասի քարարկղերից մեկում (մ.թ.ա. XI-IXդդ.) հայտնաբերվել են նաև դոմի-

նոյածև ուլունքներ (*Խանզադյան Է.Վ.,* 1979, էջ 109), իսկ Արթիկի III խմբի դամբարաններից հայտնաբերվածների շաքքում են և երևկոնիկ ծև ունեցողներ: Վերջիններս առկա են ոչ միայն Շիրակավանի դամբարանային նյութերում (աղ. XLIII, 18բ), այլև ընակավայրի մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկզբով թվագրվող շերտից հայտնաբերված նյութերի թվում:

Հետազոտվող ժամանակաշրջանին պատկանող հուշարձաններում եզակի չեն և թերթ բրոնզից պատրաստված, ոլորուն ծայրերով ու զարդարուն մակերեսով ապարանջանները (աղ. XLIII, 19), որոնց զուգահեռները տեսնում ենք ինչպես ուշ բրոնզի, այնպես էլ ավելի երիտասարդ տարիք ունեցող հուշարձաններում (օր. Արթիկ, Էլառ և այլն):

Հայտնաբերված նյութերի թվագրության համար առանձնակի կարևորություն չի ներկայացնում և բրոնզյա իրը, որի վերին մասում, ինչպես նշվեց, փայտի բեկոր էր պահպանված (աղ. XLV, 8): Նման իր, ամրացված, սակայն, ոսկրե հիմքի մեջ, հայտնաբերված I և II պեղավայրում մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկզբով թվագրվող նյութերի միջավայրում: Բրոնզից պատրաստված նման քառակող ծակիչներ (հավանաբար դրանք շաղափի ծայրակալ են) հայտնի են և հետագա ժամանակաշրջանի հուշարձաններում: Նյութերի թվագրման առումով առավել էական է խեցեղենը, որը հետազոտված դամբարանների ոչ միայն հիմնական, այլ հաճախ՝ միակ նյութն է հանդիսանում: Վերջիններս ներկայացված են նախորդ դամբարաններից հայտնի տեսակներով: Դրանցից սափորը գոակամասում փքուն իրանով միականթ անոթ է, որի գլանածև, լայնաբերան վիզը թերի է պահպանված: Անոթի կանթը, որը որոշ չափով ծնկածև է, վերին մասում զարդարված է սեղմմամբ ստացված, երկու շարքով տարված շրջաններով, իսկ սև անփայլ մակերեսը՝ ակոսագոտիներով ու փոքագիր ալիքազծով (աղ. XLIII, 9): Շրջանածև դրոշմազարդը, որը բնորոշ է առավելապես ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլի խեցանոթներին, հանդիպում է և հետագայում (Մեծամոր, Քեթի և այլն), ինչը և թույլ չի տալիս սոսկ այս հատկանիշը հաշվի առնելով № 4 դամբարանից հայտնաբերված նյութերը թվագրել ուշ բրոնզի վաղ փուլով: Այս սափորի, ինչպես և դրա հետ գտնված մյուս խեցանոթների սև կամ գորշ անփայլ մակերեսները (ուշադրություն է գրավում և փոքր կաթսայի եռանկյունաձև ուշաղրությունն է գրավում և փոքր կաթսայի եռանկյունաձևզը, որը օտար է վաղ շրջանին) հատկանշական են բրոնզի դարաշրջանի ավարտական փուլին, և նշված զարդանախշի առկայությունը կարող է մատնանշել նախկինից եկող ավանդույթների հարատևումը: Այդ կապը դրսևորվում է և երկկանթանի ու անկանթ սափորածև խոշոր անոթների օրինակով (աղ. XLIII, 8, XLVI, 1, XLVII, 8): Վերջիններս, որոնց զուգահեռները Գյումրիից և այլ հուշարձաններից հայտնաբերված նյութերի շարքում են (***Мартиросян А.А,*** 1964, նկ. 51), նախորդներից տարբերվում են թերևս մակերեսի սև կամ գորշ խամրած զույնով, փայլազարդի բացակայությամբ, տափակ կանթերով: Անոթներից մեկի փորի վրա անցք է բացված: Հավանաբար այս անոթը ևս, ինչպես և աղ. XLVIII, 9, խնոցի է եղել, որոնք հազվադեպ հանդիպելով ուշ բրոնզի վաղ փուլում (օր. Օշական, Պևըերի, Գադրեկիլի և այլն), լայն տարածում են ստանում երկաթի դարաշրջանում: Վերջիններիս ներքին մակերեսը, սակայն, անհարթ է (***Xa***-

*чатрян Т.С.,* 1975, էջ 250), և Շիրակավանի նմուշները նախորդելով մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվողներին, կարող են միջանկյալ օղակ հանդիսանալ: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում և կճուճների որոշ տեսակներ, որոնք իրենց նախաձևերը ունենալով ուշ բրոնզի նախորդ փուլերում, լայն տարածում են գտնում երկաթի դարաշրջանում: Տվյալ դեպքում նկատի ունենք խնոցու հետ հայտնաբերված, խոշոր գավաթի տեսք ունեցողը: Վերջինս սև, թույլ փայլեցրած մակերեսով կճուճ է, որի դուրս ճկված շրթից սկսվող և կլորացող իրանի ուսին միացող կանթը կոտրված է (աղ. XLVIII, 8): Անոթների այս տեսակի զուգահեռները բազմաթիվ են մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվող հուշարձաններում (Արթիկ, Օշական, Ռեդկին-լագեր, Անգեղակոթ և այլն) և Շիրակավանի դամբարանից հայտնաբերված, շեշտված առանձնահատկություններ չդրսևորող նյութերն էլ (դաշույն, մատանիներ, ականջօղեր են մասին խոսվել է, իսկ սև անփայլ մակերեսով և փքուն իրանը թեք, փորագիր գծերով զարդարված կճուճը իր զուգահեռներն ունի ինչպես ուշ բրոնզեդարյան, այնպես էլ երկաթեդարյան հուշարձաններում), թերևս թվագրվեին այդ ժամանակաշրջանով, եթե այդ դամբարանը (№ 114) այլ կառուցվածք ունենար և գտնվեր երկաթեդարյան հուշարձանների խմբում: Վերջիններս, ինչպես կտեսնենք ստորև, զբաղեցնելով քննված դամբարաններից հարավ ընկած տարածքը, այլ կառուցվածք ունեն: Ասվածից հետևում է, որ № 114 դամբարանը կարող է թվագրվել ուշ բրոնզի դարաշրջանի վերջ - վաղ երկաթին անցման ժամանակաշրջանով, որը կարող է համապատասխանել մ.թ.ա. XIIդ. վերջ - XIդ. սկիզբ ընկած ժամանակահատվածին: Տրված թվագրությանը չի կարող հակասել և նշված կճուճի առկայությունը. վերջինիս նախաձևերը կարող են հանդիսանալ Թբիլիսիի մերձակայքից մ.թ.ա. XIII-XIIդդ. թվագրվող նյութերի միջավայրում հայտնաբերվածները, որոնց կանթերը, սակայն, իրանի վրա են (*Абрамишвили Р.М.,* և համահեղինակներ, 1978, նկ. 44, 48 և այլն):

Որոշակի առանձնահատկություններ են դրսևորում և մյուս կճուճները: Դրանցից երկուսը դուրս ճկված, կլորացող շուրթով, կարճ վզով և փորի մասում փքուն իրանով հարթահատակ անոթներ են, որոնցից մեկն ուսին օղակաձև կանթ է ամրացված: Անոթների զորշ, խամրած մակերեսները զարդարված են անկյունաձև միացող գծախմբերով ու եռանկյունաձև պատկերներով: Այդ զարդերը, սակայն, ստացված են ոչ թե փայլեցման, այլ՝ սեղմելու եղանակով, որն անմիջապես է վաղ շրջանի զարդանախշի ստացման եղանակին (աղ. XLIII, 1, XLVII, 4): Այս դեպքում էական է և դամբարանների չերտազրությունն ու հայտնաբերված նյութերի նմանությունը. № 24 դամբարանից հայտնաբերված քրեղանների գերակշռող մեծամասնությունը չտարբերվելով № 25 դամբարանից գտնվածներից, երևան է բերում մի նոր ձև, որն անմիջապես լինելով վաղ շրջանի խեցանոթներին, հաճախ է հանդիպում այս և զարգացման հաջորդ փուլին պատկանող դամբարաններում: Տվյալ դեպքում նկատի ունենք աղ. XLVII, 19 նմուշը: Նշենք, որ Շիրակավանի նմուշին նման կճուճներ ուշ բրոնզի դարաշրջանի վերջով թվագրվեդ նյութերի հետ հայտնաբերված են Խուրջին-հողերից և համաժամանակյա այլ հուշարձաններից (*Есаян С.А.,* 1976, աղ. 92, 11), որը միանգամայն համապատասխանում է քննված նյութերի համար առաջարկվող թվագրությանը:

Կճուճներից երրորդը գնդաձև իրանով և իրանից ընդգծված անցումով բաժանվող, ներս հակվող շուրթ ունի: Սրվող շրթի վերին՝ հարթ մակերեսին եռակոս զարդ է տարված: Անոթի սև, թույլ փայլեցրած մակերեսը զարդարված է փորագիր ալիքագծերով, իսկ շուրթի մոտ ամրացված սեղանաձև հարթակը՝ անկյունաձև միացող հատիկների, ավելի ճիշտ՝ հասկաձև զարդերի շարքով (աղ. XLV, 1): Ուշ բրոնզի դարաշրջանում հանդես եկած այսօրինակ անոթները (Լճաշեն, Արթիկ, Պևրերի, Սամտավրո և այլն) իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն և երկաթեդարյան հուշարձաններում (Արթիկ, Մեծամոր, Ռեդկին-լագեր, Մակարաշեն և այլն): Նման անոթ հայտնաբերված է և Շիրակավանի բնակավայրի վաղ երկաթի դարաշրջանին պատկանող շերտից:

Ուշ բրոնզի վերջ - վաղ երկաթի դարաշրջանի սկզբով թվագրվող նյութերի շարքում իրենց զուգահեռներն ունեն և քրեղանները: Վերջիններս ներկայացված են ինչպես նախկինից հայտնի, այնպես էլ նոր ձևերով: Առաջինների շարքում են կլորացող շուրթ, իրանի սահուն կամ շեշտված անցումներ ունեցող ամանները: Դրանք զարդարված են մեկ կամ երկու շարքով տարված ակոսագոտիներով, հազվադեպ՝ փորագիր բազմաշար ալիքներով (աղ. XLIII, 4-6,14,15, XLIV, 7-10, XLV,, 7,10,11,15, XLVI, 3-5,14, 21-25, XLVII, 10-18): Սև, գորշ, հազվադեպ դեղնակարմրավուն ու դարչնագույն անփայլ և կամ թույլ փայլեցրած մակերեսով այս ամանների, ինչպես և դրանցից չտարբերվող միակ քամիչի (աղ. XLVII12) քննության վրա կանգ առնելու հարկ չկա: Նշենք միայն, որ դրանց թվում տեսնում ենք և այնպիսիները, որոնց արտաքին ու ներքին մակերեսները զարդարված են սեղմամբ ստացված ուղղահայաց (աղ. XLIII, 2, 3) և կամ թեք տարված փորագիր գծերով (աղ.XLVII14,15), որոնք մ.թ.ա. XII-XIդդ խեցանոթների բնորոշ գծերից են (***Мартиросян А.А,*** 1964, էջ 117-120): Ուշադրություն է գրավում և այն հանգամանքը, որ առանձին օրինակների իրանը, ինչպես և Գոլովինոյի № 6 դամբարանից և համաժամանակյա այլ հուշարձաններից հայտնաբերվածների մի մասը, ստորին հատվածում թեթևակի ներս է գոգավերվում, հասկանիշ, որը դիտվում է և Արթիկի առաջին խմբից հայտնաբերվածների վրա: Ժամանակաշրջանի հուշարձանների համար նորույթ չեն և փոված կողերով սկուտեղաձև ամանները (աղ. XLII, 16,17), որոնք լավագույնս կապվելով նախորդ փուլի դամբարաններից հայտնաբերված համանման նյութերի հետ, սովորական են և երկաթեդարյան հուշարձաններում:

Դուրս ճկված կլորացող շուրթ, իրանի ընդգծված անցումներ ունեն և քրեղաններից մյուս երկուսը. մեկը սև անփայլ մակերեսը մատնեքազարդ է (աղ. XLIV, 6), իսկ մյուսը վերին հատվածում թույլ ելունդագոտու և թեթևակի ներճկելու միջոցով ստացված ձևավորված կողեր ունի: Այս ամանի սև մակերեսը թեթևակի փայլեցված է (աղ. XLIV, 5): Քննված ամանների, ինչպես և Շիրակավանից հայտնաբերված մյուս նյութերի թվագրության համար կարևոր են Մեծամորի շերտագրական փոսորակից ստացված արդյունքները: Նշված փոսորակի II շերտում հայտնաբերվել են ոչ միայն մատնեքազարդ քրեղաններ, այլև՝ համակենտրոն շրջանով զարդարված, ինչպես և շիրակավանյան նմուշների ներս հակվող շուրթեր ունեցող կճուճների ձևը հիշեցնող ամաններ: Այդ շերտը, որտեղ առկա են քերելու եղանակով սաացված գարդանախշ

ունեցող խեցանոթներ, թվագրվում է մ.թ.ա. XII-XIդդ. (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է..* 1973, էջ 32-37, նկ. 41, աղ. IX, 2,5):

Այդ ժամանակաշրջանի հուշարձաններում իր վաղ զուգահեռներն ունի և գոբշ անփայլ մակերես, կտցաձև դուրս թեքված շուրթ և ցածր նստուկ ունեցող քրեղանը: Վերջինիս շրթի վրա միջանցիկ անցք ունեցող բռնակ-ելուստ է ամրացված (աղ. XLV, 6): Վաղ երկաթեդարյան հուշարձանների համար սովորական այս ամանները իրենց արմատներն ունեն ուշ բրոնզեդարյան նյութերի շարքում: Այս տեսակետից հետաքրքիր է և Իջևանից հայտնաբերվածը (մ.թ.ա. XII-XIդդ.): Այն, ինչպես և այդ դամբարանից հայտնաբերված մյուս խեցանոթները, շիրակավանյան նմուշների պես, զարդարված է սեղմմամբ ստացված անկյունաձև միացող և ուղղահայաց տարված զծերով (*Есаян С.А.,* 1976, էջ 105, նկ. 89): Միականթ քրեղաններ հայտնի են և Աքթիկի II խմբի դամբարաններից (*Խաչատրյան Տ.Ս.,* 1975, նկ. 139):

Ուշ բրոնզ - վաղ երկաթեդարյան հուշարձաններում (Արթիկ, Պոպլոզ-Գաշ, Օշական և այլն: *Есаян С.А.,* 1976, աղ.2312: *Есаян С.А., Калантарян А.А.,* 1988, աղ. LXIII, 7, LXVI, 8: *Хачатрян Т.С.,* 1975, նկ. 105) իրենց զուգահեռներն ունեն և ցածր իրան, իրանից շեշտված անցումով առանձնացող, ուղիղ կողով (աղ.XLV9) և կիսազնդաձև, վերին մասում աստիճանաբար դուրս թեքվող իրան ունեցող քրեղանները: Վերջիններս, ի տարբերություն առավել վաղ տարիք ունեցող նմուշների, ավարտվում են սրվող շուրթով: Առկա են դեպի դուրս թեքևակի կլորացող շուրթ ունեցողներ (աղ. XLV, 14, XLVI, 11-13,15, XLVII, 19): Ամանների այս տեսակները լայն տարածում են ստանում վաղ երկաթի դարաշրջանում: Քննված նյութերն, այսպիսով, շարունակելով ուշ բրոնզեդարյան ավանդույթները, երևան են բերում նոր հատկանիշներ, որոնք բնորոշ են դառնում վաղ երկաթի դարա-շրջանում: Նշված առանձնահատկությունները և բերված զուգահեռները մատնանշում են քննված նյութերի տեղը ուշ բրոնզի վերջվաղ երկաթի սկիզբ ընկած ժամանակաշրջանում, որը կարող է համապատասխանել մ.թ.ա. XII-XIդդ. ժամանակահատվածին:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՎԱՂ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

### 1. ԲՆԱԿԱՏԵՂԻ

Շիրակավանի տարարնույթ հուշարձանների շարքում թե պահպանվածության և, թե տարածքի ընդգրկման առումով առանձնանում են վաղ երկաթի դարաշրջանին պատկանողները: Այս շրջափուլի հուշարձանները, որոնք բացվեցին I և II պեղավայրերում, ներկայացված են բնակելի կառույցների համալիրներով, օժանդակ կառույցներով (*Ռ.Թորոսյան, Օ.Խնկիկյան, Լ.Պետրոսյան,* 1992, էջ 15-19):

Հետաքրքիր արդյունքներ տվեցին և շերտագրական փոսորակի պեղումները:

*Ա. Առաջին պեղավայր* (պեղ. Օ.Խնկիկյան) - հետագոտվող դարաշրջանին են պատկանում VI և VIII շինությունները: Հավանաբար այս շրջափուլին (բոլոր դեպքերում ոչ ավելի վաղ, քան ուշ բրոնզի դարաշրջանի վերջին փուլը) է պատկանում և VII կիսակառույց սենյակը (ինչպես նշվեց, այդտեղից նյութեր չհայտնաբերվեցին), ինչը փաստվում է շերտագրական տվյալներով, ուշ բրոնզեդարյան վաղ շրջանի նյութեր պարունակող շերտից 0.6մ բարձրության վրա գտնվող այս կառույցի սալապատ հատակը արևելյան մասում մասամբ ավերվել էր մ.թ.ա. VII-VIդդ. թվագրվող դամբարանի, իսկ արևմտյան հատվածը՝ VIII կառույցի արևելյան պատի կառուցման ժամանակ և այդ պատից ցածր էր 10-15սմ: Այս տեսակետից ևս № 8 կառույցի պեղումների արդյունքները կարևորվում էին և ծեռք բերում առանձնահատուկ նշանակություն: Կրկնողություններից խուսափելու նպատակով նշենք, որ VIII կառույցից հայտնաբերված նյութերը թվագրվում են մ.թ.ա. IX-VIIIդդ.: Հետևաբար VII շինությունը կարող էր կառուցված լինել մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկիզբ ընկած ժամանակահատվածում: Ինչ վերաբերում է VIII կառույցին, ապա դրա շինարարության սկզբունքը նույնն է, ինչ և նախորդներինը. վերջինիս հարավային՝ մայր հողի կտրվածքին հենված պատի ետևում կարծր կավաշաղախի շերտն էր: Այս մանրամասները առկա էին մ.թ.ա. III հազ. շինարարական ավանդույթներում: Նույն սկզբունքով էր կառուցված և VI շինությունը: Վերջինս VII սենյակի հարավկողմյան պատից անջատված էր մայր հողի 2.5մ լայնություն ունեցող շերտով: Հատակագծում անկանոն տեսք ունեցող այս կառույցի (երկար.՝ 9.7-10.2մ, լայն՝ 3-5մ) հյուսիսային և արևելյան, համեմատաբար խոշոր քարերով կառուցված պատերը հենված էին մայր հողի կտրվածքին:

Կառուցողական այլ մանրամասներից զուրկ այս շինությունում, որտեղ մշակութային շերտի հզորությունը տատանվում էր 1.1-1.2մ միջև (դրանից ցած մայր հողն էր), հայտնաբերվեցին կովի, ձիու, այծի, եզի, եղջերուի ոսկորներ (գանգերի մասեր, եղջյուրները, կրնքոսկր, ծնոտներ, ազդրոսկրեր), ինչպես և երկու շան, գայլի ու աղվեսի մեկական գանգեր: Այս նյութերից բացի գտնվեցին ոսկրից պատրաստված երկու մրճիկաձև կախիկ (աղ. XLIX, 22,23), կապույտ ապակուց ուլունք (աղ. XLIX, 24), հերունի մաս (աղ. XLIX, 21), կճուճների (աղ. XLIX, 14-19), քրեղանների (աղ. XLIX, 8-12), բաժակների (աղ. XLIX, 1-4) և այլ խեցանոթների բեկորներ (աղ. XLIX, 5-7): Նյութերից վերջինը տուֆից պատրաստված անվակաձև կախիկն էր, որը կրկնում էր նախորդ շրջանների նմուշներին: Հայտնաբերված նյութերի վեճակը, ինչպես և VI կառույցի շինարարական առանձնահատկությունները ենթադրել են տալիս, որ այս կառույցը օժանդակ նշանակություն է ունեցել: Հավանաբար նման նշանակություն է ունեցել և ութերորդը, որի շինարարության ժամանակ ավերվել էր ոչ միայն II կացարանի հարավային հատվածը, այլև III սենյակը արևմտյան պատը. VIII շինության արևելյան պատի ետևում գտնվող «հորերի», ավելի ճիշտ կավակերտ, ցածր պատերով շինությունների մեջ եղած կավաշաղախից (այդ շինությունների մոտից գտնվեցին երկու շարժական կրակարանների մասեր աղ. XLIX, 25 և անասունների եղջյուրներ, ողնաշարի մասեր, ծնոտներ) հայտնաբերված խեցանոթների սակավաթիվ բեկորները ժամանակակից են այս կառույցից հայտնաբերվածներին: Հետևաբար այս կառույցի շինարարները ավերելով մթա. III հազ. շերտը, հասել էին մինչև № 3 կացարանի հարավային պատը: Ութերորդ կառույցը ևս հյուսիս-հարավ էր ուղղված և հատակագծում ուղղանկյունաձև էր (երկար.՝ 10.5մ): Վերջինիս հարավային պատը (երկար.՝ 2.8մ) հենված էր մայր հողի կտրվածքին, իսկ արևմտյան պատի հարավային մասում 0.8մ լայնությամբ բացվածք կար: Վերջինիս դիմաց, 0.7մ հեռավորության վրա, բացվեց 68 սմ բարձրություն և 1.6մ տրամագիծ ունեցող, հատակագծում փոքրինչ ձվածիր տեսքով, մանր ու միջին չափերի քարերից պատրաստված թոնրաձև շինություն, որի հարավային մի փոքրիկ հատվածը ավերված էր: Այս կառույցի տեղ-տեղ կավածեփը պահպանած պատերին, հատկապես հատակին, առկա էին երկարատև, կրակից գոյացած հետքեր: Ամենայն հավանականությամբ այս շինությունը հնոց, և որն առավել հավանական է, թոնիր է եղել: Տեղին է նշել, որ նման ժամանակավոր թոնիրներ, մինչև վերջին ժամանակներս գործածվում էին հայոց մեջ և հայտնի էին «սարի թոնիր», կամ «թեթև թոնիր» անուններով: Այս շինության թոնիր լինելու օգտին են խոսում և մոտակայքում հայտնաբերված երկու նավակաձև աղորիքները: Մեկ այլ աղորիքի բեկոր, որի հարթ մակերեսին շրջանաձև փոսիկ էր արված, գտնվեց մուտքի մեջ. հավանաբար այն կրնկաքար էր հանդիսացել: Արևելյան պատի տակ հայտնաբերվեցին ուղղանկյունաձև օջախի կավակերտ մնացորդներ: Կառույցի հյուսիսակողմյան պատը բացակայում էր: Այդ հատվածում, բացվեց երկրորդ թոնրաձև շինությունը, որը ձևով ու չափերով կրկնում էր նախորդին: Ութերորդ կառույցում, որտեղ մշակութային շերտի հզորությունը կազմում էր 1-1.1մ, հայտնաբերվեցին երկաթե սրի շեղբի բեկոր (աղ. XLIX, 31), գլաքարից սրոց (աղ. XLIX, 29), արծաթա-

գույն մակերեսով ապակե ուլունք (աղ. XLIX, 26), սանդի ու սանդկոթի մասեր (աղ. XLIX, 28), հերուն (աղ. XLIX, 30), քրեղանների ռեկորներ (աղ. XLIX, 33-37), ոսկրե թերթիկեց ուլունք (աղ. XLIX, 27). եղջյուրից պատրաստված գործիք, որը հիմքում տաշված էր և կենտրոնում փոսիկ ուներ (աղ. XLIX, 32): Մյուս նյութերը ներկայացված են խոշոր եղջերավոր անասունների 9 ճանով, ծնոտներով, եղջյուրներով և ձիու ոսկորներով:

Հայտնաբերված նյութերից *բաժակները* չորսն են, ունեն կենտրոնում թեթևակե լայնացող, սև կամ գորշ խամրած մակերեսով գլանաձև իրան և դուրս թեքված սրվող, մեկ դեպքում՝ դուրս ճկված, կլորացող շուրթ (աղ. XLIX, 1-4): Անոթներից երեքի իրանները զոտևորված են ակոսներով: Գլանաձև իրանով, լայնապռունկ մեկը ներսի կողմից ակոսով է գոտևորված (աղ. XLIX, 5), իսկ շուրթի տակ անցքեր են բացված: Անոթներից մյուսը շրթից սկեվող օղակաձև կանթ ունի: Այս ռեկորների սև. անփայլ մակերեսները մրապատ են (աղ. XLIX, 6):

Ստորին մասում շեշտակե ներս թեքվող իրան ունի *գավաթը*: Վերջինիս սև փայլեցրած մակերեսը զարդարված է ակոսներով ու մատնեքով (աղ. XLIX, 7): Առանձին բազմազանություն չի դիտվում և *կճուճների* ձևերում: Սրանք կլորացող իրան, կարճ վիզ և դուրս ճկված, կլորացող շուրթ ունեցող անոթներ են, որոնց սև. անփայլ. մրոտված մակերեսներր զարդարված են ակոսներով, հատիկներով, փորագիր ալիքագծերով, մեկ դեպքում՝ ուռուցիկ պարանաձև գոտիով (աղ. XLIX, 14-17,19): Կճուճների այս խմբում առանձնանում է մեկը: Այն սև, անփայլ մակերես, զնդաձև իրան և հարթ կարած, դեպի ներս զրեթե սուր անկյուն կազմող ձևավորված շուրթ ունի: Վերջինս զարդարված է փորագիր ալիքագծերի երկեւ շարքով: Նույն զարդագծերն են տարված և անոթի ուսը գոտևորող ակեսի երկու կողմերում (աղ. XLIX, 18): Հավանարար կճուճի կամ սափորի իրանի ռեկեր է և դրոշմմտմր ստացված սեպիկներով զարդարվածը (աղ. XLIX, 20):

Վեցերորդ կառույցից հայտնաբերված խեցանոթների վերջին խումբն են կազմում *քրեղանները*: Դրանցից երկուսը վերին վեսում զրեթե ուղիղ կողերով և դուրս ճկվող շուրթով ավարտվող ամաններ են, որոնց իրանները ստորին հատվածում սահուն անցումով կլորանում են: Ամաններն ունեն սև անփայլ (աղ. XLIX, 9) և թույլ փայլեցրած (աղ. XLIX, 8) մակերեսներ: Քրեղաններից մյուս երկուսը վերին կեսում թեթևակի ներս հակվող ուղիղ կողեր և փոքր-ինչ կլորացող շուրթ ունեն: Ամանների սև, անփայլ (աղ. XLIX, 11) և կամ թույլ փայլեցրած (աղ. XLIX, 10) մակերեսները զարդարված են իրարից հեռու տարված կամ իրար հաջորդող ակոսներով: Քրեղաններից վերջինը վերին մասում ուղիղ և դեպի հատակը կլորացող իրան ունի: Սև փայլեցրած մակերեսը վերին հատվածում զարդարված է զույգ ակեսագոտիներով, որոնք թեթևակե գոգավորելով ամանի կեղերը, վերջիններիս ծալազարդ, տեսք են սալիս (աղ. XLIX, 12): Պայմանականորեն ամանների այս խմբում ենք դասում ձեռքածեփ սև, փայլեցրած մակերես և հաստ պատեր ունեցող *թասիկը* կամ *«աղամանը»*, որն ունի ստորին կեսում կլորացող, իսկ վերինում՝ դուրս ճկվող շուրթով ավարտվող գոգավորված իրան (աղ. XLIX, 13):

Նշենք միայն, որ չորս նմուշով ներկայացված քրեղաններից երկուսը միանման ստորին կեսում կլորացող, իսկ վերին մասում գրեթե ուղիղ կողերով խոշոր ամաններ են, որոնք ավարտվում են դեպի ներս ու դուրս սրվող, կտրվածքում երկվտցածև, դեպի դուրս թեք կտրած շուրթովւ Ամանների դարչնագույն, սև բծերով ծածկված (աղ. XLIX, 33) և կամ սև (աղ. XLIX, 35), թույլ փայլեցրած մակերեսները մեկ դեպքում արտաքին (աղ. XLIX, 33), մյուսում ներսի կողմից, զարդարված են թույլ սեղմմամբ ստացված գծերով: Քրեղաններից մյուս երկուսը դուրս ճկված, կլորացող շուրթով, վերին մասում գոգավորվող, իսկ ստորինում շեշտված անցումով իրան ունեցող աման-ներ են, որոնցից մեկի սև խամրած մակերեսը զարդարված է փայլեցմամբ ստացված երիզներով (աղ. XLIX, 34), իսկ մյուսի աղյուսագույն մակերեսն անզարդ է (աղ. XLIX, 36): Աղյուսագույն, թերևս կարմրավարդագույն մակերես ունի և թասը, որի հաքթա-հատակ, ցածր, ուղիղ կողերով իրանը ավարտվում է թեքևակի կլորացող շուրթով (աղ. XLIX, 37):

Միատեսակ են և *շարժական կրակարանները*: Սրանք ուղղանկյունաձև, եր-կայնական պատերը ուղիղ, իսկ անկյուններում թեքևակի կլորացող բարձր կողերով իրեր են: Վերջիններս հանգչում են կենտրոնում երկայնական բացվածք ունեցող հարթ հատակի վրա: Կրակարաններից մեկն երկայնական պատի վրա թամբաձև ելուստներ են արված (աղ. XLIX, 25): Նման կրակարանների վաղ նախաձևերը, ինչ-պես նշվեց, հայտնի են Ուգերլիկ-թեփեից (***Кушнарева К.Х.***, 1965, էջ 82-83, նկ.15): Շիրակավանի նմուշները ձևով և պատրաստման նրբությամբ պատճենում են Կար-միր բլուրի № 3 պեղավայրի I կացարանի III և IV շերտերից գտնվածներին, որոնք թվագրված են մ.թ.ա. XIIդ. վերջ-XIդ. (***Мартиросян А.А.***, 1964, էջ 172-173, նկ 70, 3): Նույն ձևն ունեն և Մեծամորի II սրբարանից ու «երդեհված» շերտից հայտնաբեր-վածները, որոնք թվագրվում են մ.թ.ա. X-VIIIդդ. (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, էջ 44, 118, նկ. 115): Մ.թ.ա. X-IXդդ. է թվագրում և Ա.Ա.Իես-սենը Ուչ-թեփեի բնակավայրից հայտնաբերված նյութերը, որոնց շարքում առկա են նույն ձևն ունեցող կրակարաններ (***Иессен А.А.***, 1965, նկ. 15, էջ 123): Նման շարժա-կան կրակարաններ հայտնաբերվեցին և Շիրակավանի II պեղավայրից, որը պայ-մանականորեն «տաճարական թաղամաս» անվանվեց:

*Բ. Երկրորդ պեղավայր* (պեղ.՝ *Ռ.Մ.Թորոսյան և Լ.Ա.Պետրոսյան*, նկ. 6, հանույթ), գտնվում է I պեղավայրից շուրջ 100մ արևելք և զբաղեցնում է ավելի քան 1500մ2 տարածք: Այստեղ մշակութային շերտը տարածվում է բլրի երկթեք՝ հարա-վահայաց և արևմտահայաց լանջերին: Տեղանքի նման պայմանները թելադրել են, որ շինությունները կառուցվեն արհեստական դարավանդների վրա (նկ.7), որոնք երեք կողմից սահմանափակված են միաշար քարե պատերով։

II պեղավայրի շինությունների մյուս շինարարական առանձնահատկությունն է տեղում առկա բնական ժայռաբեկորների մշակումը և օգտագործումը շինարարա-կան, կենցաղային, ծիսական և այլ նպատակներով (*Լ. Պետրոսյան*, 1994, էջ 18-19):

Նշենք նաև, որ պեղավայրի տարածքով անցնող հեղեղատն այն բաժանել էր եր-

կու մասի, որոնք պայմանականորեն անվանված են աջակողմյան և ձախակողմյան:

*Աջակողմյան շինություն I* - զբաղեցնում է մոտավորապես 50մ² մակերես: Սրա հատակագիծը գրեթե սեղանաձև է: Նրա հյուսիսային միաշար պատի մի հատվածը կազմում է բնական ժայռը: 1-1.5մ բարձրությամբ պահպանված այս պատի ետևը լցված է փոշիացած հողով և մանր քարաբեկորներով: Հարավային և արևմտյան պատերը երկշարք են, որոնցից պահպանվել են միայն հիմքի ստորին շարքերը: Հարավային պատի արևելյան եզրը դրված է մեկ այլ բնական ժայռի հարթեցված մակերեսի վրա: Ժայռի ճակատային մասում, հատակից քիչ բարձր արված է միջանցիկ անցք, անասուններ կապելու համար, ստորին հորիզոնական հարթեցված մասում արված են երկու (նկ. 6-ի № 6,7 փոսորակներ) 0.4-0.6մ խորությամբ, 0.8-0.9մ տրամագծով փոսեր, որոնք հավանաբար ծառայել են արտադրական նպատակներին: Աբևմտյան պատը, կոր անցումով միանում է հյուսիսային պատին: Արևելյան պատը, որը պահպանված է երեք լար բարձրությամբ (1.34մ բարձրություն) սահմանափակվում է շինության տվյալ կողմի երկու ժայռերի միջև բաց մնացած 2.3մ տարածությունում: Այս շինության հյուսիս-արևելյան մասում հատակը սալապատ է: Այստեղ, ուղղահայաց դիրքով դրված է (0.3մ բարձրությամբ, 0.2մ լայնությամբ) մեկ երեսը հարթեցված միջանցիկ անցքով տուֆ քար: Բացառված չէ նրա արտադրական նպատակեն ծառայած լինելը: Հատակո մնացած հատվածները կավացեխից են և 0.15մ ցած են սալահատակից: Շինության արևմտյան մասում առկա են մանր քարերով շարված երկու փոքր կառույցներ, որոնց միջից, բացի մի քանի խեցանոթների բեկորներից, այլ նյութեր չհայտնաբերվեցին: Սրանք ամենայն հավանականությամբ հանդիսացել են պահեստ-եոռեը: Սրանց հարևանությամբ առկա է նաև մեկ այլ, հատակե մեջ փորված, շուրջը քարերով շարված 62սմ խորությամբ, 40սմ տրամագծով հոր (նկ. 6.Բ և նկ. 8): Հետաքրքիր է նկատել, որ հորի պատերը շարված են գործածությունից դուրս եկած աղորիքների և սանդերի բեկորներով: Պահեստհորերի այս տեսակը լայն կորառություն է ունեցել Հայկական լեռնաշխարհի տեղաբնակների կենցաղում, որոնք լավ հայտնի են բրոնզի և երկաթի դարաշրջաններին պատկանող բազմաթիվ հուշարձաններում:

Շինության հյուսիսային կեսում, որտեղ մշակութային շերտը պահպանված էր բավական անաղարտ վիճակում և ուներ 1մ հզորություն, պատի դիմաց բացվեց հետաքրքիր մի անկյուն, որտեղից հայտնաբերվեցին սիլիկատային խարամի մնացորդներ, ջարդված աղորիքների բեկորներ, տրորիչներ, կոկոչներ, կեսամշակ եղջյուրի մի բեկոր, գնդաձև մի քար և այլն: Սրանց դիմաց, հատակի վրա թափված էին բազմաթիվ խեցանոթների բեկորներ, որոնց շարքում ուշագրավ են թասերը, կետազարդ և հատիկազարդ կճուճները և այլն: Հայտնաբերված նյութերի կուտակման պատճառով այս անկյունը պայմանականորեն անվանեցինք I անտեսական անկյուն: Սրանից 2.5մ դեպի արևմուտք, նույն պատի դիմաց, ռիլված քարերի միջավայրում հայտնաբերվեց ղարձյալ աշխատանքային գործիքների կուտակում: Սա անվանվեց II տնտեսական անկյուն: Այստեղ առկա էին ծեծիչներ, փոքր սանդեր և այլն:

Ուշագրավ են նաև մի ամանի հատակի մեջ լցված բազմաթիվ վանակատի ցլեփ-

ները, որոնցից և ոչ մեկի վրա չկա մշակման հետք: Նույն վայրում հայտնաբերվեցին նաև խեցանոթների բազմաթիվ բեկորներ սև և գորշ հարդարված ու փայլեցված մակերեսներով, ներճկված գոտիներով զարդարված թասեր, եյուստ-բռնակիվ թասիկ, միականթ գավաթներ, հատիկազարդ կճուճներ և այլն: Բացի այդ, այստեղ ևս գտնըվեցին սիլիկատային խարամի բազմաթիվ մնացորդներ: Գործիքների և խարամի նման կուտակումները այս շինությունում, ինչպես նաև դրա արևմտյան պատից դուրս «աղբանոցում» գտնված հարթ տապարիկի կաղապարը և հարավային պատից դուրս բացված հնոցի մնացորդները հիմք են տալիս մտածելու, որ գործ ունենք մետաղագործական արհեստանոցի հետ:

Նշենք, որ II «տնտեսական անկյան» տարածքում, հյուսիսային պատի հիմքը հանդիսացող բնական ժայռի վրա, հատակի մակարդակին առկա են 0.15սմ տրամագծով, 7-8սմ խորությամբ փոսիկներ, որպիսիք կան նաև աջափնյակի II շինությունում, դրանց նշանակությունը դեռես պարզված չէ (ծիսական կամ աբտադրական):

*Աջակողմյան շինություն II* - կից է № 1 շինությանը (հյուսիսից) և զբաղեցնում է մոտավորապես 63մ2 մակերես: Այս շինության հարավային պատն է հանդիսանում նախորդ շինության հյուսիսային աղեղնաձև պատի մի հատվածը և մեծ քարաժայռը: II շինության սալահատակը պատից հեռու է 0.5մ: Այդ տարածությունը լցված է փոշիացած հողով և մանր քարաբեկորներով, ինչը հիմք է տալիս մտածելու, որ այս երկու շինությունների համար ընդհանուր կիող պատի վերևի մասը կառուցված է եղել քարերի երկու շարքով: Մի շարքը դրվել է միաշար հենապատի վրա, իսկ մյուս երեսը շարվել է մանր քարաբեկորներով և կավացեխով:

Երկիորդ շինության հյուսիսային՝ 0.5-0.7մ բարձրությամբ պահպանված պատը կառուցված է միջին մեծության անմշակ քարերի երկու շարքով, որոնց միջև լցված են մանր քարաբեկորներ և կավացեխ: Պատի արևմտյան շտրունակությունը մշակված ժայռի կտրվածքն է, որի ստորին մասը, հատակի մակարդակին հարթեցված է և ծառայել է որպես քարաշեն եատակ: Այս երևույթը դիտվում է և ուրարտական ճարտարապետությունում, ժայռեղեն բլուրների վրա ամրոցների և այլ շինությունների պատերի կառուցման ժամանակ. Որպես լավագույն օրինակ կարող ենք նշել Արգիշտիխինիլիի պալատական շենքի արևմտյան պատի ժայռեղեն հատվածները (**Мартиросян А.А.,** 1974, էջ 49, նկ.30; *Ղաֆադարյան Կ.Կ.*, 1984): Երկիորդ շինության արևելյան պատը պահպանված է 1.5-1.8մ բարձրությամբ, որը հյուսիս-հարավում ավարտվում է բնական տուֆե ժայռերով, Շինության այս հատվածը դեպի արևելք երկու մետրով դուրս է ընկած ընդեանուր հատակագծից: Դրա հետևանքով սենյակին կից ստեղծվել է քառանկյունի հատակագծով, հետաքրքիր մանրամասներ ունեցող խորշ: Խորշի և II շինության հարավային պատն են կազմում արևելյան փոսիկներով ու ավազանով ձևավորված (արևելքից) և 0 կիտը հանդիսացող մեծ ժայռերը (տե՛ս նկ. 6, № 12), որոնց միջև բաց մնացած փոքր տարածությունը շարված է միաշար հենապատով (նկ. 9): Այս շինության հատակը ամբողջությամբ սալապատ է: Նրա հյուսիս-արևմտյան հատվածը սալապատված է անմշակ, երբեմն էլ մասամբ հարթեցված մակերեսներով, միջին և մանր չափերի սալերով, իսկ արևելյան և հա-

րավ-արևելյան հատվածի հատակն են կազմում բնական ժայռերի հարթեցված մակերեսները, որոնց վրա արված են չորս՝ 0.3-0.5մ խորությամբ, 0.35-0.4մ տրամագծով փոսիկներ (նկ.6, № 8,11): Սենյակի հատակի երկաստիճան է:

Երկիորդ շինության հյուսիսային պատից երկու մետր դեպի հարավ առկա է սենյակի ողջ երկայնքով, արևելք-անմուտք ձգվող միաշար պատ, որը շինության ընդհանուր հատակի մակարդակից բարձր է 0.2-0.3մ և կատարել է թմբիկի (հարթակմահիճի) դեր: Թմբիկե վրա բացվեց գետնի մեջ փորված, եզրերը քարերով շարված, մեջը մոխրով լի պայտաձև օջախ: Օջախին կից, առկա է քարերով շարված և կավացեխով սվաղված 2մ երկարությամբ, 0.4մ բարձրությամբ և 0.6մ լայնությամբ նստարան: Այս կացարանի հյուսիս-արևմտյան կեսում բացվեց 3մ$^{2}$ մակերեսով, 0.8մ բարձրությամբ պահպանված մեկ այլ հարթակ, որի նմանակի բացվել է նաև Շիրակավանի բնակատեղիի I պեղավայրում:

Ընդարձակ թմբիկը հարավային կողմից եզերող պատից դուրս, նրա հարավ-աբևելյան ծայրում, առկա է 1.2մ խորությամբ, 1.1 մ տրամագծով, հատակե մեջ փորված, շուրջը քարեբով շարված մի հոր (նկ.6 a, և նկ. 8), որը լցված էր մոխրով և ոսկորներով, Նրա մեկ երրորդ մասը ծածկված է թմրիկի հարավային պատով, հանգամանք, որը վեայում է II շինությունում կատարված վերակառուցման մասին:

Առանձնապես հետաքրքիր են II շինության հարավ-արևելյան մասի հատակի մանրամասները: Այստեղ վերոհիշյալ հորից դեպի հարավ, եսկայական ժայռի հարթեցված մակերեսի վրա արված են մոտավորապես համահավասար չափերի չորս փոսեր (նկ. 6, № 8-11): Այս անկյան հետաքրքիր մանրամասներից է նաև հարավային պաաի արևելյան հատվածում գտնվող ավազանակիր խոշոր ժայռը, որի կեսից ավելին գտնվեւմ է խորշում (նկ.11): Այս ժայռի արևմտահայաց երեսին, գետնի մակերեսից 0.4մ բարձրության վրա արված են երկու՝ 0.15մ տրամագծով, 0.3-0.5մ խորությամբ վւոսիկներ, որոնց նմանակը բացվել էր և I շինությունում: Հետաքրքիր է նաև II շինության հարավային կողմում, միաշար պատերով ծվածիր հատակագիծ ունեցող, 6մ$^{2}$ մակիրես զբաղեցնող կառույցը (նկ. 6ա): Սրա արևելյան պատի մի մասը ծածկում է II շինության հարավային պատի հատվածը հանդիսացող փոսիկներով և ավազանով ձևավորված ժայռը (նկ. 6, 12), իսկ հյուսիսային պատը կիսով չափ ծածկում է եատակի մեջ փորված վերոհիշյալ փոսիկներից մեկի: Այս հանգամանքները ևս ակնառու կիրպով վեայում են II շինությունում կատարված վերակառուցումների մասին: Ուշագրավ է նաև այն, որ կառույցի 1.1մ բարձրությամբ պաեպանված պատերից և ոչ մեկի մեջ չկա դռան բացվածք, որը և հիմք է տալիս ենթադրելու այն ևս հանդիսացել է ամրար, ինչպես I շինության նմանատիպ կառույցները: Այսպիսով, ելնելով աջակողմյան II շինության կառուցողական մանրամասներից, կարող ենք ասել, որ այն սկզբնական շրջանում եավանաբար հանդիսացել է պաշտամունքային նպատակներին ծառայած մեծ դահլիճ, որի փաստացի վկայություններն են հանդիսանում հիշատակված փոսիկները, ավազանները, զոհաբերվող կենդանիներին կապելու համար արված անցքերը և այլն: Լքվելուց հետո, կարճ ժամանակ անց, նրա մեջ կառուցվել է մեկ բնակելի տուն և ամբար: Այդ են վկայում II շինության

տարրեր շինարարական շերտերից հայտնաբերված, ժամանակագրական տարբերություն չդրսևորող նյութական մշակույթի նմուշները՝ սև և գորշ փայլեցված և հարդարված մակերեսներով կճուճներ, թասեր, քրեղաններ, ռանկայանման անոթներ և այլն:

*Աջակողմյան շինություն III* - գտնվում է նախորդ շինության հյուսիս- արևելյան կողմում և զբաղեցնում է 40մ² մակերես (նկ. 6, 11): Սրա հատակը նախորդից բարձր է 1.8-2մ: Հյուսիս-արևելյան պատն են կազմում երկու իրար դիմաց և մեկ ներս ընկած խոշոր ժայռեր, որոնց վրա արված են միջանցիկ անցքեր: Հյուսիսային պատն է կազմում մեկ այլ խոշոր ժայռ, որի վրա ևս առկա է միջանցիկ անցք: Սրա և հյուսիս-արևելյան պատը կազմող ժայռի միջև բաց մնացած փոքր տարածությունը շարված է միաշար պատով: III շինության հարավային պատր երկշարք է, իսկ հյուսիս-արևմտյանը լանջի թեքության պատճառով չի պահպանվել:

Ներկայացվող շինության հատակը կազմված է ավազից և մ.թ.ա. II հազարամյակի վերջին պատկանող նյութական մշակույթի թափոններից, որը սվաղված է 10-12սմ հաստությամբ կավացեխով: Այս շինության հյուսիս-արևելյան հատվածի հատակն են կազմում երկու տարբեր չափերի սալեր: Սրանցից մեկի վրա նկ. 6, 13 արված է մեկ կոնաձև փորված, մեկ շրջանաձև և երկու երկարուկ, տարբեր խորության փոսիկներ, իսկ մյուսի վրա արված է մեկ երկարուկ փոս (նկ. 9): Տարատեսակ փոսիկների և կենդանիներին կապելու նպատակոն ծառայած անցքերի առկայությունը III շինությունում հիմք է տալիս ենթադրել, որ սյն ևս, ինչպես և նախորդը, ծառայել է ծիսական-արարողական նպատակներին: Երրորդ շինության արևմայան մասում բացվեց ուղղանկյունաձև, իրար միացած միաշար պատերի հիմնամասեր: Թվում է, որ դրանք II շինարարական շերտին պատկանող ինչ-որ շինության փլատակներ են:

Երրորդ շինությունից հայտնաբերված նյութական մշակույթի նմուշները կոկնում են նախորդներին, միայն այն տարբերությամբ, որ այստեղ հայտնաբերվեցին նաև կարմիր հարդարված մակերեսներով երկու թասերի ռեկորներ:

Պեղումների ժամանակ պարզվեց որ III շինության հարավասին պատը թեքվելով դեպի արևելք, նախ միանում է մեկ խոշոր ժայռաբեկորի ապա շարունակվելով միանում է II պեղավայրի արևելյան ծայրամասը հանդիսացող քարաժայռին, որի վրա փորագրված է օձ եիշեցնող պատկեր (նկ. 10): Քարաժայռի մակերեսը թույլ հարդարված է: Քարի վերին՝ արևելյան հատվածում պատկերված է 2-3սմ խորությամբ, 5-6սմ լայնությամբ, հյուսիս-հարավ ուղղությամբ ձգվող օձագալար պատկեր: Ստորին՝ արևմտյան հատվածում արված է 20-24սմ լայնությամբ, 12-18սմ բարձրությամբ հորիզոնական, նորից հյուսիս-հարավ ուղղությամբ ձգվող հարթակ, որը արևմտյան կողմում մի փոքր ընդհատվածություն ունի: Այս երկուսի արանքում, քարի հյուսիսային եզրի կենտրոնական մասում ևս արված է 80սմ երկարությամբ փորված հարթակ: Այս քարի հարավ-արևլյան եզրին արված է միջանցիկ անցք: Աջակողմյան շինությունների համալիրը լրացնելու և ամբողջացնելու նպատակով պեղման աշխատանքները տեղափոխեցինք բացված շինությունների արևմտյան կողմը: Այստեղ պեղված 15x5մ տարածության մեջ դիտվեցին միայն առանձին պատերի փոքր հատվածների

փլատակներ և մեկ քարաշեն օջախի մնացորդներ: Տպավորությունն այնպիսին է, որ այստեղ սկզբնական շրջանում գոյություն են ունեցել ինչ-որ շինություններ, որոնք հետագայում ավերվել են, և այդ տարածությունը վեր է ածվել աղբանոցի: Այստեղ նյութական մշակույթի նմուշներով հարուստ թափոնի շերտի հզորությունը հասնում է 1.2 մետր, որի միջից հայտնաբերվեցին ամենատարբեր խեցանոթների բազմաթիվ բեկորներ, օգտագործումից դուրս եկած աղորիքների մասեր, մեծ քանակությամբ խարամի մնացորդներ և տուֆ քարից պատրաստված, հարթ տապարիկի կտղապա-րի մի փեղկի բեկոր:

Արևելք-արևմուտք ձգված հեղեղատով տարանջատված II պեղավայրի աջակողմյան և ձախակողմյան մասերի փոխադարձ կապերը վեր հանելու նպատակով պեղումները շարունակվեցին հեղեղասի աջ ափին մասամբ պահպանված հատվածներում: Այստեղ I շինության եարավաին պատին կից բացվեց քարաշար կիսաշրջանաձև, որոշ չափով պատի տակ մտնող փոքրիկ կառույց: Նրա միջից հայտնաբերվեցին կիակի երկարատև, ազդեցությունից շիկացած կավե բեկորներ, մեծ քանակությամբ սիլիկատային խարամի մնացորդներ և մոխիր: Այս փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ այստեղ մենք գործ ունենք հնոցի մնացորդների հետ: Առաջին շինության արևելյան կողմում բացվեց միաշար քարերով շարված, քառանկյունաձև հատակագծով շինության կիս մաս (նկ. 6, Գ), որի մյուս կեսն ավերել էր հեղեղատը: Սրանից դեպի արևելք ընկած տարածության վրա բացվեցին նորից միաշար պատերով երկու փոքր շինությունների հիմնապատեր (նկ. 6, ա, բ): Օծի պատկերով ժայռի արևմտյան կողմում բացվեց կիսաշրջանաձև ինչ-որ շինության և հյուսիս-հարավ ձգվող հեղեղատով ընդհատված պատի հետքեր: Այսպիսով, ելնելով վերոհիշյալ շինությունների դեպի հարավ ձգվող պատերի հատվածարար պահպանվածության իրավիճակից կարող ենք ասել, որ հեղեղատի, ներկայումս տարանջատված աջ և ձախ ափերը ի սկզբանե օրգանապես կապված են եղել միմյանց հետ և կառուցապատվել են մի ընդհանուր ճարտարապետական-հատակագծային պլանով: Այդ են վկայում և ձախակողմյան եստվածում պեղված լրիվ և թերի պահպանված շինությունների մնացորդները: Ջախափնյակի պեղումները սկսեցինք նրա եստրավ-արևմտյան մասում հեղեղատի եզրին կիսով չափ երևացող ժայռաբեկորի մոտից: Նրա շրջակայքը հողից մաքրելուց հետո պարզվեց, որ այն մասամբ մշակված բնական ժայռ է, որի կենտրոնում փորված է կլորացող անկյուններով քառանկյունաձև մի ավազան, որի հարավ-արևմտյան եզրին արված է անցք (նկ. 6, 4): Թվում է, որ այն հանդիսացել է պաշտամունքային նպատակների ծառայած ինչ-որ շինության մի տնկյուն: Եվ իրոք, նրա հարավային կողմում հետագա պեղումների ընթացքում բացվեց եռաստիճան մշակված մի ժայռ: Նրա ստորին և միջին հարթակների վրա փորված են մեկական շրջանաձև ավազան, իսկ վերին ամենաբարձր հարթակը եարթ է, որի վրա եավանաբար դրվել են կուռքեր (նկ.11): Հետագայում պարզվեց, որ վերոհիշյալ ժայռաբեկորները կատարել են նաև դրանցից դեպի արևելք գտնվող շինության (նկ. 6, 16) հարավային և հարավ-արևմտյան պատերի դեր: Այս ոչ լրիվ պահպանված շինությունը զբաղեցնում է 16մ² մակերես: Սրա հարավային երկշար պատն ունի 1.5-2մ

հաստություն: Պատի ներսի շարքի հարավային եզրը հենված է վերոհիշյալ բազմաստիճան մշակված ժայռին, իսկ հակառակ երեսի շարքի նույն եզրը միացված է ծախափնյակի I շինության ավազանակիր ժայռին: Ներկայացվող շինության հարավային անկյունը լրացուցիչ ամրացված է միշար՝ հարավային և արևելյան պատերն իրար կապող աղեղնաձև պատով: Այս շինության հարավային պատի արևելյան եզրը հենած է մեկ այլ բնական ժայռի, որի հյուսիսային եզրի մի փոքր մասը կառույցի համար ծառայել է որպես արևելյան պատի մի հատված: Սրա շարունակությունը հանդիսացող պատը շարված է միջին չափի քարերի երկու շարքով և ունի 1մ հաստություն: Շինության հյուսիսային պատը հեղեղասի ակտիվ գործունեության պատճառով բացակայում է: Հեղեղասի ակտիվության պատճառով այս շինության նյութական մշակույթի շերտը խիստ քայքայված էր: Հարավային պատի դիմաց պահպանված 0.6-0.8մ հզորություն ունեցող մշակութային շերտից հայտնաբերվեցին փոքր քանակությամբ հասարակ խոհանոցային կճուճների, սև և գորշ փայլեցված թասերի ու քրեղանների բեկորներ:

*Ձախակողմյան շինություն I* - գտնվում է նախորդի եարավային կողմում և զբաղեցնում է 45մ2 մակերես (նկ. 61): Սբա հյուսիսային պատի շաբունակությունն է հանդիսանում բնական ժայռը, որի վրա փոբված է ծվածիր՝ 1մ երկարությամբ, 0.4մ խորությամբ ավազան, իսկ նրա եզրին արված են կենդանիներին կապելու համար անցքեր, որոնք նույնպես ծառայել են ծիսական նպատակներին: Միաշար եարավային պատը հենված է զառիթափ լանջի կտրվածքին: Արևելյան պատը ևս կառուցված է միաշաբ քարերի շարքով, որը միանում է բնական ժայռին: Սրա վրա նույնպես փոբված է միջանցիկ անցք: Այս շինությունից ևս, նույն եեղեղաաի պատճառով, բացակայում է եարավ-արևմտյան պատը: Կառույցի արևմտյան հատվածի հատակը սվաղված է 10-12սմ եաստությամբ դեղնավուն կավացեխով, իսկ արևելյան, համեմատաբար փոքր մասը՝ սալապատված է: Այստեղ, արևելյան պատից 1մ դեպի արևմուտք առկա է 0.4մ խորությամբ հատակի մեջ փորված 0.6մ տբամագծով շրջանաձև, մոխրով լի մի օջախ: Այս շինության նյութական մշակույթի շերտի հաստությունը (արևելյան և հարավային պատերի դիմաց) հասնում էր 1.2-1.5մ: Հայտնաբերված նյութական մշակույթի նմուշները մեծամասնությամբ խեցեղեն առարկաներ են և կոկնում են նախորդ շինությունից եայտնաբեբվածներին:

*Ձախակողմյան շինություն II* - գտնվում է նախոբդի աբևելյան կողմում և զբաղեցնում է 5մ2 մակերես: Սրա արևմտյան պատը եանդիսանում է № 1 արևելյանը: № II շինության հարավային կիսաշրջանաձև և աբևելյան կոբ միաշար պատեբը եենված են թեք լանջերի կտրվածքներին: Սրա եյուսիսային նեղացող մասի պատն է կազմում բնական ժայռը (նկ., 6, 2): Երկրորդ շինության եատակը ևս սվաղված էր հաստ կավացեխով, Քարաշար պատերը պաեպանված են 1.5-1.8մ բաբձրությամբ, որոնց մեջ բացակայում է դռան բացվածքը: Այս փաստը եիմք է տալիս ասելու, ոբ այն հանդիսացել է եարդանոց: Այդ են վկայում նաև տվյալ շինությունում կենցաղային իրերի գրեթե լբիվ բացակայությունը և զգալի քանակությամբ փտած հարդի առկայությունը: Ճիշտ նման իրավիճակ է տիրում սրա աբևելյան կողմում գտնվող, մո-

տավորապես 4մ$^{2}$ մակերես զբաղեցնող շինությունում (նկ.6, 2ա): Սրա հարավային պատը նախորդի աբևելյան պատն է հանդիսանում: Հյուսիս-արևելյանը միաշար քարաշեն պատ է, իսկ հաբավ-արևմտյան կողմում բացակայում է քարաշար պատը, որի դերը կատարել է լանջի բնական կտրվածքը: Արևմտյան կողմում պատի դեր է կատարել բնական ժայռը: Այստեղ ևս բացակայում է դռան բացվածքը: Ելնելով այս շինությունների շինարարական առանձնահատկություններից և դրանցում հայտնաբերված փտած անասնակերի մնացորդների առկայությունից, մենք հակված ենք դրանք դիտել որպես մարագներ՝ զոհաբերվող կենդանիներին ձմռան ընթացքում անասնակերով ապահովելու համար:

*Ձախակողմյան շինություն III* - զբաղեցնում է 20մ2 մակերես (նկ. 63): Հարավից կից է նախորդ և № 16 շինություններին: Հաբավային պատի մի հատվածը երկաստիճան մշակված ժայռն է, որի յուրաքանչյուր աստիճանի վրա փորված են երեքական՝ 5սմ խորությամբ, 15-20սմ տրամագծով փոսիկներ, որոնք հավանաբար ծառայել են ծիսական նպատակներին: Այս շինության դռան բացվածքը ամենայն հավանականությամբ եղել է հյուսիսային և հարավային պատերի միջև: № 3 շինության հատակը նույնպես սվաղված է 10-12սմ հաստությամբ դեղնավուն կավացեխով: Արևելյան պատի դիմաց առկա է 0.7մ լայնությամբ, 0.4մ բարձրությամբ կավացեխով սվաղված մահիճ-նստարան, իսկ արևմտյան և հարավային պատերի անկյունամասում կառուցված է 4մ$^{2}$ մակերեսով 0.6մ բարձրությամբ հարթակ:

*Ձախակողմյան շինություն IV* - հյուսիս-արևելքից կից է № 3-ին և զբաղեցնում է 21մ$^{2}$ մակերեսում (նկ. 64): Միաշար աբևելյան պատը հենված է լանջի կտբվածքին: Հյուսիսային պատը ևս երկշար է և ունի 0.7մ հաստություն: Հարավային պատի հետ անկյուն կազմող երկշար պատի մնացորդները ցույց են տալիս, որ այս շինության սահմանները ավարտվել են հենց այստեղ և սահմանափակվել եբկշար քարաշեն պատով: Այս շինության հատակն են կազմում բնական երկու ժայռերի հաբթեցված մակերեսները: Սրանց արանքներում բաց մնացած հատվածները սալապատ են, բացառությամբ հարավային պատի դիմացի մի փոքր հատվածի, որն ընդհանուր հատակի մակարդակից ցածր է 0.3մ-ով և սվաղված է կավացեխով: Այն ամբողջությամբ լցված էր մոխրով: Սա պատահական չէ, քանի որ նրա արևելյան կողմում շինության հարավային անկյունամասում բացվեցին կիսաշրջանաձև օջախի մնացորդներ: Հետաքրքիր է այն, որ օջախը ոչ թե սովորականի նման հենված էր պատին, այլ կառուցված է պատի մի հատվածը կիսով չափ նեղացնելու հաշվին: Այս շինությունն իր ներքին մանրամասներով ևս առանձնանում է մյուսներից: Դրանք հատակի ժայռերի վրա պատրաստված եբկու սյուների խարիսխներն են՝ տեղադրված արևելք-արևմուտք առանցքով, միմյանցից 2մ հեռավորության վրա: Սրանցից մեկի կերտված է շինության արևմտյան կեսի հատակի կազմող ժայռի արևելյան եզրին և իբենից ներկայացնում է տուֆ քաբից պատրաստված, 0.5մ տրամագծով շրջանաձև խարիսխ: Մյուս խարիսխը գտնվում է շինության հատակի հանդիսացող բնական ժայռի հարավ-արևմտյան եզրին և կիրտած է նույն ժայռից, նրա վերին մակեբեսը 0.3մ բարձրացնելու միջոցով: Այն ունի հատած կոնի տեսք, որի վերին մակերեսի

տրամագիծը 0.2մ է: Սյուների խարիսխների առկայությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ այն ունեցել է հարթ տանիք, որը հենվել է կենտրոնական երկու սյուների վրա: Ժայռահատակի վրա, սյան խարիսխից դեպի հյուսիս-արևելք փորված են մեկ շրջանաձև և երեք ձվածիր 2-5սմ խորությամբ ոչ խոր փոսիկներ: Սրանցից քիչ դեպի արևմուտք առկա են ևս երեք տարատեսակ փոսիկներ: Ի տարբերություն նախորդների, վերջիններս միմյանց են միացված ոչ խոր՝ 3սմ խորությամբ փորված առվակաձև փոսիկներով: Նույն ժայռի արևմտյան եզրին փորված է անցք: Ինչպես նախորդ, այնպես էլ IV շինության ժայռակերտ հատակների վրա արված տարաձև փոսիկները ամենայն հավանականությամբ ծառայել են ծիսական-արարողական նպատակներին:

Ձախակողմյան № 4 շինությունից հյուսիս-արևելք՝ դեպի օձի պատկերով ժայռն ընկած տարածությունը, հեղեղաափ ակտիվ գործունեության պատճառով, խիստ ավերված է: Այստեղ բացվեց № 14 շինության հյուսիսային պատի արևելյան եզրի հետ օրգանապես միացված 2մ երկարությամբ պահպանված պատի մի հատված: Հայտնաբերված պատի և նյութական մշակույթի նմուշների մնացորդները հիմք են տալիս մտածելու, որ ինչպես աջակողմյան մասում, այստեղ ևս շինությունները շարունակվել են մինչև օձի պատկերով քարը, որը հանդիսանում է այս պեղավայրի ծայր-արևելյան ամենաբարձր կետը: Շիրակավանի II պեղավայրի համար հատկանշական է նաև այն, որ գտնվում է բնակավայրի արևելյան ամենաբարձրադիր հատվածում և լավ դիտվում է հնավայրի բոլոր կողմերից: Այսպիսով, ներկայացված պեղավայրի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այստեղ բացված շինություններում, ելնելով դրանց ներքին կահավորման մանրամասներից (ավազաններ, կուռքերի կանգնեցման և զոհված կենդանիների արյունը լցնելու նպատակին ծառայած փոսեր, զոհաբերվող կենդանիներին կապելու համար արված անցքեր և այլն), կատարվել են զոհաբերման հետ կապված ծիսական արարողություններ: Ելնելով վերոհիշյալ փաստերից և դրանց կողքին բացված հացահատիկի պահեստ-հորի ու հարդանոցների առկայությունից կարելի է մտածել, որ մենք գործ ունենք սրբատեղի* հետ:

Ինչպես նշվեց II պեղավայրի պեղումներով ձեռք բերված նյութական արտադրության նմուշները բաղկացած են քարից ու ոսկրից պատրաստված գործիքներից և խեցեղեն արտադրանքից:

***Քարե արտադրանք*** - ներկայացված է աղորիքներով, սանդերով, ծեծիչ-եղկեչներով, տրորիչներով, հղկեչ-կոկիչներով, քերիչներով, միջուկներով, ծանրոց կախիկներով, ցլեփներով, կոկիչներով, տարատեսակ խաղաքարերով և այլն:

***Աղորիքներ***- պատրաստված են ծակոտկեն որձաքարից, որոնց աշխատող մակերեսները հարթ են, իսկ վերինը ուռուցիկ (աղ. LV, 13):

***Սանդեր***- նույնպես պատրաստված են ծակոտկեն որձաքարից (աղ. L, 20,

---

* Հետաքրքիր է, որ Շիրակավանի և շրջակա գյուղերի բնակիչները մինչև, վերջին տարիներս, շաբաթ և կիրակի օրերին հավաքվել են «Սուրբ Մինասի դարը» (այսպես են անվանում տեղացիները II պեղավայրը) մատաղ անելու:

աղ. LV, 12): Առկա են խոշոր և մանր սանդեր, որոնցից վերջիններր հավանաբար ծառայել են որպես հավանգներ:

*Ծեծիչ-տրորիչներ* - պատրաստված են գետաքարերից և ունեն երկարուկ, մի ծայրը լայն, մյուսը նեղ, կլորացող անկյուններով քառակող, ինչպես նաև ձվաձև, գլանաձև և անկանոն խորանարդաձև տեսք (աղ. L, 1-8): Սրանք ծառայել են որպես ծեծիչ-սանդկոթ և տրորիչ:

*Չղկիչ-կոկիչներ*- պատրաստված են գետաքարերից, ունեն բազմանիստ սկավառակաձև, գնդաձև, եռանկյունաձև տեսք (աղ. LV, 11-15): Երկու այլ օրինակ (աղ. LV, 17, 18) պատրաստված են հրաբխային խարամից: Վերը ներկայացված բոլոր քարե գործիքները հայտնի են սկսած վաղ բրոնզի դարաշրջանից և գրեթե միշտ եանդիպում են միասին: Այդպիսիք եայտնի են Քեթիից (***Петросян Л.А.,*** 1989, աղ. 17, 1), Կարմիր-բլուրից (***Мартиросян А.А.,*** 1961), Մեծամորից (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,* 1974, աղ. XII, 1-2), Էլառից (*Խանզադյան Է.Վ.,* 1979, աղ. X), հյուսիս-արևելյան Հայաստանի մի շարք հուշարձաններից (***Есаян С.А.,*** 1976, աղ. 16,24), Ուզերլիկ- թեփեից (***Кушнарева К.Х.,*** 1965, էջ 79, եկ.8), Դվինից (***Кушнарева К.Х.,*** 1977, էջ 35, նկ. 53) և այլ հնավայրերից:

*Դրանման գործիքներ*- պատրաստված են տուֆից (աղ. LI1,2) և գետաքարերից (աղ. LI, 4,5): Սրանց վաղ զուգահեռները եայտնի են Էլառի (*Խանզադյան Է.Վ.,* 1979, աղ. X, 6,7) և Նախիջևանի Քյուլ-թեփեի (***Абибулаев О.А.,*** 1965, էջ 43, աղ. I7) վաղ բրոնզեդարյան եուշարձաններից և հարատևում են մինչև մ.թ.ա. I հազ. կեսերը: Դատելով այս գործիքների ձևերից, կարելի է ենթադրել, որ դրանք ծառայել են մորթիներ մշակելու, վերջիններս մսակտորներից և ճարպակտորներից մաքրելու նպատակին: Շիրակավանից հայտնաբերված քարե գործիքների մյոա տեսակն են սկավառակաձև միջուկներր (աղ. LI, 6), որոնց զուգահեռները հայտնի են Քեթիից (***Петросян Л.А.,*** 1989, աղ. 8, նկ. 1-3, մ.թ.ա. III եազ.), Ուչ-թեփեից (***Мочанов Ю.А.,*** 1965, նկ.3, ուշ բրոնզ-վաղ երկաթ) և այլ վայրերից:

*Ծանրոց-կախիկներ*- պատրաստված են տուֆ քարից և ունեն շրջանի տեսք (աղ. L. 19.10): Սրանց զուգահեռները եայտնի են բրոնզի և երկաթի դարաշրջաններին պատկանող այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Էլառը (*Խանզադյան Է.Վ.,* 1979, աղ. XI, 22), Արգիշտիխինիլին, (***Мартиросян А.А.,*** 1974, էջ. 177, նկ.107, Քեթին, *Պետրոսյան Լ.Ա.,* 1983, էջ 67, աղ. I, 15), Ուչ-թեփեն (***Мочанов Ю.А.,*** 1965, էջ 1508) և այլն:

*Նետասլաքներ*- Վանակասից պատրաստված այս զենքատեսակը նշաձև է (աղ.L, 19): Սրանք վաղ բրոնզի դարաշրջանից սկսած, աննշան փոփոխություններ կրելով, լայնորեն օգտագործվել են մինչև մ.թ.ա. I հազարամյակը ներառյալ և հայտնի են բազմաթիվ հուշարձաններից:

II պեղավայրից եայտնաբերված քարե իրերի շարքում առկա են նաև գնդաձև քարեր (աղ.L, 9.10), որոնց կիրառությունը պարզ չէ:

*Խաղաքարեր*- մեկը (աղ. L, 16) պատրաստված է երաբխային խարամից՝ մյուսը՝

խեցու բեկորից (աղ. L, 15): Այդպիսիք մեծ քանակով հայտնի են Արգիշտիխինիլիից*: Երկրորդ պեղավայրի քարե արտադրանքի շարքում մեծ խումբ են կազմում քարի մշակման ժամանակ առաջացած տարբեր տեսակի և չափերի ցլեպները (աղ. LI, 7,8): Ինչպես քարե գործիքների, այնպես էլ ցլեպների առատությունը Շիրակավանում ցույց է տալիս, որ մթա. II հազ. վերջ -1 հազարամյակի սկզբում Շիրակավանի բնակիչների կենցաղում մեծ տեղ է զբաղեցրել քարի մշակումը և օգտագործումը: Այդ են վկայում նաև Հայաստանի համաժամանակյա հնավայրերից հայտնաբերված մեծ քանակությամբ քարե գործիքներն ու ցլեպները:

Մեկ այլ խումբ են կազմում ոսկրե գործիքները: Դրանք ներկայանում են հերուններով, իլիկի գլուխներով, ասեղներով, շաղափով, կախիկներով և այլ իրերով (աղ. LII):

*Հերուններ*- ունեն ողորկ մակերես, սուր ծայր, լայնացող վերին մաս (աղ. LII, 1-3). որոշ նմուշների վերին մասում անցք կա: Հերունները հայտնի են տարբեր ժամանակաշրջանների պատկանող հուշարձաններից: Նման ժամանակագրական ընդգրկում ունեն նաև ասեղները (աղ. LII, 4):

*Իլիկի գլուխ* - ունեն կիսագնդաձև տեսք (աղ. LII, 10): Սրանց զուգահեռները հայտնի են տարբեր դարաշրջանների պատկանող հուշարձաններից:

*Շաղափ* - ունի վերին մասում թարակող և դեպի ցած լայնացող, կոնաձև տեսք, որի հիմքում արված անցքի մեջ ամրացված է երկաթե սուր ծայրակալ (աղ. LII, 5): Ազգագրական տվյալները ցույց են տալիս, որ նման շաղափները հանդիսացել են աղեղնաձև գայլիկոնների բաղկացուցիչ մաս (*Բդոյան Վ.*. 1972, էջ 403, նկ. 7: *Խնկիկյան Օ.Ս.*, 1977, էջ 68):

Այուս ոսկրե իրը՝ եղջյուրից պատրաստված, երկու ծայրերը թեք կտրված, աղեղնաձև, կրնտրոնական մասում միջանցիկ անցքով գործիք է (աղ. LII, 11): Այս գործիքի նշանակությունը մեզ հայտնի չէ:

II պեղավայրի ոսկրե իրերի շարքում մեծ թիվ են կազմում տարբեր տեսակի եղջյուրից պատրաստված գործիքները (աղ. LII, 6,8): Սրանց բոլորի թերի լինելու պատճառով դժվար է որոշել դրանց իրական տեսքը և գործածության բնագավառը: Նշենք միայն, որ սրանք ևս պասկանում են այն ոսկրե գործիքների թվին, որոնք լայն տարածում են ունեցել բրոնզի և երկաթի դարաշրջաններում: Այդպիսիները հայտնի են Մեծամորից (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*. 1973, էջ 33, նկ. 37, էջ 61, նկ. 85), Կողբից (*Есаян А.А.*,1976, էջ 169, աղ. 123) և այլ հուշարձաններից: Մյուս ոսկրե իրը, խաղոսկրից պատրաստված քառակող կախիկ-զարդն է (աղ. LII, 7), որի ճշգրիտ զուգահեռները մեզ հայտնի են միայն Գառնիի և Քոսի-ճոթերի վաղ բրոնզեդարյան հուշարձաններից (*Խանզադյան Է.Վ.*, 1969, էջ 34, նկ. 25): Ոսկրե մյուս իրը՝ կտրվածքում քառակող, լծի մանրակերտն է (աղ.LII, 12): Այն նման է Լճաշենի ուշ բրոնզեդարյան լծերին (*Мнацаканян А.А.*, 1957, էջ 146, նկ. 1):

Ինչպես տեսանք, քարե ու ոսկրե գործիքներն ունեն ժամանակագրական լայն

*Պեղումները *Լ. Պետրոսյանի*, չհրատարակված նյութեր:

ընդգրկում և չունեն որոշակի թվագրող հատկանիշներ: Գործիքների մյուս խումբն են մետաղից պատրաստվածները:

*Ծակիչ* - պատրաստված է բրոնզից: Վերին մասի մի հատվածը ուռուցիկ է (աղ. LII, 19): Նման քառակող գործիքները, միայն առանց ուռուցիկ մասի, ևս խորթ չեն բրոնզի և երկաթի դարաշրջանների մշակույթին: Այդպիսիք հայտնի են Շիրակավանի ուշ բրոնզեդարյան դամբարաններից, Արթիկից (***Хачтрян Т.С.,*** 1975, էջ 213, նկ. 126), Մեծամորից (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.Ն., Պարսամյան Է.Մ.*, 1973, էջ 48, նկ. 66), Քուչակից* և այլ վայրերից: Մետաղյա իրերից մյուսը պատրաստված է երկաթից: Այն ունի տերևաձև դաշույնի տեսք (աղ. LI, 11): Ուսումնասիրվող պեղավայրի թվագրման համար կարևոր նշանակություն ունեն հայտնաբերված խեցեղեն արտադրանքի նմուշները, որոնք ներկայացված են կարասներով, կճուճներով, թասերով, քրեղաններով, գավաթներով և այլն:

*Կարասներ*- ունեն գորշ հարդարված մակերես, ձգված իրան, դուրս թեքված շուրթ, լայն բերան: Իրանի ուսերը զարդարված են ակոսագոտիներով, հատիկագարդերով ու շրջանաձև, ելուստներով (աղ. LIII, 9-12): Կարասների զուգահեռները հայտնի են Արթիկից (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 262, նկ. 162), Մեծամորի հրդեհված շերտից (*Խանզադյան Է.Վ,, Մկրտչյան.Կ.Դ., Պարսամյան Է.Մ.,* 1973, էջ 39, նկ. 48, էջ 43-44, նկ. 60,61), Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտից (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 176, նկ. 72), Դվինից (***Кушнарева К.Х.,*** 1977, աղ. XVI-XIX) և այլն: Այդ տեսակետից ուշագրավ են Ուչ-թեփեի մ.թ.ա. X-IX դարերով թվագրվող շերտից հայտնաբերված անզարդ կարասների բեկորները (***Иессен А.А.,*** 1965« էջ 194-195, նկ. 20, 21) որոնք իրենց ձևով ամբողջությամբ համապատասխանում են Շիրակավանի նմուշներին:

*Կճուճներ*- բաժանվում են երկու խմբի՝ կանթով և անկանթ: Կանթով կճուճներն ունեն սև և գորշ հարդարված մակերես, ուռուցիկ իրան, դուրս ճկված շուրթ: Մեկի կանթը սկսվում է շուրթից, իսկ մյուսինը ամրացված է իրանի ուռուցիկ մասում: Դրանցից մեկը զարդարված է երկու հորիզոնական ակոսագոտիների մեջ ներառված փոսիկներով, իսկ մյուսը՝ հորիզոնական ակոսագոտիներով և հատիկաշարերով (աղ. LIII, 6,7): Սրանց զուգահեռները հայտնի են վաղ երկաթի դարաշրջանին վերագրվող մի շարք հուշարձաններում՝ Արթիկում, (***Хачатрян Т.С.,*** 1979, էջ 194 և հաջորդները), Ռեդկոն-լագերում (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 200, նկ.78), Խուրջին-հողերում (***Есаян С.А.,*** 1976, էջ 114, աղ. 923) և այլն: Կճուճների մյուս խումբն են կազմում խոշորահատիկ ավազախառն կավից պատրաստված, գորշ հարդարված մակերեսներով, դուրս ճկված շուրթերով, լայնապռունկ կավանոթները (աղ. LIII, 1-5): Զարդարված են միաշար և բազմաշար հորիզոնական ակոսագոտիներով: Այս անոթների զուգահեռները հայտնի են ինչպես ուշ բրոնզի, այնպես էլ երկաթի դարաշրջանի հուշարձաններում:

*Քրեղաններ*- ներկայացված են մի քանի տարբերակով, Առաջին տարբերակը են կազմում ուռուցիկ իրանով, թույլ սև փայլեցված արտաքին մակերեսով, դուրս թեքված շուրթի սյսակով ամանները (աղ. LIV). մեկի ուսերը զարդարված են բազմա-

---

*Պեղումները *Լ. Պետրոսյանի*. չհրատարակված նյութեր:

շար հորիզոնական ակոսազոտիներով: Այս քրեղանները իրենց ճշգրիտ զուգահեռները ունեն Արթիկի (***Хачатрян Т.С.,*** 1979, էջ 194 և հաջորդները). Քեթիի (*Պետրոսյան Լ.Ա.,* 1983, էջ 67, աղ. I, 31), Ցամաքաբերդի*, Դիլիջանի (*Եսայան Ս., Յովհաննիսյան Յ.Ա.,* 1969, աղ. 23), Քուչակի** և մի շարք այլ մ.թ.ա. X-IX դարերով թվագրված հուշարձաններում:

Քրեղանների II խմբի նմուշները ամենամասսայականն են Շիրակավանի II պեղավայրում: Թույլ արտահայտված երկթեք և կլորացող իրանով, սև ու գորշ փայլեցված մակերեսով, դուրս ճկված շուրթով այս անոթները (աղ. LIV, 5-7, 9-12, 15), հիմնականում անզարդ են: Որոշ օրինակների վրա իրանի ուռուցիկ մասում առկա են ակոսազոտիներ: Ձևերով այս խմբին են հարում իրանի վերին մասում թեթևակի գոգավորությամբ քրեղանները (աղ. LIV, 2-4), որոնցից մեկի ստորին մասը զարդարված է ուղղահայաց տարված թույլ փայլագծերով, Այս քրեղանները հիմնականում հանդիպում են նախորդների հետ միասին և բացի վերը նշված հուշարձաններից հայտնի են նաև Շիրակավանի վաղ երկաթեդարյան դամբարաններում և շերտագրական փոսորակում, Անգեղակոթում (*Խնկիկյան Օ.Ս.,* 1978, էջ 101, տախտ. II, 42), Խուրջին հողերում, Ոեդկին-լազերում, Պակերում, Այդրան-թալայում (***Есаян С.А.,*** 1976, էջ 112, աղ. 917, էջ 145, աղ. 1114, էջ 180, աղ. 126, 3,6,7, էջ 195, աղ. 134, 9), Լոռի-բերդում (***Деведжян С.Г.,*** 1981, աղ. XXI, 5,6) և բազմաթիվ այլ մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվող հուշարձաններում: Ուսումնասիրվող քրեղանների III տեսակն են կազմում սև և գորշ գույնի, թույլ փայլեցված մակերեսով, թեթևակի դուրս թեքված շուրթով նմուշները, որոնց իրանի վերին մասը զարդարված է հորիզոնական, ոչ խորը ակոսազոտիներով (աղ. LIV, 8,14): Նման թասեր հայտնաբերվել են Մեծամորում (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան. Կ.Յ., Պարսամյան Է.Ս.,* 1973, էջ 37, նկ. 45), Անգեղակոթում (*Խնկիկյան Օ.Ս.,* 1978, էջ 101, տախտ. 11, 37) և այլ հուշարձաններում: Քրեղանների IV տարբերակե է կազմում սև և դարչնագույն երանգներ ունեցող, փայլեցված արտաքին մակերեսով, կիսագնդաձև իրանով, քիչ դեպի ներս հակված կողերով, կլորացող շուրթով ամանը (աղ. LIV, 16): Դրա վերին մասը զարդարված է ակոսազոտիներով: Այդպիսի քրեղաններ հայտնի են Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտից (***Мартиросян А.А.,*** 1961, էջ 30, նկ. 21 b), Արթիկից (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 252, նկ. 161), Անգեղակոթից (*Խնկիկյան Օ.Ս.,* 1978, էջ 101, տախտ. 11, 38), Ուչ-թեփեից (***Иессен А.А.,*** 1965, էջ 122, նկ. 18) և այլ հուշարձաններից: Քրեղանների V խումբը ներկայանում է սև և դարչնագույն երանգներ ունեցող փայլեցված մակերեսով, կեսագնդաձև իրանով, կլորացող շուրթով նմուշով (աղ. LIV, 20): Սրա ուսին ամրացված է եորիզոնական հարթ ռոնակ: Նման թասեր հայտնի են Շիրակավանի վաղ երկաթեդարյան դամբարաններից և ստուգողական փոսորակից, Քուչակից* և այլն: Այս քրեղանների մեկ այլ տարբերակ են կազմում բաց վարդագույն հարդարված մակերեսով, փոքր-ինչ փռված կեղերով, քիչ կլորացող շուրթով, անզարդ, իսկ մեկ դեպքում իրանն ու շուրթը հատիկներով զարդարված ամանները (աղ. LIV, 17-19): Պայմանականորեն այս խմբում ենք դասում նաև ձեռքով պատրաստված կոպիտ ամանը, որն

---

*Պեղումները *Լ.Պետրոսյանի*, չհրատարակված նյութեր:

իրանի ձևով նմանվում է վերը նկարագրվածներին (աղ. LIV, 23): Սրանց զուգահեռները հայտնի են բրոնզի և երկաթի դարաշրջաններին պատկանող հուշարձաններից և չունեն որոշակի թվագրող հատկանիշներ: Քրեղանների VI տարբերակը ունի սև թույլ փայլեցված մակերես, փռված կողեր, շեշտակի դուրս թեքված հարթ կտրված զանգվածեղ շուրթ (աղ. LIV, 21): Այս ափսեանման քրեղանների զուգահեռները հայտնի են Սեծամորի մ.թ.ա. VIII-VII դարերին պատկանող հնոցների շերտից (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, աղ. XV):

Քրեղանների VII տարբերակը ներկայացված է մեկ նմուշով: Այն ունի գորշ փայլեցված արտաքին և կոկիչով հղկած ներքին մակերես, ուղիղ կանգնած, դեպի ներս գոգավորվող կողեր, կտրվածքում կտցաձև շուրթ, լայն հատակ (աղ. LIV, 13): Սա ևս իր բազմաթիվ զուգահեռներն ունի մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվող հուշարձաններում՝ Արթիկում (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 252, նկ. 61), Կարմիր-բլուրում (*Եսայան Ս.Ա.*, 1972, աղ. XII), Իջևանում (***Есаян С.А.,*** 1976, էջ 178, աղ. 125) և այլուր: Նկատենք, որ քրեղանների մեծ մասը ձևով կրկնում է նախորդ՝ ուշ բրոնզեդարյան քրեղանների ու թասերի ձևերը, տարբերվելով դրանցից թույլ սև և գորշ գույնով ու փայլանախշերի գրեթե լրիվ բացակայությամբ, հանգամանք, որը բնորոշ է վաղ երկաթի ժամանակաշրջանի խեցեղենին:

*Գավաթ* - ունի թույլ սև փայլեցված արտաքին մակերես, երկթեք ուռուցիկ իրան, թեքևակի դուրս թեքված կլորացող շուրթի պսակ և հարթ, լայն հատակ: Իրանի ուռուցիկ մասում առկա է օղակաձև բռնակ, որի երկու կողմերում արված են զույգ-զույգ սարված թեք ակոսներ (աղ. LIV, 22): Նման ամաններ հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի վաղ երկաթեդարյան հուշարձաններում, նույն Շիրակավանի դամբարաններում, Ոսկեհասկում (***Петросян Л.А.,*** 1989, աղ. 67, 17), Թեյշեբաինիում (***Мартиросян А.А.,*** 1961, էջ 58, նկ. 26), Թրիալեթիում (***Менабдзе М., Давлианидзе К.О.,*** 1968, աղ. I, 14), Սարի-թեփեում (***Нариманов И.Г., Халилов Д.,*** 1962, էջ 49, աղ. 255, աղ. 8), Մինգեչաուրում (***Асланов Г.М., Ваидов Р.М., Ионе И.,*** 1959, աղ. 256), Բաբադերվիշում (***Алиев В.Г.,*** էջ 111, աղ. 23) և այլուր:

Շիրակավանի II պեղավայրից հայտնաբերված է և բաժակ: Այն իրենից ներկայացնում է վարդագույն, հարդարված մակերեսով, դեպի շուրթը լայնացող կողերով, սրված շուրթով: հարթ հատակով անոթ (աղ. LIII, 8): Շուրթի մոտ առկա է օղակաձև անցքով բռնակ, իսկ շուրթի տակ, կտրելու եղանակով արված է հորիզոնական զիգզագաձև գոտի:

*Սափորներ* - ներկայացված են երկու օրինակով: Դրանցից մեկը գորշ փայլեցված արտաքին մակերեսով անոթի վիզ է (աղ. LV, 11), իսկ մյուսը սև և մուգ դարչնագույն փայլեցված մակերեսով վզի և ուսամասի բեկոր է (աղ. LV, 6): Վերջինիս ուսերի վերին մասում արված են հորիզոնական լայն ակոսագոտիներ, իսկ ստորին հատվածը զարդարված է կտրելու եղանակով արված զարդապատվերներով: Ներկայացված սափորները իրենց ձևերով բնորոշ են Հայաստանի մ.թ.ա. II հազարամյակի վերջով և I հազ. սկզբով թվագրվող հուշարձաններից հայտնաբերվածներին: Այդ են ապացուցում նաև Շիրակավանի երկրորդ սափորի զարդանախշման ձևերն ու եղանակները,

որոնց նմանները հայտնի են նշված ժամանակաշրջանին պատկանող և այլ հուշարձաններից:

*Խնոցիներ*- ներկայացված են բազմաթիվ բեկորներով: Դրանք ունեն գորշ հարդարված արտաքին և անհարթ ներքին մակերեսներ (աղ. LV, 8): Սրանց զուգահեռները ևս հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի մթա. II հազարամյակի վերջին և հետագա ժամանակաշրջաններին պատկանող գրեթե բոլոր հուշարձաններում և չունեն որոշակի թվագրող հատկանիշներ: Ուսումնասիրվող խնոցիներից բացի Շիրակավանի II պեղավայրում հայտնաբերվել են նաև անորոշ ձևի կավամանների բազմաթիվ բեկորներ, որոնց մի մասը հետաքրքիր է զարդանախշման եղանակներով ու ձևերով: Դրանցից մեկը սև փայլեցված մակերեսով խեցանոթի բեկոր է, որի արտաքին մակերեսը զարդարված է կտրելու եղանակով արված, ալիքաձև գծերից կազմած, իրար մեջ հագած սուր, դեպի հատակը ուղղված անկյուններով (աղ. LV, 4): Նույն եղանակով արված եռանկյունաձև, զարդերը ևս խորթ չեն Հայաստանի մթա. II հազարամյակի վերջի և I հազ. սկզբի մշակույթին: Դրանք հայտնի են Մեծամորում (*Խանզադյան է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան է.*,1973, էջ 40. նկ. 50), էլառում (*Խանզադյան է.Վ.*, 1979, աղ. XIX, 5), Կարմիր-բլուրում (*Եսայան Ս.Ա.*, 1972, աղ. VIII), Մակարաշենում (***Мартиросян А.А.***, 1964, էջ 206, նկ. 80): Մյուս սև փայլեցված բեկորը զարդարված է եռանկյունաձև դաջվածքներով (աղ. LV, 3): Նշենք, որ նման զարդանախշերը բնորոշ են ուշ բրոնզի դարաշրջանին, որոնք ավանդաբար, սակայն սակավ քանակությամբ հանդիպում են նաև մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկզբում և հայտնի են Լոռի-բերդից (***Деведжян С.А.***, 1981, աղ. XIV), Ղմշկուտից (***Есаян С.А.***,1976, էջ 119, աղ. 957) և այլ հնավայրերից:

*Սաջ*- պատրաստված է խոշորահատիկ ավազախառն կավից: Ունի գորշ և դարչնագույն եարդարված մակերեսներ, ուղղահայաց կրղեր, հարթ հատակ: Հարթ կտրած շուրթը զարդարված է կրր հանվածքներով (աղ.LV, 2): Ամանը կրակի վիա երկար լինելու պատճառով խիստ կարմրած և մրոտված է: Աաջերի հնագույն օրինակները հայտնի են դեռևս էնեոլիթյան հուշարձաններից ու հարատևում են մինչև երկաթի դարաշրջանը. հայտնի են Քեթիից (***Петросян Л.А.***, 1989, աղ. 19, 8,9), Կարմիր բլուրից (*Եսայան Ս.Ա.*, 1972, աղ. XL), Մեծամորից (*Խանզադյան է.Վ., Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան է.* 1973, աղ. XXI) և այլ եուշարձաններից:

*Բահանման իր* - խոշորահատիկ ավազախառն կավից պատրաստված, գորշ հարդարված մակերեսներով իր է, որն ունի խողովակաձև կրթառ (աղ. LV, 1): Այս գործիքը եավանաբար օգտագործվել է մոխիրը օջախից հեռացնելու, կրակր շարժական օջախ տեղափոխելու կամ կրակր միջից շիկացած առարկաները հանելու նպատակրն:

Շիրակավանի II պեղավայրից հայտնաբերված կավակերտ նյութերի շարքում հետաքրքիր է նաև խոշորահատիկ ավազախառն կավից պատրաստված, բազմանիստ իրանով, շրջանաձև լայնացող հիմքով իրը, որի վերին մասը կոտրված է: Նրա մի կողի վիա կտրելու եղանակրվ արված են եղևնաձև զարդեր (աղ.LV, 10): Իրի վերին մասը կրարված լինելու պատճառով դժվար է պատկերացնել նրա իրական տեսքը:

Թվում է, որ այն հանդիսացել է որևէ արձանիկի ոտք կամ ինչ-որ անոթի հենակ: Առանձնակի կարևոր է աջակողմյան I շինության արևմտյան պատին կից ավլանոցում հայտնաբերված տուֆ քարից պատրաստված կաղապարի մի փեղկի բեկորը, որի մեջ ձուլվել է վեր բարձրացող ուսերով և ուղիղ կոթառով հարթ տապարիկ: Կաղապարի մյուս երեսին արված են երեք, իսկ կողերին՝ մեկական ակոսներ (աղ. LII, 13): Սկիզբ առնելով վաղ բրոնզի դարաշրջանում, հարթ տապարիկները իրենց հետագա զարգացումն են ապրում մ.թ.ա. II հազ.: Շիրակավանի հարթ տապարիկի ձևը պատկանում է Հայաստանում և Անդրկովկասում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում լայնորեն տարածված տեսակին, որը բաժանվում է մի քանի տարբերակների (*Խանզադյան Է.Վ.*, 1977, էջ 31-32): Շիրակավանի օրինակը համապատասխանում է ուշ բրոնզ - վաղ երկաթեդարյան նմուշներին, որպիսիք հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի մ.թ.ա. XII-VIIIդդ. թվագրվող հուշարձաններում Գյումրիում (***Мартиросян А.А.***, 1964, էջ 123, նկ. 49), Վանաձորում (***Мартиросян А.А.***, 1964, էջ 142, նկ. 59, *Մարտիրոսյան Հ.Ա*, 1969, աղ. XI, նկ 24: *Կարախանյան Գ.Հ.* 1976, էջ 68, աղ. 1), Գետաբեկ-Կալաքենդում (***Ивановский А.А.***, 1911, նկ. 6,աղ. XVI, 7) և այլուր:

Այսպիսով, Շիրակավանի բնակատեղիի II պեղավայրից հայտնաբերված նյութական մշակույթի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ դրանք մի կողմից պահպանելով նախորդ փուլի ավանդական ձևերը, դրսևորում են և նոր ձևեր ու տեսակներ (սափորներ, գավաթներ), որոնք բնորոշ են դառնում հետագա դարաշրջաններում: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես և սափորների, գավաթների, Շիրակին այնքան բնորոշ իրանի ուռուցիկ մասում արված երկկանթ կճուճների բացակայությունը, երկաթե գործիքների ու զենքերի սակավությունը, տվյալ շերտը թվագրում ենք մ.թ.ա. XIIIդ. վերջ XIIդդ:

*Գ. Շեյտագյաւական փոսորակ* (պեղ՝ Ռ.Մ.Թորոսյան) - հուշարձանի շերտագրությունը, թվագրությանն առնչվող հարցիր պարզելու նպատակով, 1977թ. դարավանդի հարավահայաց լանջի կենտրոնական մասում պեղվեց 8x4մ2 տարածք ընդգրկող հատված: Մշակութային նստվածքների խորությունն այստեղ կազմում էր 2.2մ: Այս խորության մեջ բացվեց իրար հաջորդող 3 շինարարական շերտ, որոնցից վերինը ծածկված էր դարավանդի լանջերից գած սահած հող ու քարից կազմված, շուրջ 60սմ հզորություն ունեցող շերտով, դրանից ցած մշակութային շերտերն էին: Ստորին՝ առաջին շիրտում (խոր.1.8-2.2մ), բացվեցին ինչ-որ շինության փլատակներ: Այդ կառույցի հողաշեն հատակի կազմված էր մայր հողի վրա փռված, 2-3սմ հաստություն ունեցող դեղնավուն շերտով, Այս տոփանված և ամրացված շերտը հյուսիսային կեսում նստած էր մայր հողի վրա, այսինքն՝ լանջի կտրված, հարթեցված մակերեսին, իսկ հարավային հատվածում՝ մանր քարերից ու հողալիցքից կազմված արհեստական հարթակին: Այս հատակի վրա, փոսորակի արևելյան կեսում, բացվեց հյուսիսհարավ ձգվեղ, մանր քարերով շարված կոր պատի, 10-20սմ բարձրություն և 1.3մ երկարություն ունեցող հատված: Այս պատի մնացած մասը ավերվել էր վերին շիրտի հորի պատրաստման ժամանակ: Պատի արևելյան կողմում հայտնաբերվեցին նավակածև աղորիքի և խեցանոթների բեկորներ: Ինչ վերաբերում է հորին (տրամագիծը՝

1.1մ). ապա այն հատակի մեջ խորանում էր 15-20սմ: Այստեղ հայտնաբերվեցին մանր ու խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ, սև ու գորշ գույնի. թույլ փայլեցված մակերեսներով ամանների բեկորներ և վանակասի ցլեպներ: Հավանաբար այս կառույցը բակ կամ օժանդակ բաց տարածք է հանդիսացել: Ստորին շերտից հայտնաբերված սակավաթիվ նյութերը ներկայացված են գորշ կամ սև, թույլ փայլեցված մակերես ունեցող սափորների, կճուճների, թասերի և այլ ամանների բեկորներով, որոնք առանձին դեպքերում զարդարված են ակոսագոտիներով, հատիկաշարերով, խազված եռանկյունիներով, փայլագծերով,

*Կճուճներ* - ունեն դուրս ճկված, կլորացող շուրթեր: Անոթների ուսերը, երբեմն և շուրթի ներքին մակերեսը փայլեցված են (աղ.LVI, 1-5): Անոթների այս տեսակի զուգահեռները բազմաթիվ են վաղ երկաթեդարյան հուշարձաններում (Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտ, Մեծամոր, Էլար և այլն):

*Թասեր և քրեղաններ* - մեկն ուղղահայաց կողով, դուրս ճկված շուրթով, ակոսագոտիներով զարդարված քրեղան է (աղ. LVI, 6): Ամաններից մյուս երկուսն ունեն կլորացող շուրթ և թեք իրան, որը հորիզոնական ակոսներով է զարդարված (աղ.LVI, 7-8): Սրանց զուգահեռներն են Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտի II խմբի նմուշները և, ինչպես կտեսնենք ստորև, հայտնի են Շիրակավանի մ.թ.ա. XI-IXդդ թվագրվող դամբարաններից: Բեկորներից մյուսը զարդարված է թեք մատնեքով (աղ.LVI, 9), որի զուգահեռներր հայտնի են Մեծամորի «հրդեհված» շերտից, տաճարական համալիրից և եամաժամանակյա դամբարաններից (*Խանզադյան Է.Վ., Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,* 1973, էջ 117, 126, 176, նկ.118, 124, 125, 165), Էլարից (*Խանզադյան Է.,* 1979, էջ 83, նկ.116), Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտից, Սուխաննաթ-թափայից, Քեթիից և բազմաթիվ այլ հուշարձաններից (***Есаян С.А.,*** 1976, Լջ 140, աղ. 109: *Եսայան Ս.Ա.,* 1967, Լջ 37, տախտ. XIII, 17,18, XIV, 1):

Բեկորներից մյուսը պատկանում է գնդաձև, իրանով և լայն, հարթ մակերես ունեցող շուրթով ամանի, որի սև մակերեսը թույլ փայլեցրած է (աղ. LVI16): Նման խեցանոթներ հայտնի են Մեծամորի № 5 դամբարանից (*Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,* 1973, աղ. XXXVIII), Շիրակավանի II պեղավայրից. Խուրջինհողերից (***Есаян С.А.,*** 1976, էջ 112, 114, աղ. 91, 92, 2,15) և այլ հուշարձաններից, այդ անոթները հաճախ զարդարված են երկրաչափական պատկերներով, կենդանակերպ հավելադիր ծեփվածքներով: Նման խեցանոթ հայտնի է և վաղ երկաթի դարաշրջանին պատկանող Թրելիի № 12 դամբարանից (***Абрамишвили Р.,*** 1978, աղ. XXVIII):

Շերտագրական փոսորակի նույն հորիզոնից հայտնաբերված նմուշներից ուշագրավ է նաև գորշ գույնի խեցու բեկորը, որը զարդարված է հատիկաշար հավելադիր գոտիով, ուղղագիծ հորիզոնական ակոսով ու դրանց միջև տարված ալիքաձև ակոսների երեք խմբով (աղ. LVI, 11): Նման զարդապատկերով խեցեղենը Հայաստանի մ.թ.ա. II հազ. վերջի և I հազ.սկզբի հուշարձաններում լայն տարածում ունեցող նյութերից է: Այդպիսիք առկա են Էլարի դամբարանադաշտից, մ.թ.ա. X-IXդդ. թվագրվող կճուճներից մեկի (*Խանզադյան Է.Վ.,* 1979, նկ. 118, էջ 84-85 աղ. XVII, 5) ու P, 3

փոսորակից գտնված կարասի բեկորի վրա, Մեծամորից (*Խանզադյան Է. Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,* 1973, էջ 39, նկ.5), իսկ Դվինում հավելադիր գոտիով և ալիքաձև ակոսով զարդարուն խեցին հայտնի է պաշտամունքային կառույցների ու արհեստանոցների շերտերում (***Кушнарева К.Х.,*** 1977, աղ. XIX, 2): Հարկ է նկատել, որ Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտում և այլ վայրերում նման խեցեղենը ուղեկցվում է ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանում լայն տարածում գտած, բեկյալ գծերով լցված եռանկյունաձև, պատկերներ կրող խեցանոթներով (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 51-52): Բերված զուգահեռների հիման վրա, Շիրակավանի հետազոտված նյութերը նույնպես թվագրում ենք մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկիզբ ընկած ժամանակաշրջանով:

Վաղ երկաթի դարաշրջանի խեցանոթների նմուշների շարքը Շիրակավանի ստուգողական փոսորակի ստորին հորիզոնում համալրվում է սև, արտաքինից փայլեցված մակերես ունեցող բեկորով, որը զարդարված է եռանկյունաձև զարդապատկերով: Զարդանախշը ստացված է կտրելու եղանակով (աղ. LVII, 12): Զարդանախշի ստացման երկու եղանակների համատեղումը այս նմուշի վրա, ինչպես ցույց են տալիս ստորև բերվող զուգահեռները, բնորոշ է ուշ բրոնզի վերջի և վաղ երկաթի դարաշրջաններին: Նման եղանակներով հորինված եռանկյունաձև զարդապատկերներ ունեն Մեծամորի «հրդեհված» շերտի, նույն հուշարձանի № 2 դամբարանի (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,* 1973, էջ 42, նկ. 57, տախտ. XXXV2), Դվինի կենտրոնական թաղամասում գտնված, մ.թ.ա. II հազ. վերջով թվագրվող բազմաթիվ անոթները (*Եսայան Ս.Ա., Հովհաննիսյան Հ.Ա.,* 1969, տախտ. V, նկ. 8), Էջմիածնի նախկին թանգարանից ՀԱՊԹ հանձնված սափորը (*Եսայան Ս.Ա.,* 1964, հատ. I, էջ 19, տախտ. V, նկ.1), Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտից և № 4, 5 դամբարաններից գտնված խեցանոթներից մի քանիսը: Դրանք թվագրված են մ.թ.ա. IX-VIIIդդ. (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 59): Գծերով լցված եռանկյունիներով զարդարված խեցանոթներ հայտնաբերվել են և Շիրակավանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանին պատկանող դամբարաններից: Այդպիսիք հայտնի են և Ղազախ քաղաքի մոտ գտնվող Բաբա-դերվիշ հնավայրի IV-V բլուրների վրա տեղադրված, ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանին պատկանող շերտերում (***Алиев В.Г.,*** 1971, էջ 111, աղ. II, նկ. 1):

Քննարկվող խեցեղենի խումբը համալրվում է հաստակող, զորշ և սև, երբեմն նաև կարմիր խեցեղենի բեկորներով, որոնց մակերեսները զարդարված են մատնեքով (աղ. LVI, 10), ակոսագոտիներով, ինչպես և փայլեցմամբ արված, վերից-վար իջնող գծազարդերով (աղ. LVI, 14,15):

Այսպիսով, Շիրակավանի ստուգողական փոսորակի ստորին հորիզոնից (1,8-2,2մ խորություն) գտնված խեցեղենը իր մի քանի հատկանիշներով սերտորեն կապվում է Հայաստանի մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկզբով թվագրվող հուշարձաններից հայտնաբերված նմուշների հետ և առանձնապես չի տարբերվում դրանցից, որի հիման վրա և, փոսորակի ստորին շինարարական շերտը թվագրում ենք նույն ժամանակաշրջանով:

*II շինարարական շերտի* (հզորությունը՝ 0.8մ) հատակը նախորդի նման պատ-
բաստված էր ղեղնավուն կավաշաղախով և շրջապատող միջավայրում առանձնա-
նում էր տոփանված վիճակում: Հատակը փոսորակի արևմտյան կեսում արևելք-արևմուտք ձգվող միաշար քարաշեն, 2.60մ երկարություն, 30սմ բարձրություն ու 30-40սմ հաստություն ունեցող պատով բաժանվում էր երկու մասի: Պատի արևելյան ծայրը ավերվել էր ուշ ժամանակներում վտրված. շուրջ 1մ տրամագիծ ունեցող հորի շինարարության հետևանքով: Այս հատակից քիչ բարձր (մոտ 20սմ) բացվեցին մեկ այլ շինության փլատակներ, որոնք փոսորակի արևելյան կեսի ողջ մակերեսը ծածկել էին խոշոր ու միջին մեծության անկանոն թափված քարերով: Քարակույտի մաքրումից հետո պարզվեց, որ այստեղ գործ ունենք դարձյալ արևելք-արևմուտք ձգված, սագատ կանգնած միաշար պատի հետ, որը հաջորդ շինության կառուցման ժամանակ ավրվել էր: Պատի հյուսիսային կողմում, դրան կից, հայտնաբերվեց հատակի մեջ փոքր խորության վրա լցված մոխրաշերտով և կողերը մբոտված քարերով շարված տնտեսական օջախ, հայտնաբերվեցին և նավակաձև աղորիքների բեկորներ, ոսկիե հերուն (աղ. LVI, 18), վանակասփ ցլեպներ և խեցեղեն արտադրանքի բեկորներ:

Նույն հորիզոնի վրա, փոսորակի հարավային կողմի կտրվածքի կենտրոնական մասում, բացվեց վերոհիշյալ պատին ուղղահայաց, հյուսիս-հարավ ուղղությամբ դրված, մանր քարաբեկորներով շարված պատի մի հատված, որը փոսորակի մեջ ձգվում էր 1,2մ և ուներ 30սմ բարձրություն ու նույնքան հաստություն: Այսպիսով, փոսորակի 100-180սմ խորության մեջ առկա էին իրար հաջորդող երկու շինությունների փլատակներ, որոնցից ստորինը թույլ պատերով, հավանաբար ժամանակավոր օժանդակ շինության մնացորդ էր, իսկ վերինը՝ բնակելի կառույցի: Վերջինիս օգտին են խոսում օջախի առկայությունը և կենցաղային իրերը: Սրանք չնայած գտնվում են տարբեր խորությունների վրա, սակայն ըստ էության ժամանակագրական տարբերություններ չեն դրսևորում, որը և նպատակահարմար է դարձնում դրանցում հայտնաբերված նյութերը միասին ներկայացնելը:

Հավաքված հնագիտական իրերի ժողովածուն (փոսորակի 100-180սմ՝ խորությունից) բաղկացած է կճուճների, քրեղանների բեկորներից: Հայտնաբերված խեցեղենի համար եատկանշական են սև ու գորշ փայլեցված կամ անփայլ մակերեսները, որոնք զարդարված են մ.թ.ա. I հազ. սկզբին բնորոշ զարդարանքներով: Սրանք ուղեկցվում են նաև կարմիր կամ գունաթափ կարմիր փայլեցված և անփայլ մակերեսներով խեցանոթների մի քանի բեկորներով:

Փոսորակի այս հորիզոնում գտնված կճուճների թվում ուշագրավ է գորշ գույնի, լուսած մակերեսով շուրթի բեկորը, որը կտրվածքում, ներսի կողմից աստիճանաձև հանվածք ունի (աղ. LVI, 20), ինչը նախիկենից եկող ավանդույթների շարունակությունն է հանդիսանում: Խեցեղեն առարկաների այս խմբի նմուշներից են նաև սև անփայլ մակերեսներով, դուրս ծկված շուրթով կճուճները (աղ. LVI, 21,22), որոնց շուրթերի ներքին մակերեսները հղկված և սև փայլեցված են: Դրանցից մեկի ուսերը զարդարված են դրոշմմամբ ստացված եռանկյունաձև զարդերով (աղ. LVI, 21), որոնք կրկնում են II պեղավայրից հայտնաբերվածներին: Այդ կավանոթները ուղեկցվում են հասա-

րակ դարչնագույն կամ գորշ մրոտված մակերեսներով, ուռուցիկ իրան ունեցող կճուճներով, որոնցից մեկի հատակը զարդարված է հատիկաշարով (աղ. LVI, 23,26)։ Նման իսեցանոթները Հայաստանի և Անդրկովկասի ուշ բրոնզի ու երկաթի դարաշրջանների հնագիտական հավաքածուներում սովորական են և, որպես կոնցադրում լայն կորառություն ունեցող խոհանոցային անոթներ, գոյատևման երկար ժամանակաշրջան են ընդգրկում։

Խեցեղեն արտադրանքի մյուս տեսակը կլորացող իրանով, դուրս թեքված շուրթով, գորշ և կարմիր գույնի քրեղաններն են։ Սրանցից ուշագրավ է կարմիր գույնի ամանի բեկորը, որի իրանի վերին մասում առկա է հորիզոնական ակոսազոտի (աղ. LVI, 25)։ Քրեղանների մյուս խումբն են կազմում երկթեք իրանով, դուրս թեքված շուրթով օրինակները (աղ. LVI, 24,28)։ Դրանցից մեկի իրանի վերին մասում արված են ներճկմամբ ստացված ուղղանկյունաձև, զարդեր (աղ. LVI, 24), որոնց նմանները հայտնի են Մեծամորի «հրդեհված» (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, աղ. IX, նկ. 5), Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտից № 3 (1956թ.) դամբարանից (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 65, նկ. 29, վ), Մակարաշենից (***Мартиросян А.А.,*** 1964, նկ. 59, 9, 79ա) և այլ վայրերից։ Բերված զուգահեռները թույլ են տալիս II շինարարական շերտը թվագրել մ.թ.ա. I հազ. սկզբով։

*III շինարարական շերտ* - ընդգրկում է փոսորակը 0.6-1մ խորությունը։ Այստեղ հայտնաբերված են իրար զուգահեռ, հյուսիս-հարավ ձգվող երկու միաշար պատեր, որոնք ընդգրկում են շուրջ 3.5մ² տարածություն ունեցող հատակ։ Հատակի և պատերի, դեպի հարավ ձգվածության սահմանը, լանջի թեքության պատճառով, պահպանված չէր։ Այս փլատակները ծածկված էին լանջի վերին մակերեսից ցած սահած, 60սմ հզորություն ունեցող ջրաբերուկային հողաշերտով, Այս շերտի հատակը, ի տարբերություն նախորդի, վատ էր պահպանված։ Պատերից դուրս մնացած տարածության վրա շինության հետքեր չնկատվեցին։ Այս հատակի վրա, 60-100սմ խորությունից հավաքվեցին հատիկազարդ և ակոսազարդ բեկորներ, սև ու գորշ փայլեցված կավանոթների նմուշներ, կենդանու իադոսկրից պատրաստված երկու կախիկ, ջնարակված, գլանաձև, փորազիր եղևնաձև զարդով կնիք- ուլունք և իսեցանոթի բեկորից պատրաստված սկավառակաձև իր։

Հայտնաբերված նմուշներից առանձնանում են անփայլ մակերեսներով լայնաբերան կճուճները, որոնց իրանները զարդարված են եատիկաշարով ու հորիզոնական ակոսներով (աղ. LVI. 30,33,33,38)։ Կճուճների այս տեսակը մ.թ.ա. I հազ. սկզբի տարածված խեցեղենի օրինակներից է, որը մեծ մասամբ հանդես է գալիս մրապատ մակերեսներով, Արանցից մի քանիսը զարդարված են ուղղազիծ և ալիքաձև հորիզոնական ակոսներով (աղ. LVI, 35,36)։ Ուշադրության է արժանի մասնավորապես նկ. 36 զարդը, որը հիշեցնում է կլորացող գագաթով սեպ։ Կավամանի մեկ այլ բեկոր զարդարված է հավելադիր զոտիով և ալիքազծով (աղ. LVI, 37)։ Հավելադիր գոտիներով ու ալիքաձև ակոսազարդերով իսեցանոթները Հայաստանի եամաժամանակյա հուշարձաններում լայն տարածում ունեցողներից են։ Դրանցից մեծ քանակությամբ հայտնի են Մեծամորի «հնոցների» շերտում (*Խանզադյան Է.Վ.,*

*Պարսամյան Է.*, 1973, աղ. XIII նկ. 5-7), Դարանի ամիոցի P, 3 փոսորակում (*Խանզադյան Է.Վ.*, 1979, նկ.118), Կարմիր բլուրի նախաուրարտական շերտում (***Мартиросян А,А.***, 1964, նկ. 73, 4), Դվինի մեհյաններից հայտնաբերված խեցանմուշներում (***Кушнарева К.Х.***, 1977, աղ. XIX, 2) և այլուր: Նշենք, որ պարանաձև զարդ ունեն և Դվինի մեհյանների կավակերտ տախտակների ելունդավոր զարդապատկերները (***Кушнарева К.Х.***, 1977, նկ. 18, 19, 25) և համաժամանակյա վաղեմություն ունեցող, Մեծամորի հնավայրում պատահական հայտնաբերված կավե մարդակերպ արձանիկի առանձին մանրամասները (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, էջ 139, նկ. 142): Նշված հուշարձանները թվագրված են մ.թ.ա. X-VIII դդ:

Փոսորակի վերին շինարարական շերտից գտնված հետաքրքիր զարդարանք կրող բեկորներից է նաև աղ. LVI, 39: Սա գունաթափ-դարչնագույն և սև գույնի մակերեսով: անորոշ ձևի խեցանոթի մաս է, որը զարդարված է ներճկված ալիքագծերով եզերված եռանկյունաձև պատկերովւ Եռանկյան ներսը լցված է բարակ, ոչ խորը ալիքաձև ակոսների ուղղահայաց դերքով անցնող ժապավեններով: Ալիքաձև գծախմբերով լցված եռանկյունաձև զարդամոտիվը մթա. I հազ. սկզբի խեցեղենի վրա հանդես է գալիս տարրեր տեսքով: Մեծամորի II շերտի երկու կավամանների վրա այն դրսևորվում է մի դեպքում հորիզոնական դիրքով տարված. մասում ուղղահայաց (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973. էջ 40. նկ. 50-51): Մեր նմուշի վրա երկու տեսակի գծախմբերը համատեղված են միևնույն եռանկյան մեջ: Ալիքաձև գծերով լցված եռանկյունիները հայտնի են նաև Դարանի ամրոցից և թվագրվում են մ.թ.ա. X-VIIIդդ. (*Խանզադյան Է.Վ.*, 1979, աղ. XIX, նկ. 4):

Շիրակավանում, ներկայացվող հորիզոնից գտնված հետաքրքիր և շերտի թվագրմանը նպաստող հատկանիշով օժտված նմուշ է նաև աղ. LIV. 40 բեկորը: Սա ունի փայլեցված արտաքին մակերես, որը զարդարված է թեք մատնեքով և կամարաձև ներճկված զարդանախշով, այն անջատված է հորիզոնական ակոսով: Տարատեսակ կավամանների զարդարման այս եղանակը և ձևը բնորոշ է Հայաստանի մ.թ.ա. I հազ. I քառորդի մշակույթին: Տեխնիկական նույն հնարանքով են զարդարված Մեծամորի № 3 դամիարանի ափսեանման կավամանը, Դարանի ամիոցի զարդարուն հատակով ափսեն, Դվինի արհեստանոցների ու պաշտամունքային շինություններից գտնված երկկոնիկ և սովորական իրաններ ունեցող խեցանոթները (***Кушнарева К,Х.***, 1977, էջ 24, նկ. 32) և այլն: Մեծամորում նմանատիպ անոթներ գտնված են նաև «իրդեհված» շերտում (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*. 1973, աղ. X, նկ. 2): Վաղ երկաթի դարաշրջանում, ներգծված կոսաօղակների մոտիվը կավամանների վրա է դրվում մակերեսի փայլաշերտը քերելու եղանակով: Այս եղանակով է զարդարված, օրինակ, Մեծամորի «իրդեհված» II շերտից գտնված սև փայլեցված լայնաբերան կավամանը ( *Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, էջ 40, նկ. 62) և Դվինի մոտ, Հնաբերդ և Նորաշեն գյուղերի միջև Է.Խանզադյանի պեղած դամրարանի խեցանոթներից մեկը (***Кушнарева К,Х.***, 1977, աղ. XXIX, 5): Ներճկված կամ ակոսազիծ կիսաօղակները առկա են Մեծամորի

II և III շերտերում ( *Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973. աղ. IX, նկ. 7, աղ. X, նկ. 2) և այլուր: Այսպիսով ներծկված մատնեքներով. կոսաօղակնե-րով հորիզոնական ակոսագծերով զարդարուն խեցեղենը, որը բնորոշ է հետազոտվող ժամանակաշրջանի համար. ինչպես և մյուս նմուշները. թույլ են տալիս Շիրակավանի նյութերը թվագրել նշված ժամանակաշրջանով: Տրված թվագրությանը չի հակասում «մածուկից» պատրաստված գլանաձև ուլունքը, որը գոյատևման լայն ժամանակա-շրջան է ընդգրկում (մանրամասները տե՛ս *Փիլիպոսյան Ա.*, 1998):

Այսպիսով, շերտագրական փոսորակում 2.2մ խորության մեջ առկա են մոտավո-րապես հավասար հզորություն ունեցող երեք շինարարական շերտեր, որոնցից հայտ-նաբերված խեցանոթների և այլ առարկաների համադրությունների հիման վրա, ստո-րին շերտը թվագրվում է մ.թ.ա. XI - Xդդ., իսկ վերին երկուսը՝ մ.թ.ա. X-VIII դդ.:

## 2. ՄԹԱ. XI - IX ԴԴ. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ
(պեղ. Ռ. Թոռոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան)

Զբաղեցնում են I դամբարանադաշտի հարավային, հարավ-արևելյան ու II դամ-բարանադաշտի արևելյան հատվածները: Այս դամբարանները ևս, ինչպես և ուշ բրոնզեդարյանները, տարբեր փուլերի են պատկանում: Համեմատաբար վաղ են I դամբարանադաշտի հարավ-արևելյան և II դամբարանադաշտի նշված մասում գտնվողները: Դամբարանների այս խումբը ևս ծածկված է նույն՝ ցածր դամբարա-նաթմբերով: Սրանցից պեղվեցին հինը:

*Դամբարան № 172 (3-80թ.)* - գտնվում էր II դամբարանադաշտում: Երկու սալով ծածկված դամբարանախցի (չափ.՝ 2x0.8x0.9մ, ուղղութ.՝ արևելք-արևմուտք) հյուսիսային և հարավային պատերը քարաշար էին, իսկ արևելյանն ու արևմտյանը՝ մայր հողի կտրվածքն էր հանդիսանում: Այստեղ հայտնաբերվեցին մարդու կոնք-ոսկր ու մի քանի կողոսկր: Վերջիններիս մոտ ընկած էին դանակի շեղբ, բրոնզե ապա-րանջան, սարդիոնե երկու ուլունք և խոհանոցային կճուճի մանրատված բեկորներ, որոնք ամբողջացնել չհաջողվեց (աղ. LVII, 1-3):

*Դամբարան № 98 (11-81թ)* - II դամբարանադաշտի հյուսիսային մասում գտնվող այս դամբարանախուցը սալարկղ էր (չափ.՝ 1.6x1.3x1մ, ուղղութ.՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք): Վերջինիս հարավային և հյուսիսային պատերը կազմ-ված էին մեկական, իսկ կողայինները՝ երկուական սալերից: Դամբարանախցի հյուսիս-արևմտյան մասում հայտնաբերվեցին կճուճ և երեք քրեղան, որոնցից մեկը ներկա-յացված էր երեք բեկորով: Կճուճի մեջ գտնվեց մի քանի ոսկոր: Նյութերից վերջինը վանակատե ցլեպ էր (աղ. LVII, 4-9):

*Դամբարան № 101 (14-81թ.)* - նախորդից շուրջ 4մ հյուսիս գտնվող այս դամբարանախուցը (չափ՝ 0.9x0.6x0.6մ, ուղղութ՝ արևելք-արևմուտք) նույնպես սա-լարկղ էր և երկու սալով էր ծածկված: Դամբարանախցի արևմտյան պատի տակ դրված էին 6 խեցանոթ, իսկ կենտրոնում բացվեց ձախ կողքի պառկած ղեռահասի վատ պահպանված կմախք: Վերջինս գլխով հյուսիս-արևմուտք էր ուղղված: Կոծքա-

վանդակի մոտ ընկած էին սարդիոնից պատրաստված մի քանի ուլունք և կենդանու ատամ (աղ. LIX, 9-15):

*Դամբարան № 107 (20-81թ.)* - գտնվում էր I դամբարանադաշտում Նոր Շիրա-կավանից հյուսիս-արևելք ընկած վլսրելահողերի մեջ, Գյումրի տանող մայրուղուց շուրջ 100-120մ արևելք: Յարավ-արևմուտք հյուսիս-արևելք ուղղվածություն ունեցող այս դամբարանախցի (չափ՝ 1.6x1x0.7մ) ծածկի սալերը բացակայում էին: Դամբա-րանախուցը, որի երկայնական պատերը քարաշար էին, հայտնաբերվեց ջրատար խողովակի համար բացված խրամատի կտրվածքում երևացող պատի շնորհիվ: Այս դամբարանախցում ևս կմախքը ձախ կողքի վրա էր, բայց գլխով արևելք էր ուղղված: Թևերին հագցված էր երկու օձագլուխ ապարանջան, իսկ ծնոտի մոտ ընկած էր երկու օղ: Վերջիններիս տեղադրությունը ենթադրել է տալիս, թե դրանք ականջօղեր են եղել: Կրծքավանդակի մոտ թափված էին ծարիրից, շաղախից և սարդիոնից պատ-րաստված ուլունքներ: Դրանց հարևանությամբ գտնվեցին երկու շքասեղ և ծարի-րից ու բրոնզից պատրաստված երկու օղ: Այս նյութերից բացի գտնվեցին և վեց խեցանոթ, որոնցից չորսը դրված էին կմախքի մոտ դամբարանախցի հատակին, իսկ երկու քրեղան՝ ուղղակի կիծքավանդակի վրա (աղ. LVIII, 1-15):

*Դամբարան № 115 (28-81թ.)*- գտնվում էր նախորդից շուրջ 10մ հարավ: Դամ-բարանախցի (չափ՝ 2.5x1.5x2մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) հարավային՝ քարաշար պատը թեթևակի վնասվել էր հիշատակված խրամատր փորելու ժամանակ: Քարե-րով էր շարված և դամբարանախցի հյուսիսային պատը, իսկ արևելյանն ու արևմտյանը մայր հողի կտրվածքն էր հանդիսանում: Դամբարանախուցը լցված էր հողով ու տար-բեր չափերի քարերով: որոնց մեջև, իրար խառնված վիճակում, հայտնաբերվեցին մարդկանց ու կենդանիների ոսկորները: Տարբեր եռրիզոնների վրա հայտնաբերվե-ցին չորս խեցանոթի բեկորներ: Ընդ որում նույն խեցանոթի մասերը գտնվում էին և դամբարանախցի հատակին, և լիցքի մեջ, ինչը կիկին փաստում է թաղման ժամա-նակ խեցանոթները կոտրելու և բեկորները աստիճանաբար դամբարանախուց նետե-լու երևույթը, որը մ.թ.ա. I հազ. թաղման ծեսի բնորոշ գծերից է: Խեցանոթները ներկա-յացված են սափորով, երկու կճուճով ու քրեղանով: Այս նյութերից բացի դամբարան էին դրվել և դաշույնի գոտեկապ, ապակուց և սարդիոնից պատրաստված երկու ուլունք և բրոնզյա ճակատակալի մաս (աղ. LIX, 1-8):

*Դամբարան № 117 (30-81թ.)*- գտնվում էր II դամբարանադաշտում և տեղադր-ված էր № 101 դամբարանից մոտ 5մ հարավ-արևելք: Երկու սալով ծածկված այս քարարկղի (չափ՝ 1.9x0.9x0.6մ, ուղղութ.՝ արևելք-արևմուտք) հարավային սլատի ար-տաքին կողմում պատրասավված էր 0.9x0.9մ չափերի հիմնահողային դամբարանա-խուց: Նման կառուցվածքը դամբարանին տվել էր հատակագծում հավասարակող, երկու մասից կազմված քառանկյան տեսք, որտեղ և, հյուսիս-արևմտյան անկյունում (քարարկղում) ղեռահասի գանգ գտնվեց: Դրա մոտ դրված էին կճուճ, երկու սափոր ու քրեղանի բեկոր (աղ. LX, 1,2,4,8): Ինչ վերաբերում է հիմնահողային խցին, ապա այստեղ գտնվեցին խոշոր եղջերափոր անասունի կողոսկրեր ու վերջույթների առան-ձին բեկորներ: Վերջիններիս մոտ դրված էին կճուճ, քրեղան և անկյուններում կլո-

րացող, քառանկյունի րերանով քրեղանի մաս: Ամանի հարթ կտրած շուրթը հատիկագարդ էր (աղ. LX, 3,5,7):

*Դամբարան № 118 (31-81թ.)* - նախորդից մոտ 6մ արևելք գտնվող այս փոքր սալարկղը (չափ՝ 1.2x1x0.9մ, ուղղութ.՝ արևելք-արևմուտք) երկու սալով էր ծածկված: Դամբարանախցի կենտրոնում դրված երեք կճուճներից մեկում հայտնաբերվեցին մարդու րագկոսկր և ատամ (աղ. LIX, 16-18):

*Դամբարան № 119 (32-81թ.)* - գտնվում էր № 118 դամբարանից մոտ 3մ հարավ-արևմուտք և ծածկված էր երկու սալով: Այս քարարկղի (չափ.՝ 2x1x0.8մ, ուղղութ.՝ արևելք-արևմուտք) հյուսիս-արևմտյան անկյունում հայտնաբերվեցին դեռահասի գանգի փշրված ոսկորներ, որոնց մոտ ընկած էին սարդիոնից պատրաստված ուլունք և բրոնզե օղ: Դամբարանախցի հարավ-արևմտյան անկյունում գտնվեցին քրեղանի րեկոր և փոքրիկ լեզվակով ավարտվող երկաթե դանակի շեղբի հիմքամաս (աղ. LX, 9-12):

*Դամբարան № 121 (34-81թ.)* - երկրորդ դամբարանադաշտի հարավային մասում գտնվող այս սալարկղը ծածկված էր 30-35սմ բարձրություն ունեցող, հող ու քարից կազմված ցածր դամբարանաթմբով: Դամբարանախուցը (չափ.՝ 1.7x1.1x1.5մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) ծածկված էր մեկ խոշոր (չափ.՝ 1.8x1.3x0.4մ ու դրա կողքին դրված առավել փոքր չափերի երկու սալով: Յետաքրքիր է այն հանգամանքը, և սա ժամանակաշրջանի դամբարանների վրա առաջին դեպքն է, որ խոշոր սալի վրա շրջանաձև, միջանցիկ անցք էր բացված: Դամրարանախցի հատակը ամբողջությամբ ծածկված էր իրար կողք-կողքի և միմյանց վրա դրված, տարրեր տեսակների խեցանոթներով: Արևմտյան պատի մոտ, խեցանոթների տակ, հայտնաբերվեցին 18 բրոնզյա նետասլաք 1 կոճակ: Խեցանոթներից մի քանիսի մեջ գտնվեցին կենդանիների ոսկորներ: Մարդու կմախքի մնացորդներ այս դամբարանում չհայտնաբերվեցին: Չդիտվեցին և դիակիզման հետքեր (աղ. LXI-LXII):

Պեղված դամրարանները, ինչպես տեսնում ենք, սալարկղեր են, քարարկղեր և քարարկղի ու եիմնահողային դամբարանի միացում ներկայացնող կառույցներ: Այս երևույթին դժվար է միանշանակ պատասխան տալ: Կարող ենք նշել միայն, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դամրարանադաշտում գտնվեղ քարարկղային ու հիմնահողային դամբարանների միասնություն ներկայացնող կառույցներից հայտնաբերված նյութերը, համեմատած քարարկղերի ու սալարկղերի հետ, բացառությամբ № 121 դամրարանի, շեշտված առանձնահատկություններ չեն դրսևորում: Չեն դիտվում և ժամանակագրական տարրերություններ: Յնարավեր է, որ այդ տարբերությունները պայմանավորված լինեն ավանդարար պահպանվող եճի ու արմատավորվող նորի երկվությամբ, ինչը դիտվում է և կյութի քննության ընթացքում:

*Դաշույն* - դամրարանից սոսկ րրոնզաձույլ գոտեկապն է եայտնարերված: Վերջինս վերին մասում փոքր անցքերով զարդարված շեղանկյունաձև բացվածքով իր է (աղ. LIX, 4), որն ամրացվել է, այսպես կոչված, «սևանյան տեսակի» դաշույնի շեղբի հիմքի վրա: Դաշույնը դամբարան չի դրվել, բայց նման դաշույն շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է I դամբարանադաշտում: Վերջինս րրոն-

զածույլ զենք է և ունի ծգված, կենտրոնական մասում երկու եզրերից թեթևակի նեղացող շեղբ, որն ավարտվում է կոթի ամրացման համար նախատեսված նեղ լեզվակով: Վերջինիս վերին մասում բացված անցքում բրոնզյա մեխ է պահպանված (աղ. LX, 15): Երևան գալով մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկզբում. բրոնզաձույլ դաշույնների այս տեսակը մ.թ.ա IX-VIII դդ. դուրս է մղվում բրոնզե գոտեկապ ու գլխակալ ունեցող, երկաթից պատրաստված համանման զենքերի կողմից (*Есаян С.А.,* 1966, էջ 73-76): Վերջիններս, ինչպես և բրոնզաձույլ օրինակները, տարածված են Կուր-Արաքս միջագետքն ընդգրկող տարածքում (հարավային սահմանը դեռևս հստակ չէ) և իբրև այդտեղից արտահանված զինատեսակ՝ եզակի օրինակներով հանդիպում է հարևան տարածքներում (*Խնկիկյան Օ.,* 1991, էջ 79-91):

*Նետասլաքներ* - բրոնզաձույլ այս զինատեսակը երկու տարբերակով է ներկայացված: Առաջին տարրերակում ենք խմբավորում քառակող պոչուկ և եռանկյունաձև սայր ունեցողները: Այս նմուշների երկար, լայն բացվածք ունեցող թևիկները, հիմնականում ավարտվում են սրվող ծայրերով (11 օրինակ): Նետասլաքների սայրերի երկու երեսներից ծգվող ընդերկայնական ողերը, ծակող մասից որոշ հեռավորության վրա ընդհատվում են: Առանձին նմուշների ծակող ծայրը կտրվածքում շեղանկյունաձև է և առանձնանում է շեշտված եռանկյան տեսքով (աղ. LXII, 26): Այս մանրամասնը առկա է և II տարրերակում դասվող և նետասլաքների վրա: Վերջիններս, սակայն, նախորդներից տարբերվում են սայրի վերին մասում նեղ և կենտրոնից սկսած լայնացող տեսքով ու թևիկների համեմատարար փոքր բացվածքով: Որոշ օրինակների քառակող պոչուկը հիմքի մասում փոքր-ինչ լայնանալով խնձորակ է ձևավորում (աղ. LXII, 27-29): Երկփեղկ կաղապարների մեջ պատրաստված այս նետասլաքները մ.թ.ա. XIդ. վերջ - VIIIդ. թվագրվող նյութերի միջավայրում հայտնի են Արցախից (Արջաձոր, Մրխավենդ ևն), Գյումրիից, Նորատուսից, Դվինից, Սիսիանից և բազմաթիվ այլ հուշարձաններից (*Кушнарева К.Х.,* 1957, նկ. 28,73,102: Նույնի՝ 1977, նկ.16, 2,4-6: *Мартиросян А.А.,*1964, նկ. 49 և ուրիշներ):

*Դանակներ* - երկաթից պատրաստված նմուշները երկուսն են: Նրանք հիմքում միակողմանի լայնացող մեջքով, փոքր չափեր ունեցող օրինակներից պահպանված մասեր են: Դրանցից մեկը, որի լեզվակը կոտրված է, ունի սրվող քթիկով ավարտվող շեղբ (աղ. LVII2), իսկ մյուսից պահպանված է լեզվակը (աղ. LX, 10): Նման դանակներ մ.թ.ա. I հազ. թվագրվող նյութերի շարքում հայտնի են Մուխանից, Դիլիջանից, Արթիկից և բազմաթիվ այլ հուշարձաններից (տե՛ս *Хачатрян Т.С.,* 1975, էջ 237-238, նկ. 151): Երկաթյա դանակների վաղ նմուշները, սակայն, հայտնի են և ուշ բրոնզեդարյան հուշարձաններից (*Խնկիկյան Օ,* 1992, աղ. I, 3), ինչը թույլ չի տալիս այդպիսիները դիտել իբրև թվագրությունը հստակեցնող նյութ:

Խոսելով դանակների մասին, նշենք և առաջին դամբարանադաշտի տարածքից պատահականորեն հայտնաբերվածը: Այն բրոնզից է պատրաստված, ունի կարճ. տափակ լեզվակ և նեղ՝ ծայրում բարձրացող ու կլորացող քթիկով ավարտվող շեղբ: Լեզվակի վրա բացված անցքում բրոնզյա մեխ է պահպանված (աղ. LX, 16): Մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկզբում երևան եկած այսօրինակ դանակների զուգահեռները

բազմաթիվ են հետազոտվող ժամանակաշրջանին պատկանող հուշարձաններում: Այդպիսիք հայտնի են Տոլորսից, Սիսիանից, Արցախի տարբեր հուշարձաններից, Քեթիից և այլն (*Мартиросян А.А.*, 1964, էջ 156-157: *Кушнарева К.Х.*, 1957, էջ 138: *Պետրոսյան Լ.Ա.*, 1973: *Խնկիկյան Օ.* և ուրիշներ, 1984. աղ. II, 2):

*Ճակատակալ* - պատրաստված է 2սմ լայնություն ունեցող բրոնզե թիթեղից և ունի անզարդ մակերես (աղ. LIX, 1): Նման անզարդ մակերեսով ճակատակալներ հայտնի են ինչպես ուշ բրոնզի (օր. Գեղարոտ և այլն), այնպես էլ հետազոտվող ժամանակաշրջանի (Նորատուսի № 11 դամբարան և այլն) ու հետագա դարաշրջանին պատկանող հուշարձաններում:

*Դերձանքի առարկաներ* - ներկայացված են ապարանջաններով, օղերով, կոճակներով, ուլունքներով ու շքասեղներով, Թվարկվածներից շքասեղները բրոնզաձույլ իրեր են, որոնք թեթևակի լայնանալով կենտրոնական մասում (այդտեղ միջանցիկ անցք է բացված), ավարտվում են կոնաձև լայնացող գլխիկով: Դրանցից մեկը, որի արտաքին մակերեսը զարդարված Ն զույգ ակոսազծերով, գոգավոր տեսք ունի (աղ. LVIII, 1,2): Նման շքասեղներ հայտնի են Արթիկից, Այրումից և մ.թ.ա. III հազ. վերջ - I հազ. սկզբով թվագրվող այլ հուշարձաններից:

Նյութի թվագրման համար էական չեն և միացող կամ իրար վրա բերված ծայրերով օղերն ու ապարանջանները (աղ. LVII, 1, LVIII, 6-8): Վերջիններիս շարքում առանձին հետաքրքրություն են ներկայացնում օձագլուխ ծայրերով երկու բրոնզաձույլ ապարանջան (աղ. LVIII, 4-5), որոնք լայն տարածում են գտնում մ.թ.ա. I հազ. սկզբից (*Мартиросян А.А.*, 1954, էջ 81-82: *Եսայան Ս.*, 1964, էջ 89): Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ ուռուցիկ գծերով ստացված օձերի գլուխները սրաձև են և նման են Արթիկից, Գադրեկիլիից և ուշ բրոնզեդարյան այլ հուշարձաններից հայտնաբերված կոճակների և այլ իրերի վրա եղած պատկերներին, ինչը և ցույց է տալիս այսօրինակ ապարանջանների ու զարդերի ոչ միայն տեղական ծագումը, այլև՝ համեմատաբար վաղ տարիքը: Երկաթի դարաշրջանի հաջորդ փուլին պատկանող ապարանջանները, ինչպես կտեսնենք ստորև, տարբերվում են օձերի գլուխների արտահայտման ձևով, առանձին մանրամասներով.

Ժամանակաշրջանի հուշարձաններում իրենց զուգահեռներն ունեն և ծայրիրից ու մածուկից պատրաստված, փշատի կորիզ հիշեցնող ուլունքները (աղ. LVIII, 9): Դրանցից մեկը, որ մածուկից է պատրաստված, կտրվածքում եռանիստ տեսք ունի: Վերջինիս կողերի վրա երկայնական ակոսիկներ են արված: Այս ուլունքը, ինչպես և մյուսները, զարդարված է թեք ասրված փորագիր գծիկներով: Նման ուլունքներ հայտնի են Էլառի № 27 դամբարանից, Կտրմիր-բլուրից, Վանաձորից (*Խանզադյան Է.*, 1979. նկ.136, էջ 112-113) ու թվագրվում են մ.թ.ա. II-I հազ. սահմանագլխով, Հետաքրքիր է կապույտ ապակուց պատրաստվածը, այն կտրվածքում շրջանաձև օղակ է, որի վրրին մասում միջանցիկ անցքով բլթակ է արված (աղ. LIX, 3): Այս ուլունքը մերձենում է Էլառի (№ 7) և Մինգեչաուրի (№ 81) դամբարաններից հայտնաբերված, վորին մասում օղակ ունեցող սրտաձև ու շրջանաձև զարդերին (*Խանզադյան Է*, 1979, նկ.141, 10: *Асланов Г.М., Вандов А., Ионе Г.*, 1959, նկ. 45): Ինչ վերաբերում

է սարդիոնից պատրաստված ուլունքներին. ապա դրանք գլանաձև ու զնդաձև. նախորդ փուլերից հայտնի զարդերն են (աղ. LVII, 3, LIX, 2,15, LX, 11): Նույնը կարելի է ասել և րրոնզից պատրաստված ասեղի (աղ. LVIII, 3) ու կոճակո վերարերյալ (աղ. LXII, 30):

Նախկինից հայտնի ձևերին ու զարդերին զուգահեռ նոր հատկանիշները ենք տեսնում և խեցեղեն արտադրանքի քննության ընթացքում: Այսպես, սափորների մի խումբը, որը նույն լայնարերան, գլանաձև բարձր վոզ ու փքուն իրան ունի, լավագույնս կապվում է նախորդ փուլի համանման սափորների հետ: Տարբերություն չի դիտվում և այս անոթների սև կամ գորշ անփայլ մակերեսներին տարված զարդերի ու դրանց ստացման եղանակների համեմատության ժամանակ, դրանք ակոսներ են ու ելունդագոտիներ, որոնք առանձին նմուշների վրա համալրվում են կամարաձև մատնեքազարդով կամ փորագրմամբ ստացված անկյունաձև պատկերներով ու թեք տարված գծերով (աղ. LIX. 9, LX, 1, LXI, 6): Նախկինից հայտնի այս անոթներին զուգահեռ, քննված համալիրներում հանդես են գալիս և նոր նմուշներ, որոնք անծանոթ լինելով նախորդ փուլերում, լայն տարածում են ստանում հետագայում: Տվյալ դեպքում նկատի ունենք նեղ, փողածև լայնացող վզով երկու սափորները, որոնցից մեկն անկանթ է (աղ. LX, 2), մյուսը շրթից սկսվող և ուսին միացող աղեղնաձև կանթ ունի (աղ. LIX, 5): Վերջինիս գորշ, թեթևակի փայլեցրած մակերեսը զարդարված է ալիքաձև գծերով լցված եռանկյունիներով: Ինչ վերաբերում է մյուս սափորին, ապա դրա սև, թեթևակի փայլեցրած մակերեսը ուսի մասում գոտևորված է ակոսներով: իսկ վիզը երեք շարքով տարված ելունդագոտիներով: Սափորների քննված տեսակների զուգահեռները բազմաթիվ են մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվող հուշարձաններում: Ալիքներով, ալիքաձև զծափնջերով կամ փորագիր թեք զծերով լցված եռանկյունաձև պատկերներով սափորներ (այդ թվում և փողաձև վիզ ունեցողներ) տեսնում ենք Կարմիր-բերդում, Սեծամորում, Էլառում, Արջածորում և այլ հուշարձաններում *(Եսայան Ս.*, 1969, աղ. XXIV: ***Мартиросян А.А.,*** 1964, նկ.802: *Խանզադյան Է.Վ.*, *Մկրաչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, էջ 40-43, 48, նկ. 50: *Խանզադյան Է.Վ.*, 1979, էջ 83, աղ. XIX, 5: ***Кушнарева К.Х.,*** 1957, նկ. 11, 15 և ուրիշներ): Այդպիսիները ինչպես տեսանք, առկա էին և Շիրակավանի բնակավայրի ու շերտագրական փոսորակի համաժամանակյա շերտում:

Մ.թ.ա. I հազ. սկզբից լայն տարածում ստացած խեցանոթներից են և կճուճի տեսք ունեցող միականթ անոթները, որոնք հետագոտվող ժամանակաշրջանի դամբարաններից հայտնաբերված են երկու նմուշով: Դրանցից մեկի սև, թույլ փայլեցրած մակերեսով: իրանի թեթևակի երկենճիկ տեսքով, լայնաբերան անոթ է, որի ուսն ու գոտկամասը զոտևորող ակոսների միջև պատկերված են փորագիր գծերով լցված եռանկյունիներ (աղ. LIX, 10): Անոթներից հաջորդի իրանը սեղմված ու ծգված տեսք ունի և ավարտվում է ուղիղ բարձրացող կարճ վզով: Իրանի կենտրոնում ամրացված, կտրվածքում քառակող կանթը ձևավորված են անոթի մակերեսը կարմրավուն երանգ ունի (աղ. LIX, 11): Վերը խոսվող անոթների այս տեսակի մասին: Ավելացնենք միայն, որ նման անոթներ մ.թ.ա. X-IXդդ. թվագրվող համալիրներում հայտնի են Արթիկից,

Ռեդկոն-լագերից, Կարմիր-բլուրից, Միսխանից և բազմաթիվ այլ հուշարձաններից (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 250, նկ. 160: ***Есаян С.А.,*** 1976, աղ. 101 և հաջորդները: ***Мартиросян А.А.,*** 1964, նկ. 78, 10 և ուրիշներ):

Նախորդ դարաշրջանի համանման նյութերի հետ է կապվում և. փքուն իրանով, վերին մասում ներս հակվող ու իրանից շեշտված անցումով անջատվող, սրվող շուրթով ավարտվող անոթը, որի սև, անփայլ մակերեսը զարդարված է ակոսագոտիներով ու ալիքաձև փորագիր գծերով (աղ. LXII, 3): Շիրակավանի I և II պեղավայրերի համաժամանակյա կացարաններում և ընդհանրապես մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվող բազմաթիվ հուշարձաններում (Ռեդկին-լագեր, Վանաձոր, Պոպլոզ-դաղ, Արթիկ, Լոռիբերդ և այլն) իր զուգահեռները ունեցող այսօրինակ անոթների մասին խոսվել է: Նույն նկատառումներով չենք անդրադառնա և կլորացող իրան, թեթևակի գոգավորվող վիզ և կլորացող շուրթ ունեցող կճուճների զուգահեռների թվարկմանը: Նշենք միայն, որ սրանց սև կամ գորշ անփայլ մակերեսները զարդարված են մատնեքով (աղ. LVII, 4), անկյունաձև, միացող հատիկներով ու անոթի մակերեսին ծալքավոր տեսք տվող, թեք ատարված ճկվածքաերիզներով (աղ. LXII, 2), փորագիր ալիքագծերով (աղ. LIX, 13,14,17,18, LXI, 7): Ձևով, զարդով և դրա ստացման եղանակով նախորդ փուլի խեցանոթներին է մերձենում և գնդաձև իրանով մեկ այլ կճուճ, որի սև, թույլ փայլեցրած մակերեսը զարդարված է սեղմմամբ ստացված եռանկյունաձև պատկերներով ու փայլանախշը բերելու եղանակով արված ուղղահայաց գծերով (աղ. LIX, 7): Զարդի ստացման այս եղանակը, ինչպես նշվեց, բնորոշ է դառնում մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկզբով թվագրվող խեցանոթների համար: Այդ ժամանակաշրջանի բնորոշ զարդերից են և հորիզոնական տարված հատիկներն ու եղունգանախշը, որոնք մեկ կամ երկու շարքով զարդարում են գորշ կամ սև անփայլ, միոտված մակերեսով «խոհանոցային» կճուճների ուսերը (աղ. LIX, 13,14,16, LX, 4, LXII, 4): Ուշագրավ է, որ վերջիններիս մեջ դերակշռում են ցածրիրան անոթները, ուսկ շրթին ակոսազարդ ունեցող և համեմատաբար բարձր իրանով կճուճները հազվադեպ են հանդիպում (աղ. LVIII, 15):

Նախորդ փուլի խեցանոթներից չեն տարբերվում և գլանաձև վզով, դեպի դուրս կլորացող շրթով, փքուն իրանի հակադիր կողմերում կանթեր ունեցող խոշոր սափորն (աղ. LVIII10) ու նույնաձև, անկանթ խնոցին (աղ. LXI, 5): Ակնհայտ ընդհանրություններ են դրսևորում և կարասները: Սրանք ձգված, ուսի կամ փորի մասում կլորացող իրանով, դուրս ճկված շուրթով, լայն (աղ. LXI, 3,4) կամ համեմատաբար փոքր բերան ունեցող (աղ. LXI, 1,2, LXII, 1) նույն խոշոր անոթներն են, ինչպիսիք տեսնում էինք և ուշ բրոնզի դարաշրջանի տարբեր փուլերով թվագրվող նյութերի շարքում: Նախկինից հայտնի ձևերով են ներկայացված և անոթների ուսերը զարդարող զարդերը, դրանք հիմնականում ակոսներ են, ելունդագոտիներ ու փորագիր ալիքագծեր: Մեկ դեպքում միայն, տեսնում ենք կետերով լցված փորագիր եռանկյունիներ, որոնց կողերի վրա կարճ գծիկներ են պատկերված: Այս զարդը, սակայն, նորույթ չէ. այն տեսնում ենք ինչպես նախորդ շրջանի դամբարաններից մեկում հայտնաբերված սափորի, այնպես էլ հետազոտվող ժամանակաշրջանին պատկանող անոթների վրա (օր. Էլառի

նյութերը: Տե՛ս *Խանզադյան Է.Վ.,* 1979, նկ.119): Կարասներից երկուսի հատակնե-րին միջանցիկ անցքեր են բացված: Այդուհանդերձ ակնեայտ է և այն. որ այս կարաս-ների վրա բացակայում են ուշ բրոնզի դարաշրջանին բնորոշ այնպիսի հատկա-նիշներ, ինչպիսիք են փայլեցվածության տարբեր աստիճանի մակերեսներն ու փայ-լանախշը, հատակի եզերքը օղակող գայրդերը, շրթի ակոսագոտին ու հաճախ հան-դիպող պարանաշաքարը: Այդ հատկանիշները երկաթեդարյան կարասների վրա հազ-վադեպ են հանդիպում. Շիրակավանից հայտնաբերվածների զուգահեռները Խուբջին-հոդերից, Ղմշկուտից, Ռեդկոն-լագերից, Նորատուսից և մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկզբով թվագրվող այլ հուշարձաններից գտնվածներն են (***Мартиросян А.А.,*** 1964, նկ. 76, 15, ***Есаян С.А.,*** 1976, նկ. 91, 3, 95, 1,3,5, 111, 6 և այլն): Նույն ժամանա-կաշրջանի հուշարձաններում իրենց զուգահեռներն ունեն և քրեղանները, որոնց մի զգալի մասը շարունակելով նախորդից եկող ավանդույթները, հաքատևում է և երկա-թի դարաշրջանում: Այդպիսիներից են կլորացող իրան և դուրս ճկված, կլորացող շուրթով ամանները, որոնց սև կամ գորշ անփայլ, հազվադեպ թեթևակի փայլեցված մակերեսները զարդարված են ակոսներով, երբեմն՝ սեղմմամբ ստացված ուղղահա-յաց գծերով (աղ. LVII, 5-7, LVIII, 12-14, LX, 7,8, LXII, 5-8,11-15): Նորույթ չեն և նույն կերպ զարդարված, բայց դուրս թեքվող շուրթով ավարտվող ամանները (աղ. LXII, 9,10,16), իսկ թեթևակի գոգավորված կիղեր ունեցողները (աղ. LIX, 6,) հանդիպում էին և նախորդ դարաշրջանի վերջին փուլում: Այդ ժամանակահատվածին պատկանող նյութերի շարքում են և ցածրիրան, վերին մասում ուղղվող կողով, ինչպես և կտցաձև, շուրթով ավարտվող քրեղանների եզակի զուգահեռները, որոնք այս դամբարանների համար բնորոշ հանդիսանալով (աղ. LVII, 8, LX, 12, LXII, 17-25) լավագույնս կապվում են բնակավայրի համաժամանակյա շերտերից հայտնաբերվածների հետ: Նույնը կարելի է ասել և ծևավորված կողեր ունեցող քրեղանների վերաբերյալ (աղ. LX, 5, LIX, 12), որոնք երկաթի դարաշրջանի բնորոշ նյութերից հանդիսանալով, նախորդների օրինակով իրենց բազմաթիվ զուգահեռներն են գտնում մ.թ.ա. XIդ. վերջ - IXդ. սկզբով թվագրվող հուշարձաններում (Մեծամոր, Ռեդկին-լագեր, Աստղի-բլուր և այլն: Տե՛ս *Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.. Պարսամյան Է.,* 1973, նկ. 69, աղ. XIV: ***Есаян С.А.,*** 1976, նկ. 100, 5, 108, 1, 120, 17 և այլն): Հաշվի առնելով քննված նյութերի առանձնահատկություն ները, ինչպես և բերված զուգահեռները, Շիրակավանի քննված դամբարաններից, ինչպես և VI օժանդակ կառույցից հայտնաբերվածները թվագրում ենք մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկիզբ ընկած ժամանակաշրջանով:

*Ա. մ.թ.ա. IX-VIIIդդ. դամբարանները-* գտնվում են I դամբարանադաշտի հա-րավային հատվածում և ծածկված են քարե լիցքից կազմված ցածր դամբարանա-թմբերով: Այս դամբարանները հիմնականում քարարկղեր են, սալարկղերը հազվա-դեպ են հանդիպում: Անկախ տեսակից, այս դամբարանները լցված են հողով ու տար-բեր չափերի քարերով, նախորդ դարաշրջանի դամբարաններում քարերը հազվադեպ էին հանդիպում: Այս դամբարաններից պեղվեցին 15-ը:

*Դամբարան № 5 (5-77թ.)* - հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղված (չափ.՝ 1.6x1.3x0.7մ) և ծածկասալերից զուրկ դամբարանախուցը պատրաստված էր

միջին մեծության (40x50սմ) տուֆ քարերից: Դամբարանախցի հարավ-արևմտյան պատի մեջ 0.7մ լայնությամբ բացված կար, որն արտաքին կողմից տուֆ սալով էր փակված: Դժբախտաբար վերջինիս արտաքին կողմից անցնող խրամուղին ավերել էր այդ հատվածը, ինչը և թույլ չի տալիս վստահաբար ասել՝ այդ մասում մուտք, թե՞ կից դամբարան է եղել: Փաստն այն է, որ դամբարանախցում մարդու կմախք չհայտնաբերվեց: Դամբարան էին դրվել չորս քրեղան, երկու կճուճ, կապույտ ջնարակով պատված քառակող տուփի և ֆայանսից պատրաստված թասի բեկորներ, ագաթե օղ, ապակուց և ոսկրից պատրաստված ուլունքներ (աղ. LXIII):

*Դամբարան № 9 (9-77թ.)* - հյուսիս-հարավ ուղղված այս դամբարանը (չափ."1.2x0.9x0.7մ) ևս պատրաստված էր տուֆ քարով: Ձախ կողքի պառկած, դեպի դիմքը բարձրացված ձեռքերի մոտ դրված էին երկու սափոր: Երկու այլ սափոր գտնվեցին ծոծրակային մասում, իսկ երկու կճուճ և ամանի բեկորից պատրաստված անվակաձև իս՝ ոտքերի միրձակայքում (աղ. LXIV):

*Դամբարան № 10 (10-77թ.)* - ծածկված էր մանր քարերից կազմված ցածր (20-25սմ) դամբարանաթմբով: Երկու սալով ծածկված դամբարանախցում (ուղղութ.՝ հյուսիս-արևմուտք հարավ-արևելք, չափ.՝ 1.3x0.9x0.5մ) դիաթաղման կամ դիակիզման հետքեր չդիտվեցին, ինչը և ցույց է տալիս վերջինիս հուշայդամբարան հանդիսանալը: Դամբարանի հյուսիս-արևմտյան անկյունում գտնվեցին վանակատի բեկորներ, իսկ հարավ-արևելյան պասի երկայնքով շարված էին տարատեսակ խեցանոթներ, որոնցից մեկը (աղ. LXV, 10) ծածկված էր սկավառակաձև կափարիչով (աղ. LXV, 9): Այդ խեցանոթների վրա դրված էր հարուստ զարդանախշված գոտի (նկ.13) (*Ռ.Թո-րոսյան, Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.,* 1980, էջ 268-277):

*Դամբարան № 11 (11-77թ.)* - դամբարանաթմբի հեռացումից հետո բացվեց հյուսիս-արևմուտք հարավ-արևելք ուղղություն ունեցող, հյուսիս-արևմտյան կեսը մեկ խոշոր սալով ծածկված քարարկղը (չափ.՝ 3.7x1.7x1.6մ): Դամբարանախցի հարավային հատվածում, սալերով չծածկված մասում, տարբեր հորիզոնների վրա հայտնաբերվեց չորս կմախք, վերին շերտում աջ կողքի վրա վերջույթները ծալած վիճակում, պառկած էին երկու կմախք, որոնցից 10սմ ցած գտնվեց երրորդը: Վերջինս թաղված էր կքանստած վեճակում: Կմախքներից չորրորդը պառկած էր դամբարանի հատակին: Ձախ կողքի դրված այս կմախքի մոտ հայտնաբերվեցին դաշույններ, նետասլաքներ, բրոնզե գոտու մաս (նկ. 14), ձիու կմախքի մնացորդներ: Երկու այլ ձիերի կմախքների մասեր դրված էին դամբարանի հյուսիսային հատվածում, ուր գտնվեցին և կոնաձև վահանիկներ: Դամբարանի արևելյան և արևմտյան պատերի մոտ եայտնաբերվեցին շրջանաձև կախիկների մասեր, չորրորդ կախիկը ամբողջական էր: Ամենայն հավանականությամբ դամբարանի հատակին պառկածը ավագանու ներկայացուցիչ է եղել, իսկ վերևում գտնրվողները՝ ծառաներ: Դամբարանից հայտնաբերված մյուս նյութերն են տարբեր չափերի քրեղանները, սափորները, կճուճները, զարդակոճակը, դաշույնները (աղ. LXVI): Այդ նյութերը գտնվեցին տարբեր հորիզոնների վրա:

*Դամբարան № 12 (12-77թ.)* - արտաքին նշաններից զուրկ այս դամբարանը

(չափ. 4.9x3.2x10մ, ուղղութ. հյուսիս-հարավ), որից բացակայում էին և ծածկասալերը. հայտնաբերվեց խրամուղում: Նյութերը երևան եկան 0.7-0.8մ խորությունից սկսած: Այստեղ ևս խմբակային թաղում էր կատարված: Հայտնաբերված 14 կմախքները գտնվում էին ամենատարբեր դիրքերում: Դրանցից առավել կանոնավոր վրճակում էին երեքը, որոնցից մեկը դամբարանի կենտրոնում էր պառկած: Ձախ կողքի դրված և գլխով հաբավ ուղղված այս կմախքի ոտքերի մոտ գտնվեց ոսկե թիթեղով երեսապատված երկաթե անորոշ իրի բեկոր, իսկ գլխի մոտ դրված էր ոսկեթել հյուսածո շղթայիկի գլանիկե հետ և բրոնզե նետասլաքներ: Կրծքավանդակի մոտ ընկած էին շեղանկյունաձև ու շրջանաձև, վահանիկներ, տարատեսակ ոսկիե իրեր (դրանք ունեին կեռխաչի, շրջանի, ծաղիկի և կիսաշրջանի տեսք) ու գավազանի գլխակալ: Վերջինիս հակադիր կողմում հայտնաբերվեց գավազանի բրոնզե ծայրակալը: Կրծքավանդակի մոտ թափված էին և «մածուկից» ու գլաքարից պատրաստված ուլունքներ: Այս կմախքի մոտ գտնվեցին ձիու կողեր ու գանգ: Երկու ձիու գանգ հայտնաբերվեցին և դամբարանի եյուսիսային հատվածում, կենդանիների վերջույթներն ու կողերը դրված էին արևելյան և արևմտյան պատերի մոտ: Այղտեղ գտնվեցին և խոշոր եղջերավոր անասունների առանձին ոսկորնեբ: Ինչ վերաբերում է մյուս երկու՝ կանոնավոր թաղված կմախքներին, ապա դրանք արևմտյան պատի մոտ էին, մեկի պառկած էբ ձախ կողքի վրա, գլխով արևմուտք, մյուսը՝ աջ կողքի: Այս կմախքների մոտից հայտնաբերվեցին ասեղ, ուլունքներ: Մնացած 11 կմախքները, որոնք հավանաբար ծառաներ են եղել, անկանոն ընկած էին դամբարանի հարավային մասում: Դամբարանի տարբեր հատվածներում, տարբեր եորիգոնների վրա եայտնաբերվեց 9 խեցանոթ (աղ. LXVII):

*Դամբարան № 13 (13-77թ.)* - նախորդից շուրջ 30մ հյուսիս գանվեղ այս դամբարանը (չափ.՝ 2.2x1.3x1մ, ուղղութ.՝ հյուսիս-արևմուտք եարավ-արևելք) ցածր դամբարանաթումբ (30-40սմ) ուներ և ծածկված էր երկու սալով: Դամբարանի եարավարևելյան անկյունում, կքանստած դիրքով, երկու կմախք հայտնաբերվեցին: Դրանց դիմաց, դամբարանի կենտրոնում, թաղված էր երրորդը: Վերջինս աջ կողքի վրա էր պառկած և գլխով ուղղված էր հարավ: Այս կմախքը փշրվել էր դամբարան լցված քարերի ծանրության տակ: Վերջինիս մոտից գտնվեցին մանր եղջերավոր կենդանու, շան և նապաստակի ոսկորներ, անորոշ նշանակության երկաթե իրի բեկոր, երկու սափոր ու գավաթ: Դրանց կողքին ընկած էին խոհանոցային կճուճի իրանի մանր բեկորներ (աղ. LVIII):

*Դամբարան № 27 (14-78թ.)* - արևելք-արևմուտք անկյունագծով անցնող խրամուղին այս քարաբկող (չափ՝ 3x2.6x1.2, ուղղութ.՝ հյուսիս-արևելք հարավ-արևմուտք) բաժանել էբ երկու հավասար մասերի: Հյուսիս-արևելյան պատի մոտ, հատակից 10 սմ բարձրության վրա հայտնաբերվեց ձախ կողքի պառկած, գլխով արևելք ուղղված կմախք, որի դեպի դեմքը բարձրացված ձեռքերին հագցված էին երկու ներծկված ապարանջան: Դեմքի առջև ընկած էին երեք նետասլաք, կճուճի բեկորներ և վահանիկ: Դամբարանի հաբավային հատվածում գանվեցին երկու ձիու գանգ ու մի քանի կողոսկր: Վերջիններիս մոտ հայտնաբերվեցին սանձ, մրճիկաձև իրեր, խոշոր կոճակ-

ներ. ուլունք, օղեր: Հարավ-արևմտյան պատի մոտ դրված էին գավազանների գլխակալներ, ծայրակալներ ու եռաշրջւսն կախիկներ: Դրանցից արևելք հայտնաբերվեցին խոշոր մատուցարանների մասեր, բրոնզե գոտիների բեկորներ և երկաթե կեռ. իսկ հարավ-արևելյան պատի մոտ շքասեղ ու վանակասի ցլեպ (աղ. LXIX):

*Դամբարան № 29 (16-78թ.)* - հայտնաբերվեց շենքի հիմքերը փորելու ժամանակ (չափ.` 2.6x1.2x1.4մ): Այս քարարկղի հատակին սալ էր դրված, որի հետևանքով արևելյան հատվածի հատակը 10սմ ցածր էր գտնվում արևմտյան կեսից: Դամբարանի կենտրոնում գտնվեց կրծքավանդակը, իսկ ստորին ծնոտը հարավային պատի մոտ էր դրված: Կոնքոսկրը և ոտքերի ոսկորները հայտնաբերվեցին արևելյան մասում, հատակից 50-60սմ բարձրության վրա: Այստեղ ակնհայտ էր դիամասնատման ծեսը: Դամբարանի հատակոն, արևմտյան պատի մոտ, հայտնաբերվեցին տարատեսակ խեցանոթներ, վահանիկ, օղ, եռաշրջան կախիկներ, աստղաձև զարդեր ու բրոնզե կեռ (աղ. LXX):

*Դամբարան № 31 (18-78թ.)* - քարարկղից պահպանված էր հարավ-արևմտյան անկյունաձև հատվածը, որից երևում էր, թե դամիարանի խորությունը 1.1մ էր եղել: Հայտնաբերված նյութերն են խոշոր եղջերավոր անասունների առանձին ոսկորներ, ատամնավոր մակերեսներով երկու ապարանջան (դրանցից մեկը ներծկված էր), անկյուններում առյուծների գլուխներով զարդարված ուղղանկյունաձև իր, եռաշրջան կախիկներ, նետասլաքներ, գավազանի գլխակալ, վահան, կոճակ, օղ, շքասեղի մաս: Դամբարան դրված խեցանոթներից ամբողջական վիճակում պահպանվել էին սափորն ու միականթ թասը, իսկ երկու այլ սափորներից, սկուտեղից, կճուճից ու թասից հայտնաբերվեցին առանձին մասեր: Նյութերից վերջինը վանակասի ցլեպն էր (աղ. LXXI):

*Դամբարան № 32 (19-78թ.)* - շինարարության ժամանակ ավերված այս դամբարանից գոյացած հողակույտի ստուգման ընթացքում հայտնարերվեցին միականթ գավաթի բեկորներ, մատուցարանի մաս, ալեբաստրե թասիկ, օղեր, ապարանջան, շքասեղներ, եռաշրջան կախիկներ (աղ. LXXII):

*Դամբարան № 50 (18-79թ.)* - վնասված էր հյուսիսային պատի մի հատվածը: Հյուսիս-հարավ ուղղություն ունեցող այս դամբարանը (չափ.` 4.8x3.9x1.1մ) զուրկ էր ծածկասալերից: Մարդու կմախքի վատ պահպանված մնացորդները գտնվեցին դամբարանի կենտրոնում, գլխով հարավ ուղղված վիճակում: Դամբարանի հարավային կեսում հայտնարերվեցին երկու ձիու կմախքի մասեր: Ձիկրից մեկե` արևմտյան կողմում գտնվող գանգը դրված էր կողոսկրերի վրա, իսկ արևելյան մասում դրված էին ձիկրից երկրորդի ողնաշարի մասերն ու ստորին ծնոտը: Վերջինիս գանգը փոքր-ինչ հյուսիս էր գտնվում: Այս գանգի մոտից հայտնաբերվեցին մրճիկաձև իրեր, իսկ մարդու կմախքի մոտ դրված էին 9 նետասլաք, 5 եռաշրջան կախիկ, կոճակներ, երկաթե ապարանջան, բրոնզե օղ և հակադիր կողմերում կենդանու գլուխներով զարդարված շրջանաձև իր: Մյուս նյութերը, որ ներկայացված են երկու ծայրակալներով, ասեղով, սափորով, կճուճով, 3 քրեղանով ու թասով, հայտնաբերվեցին դամրարանախցի հյուսիսային կեսում 0.8-1.1 մ խորության վրա (աղ. LXXIII):

*Դամբարան № 53ա (22-79թ.)* - շինարարության ընթացքում գրեթե ամբողջությամբ ավերված այս դամբարանախցից պահպանվել էր մի փոքրիկ հատվածը, որով հնարավոր չէր որոշել դամբարանի ուղղվածությունն ու մոտավոր չափերը: Նշենք միայն, որ պահպանված մասից հայտնաբերվեց միականթ կճուճ (աղ. LXXIV, 14): Մյուս նյութերը՝ բրոնզե զոտեկապով երկաթյա դաշույնի շեղբի բեկոր, խողովակաձև զարդեր, ուլունքներ,, խխունջ, կոճակ, ժանիք, երեք խեցանոթի պասակաոր բեկորներ և բրոնզե լարից պատրաստված ինչ-որ իր, ընկած էին դամբարանից նետված, հող ու քարից կազմված կույտի մեջ (աղ. LXXIV, 1-14):

*Դամբարան № 86 (17-80թ)* - նախորդից 6-8 մ արևմուտք էր գտնվում և հողի մակերեսին ուրվագծվում էր աշխատանքների ժամանակ հարթեցված դամբարանաթմբից մնացած հիմքի քարերի հավասար փռված շերտով: Այն հեռացնելուց հետո, 30սմ խորության վրա բացվեցին հյուսիս-հարավ ուղղվածություն ունեցող դամբարանախուցը (չափ՝ 2.4x1.2x1.2մ) ծածկող չորս խոշոր և երկու փոքր սալ եբը: Դամբարանախուցը միջնապատով եբկու մասի էբ բաժանված: Ինչպես միջնապատը, այնպես էլ դամբարանախուցը, կազմված էր տուֆ սալերից: Հարավային խցում (չափ՝ 1x1.2x1.2մ) տարբեր խորությունների վրա հայտնաբերվեցին կենդանիների ոսկորներ, անմիջապես դամբարանախցի հատակին, ձախ կողքի պառկած երկտակված վրճակում ձիու կմախքն էր: Վեբջինիս վերջույթները ծալված էին: Կենդանու արևելք ուղղված գանգի տակ քար էր դրված, իսկ վզոսկրերը օղակված էին բրոնզե անզարդ գոտու բեկորներով: Ակնախոռոչների վրայից գտնվեցին երկու միանման բրոնզե կոճակներ, իսկ բեբանի մեջ դրված էր սկավառակաձև, այտաճաններով րրոնզե սանձ: Գանգից ոչ հեռու գտնվեց երկաթե խոշոր նիզակ: Ձիու կնախքից վեբ, խցի արևմտյան պատի մոտ, հատակից 60-70սմ բարձրության վրա, հայտնաբերվեցին ուլի գանգ և մի քանի կողոսկր: Դրանց մոտ ընկած էր եռրթի ստորին ծնոտ: Հետաքրքիր է, որ այս խցի հարավային պատը կազմող, իրար վրա դրված երկու սալերից ստորինի արևելյան անկյունում միջանցիկ անցք էր բացված: Սա հետաքրքիր երևույթ է և կարոտ հեաագա հետազոտության:

Այլ պատկեր բացահայտեցին հյուսիսակողմյան դամբարանախցի (չափ՝ 1.4x1.2x1.2մ) պեղումները: Այս դամբարանախուցը մինչև 0.5մ խորությունը հողով էր լցված, որից ցած, մինչև հատակը, խոշոր քարերից կազմված լիցքն էր: Խցի արևմտյան անկյունում, քարերի միջև, հայտնաբերվեց ինչ-որ կենդանու թիակոսկրի մաս, իսկ դամբարանի կենտրոնում գտնվեց մարդու գանգի բեկոր: Վերջինիս մոտ ընկած էր խոշոր եղջերավոր անասունի երկու ճան: Խցի հյուսիսարևելյան անկյունում ընէած էին սարդիոնե ուլունքներ, երկու բրոնզե նետասլաք, երկաթյա իրի (դանակ՞) փոքր բեկորներ ու ներճկված մեջքով բրոնզե ապարանջանի մաս (աղ. LXXIV, 15-21):

*Դամրարան № 100 (13-81թ.)* - գանվում էր դամբարանադաշտի հարավարևմտյան մասում: Այս դամրարանից պահպանված էր 5մ երկարություն ունեցող հարավային պատը, իսկ արևելյան ու արևմտյան պատերից համապատասխանաբար պահպանված էին 2.5 և 1.8մ երկարությամբ հատվածներ: Արևելյան պատի երկայնքով:

դամբարանի ներսի կողմից անցնում էր 1.5-2մ լայնությամբ փորված շինարարական խբամատը: Դամբարանի խորությունը 0.8մ էր: Դամբաբանախցի պահպանված մասում հայտնաբերվեցին երկու ձիու առանձին ոսկորներ, որոնց մոտ ընկած էբ մբճիլաձև իր: Դրանից ոչ հեռու գտնվեցին եռաշրջան կախիկ ու վահանիկ: Արևմտյան պատի մոտ դրված էին տարբեր տեսակի խեցանոթներ: Դամբաըանի տարբեր մասեբում հայտնաբերվեցին նետասլաքներ, գտվազանի ծայրակալ, շքասեղ և խոշոր ասեղ. սարդիոնից և բրոնզից պատրաստված ուլունքնեբ (աղ.LXXV):Դամբարանում մաբդու կմախք չհայտնաբերվեց, հավանաբաբ այն գտնվել է ավերված մասում:

*Դամրարան № 105 (18-81թ.)* - այստեղ (չափ՝ 2.4x1.3x1.3մ, ուղղութ.՝ հյուսիսարևելք հաբավ-արևմուտք) խմբակային թաղում էր կատարված, հարավային մասում, գլուխներով արևելք դարձած, հայտնաբերվեցին երկիւ երեխայի, իսկ դամբարանի կենտրոնում՝ մեծահասակի կմախք: Վերջինս փշրված էր քարերի ծանրության տակ: Նկատվում էր, սակայն, որ այն դրված է եղել ձախ կիղքի վրա, գլխով հյուսիս, ոտքերով՝ դեպի երեխաները: Մեծահասակի թևերին գտնվեցին չորս բրոնզյա ապարանջան, իսկ կիծքավանդակի և կինքի շրջանում դրված էին սափոր և երկիւ կճուճ: Արևելյան պատի երկայնքով շարված էին երեք երկկանթանի անոթ: Դրանց մոտ գտնվեցին երկու նետասլաք ու գարու ռեկոր: Երեխաների կմախքների մոտ դրված էին երկու քրեղան, ուլունքներ, օղ, շիգդ ու վանակատե ցլեպ (աղ. LXXVI):

*Բ. Նյութական մշակույթն ու թվագրությունը* - հայտնաբերված նյութերի եարուստ տեսականին ներկայացված է միանման ձևերով, ինչը և նպատակահաբմաբ է դարձնում վոբջիններիս համատեղ քննությունը:

*Դաշույններ* - եըկիւ տեսակով ներկայացված այս զենքերը չորսն են: Առաջին տեսակին են պատկանում դաշույններից երկուսը: Սրանք կտըվածքում ոսպնյակաձև ու շեղանկյունաձև երկաթյա շեղր ունեն: Մեկն ավարտվում է նեղ և տափակ լեզվակիվ, Վերջինիս վրա առկա են երկիւ բրոնզյա օղակներ, որոնք, ինչպես և շեղբի հինքում պահպանված, անցքերով զարդարված րրոնզյա գոտեկապը, ամբացրել են դաստակը: Դաշույնն ունի բրոնզյա գլանաձև գլխիկ (աղ. LXVI, 13): Դաշույններից մյուսի շեղբը թերի է: Այն բրոնզե գոտեկապ ունի (աղ. LXXV, 13): Երկաթից պատրաստված դաշույնների այս տեսակի («սևանյան») մասին խոսվըլ է: Նշենք միայն, որ Շիրակավանի օրինակներից մեկի (աղ. LXVI, 13), տարրերվելով վաղ օրինակներից գլխիկի զլանաձև տեսքով, դաստակի բազմաեատված ձևով (այն ստացված է բրոնզյա օղակների միջոցով), մերձենում է աստղաձորյան նմուշներից մեկին, որը թվագրվում է մ.թ.ա. IX-VIIIդդ. (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 224-225):

Դաշույնների II տեսակին պատկանողները միանման՝ և մահիկաձև գլխամասով ավարտվող երկաթյա զենքեր են, որոնցից մեկի դաստակի շրջանակավոր է (աղ. LXVI, 12), մյուսինը՝ հարթ (աղ. LXVI, 11): Դաշույններից մեկի շեղբը բացակայում է, իսկ մյուսի՝ ուղիղ եզրեր ունեցող շեղբը սրվում է ծայրում: Վերջինս կտրվածքում շեղանկյունաձև է: Շրջանակավոր դաստակիվ բբոնզե դաշույնները Յայաստանում եայտնի են մբջին բրոնզի դարաշրջանից, իսկ ուշբրոնզեդարյան հուշաբձաններից հայտնաբերվածները նեբկայումս փոքր խումբ են կազմում: Ուշրրոնզեդարյան հու-

շարձաններում (օր. Խիշկիդերե, Զողի և այլուր: Տես *Morgan J.* 1927, էջ 204, նկ. 198 և այլն) հայտնի են և մահիկաձև գլխիկով բռնցքե դաշույններ. որոնց երևաքե կրկնակները, ինչպես մ.թ.ա. IX-VIIIդդ., այնպես էլ համեմատաբար ուշ շրջանի պատկանող նյութերի հետ հայտնի են Զաղխեչից, Նոյեմբերյանից, Թումանյանից և Աստղիբլուրի № 15 դամբարանից (***Есаян С.А.,*** 1976, աղ. 121, 5, 140, 2-3): Նման գլխամասով ավարտվող սուր գտնված է և Ապանդարյանից (***Хачатрян Т.С.,*** 1975, էջ 24, նկ. 6), որից սոսկ մահիկաձև գլխամասի բացակայությամբ է տարբերվում Շիրակավանի I դամբարանադաշտի տարածքից պատահականորեն հայտնաբերված երկաթյա նմուշը (նկ.15): Վերջինիս դաստակը նույնպես շրջանակավոր է, որի հիմքում լայնացող թևիկները երկու կողմից ծալված են շեղբի վրա: Այս նմուշից ամենևին չի տարբերվում Նորատուսի № 10 դամբարանից (մ.թ.ա. IX-VIIIդդ.) հայտնաբերվածը (***Мартиросян А.А.,*** 1964, նկ.81, 8, էջ 208): Դժբախտաբար VIII կառույցից գտնված երկաթյա սրի շեղբի բեկորը պատկերացում չի տալիս զենքի տեսակի վերաբերյալ:

*Նետասլաքներ* · ներկայացված են 27 օրինակով: Դրանցից մեկը երկաթից է պատրաստված: Վերջինիս երկթև, թերի պահպանված եռանկյունաձև սայրը կտրվածքում ոսպնյակաձև է (աղ. LXVI, 9): Ինչ վերաբերում է բրոնզից պատրաստվածներին, ապա դրանք սայրի ձևով երկու տարբերակի են բաժանվում: Առաջինները, որ գերակշռող մեծամասնություն են կազմում, եռանկյունաձև են: Դրանց մի մասը համեմատաբար նեղ և ձգված տեսք ունի (աղ.LXVII, 21-23, LXXII, 5, LXXIII, 22,24, LXXIV, 17,18. LXXVI, 6), մյուսները կարճ են և լայն (աղ. LXVI, 10, LXIX, 30-32, LXX, 9-10, LXXV, 13-14): Երկրորդ տարբերակին պատկանողները կենտրոնում թեթևակի գոգավորվող և դեպի ցած լայնացող թևիկներով սայր ունեն (աղ. LXXIII, 23, LXXVI, 5): Նետասլաքների մի մասի թևիկները սրվում են ծայրում, մյուսները ուղիղ կտրած տեսք ունեն: Սլաքների մի խումբն ունի ընդերկայնական ողեր, իսկ մյուսների մոտ ողերի երկու կողմերից անկյունավոր կամ կամարաձև հանվածքներ են արված (աղ. LXXVI, 10, LXXVII, 23): Ինչ վերաբերում է պոչիկներին, ապա դրանք սայրին միացման հատվածում փոքր-ինչ լայնանալով յուրատեսակ խնձորակ են ծևավորում: Նետասլաքների քննված տարբերակները սայրի ընդհանուր տեսքով (եռանկյունաձև ու գոգավորվող), ինչպես և ընդերկայնական ողի առկայությամբ կրկնում են նախորդ փուլերում հայտնի նմուշների ձևի: Այս օրինակները, սակայն, առանձնանում են տարատեսակ երկնողմ հանվածքներով, որոնք, բացակայելով ուշբրոնզեդարյան նմուշների վրա, երկաթեդարյան սլաքների բնորոշ գծերից են: Չծանրանալով նետասլաքների քննված տարբերակների այլ առանձնահատկությունների և ընդհանրությունների վրա (մանրամասները տե՛ս ***Есаян С.А.,*** 1966, էջ 47)՝ նշենք միայն, որ Շիրակավանի նմուշների ճշգրիտ զուգահեռներն են Մակարաշենից, Աստղի-բլուրից, Դվինից և մթա. IX-VIIIդդ. թվագրվող այլ հուշարձաններից հայտնաբերվածները (***Есаян С.А.,*** 1976, աղ. 26: ***Кушнарева К.Х.,*** 1977, էջ 13, 30-31): Տեղին է նշել, որ Դվինից (այդտեղ հայտնաբերված են նաև նման նետասլաքներ ձուլելու կաղապարներ) վերցված ածխի անալիզը տվել է 2670±70թթ, այսինքն՝ 720±70թ.թ. արդյունքը: Դաշվի առնելով հրդեհի առկայությունը Դվինի նշված շերտում՝ Կ.Ք. Քուշնարյովան այն կարծիքին է արտա-

հայտում, որ այդ ավերածությունները պայմանավորված են ուրարտացիների, մասնավորապես՝ Մենուայի արշավանքների հետ: Այս տեսակետից ուշագրավ է և Դ.Ա. Մարտիրոսյանի այն դիտողությունը, թե ուրարտական նետասլաքների պոչուկների խնձորակների ձևը ընդօրինակվել և զարգացվել է ուրարտացի վարպետների կողմից (***Мартиросян А.А.,*** 1964, էջ 204): Այս կարծիքի օգտին է խոսում և այն փաստը, որ նետասլաքների քննված տարրերակները, զարգանալով տեղական հողի վրա, առանց որևէ փոփոխության, լայն տարածված և ընորոշ զինատեսակներից մեկն են մնում և հետագայում: Դրա ապացույցն են Կարճաղբյուրից (մթա. VII-VIդդ., նյութը հրատարակված չէ), Ոսկեհասկից (***Петросян Л.А.,*** 1989, աղ. 68, 3. 69, 10-11,18. 64, 8) և մ.թ.ա. VIII-VIդդ. թվագրվող այլ հուշարձաններից հայտնաբերվածները: Այդուհանդերձ, մ.թ.ա. IX-VIIIդդ. բրոնզյա նետասլաքներին զուգահեռ գործածվում են և երկաթից պատրաստվածները: Այդպիսիները հայտնի են Դվինի նշված շերտում և այլուր (***Кушнарева К.Х.,*** 1977, նկ.15):

*Վահանիկներ* - ներկայացված են երեք տարրերակով: Առաջինները ունեն միմյանց միացած զույգ շեղանկյունիների տեսք: Դրանց կենտրոններում կիսագնդաձև ելուստներ կան (աղ. LXVII, 27): Ուշ բրոնզի դարաշրջանից հայտնի (օր. Տլի, տե՛ս ***Техов Б.В.,*** 1977, նկ. 113) այս տարրերակը, ինչպես մ.թ.ա. II հազ. II կեսի, այնպես էլ հետազոտվող ժամանակաշրջանի հուշարձաններում հազվադեպ է հանդիպում: Վերջիններիս ճշգրիտ զուգահեռներն են Մինգեչաուրից հայտնաբերվածները (***Асланов Г.М., Ваидов А., Ионе Г.,*** 1954, աղ. XIX), իսկ Գեսարբեկ-Կալաքենդից գտնվածները փոքր-ինչ այլ տեսք ունեն (***Ивановский А.А.,*** 1911, աղ. VIII, 30,31):

Վահանիկների երկրորդ տարրերակի շրջանաձև է, որը կինտրոնական հատվածում կիսագունդ է ձևավորում, իսկ հարթ եզրերի վրա երկուսից չորս անցքեր են բացված (աղ. LXVII, 25, LXIX, 24, LXXI, 4, LXXV, 18): Այս տարրերակն իր բազմաթիվ զուգահեռներն ունի ինչպես բրոնզեդարյան, այնպես էլ երկաթի դարաշրջանի տարրեր փուլերով թվագրվող հուշարձաններում (օր. Լոռի-բերդ, Ն.Գետաշեն, Սիսիան, Ջարխեչ և այլն):

Վահանիկների երրորդ տարրերակը գոգավորվող կողերով հատած բուրգի տեսք ունի (աղ. LXVI. 15-17): Այս տարրերակը ևս հանդիպում է ուշ բրոնզերկաթեդարյան հուշարձաններում: Այդպիսիք հայտնի են Օշականից, Լոռի-բերդից, Մադնիսճալայից և այլն (***Есаян С.А., Калантарян А.А.,***1988, աղ. XCVII, 5, ***Деведжян С.Г.,*** 1981, էջ 63, աղ. XXV, II: ***Тушишвили Н.,*** 1972, նկ.186 և այլք):

*Գոտիներ* - ներկայացված են մեկ՝ գրեթե ամբողջական (նկ.13) և հինգ թերի պահպանված նմուշների մասերով: Դրանցից երկուսը հարուստ զարդանախշված են տիեզերական երևույթներին առնչվող տեսարաններով ու երևակայական կենդանիների պատկերներով (նկ. 13, 14 մանրամասները տե՛ս *Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.* 1980, էջ 273-277, նկ. 1,3), իսկ մյուս երկուսը մի դեպքում զարդարված են երկշարք պարույրներով, դրանց մեջ լցված կետերով ու գոտու եզրաշերտը ընդգրկեղ զալարների շարքով (աղ. LXIX, 2), մյուսում՝ գոտու երկայնքով: վոց շարքով տարված ուռուցիկ կետերով (աղ. LXIX, 3): Բեկորներից վորջին երկուսը անզարդ են (աղ. LXXIV, 21, LXXVI, 13):

*Սանձ ու ձիասարքի իրեր* - սանձերը երկուսն են: Երկու տեսակով ներկայացված բրոնզաձույլ այս իրերից մեկը պատկանում է անվակաձև այտաճաններ ունեցողների թվին (աղ. LXXIV, 15). դրանց մասին խոսվեց վերևում: Ինչ վերաբերում է երկրորդ սանձին, ապա այն ունի սկավառակաձև գլխիկներով ավարտվող, կտրվածքում ուղղանկյունաձև ձողերի տեսքով այտաճաններ: Վերջիններիս եզրերում և կենտրոնական լայնացող մասում անցքեր կան, որոնց մեջ և եագցված է օղակաձև ծայրերով ավարտվող շարժական լկամը (աղ. LXIX, 4): Սանձերի այս տեսակը մ.թ.ա. X-VIIդդ. բնորոշ նյութերից է: Այդպիսիք հայտնի են Վանաձորից, Դվինից, Արջաձորից, Սևանի ավազանի հուշարձաններից, Խանլարից և այլ վայրերից (***Мартиросян А.А.***, 1964, աղ. VIII, 8,9, ***Кушнарева К.Х.***, 1977, նկ. 48: ОАК, 1899, նկ. 182: ***Кушнарева К.Х.***, 1957, էջ 138, նկ.2): Նույն ժամանակաշրջանի նյութերում իրենց զուգահեռներն ունեն և բրոնզաձույլ մրճիկաձև իրերը, որոնք երկու տարբերակով են ներկայացված: Առաջինները կարճ ձողի տեսք ունեն, որոնց կենտրոնական փոքր-ինչ լայնացող մասում անցք է բացված (աղ. LXVII, 24, LXIX, 27-29, LXXIII, 20), իսկ երկրորդները դեպի կենտրոն լայնանալով, շեշտված անցումով, համեմատաբար բարակ կամրջակ են ձևավորում (աղ. LXXIII, 19, LXXV, 10): Հավանաբար ձիասարքի մաս հանդիսացած այս իրերի զուգահեռները հայտնի են Մինգեչաուրից, Կարա-բուլաղից, Բեշտաշենից (***Куфтин Б.А.***, 1941, աղ. XI,VII) և մ.թ.ա. հազ. I քառորդով թվագրվող այլ հուշարձաններից:

*Զարդեր և ծիսական իրեր* - նյութերի այս խմբում ենք միավորում և գավազանների գլխակալներն ու ծայրակալները, որոնք անտարակույս իշխանության խորհրդանիշ են հանդիսացել: Դրանցից մեկը եռասակրի տեսք ունի, որն ամրացված է ընդհանուր խողովակաձև կրթառին: Սակրերի վզերը զարդարված են ցանցկեն ու եռանկյունաձև փորագիր գոտիներով (աղ. LXVII, 11): Նմանօրինակ իրեր հայտնի են Խոջալուի, Մինգեչաուրի I ու IV դամբարանաթմբերից (***ОАК***, 1897, նկ. 299: ***Асланов Г.М.***, **Ваидов А.**, ***Ионе И.***, 1959, աղ. XL, 3,4,12,13) և թվագրվում են մ.թ.ա. IX-VIIդդ (***Даниелян О.***, 1973, աղ. III, էջ 111-112): Գլխակալներից մյուս երկուսը միանման են, ունեն վեցանիստ գլանի ձև: Դրանցից մեկր, որ ամբողջությամբ բրոնզից է պատրաստված, սնամեջ է: Կենտրոնական մասում թեթևակի գոգավորվող այս իրը վերին մասում փոքրիկ օղակ ունի (աղ. LXIX, 7): Գլխակալի մեջ ամրացված փայտե ձողի մյուս ծայրը մտցվել է վերին մտսում եռանկյունաձև անցք ունեցող և ստորին մասում կիսագնդաձև գլխիկով ավարտվող եռանիստ բրոնզաձույլ ծայրակալի մեջ (աղ. LXIX, 8): Նման ծայրակալ է ունեցել և գավազաններից երկրորդը (աղ. LXIX, 6), որի վեցանիստ գլխակալը, սակայն, սպիտակ մարմարից է պատրաստված: Վերջինս վերին և ստորին մասերում ամրացված է բրոնզե գոտեկապերով: Ստորին մասում եղած գոտեկապի վրա պատրաստված բրոնզաձույլ ընի մեջ ամրացված է նեղ և տափակ բրոնզե ձող, որի վրա բացված երկու անցքերը նախատեսված են փայտյա մասը ամրացնելուն (աղ. LXIX, 5): Ամենայն հավանականությամբ գործածվել են և սոսկ բրոնզաձույլ ծայրակալ ունեցող գավազաններ: Հայտնաբերված ծայրակալներից վերջին երեքը վերին մասում եռանկյունաձև անցքով եռանիստ իրան ունեն, որը, սակայն, ավարտ-

վում է հարթ տապարինի տեսք ունեցող ելուստով (աղ. LXXIII, 12,13, LXXV, 12): Այս իրերի զուգահեռները հայտնի են Վարդաքարից (*Խաչատրյան Տ.Ս.*, 1961), Արջաձորից, Լոռի-բերդի մ.թ.ա. I հազ. I քառորդով թվագրվող համալիրներից և այլն: Նույն ժամանակաշրջանի հուշարձաններում (Լճեն, Արջաձոր, Մինգեչաուր, Սամթավրո և այլն: Տե՛ս ***Мартиросян А.А.,*** 1964, նկ. 62: ***Асланов Г., Ваидов А., Ионе И.,*** 1959, աղ. XVI: ***Кушнарева К.Х.,*** 1957, նկ.10: ***Абрамишвили Р.М.,*** 1961, էջ 377-379, աղ.VI, 11) իր զուգահեռներն ունի և բրոնզյա գլխակալներից հաջորդը, որը պատահականորեն հայտնաբերվել է Շիրակավանի I դամբարանադաշտի տարածքում կատարված աշխատանքների ժամանակ: Այն գլանաձև է, զարդարված չորս շարք ուղղահայաց իջնող շեղանկյունաձև, իսկ վերին մասում՝ բքաձև ելուստներով: Շեղանկյունիների միջև գտնվող հատվածները զարդարված են ցանցապատկերներով, իսկ դրանցից վեր ընկած տարածքը՝ շրջաններով (նկ.16):

Ծիսական իրերի հաջորդ խումբն են ներկայացնում երեքական համակենտրոն շրջաններից կազմված բրոնզաձույլ *կախիկները*: Վերջիններիս կենտրոնական մասում եարթ տապարիկի ձև ունեցող զաբդ կա: Այս կախիկները բաժանվում են երկու տարբերակի: Առաջինները ձևավորում են փակ շրջան (աղ. LXXI, 2), իսկ մյուսների ծայրերը ստորին մասում փոքր-ինչ հեռացած են (աղ. LXVI, 10-20, LXVII, 10, LXIX, 20,21, LXX, 8, LXXII, 7, LXIII, 16, LXXV, 15): Կախիկների այս տեսակը ևս հայտնի է մ.թ.ա. I եազ. սկզբից (Տոլորս, Վաբղաքար ևն), ինկ Մինգեչաուրի II և V դամբարանաթմբերից գտնվածները թվագրվում են մ.թ.ա. IX-VIIIդդ.: Ամենայն հավանականությամբ նման կախին են ձուլել և Այրիվանքի բնակավայրի պեղումներից հայտնաբերված, թերի պահպանված կաղապարի մեջ, որը գտնված է մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվող նյութերի միջավայրում (նյութը հրապարակված չէ):

Այլ խումբ են կազմում խոշոր զարդավոճակերը (տրամագծերը՝ 4-6.5սմ): Ետին մասում ծնկաձև, կամրջակ ունեցող այս բրոնզյա իրերի շրջադիրների մեջ ամբացված է շաղախից կամ մարմարից պատրաստված կիսագնդաձև ներգիր: Վերջինիս մակերեսը զարդարված է շրջանի մեջ առնված գույնզգույն (դեղին, կարմիր և կապույտ) շաղախներով ստացված տարբեր պատկերներով (քառանկյուն, շրջան, աստղ, եռանկյունի, աղ. LXIX, 10-16, LXXI, 8, LXXIII, 15): Կոճակներից մյոա, որն ամբողջությամբ բրոնզաձույլ է, կամարաձև կամրջակ ունի: Իրի մակերեսը զարդարող համակենտրոն շրջանները, որոնց միջև երևի մածուկ է եղել կամ այլ նյութ ընդելուզվել, վոճակի կտրվածքին ալիքաձև տեսք են եաղորդում (աղ. LXIII, 14): Տարբեր գույների շաղախնեբով ընդելուզված նման խոշոր զարդավոճակներ եայտնի են մ.թ.ա. I հազ. I քառորդով թվագրվող այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Տոլորսը, Մինգեչաուրը, Գանձակը, Գետաբեկ-Կալաքենդը և այլն (Տե՛ս ***Ивановский А.А.,*** 1911, աղ. XV, 8,12, XVI, 8,5 : ***Мартиросян А.А.,*** 1964, աղ. XIV, 4: ***ОАК***, 1899, նկ. 184 ևն): Ինչ վերաբերում է փոքր կոճակներին (տրամագիծը՝ 1-1.2սմ), որոնց կիսագնդաձև իրանի ետևում նեղ և տափակ կամրջակ է ամրացված (աղ. LXVII, 26), ապա դրանց զուգահեռները բազմաթիվ են ուշ բրոնզեբկաթեդարյան հուշարձաններում:

Ծիսական իրերի հաջորդ խումբն են ներկայացնում շեղանկյան տեսք ունեցողները:

Բրոնզե թիթեղից պատրաստված և ծայրին ասեղ ունեցող այս իրերը երկու տարբերակում են խմբավորվում: Առաջին տարբերակը կազմված է իրար մեջ առնված երեք շեղանկյունիներից, որոնցից արտաքինի եզրերը զարդարված են հաւրթ տապարիկներով ու արեգակնաձև ելուստներով (աղ. LXVII, 13, LXX, 10,11, LXXI, 3, LXXV, 17):

Երկրորդ տարբերակի իրանը շեղանկյունաձև հոծ թերթիկից է պատրաստված, որի եզրերը զարդարված են խաչաձև և եռատամ տեսք ունեցող ելուստներով: Վերջիններիս տեսքը հիշեցնում է ձեռքերը արմունկներից ծալած և վեր բարձրացրած կուռքերի ձևը (աղ. LXIX, 1, LXXII, 10): Բ.Թումանյանի կարծիքով այս իրերը արտահայտել են համատեղության գաղափարը (*Թումանյան Բ., Մնացականյան Հ.,* 1965, էջ 10, նկ.2):

Նման «զարդեր» Ե.Լալայանը հայտնաբերել է Սևանի ավազանի հուշարձաններում կատարած պեղումների ընթացքում (*Լալայան Ե.,* 1931): Այդպիսիք հայտնաբերված են և Գյումրիից (*ОАК,* 1900): Ցավոք, թե՛ Լալայանի, թե՛ Ռեսլերի մոտ բացակայում են դամբարաններից հայտնաբերված մյուս նյութերի նկարներն ու նկարագրությունները, ինչը և թույլ չի տալիս հստակեցնել պեղված համալիրների թվագրությունը: Այս առումով կարևորվում են Արթիկի պեղումները. նման արեգակնաձև ելուստազարդերը այստեղ հայտնաբերվել են № 218 դամբարանից, որը թվագրվում է մ.թ.ա. X-IXդդ. (***Хачатрян Т.С.,*** 1975, նկ. 150):

Պայմանականորեն նյութերի այս խմբում ենք դասում և կոճակի ու ասեղի միացումից ստացվածը: Կոճակը պատրաստված է բրոնզե շրջանակի մեջ ընդելուզված, սպիտակ, կարմիր և կապույտ շաղախներից կազմված եռանկյունի և քառանկյունի պատկերներով: Շրջանակի ետևում աղեղնաձև կամրջակ է ամրացված (աղ. LXXV, 11): Կոճակաձև գլխիկ ունի և Կաղնի-խաչ հուշարձանից, մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվող նյութերի հետ հայտնաբերվածը (***Есаян С.А.,*** 1976, էջ 144, աղ. 132, 9): Շիրակավանի նմուշի ճշգրիտ զուգահեռը, սակայն, Վ.Բելկի՝ Կալաքենդի № 9 դամբարանից հայտնաբերածն է, որի հետ գտնվել են շիրակավանյան նմուշներին պատճենող սանձեր, կոճակներ, դաշույններ և այլ նյութեր (*Nagel W., Stromenger E.*, 1985 աղ. 14):

Համաժամանակյա հուշարձաններում իր սակավաթիվ զուգահեռներն ունի և կենտրոնական մասում թեքևակի գոգավորվող որոնզաձույլ ուղղանկյունաձև եարթակը, որի լայնքով եինգ ուղղանկյունաձև բացվածքներ են արված: Վերջիններիս միջև առաջացած կամրջակները զարդարված են կապույտ ու սպիտակ շաղախների ընդելուզմամբ ստացված գալարապարույրներով և այլ պատկերներով: Իրի անկյուններում բարձրանում են բրոնզաձույլ առյուծների գլուխները, իսկ եարթակի երկայնական կողերին առկա են երեք զույգ բոգաձև ելուստներ (աղ. LXXI, 1): Այս իրի ճշգրիտ զուգահեռը Արցախից՝ մ.թ.ա. Xդ. թվագրվող նյութերի հետ հայտնաբերվածն է (***Кушнарева К.Х.,*** 1957, նկ.4), իսկ Վանաձորի համաժամանակյա նմուշի վրա գլուխների թիվը տասն է (***Есаян С.А.,*** 1980, աղ. 37, 1): Կենդանիների ոճավորված գլուխներով են զարդարված և բրոնզաձույլ նյութերից մյուս երկուսը: Դրանցից մեկը օղակ է,

որի հակադիր կողմերից բարձրանում են երկաըավիզ կենդանիների (հովազ*) գլուխներ. իսկ մյուսը ներկայացնում է հակադիր կողմեր ուղղված նույնաձև գլուխներ. որոնց միացման տեղում՝ իրի կենտրոնական հատվածում. միջանցիկ անցք է բացված (աղ. LXXIII, 17-18):

Անտարակույս ծիսական իրերի մաս և կամ ծիսական իրեր են հանդիսացել ոսկրե թերթիկներից պատրաստված մի քանի նմուշներ: Դրանցից մեկը կտրվածքում հատած կոնի տեսք ունեցող, կտրվածքում կիսաշրջանաձև իր է, որի մակերեսի վիա անցքեր են բացված (աղ. LXVII, 20): Իրերից մյուսը կտրվածքում ուղղանկյան տեսք ունեցող ձող է, որի մակերեսը զարդարված է շարքով դասավորված համակենտրոն շրջաններով ու դրանց միջև տեղադրված երկուական անցքերով (աղ. LXVII, 18): Համակենտրոն չորս շրջաններով ու դրանց միջև արված անցքերով l զարդարված և սկավառակաձև զարդը (աղ. LXVII, 19), իսկ կենաձև տեսք ունեցողը. որը թերի վիճակում է հայտնաբերված, զարդարված է եղել միայն համակենտրոն շրջաններով (աղ. LXVII, 33): Իրերից կեբջինը կեռիաչի տեսք ունի (աղ. LXVII, 17): Այս իրերի զուգահեռները տեսնում ենք Վանածորում, Մինգեչաուրի № 2 դամբարանից հայտնաբերված իբերի շարքում, համաժամանակյա այլ հուշարձաններում (***Мартиросян А.А.,*** 1964, աղ. XXI: ***Асланов Г., Ваидов А., Ионе И.,*** 1959, նկ. 69):

Բարձր վարպետությամբ. նրբությամբ ու ճաշակով են պատրաստված ոսկյա զարդերը: Դրանցից մեկը 6սմ երկարությամբ շղթա է, որն ստացված է ոսկյա բարակ թելերը հասկաձև հյուսելու եղանակով, Շղթայիկն ամրացված է 2սմ 4մմ երկարություն և 4մմ տրամագիծ ունեցող ոսկյա սնամեջ զլանիկին: Վերջինիս մակերեսը զարդաբված է հատիկներով ստացված եռանկյունաձև ու շեղանկյունաձև պատկերներով, որոնք ներառնված են գլանիկը մակերեսը երկու մասի բաժանող, ոսկյա թելերով անջատված տարածությունների մեջ: Գլանիկի կերին մասում ամրացված է 9մմ տրամագիծ ունեցող ոսկյա օղակը (աղ. LXVII, 14): Զարդերից հաջորդը զանգակաձև է (երկար.՝ 1սմ, տրամագիծը ստորին մասում՝ 7մմ, իսկ կեբևում՝ 4մմ): Իրի մակերեսր զարդարված է հատիկներով ստացված բեկյալներով ու եռանկյունաձև պատկերներով (աղ. LXVII, 15): Պայմանականորեն զարդերի խմբում ենք դասում ևս մեկ իր, որի ամբողջական տեսքը պարզ չէ: Այն իրենից ներկայացնում է կորացող տեսք ունեցող երկաթի բեկոր: Վերջինիս կորացած եզրը երեսապատված է ոսկե բարակ թերթիկեվ, որի մակերեսը զարդարված է հատիկներով ստացված զալարների պատկերներով (աղ. LXVII, 16): Վերջիններիս ձևն ու ստացման եղանակը նույնն է, ինչ և Շիրակավանի ուշբրոնզեդարյան դամբարաններից մեկում (№ 77) հայտնաբերվածինը, ինչը և հաստում է ոսկերչական ավանդույթների խոր արմատներ ունենալը: Այս իմաստով տեղին է նշել և Թռեղքի միջինբրոնզեդարյան դամբարաններից հայտնաբերվածները (***Гогадзе Э.М.,*** 1972, աղ. 20, 6,7 և այլն), որոնք ամենևին չեն տարբերվիւմ շիրակավանյան օրինակից, իսկ Դվինից գտնված, արծաթյա բռնակը պատրաստված է նույն հյուսածո եղանակըվ (***Кушнарева К.Х.,*** 1977, նկ. 506): Շիրակավանի նմուշն է պաաճենում և Տոլորսից հայտնաբերված շղթայիկը: Բերված զուգահեռները, որոնք ամենևին էլ թվարկվածներով չեն սպառվիւմ, փաստում են նախորդ դարաշրջաննե-

րից եկող ավանդույթների զարգացումն ու լայն տարածումը հետազոտվող ժամանակաշրջանում:

Զարդերի մյուս խումբն են կազմում ոսկրից, բրոնզից, սաթից, շաղախից, սարդիոնից ու ապակուց պատրաստված տարբեր ձևերի ուլունքները:

Սարդիոնից պատրաստվածները նախորդ դաբաշրջաններից հայտնի, գնդաձև զարդերն են (աղ. LXXV, 19), որոնք սովորական են և հետազոտվող դարաշրջանի համալիրներում: Նույն ձևն ունի և VIII կառույցից հայտնաբերված ապակե ուլունքը (աղ. XLIX, 26): Առանձին հետաքքրքրություն է ներկայացնում աբծաթափայլ մակերեսով «գուրզաձև» ուլունքը, որի մակերեսը զարդաբված է կիսագնդաձև ելուստներով (աղ. LXIII, 9): Այս ուլունքի զուգահեռները մեզ հայտնի չեն: Նույնը չի կարելի ասել բրոնզից պատրաստված սեպաձև ուլունքների վերաբերյալ (աղ. LXIX, 19. LXXV, 20): Իբենց նախաձևերը միջինբրոնզեդարյան մշակույթում ունեցող այս զարդերը (օր. Թռեղքի № 14 դամբարանից հայտնաբերվածները. տե՛ս *Гогадзе Э.,* 1972. աղ. 21, 25) հանդիպում են և երկաթի դարաշրջանի տարբեր փուլերին պատկանող հուշարձաններում. (օբ. Լոռի-բերդ, Ձարխեչ, Արծվաբերդ և այլն: Տես *Есаян С.А.,* 1976, աղ. 93: *Деведжян С.Г.,* 1981, էջ 63, աղ. XXV: *Խնկիկյան Օ.,* 1987. էջ 83. աղ.I, 7): Մթա. I հազ. սկզբով թվագրվող համալիրներում (օր. Արթիկ, Ն.Գետաշեն, Անգեղակոթ ևն, տե՛ս *Хачатрян Т.С.,* 1975, նկ. 153: *Խնկիկյան Օ.*, 1978, աղ.I, 20) իրենց զուգահեռներն ունեն և կապույտ ապակուց պատրաստված (աղ. XLIX, 24), երկկոնիկ խողովակի ձև ունեցող ուլունքները, որոնց նախաձևերը տեսնում ենք վաղ բրոնզեդարյան նյութերի շարքում (*Мунчаев Р.М.,* 1975, նկ. 48): Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում շաղախից (աղ. LXVII, 34) ու սև սաթից պատրաստված ուլունքները (աղ. LXXVI, 10,11): Դրանք ուղղանկյունաձև են, ճախարակաձև ու գլանաձև: Գլանիկի տեսք ունի և ոսկրից պատրաստվածը (աղ. LXXIV, 10), տարբերությամբ, որ վերջինիկ եզրերը զարդարված են փորագիր գծիկներով: Այս ուլունքները բնորոշ են հետազոտվող դարաշրջանին: Վերջիններիս զուգահեռները հայտնի են Արթիկի երրորդ խմբի դամբարաններից (*Хачатрян Т.С.,* 1975, նկ.155), Անգեղակոթի համաժամանակյա համալիրներից (*Խնկիկյան Օ.,* 1978, աղ. I), Մեծամորից (*Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, աղ. VII, 4) և այլ հուշարձաններից: Ինչ վերաբերում է ոսկրից պատրաստված մրճիկաձև կախիկներին (աղ. XLIX, 22-23), ապա դրանց որոշ չափով նման են Մինգեչաուրից հայտնաբերվածները (*Асланов Г.,* **Ваидов А.,** *Ионе И.,* 1959, նկ. 693):

Տարբեր դարաշրջանների պատկանող հուշարձաններից հայտնաբերված նյութերի շարքում իրենց զուգահեռներն ունեն և կտրվածքում շրջանաձև, մոտեցող կամ իրար վրա բերած ծայրերով բրոնզյա ապարանջանները (աղ. LXVII, 31,32, LXXVII, 1): Նույնը կարելի է ասել և անզարդ մակերեսով (աղ. LXXVI, 4) ապարանջանի վերաբերյալ: Ինչ վերաբերում է մ.թ.ա. I հազ. սկզբից լայն տարածված օձագլուխ ապարանջաններին (աղ. LXXVI, 2), ապա դրանց մասին խոսվել է (*Եսայան Ս.Ա.,* 1964, էջ 83-88): Նշենք միայն, որ այս նմուշների օձերի գլուխները ավելի իրական են արտահայտված, որով և տաբբերվում են վաղ օրինակներից:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում ներճկված մեջքով, ատամնավոր (աղ. LXXI, 6) և հարթ մակերեսներով (աղ. LXIX, 22,23, LXXIV, 20) բրոնզաձույլ ապարանջանները: Վերջիններիս զուգահեռները եայտնի են Ջրառատից, Գավառից, Բջնիից, Գառնիից, Թռեղքից, Ալգեթիից և մ.թ.ա. VI-IVդդ. թվագրվող այլ հուշարձաններից (*Мнацаканян А.О., Тирацян Г.А.,* 1961, էջ 73, աղ. II: *Куфтин Б.А.,* 1941, էջ 33): Յաշվի առնելով ապարանջանների այս տեսակի՝ նշված ժամանակաշրջանի հուշարձաններից հայտնաբերված լինելու հանգամանքը (նույն ժամանակին են պատկանում և Ամուդարյան գանձից, Սուզից ևն հայտնաբերվածները), հետազոտողներր այդպիսիները համարում էին Աքեմենյան ժամանակաշրջանի արտադրանքին բնորոշ նյութերից մեկը: Այս ժամանակաշրջանի մեջ առանձնապես փոփոխություն չէր մտցնում և 1929թ. Խրտանոցից հայտնաբերվածը (մ.թ.ա. VII-VIդդ.: Տե՛ս *Мартиросян А.А.,* 1954, աղ. VI, 6): Շիրակավանի՝ մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող դամբարաններից հայտնաբերվածները եարկադրում են վերանայել ընդունված թվագրությունը: Այս տեսակետից առանձին կարևորություն է ներկայացնում Թալինի համաժամանակյա դամբարաններից մեկում գտնվածը (նյութը հրատարակության է պատրաստում Պ.Ավեսփյանը), որը կիկին փաստում է նման ապարանջանների ոչ միայն ավելի վաղ թվագրություն, այլև տեղական ծագում ունենալու հանգամանքը: Միանգամայն իրավացի է Բ.Բ.Պիոտրովսկին՝ նշելով, որ տեղական ծագում ունեն և կամարաձև իրանի կենտրոնում զնդաձև ելուստ ունեցող շիգղերը (*Пиотровский Б.Б.,* 1950, էջ 41: Նույնի, 1955, էջ 34). այդպիսին Շիրակավանում հայտնաբերված է մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող դամբարանում (աղ. LXXV, 17): Շիգղի այս տեսակի հազվադեպ հանդիպելով հետազոտվող ժամանակաշրջանում (օր. Օշականի № 91, իսկ Մեծամորի № 7 դամբարանից եայտնաբերվածը թվագրվում է VIII-VIIդդ., և այլն: Մանրամասները տե՛ս *Есаян С.А., Калантарян А.А.,* 1988, էջ 102-103, աղ. XCIII, 5: *Խանզադյան Է.Վ. Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, էջ 172, աղ. XL, 5), լայն տարածում են ստանում երկաթի յուրացման դարաշրջանում:

Զգալի փոփոխություններ են նկատվում նաև խեցեղեն արտադրանքի քննության ընթացքում:

*Սափորներ* - ներկայացված են տարրեր չափեր, զարդեր և ձևեր ունեցող նմուշներով, որոնք խմբավորում ենք երեք ապրերակում: Առաջինում ենք դասում անկանթ սափորները, որոնք չորսն են: Սրանք միանման՝ գնդաձև իրան, վերաձև լայնացող վիզ և դուրս թեքվող կլորացող շուրթ ունեն: Անոթների սև կամ գորշ գույնի, թույլ փայլեցրած մակերեսներր զարդարված են նախկինից հայտնի, բայց նոր համադրություններով հանդես եկող ձևերով: Այսպես, անոթներից մեկի վիզը օղակված է երեք շարքով տարված վերագիր կարճ գծիկներով, իսկ ուսը՝ ակոսագոտիներով և գագաթներով դրանց հպվող, տարբեր չափերի հատիկներով ստացված չորս շարք ռելյեֆ գծերով, վերջիններս ընդգրկում են իրանի վերին հատվածը (աղ. LXV, 7): Անոթներից մյուսի վիզը զարդարված է փայլը հեռացնելու եղանակով ստացված ուղղահայաց գծերով, իսկ իրանը՝ ակոսների միջև տարված ուղղաեայաց ելունդներով (աղ. LXVII, 2): Ակոսագոտիներով է զարդարված և սափորներից երրորդի ուսը, որից վեր կոտե-

րով լցված եռանկյունիներն են: Իրանի վերին հատվածը զարդարված է իրար մեջ առնված փորագիր անկյուններով (աղ. LXX, 3): Սափորներից վերջինի իրանը գոտևորված է երկու շարքով տարված հատիկներով ու նուրբ մատներով (աղ. LXXIV, 12): Պայմանականորեն անոթների այս խմբում ենք դասում սափորի տեսք ունեցող փոքր անոթը, որը թերևս սրվակ հանդիսանա: Անոթն ունի ձգված իրան և նեղլսցող վիզ: Սափորինի սև, թույլ փայլեցրած մակերեսը վերին հատվածում զարդարված է ակոսագոտիներով և վիզն ու իրանը գոտևորող, ուղղահայաց տարված նեղ մատնեքազարդերով (աղ. LXXI, 14):

Սափորների երկրորդ տարրերակում ենք դասում միականթ անոթները: Դրանցից մեկը գնդաձև իրանով, կարճ վզով նեղբերան անոթ է, որի շրթից սկսվող, թերի պահպանված կանթը վերին մասում գարդարված է պտկինաձև ելուստներով: Նման ելուստներ չորս շարքով զարդարում են և անոթի իրանը, որի սև, թույլ փայլեցված մակերեսը ողակված է 8 շարք ելունդագոտիներով, իսկ վերին կեսը՝ փայլեցմամբ ստացված եռանկյունիներով (աղ. LXVII, 1): Այս խոշոր անոթից, գնդաձև կամ ձգված իրանի չափով, համեմատաբար բարձր գլանաձև և կոնաձև կամ փողաձև, լայնացող վզի ու կանթի ձևով են տարբերվում սափորներից 13-ը: Դրանցից մեկի կանթը ստորին մասում սեղմմամբ ստացված ընդերկայնական գիծ ունի (աղ. LXVIII, 3): Բնորոշը, սակայն, հարթ մակերեսով աղեղնաձև (աղ. LXIV, 3, LXV, 1, LXVII, 3,5, LXVIII, 2, LXVIII, 4, LXXVI, 15) ու ծնկաձև, ձևավորված կամ սալապատավոր կանթերն են (աղ. LXIV, 1, LXX, 1, LXXI, 13,13ա, LXXIV, 11), որոնց առանձին նմուշներ, շրթի մոտ թեքևակի բարձրանում են (աղ. LXXV, 2,3): Առանձին կանթերի վրա բացված է մեկ-երկու անցք: Այս սափորները ևս սև կամ գորշ, թույլ փայլեցրած մակերես ունեն և զարդարված են ուղղահայաց տարված ուռուցիկ երիզներով, հապճկերով սեղմմամբ ստացված ցանցապատկերներով ու անկյունաձև միացող գծախմբերով, մատներով, օձերի ուռուցիկ պատկերներով և այլն: Այս սափորներից առանձնանում է կարմիր փայլեցրած մակերես ունեցողը, որի ձգված իրանը զարդարված է սեղմմամբ ստացված հորիզոնական գոտիներով, եռանկյունաձև պատկերներով, գալարապարույրների շարքով ու դրանք շրջանավոր կետերով (աղ. LXXI, 13):

Միականթ սափորներից վերջին երկեսը, որ պայմանականորեն մեկ խմբում ենք միավորում, ինչպես նախորդներից, այնպես էլ միմյանցից տարբերվում են իրանի և շրթի ձևով, այլ մանրամասներով: Դրանցից մեկը դեպի ցած լայնացող վիզ ունի, որը շեշտված անցումով միանում է շրջանաձև պսակով ողակված հատակ ունեցող կիսագնդաձև իրանին: Անոթն ունի շրթից սկսվող և ուսին միացող երկծնկաձև կանթ: Սափորի սև փայլեցված իրանը ստորին հատվածում զարդարված է սեղմելու եղանակով ստացված ուղղահայաց գծերով (աղ. LXIV, 4): Սափորներից հաջորդն ունի գլանաձև կարճ վիզ, ձգված իրան և շրթից սկսվող աղեղնաձև կանթ: Անոթի բաց դարչնագույն, թույլ փայլեցրած մակերեսն անզարդ է (աղ. LXIV, 2):

Սափորների III տարրերակե է ներկայացնում երկկանթանի նմուշը: Այն ունի թեքևակի զոգավորվող լայն վիզ, փոքր-ինչ ձգված իրան և դուրս ճկվող շրթի հակադիր կողմերից սկսվող աղեղնաձև կանթեր: Անոթի սև անփայլ մակերեսն ուսի մասում զարդարված է թույլ ճկվածքագոտիներով (աղ. LXV, 4):

Միականք և երկեանք անոթների այլ տեսակներ են ներկայացնում կարճ վիզ և լայն բերան ունեցող յոթ խեցանոթ: Վերջիններս իրանի ծնով և այլ հասկանիշներով առանձին տարբերակների են բաժանվում: Դրանցից մի մասի իրանը գունդկամասում փքուն տեսք ունի (աղ. LXV, 2,3). մյուսներինը գնդաձև է (աղ. LXVI, 1. LXX, 7. LXXVII, 1), իսկ երրորդներինը՝ ծգված (աղ. LXXV, 4): Անոթների այս խմբում ենք դասում և եռականք նմուշը, որի կանթերը կտրվածքում եռանկյան տեսք ունեն (աղ. LXXV, 1): Այս անոթների սև փայլեցրած, սակավ՝ խամբած մակերեսները զարդարված են մատնեքով, պտկիկաձև ելուստներով, փորագրմամբ ու սեղմմամբ ստացված գծերով, եռանկյունիներով: Զարդերի ստացման նշված եղանակներն ու զարդաձևերը նորույթ չեն: Նախկինից եկիդ այս հատկանիշներին զուգահեռ տեսնում ենք և այնպիսիները, որոնք երևան գալով մ.թ.ա. IX-VIIIդդ., թվագրող են հանդիսանում: Այդպիսիներից են օրինակ ծնավորված, ինչպես և երկեապատ ու եռասապատ կանթերը: Կանթերի այս ձևն ունեն, օրինակ, Կարմիր-բլուրի № 2 և № 3 պեղավայրերից, ինչպես և նույն հուշարձանի մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող դամբարաններից (որ. դամբ. № 3, 1956թ.) և բազմաթիվ այլ վայրերից հայտնաբերված անոթները (***Мартиросян А.А.,*** 1961, նկ.17, 29ա: Նույնի՝ 1964, նկ.73): Խոսելով կանթերի առանձնահատկությունների մասին, նշենք և կանթերի կենտրոնով անցնող ընդերկայնական ճեղքվածքները, որոնք հանդես են գալիս մ.թ.ա. VIIIդ. (***Есаян С.А.,*** 1976, էջ 196): Շիրակավանի սափորներից մեկի վրա, ինչպես տեսնում ենք, առկա է նշված հատկանիշի նախաձևը:

Խոսելով Շիրակավանից հայտնաբերված սափորների և դրանց առանձին մանրամասների զուգահեռների մասին, նշենք, որ Մեծամորից՝ մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող նյութերի շարքում առկա են ոչ միայն երկսապատ կանթով, փողաձև լայնացող վզով և հասկաձև ու ուղղահայաց ճկվածքներով զարդարված անոթներ, այլև բազմաթիվ նմուշներ, որոնց իրանները զարդարված են ուռուցիկ օձապատկերներով (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, նկ. 120-125, էջ 123-126): Նույն զարդերն ենք տեսնում և Դվինի սրբարանից հայտնաբերվածների վրա (***Кушнарева К.Х.,*** 1977, նկ. 26-29, էջ19-21, 107): Նույն ժամանակաշրջանով են թվագրվում Վանաձորից (***Караханян Г., Мирзоян В.,*** 1976, էջ 66-74), Մինգեչաուրից (***Асланов Г. Ваидов А., Ионе И.,*** 1959, աղ. XLII) և այլ վայրերից հայտնաբերված երկկանք ու եռականք սափորները, որոնց ուղեկցող նյութերը, ինչպես ասեանք վերը, նույն մետադե իրերն են ու պերճանքի առարկաները:

*Կճուճներ* - ներկայացված են «խոհանոցային» և չքեղ` «ճաշասենյակային» տեսակներով: Առաջինները, իբրև կանոն, կիսելով մրի հետքեր, պատրաստված են խոշորահատիկ ավազով հունցած կավախմորից, լավորակ անոթները սակավ են հանդիպում: Այդպիսիներից է օրինակ սև անփայլ մակերես, գնդաձև իրան և դուրս ճկված շուրթ ունեցողը: Վերջինիս սկավառակաձև կափարիչը, որը շրջանաձև փորվածքների շարքով է զարդարված, երկգագաթ բռնակ ունի (աղ. LXV9,10): Ինչ վերաբերում է մյուս կճուճներին, ապա դրանց սև կամ գորշ անփայլ մակերեսները զարդարված են սեղմմամբ ստացված ալիքաև գծերով, փոսիկների շարքով, հատիկներով, Վերջիններս մի դեպքում զարդարում են և անոթներից մեկի շուրթը: Առկա են և ամբողջությամբ

անզարդ և կամ լոկ ակոսներով զարդարվածներ (աղ. LXIII, 1,2, LXVI, 5. LXVII, 6. LXIX, 33, LXXIV, 13, LXXV, 5,6):

Կճուճների երկրորդ խումբը պատրաստված է լավ հունցած մանրավազ եավաշաղախից: Ունեն սև փայլեցրած մակերես. սև կամ գորշ խամրած մակերեսով անոթները համեմատաբար սակավ են: Փքուն կամ գնդաձև իրան. գոգավորվող կարճ վիզ և դուրս կլորացող շուրթ ունեցող այս անոթները զարդարված են ակոսներով. ուղղահայաց իջնող ուռուցիկ գծերով և կամ ծվածիր ելուստներով. մատնեքով. Առանձին նմուշների իրանը ստորին հատվածում զարդարված է սեղմամբ ստացված գծերով (աղ. LXIV, 5,6, LXVI, 2. LXVII, 4, LXVIII, 5, LXX, 2,4.5, LXXVI, 16,17): Նկարագրված անոթների զուգահեռները վերը թվարկված բազմաթիվ այլ հուշարձաններից հայտնաբերված նյութերի շարքում են:

*Ծորակավոր անոթ* - փքուն իրանով, կարճ վզով և դուրս ճկված շուրթով այս անոթի ուսի վրա ծորակ է ամրացված, որի վերին եզրից անոթի հակադիր կողմն է ձգվում կոնտրոնական հատվածում աղեղնաձև և ծայրերում ծնկաձև, ծնավորված տեսքով կանթը: Կճուճի տեսք ունեցող այս անոթի գորշ անփայլ մակերեսն ուսի մասում զարդարված է չորս ակոսագոտիներով ու դրանց միջև տարված թեք փորադիր գծերով (աղ. LXV, 6): Ծորակավոր անոթները մ.թ.ա. I հազ. համալիրների բնորոշ նյութերից են հանդիսանում: Շիրակավանի նմուշը, սակայն, ծնավոր կանթի ձևով նմանվում է Մինգեչաուրի IV դամբարանաթմբից (***Асланов Г., Ваидов А., Ионе И.,*** 1959, աղ. XLII, 2,3), Խնձորեսկից, Դվինից (նյութերը հրատարակված չեն) և մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող այլ հուշարձաններից հայտնաբերվածներին:

*Կարասաձև երկկանթ անոթներ* - իրենց օրինակով են ներկայացված, որոնցից չորսի իրանը ձգված աեսք ունի, իսկ մեկինը գնդաձև է (աղ. LXX, 6): Անոթներից մեկն ավարտվում է դուրս թեքվող կարճ վզով (աղ. LXVI, 4). մյուսների մոտ այն դուրս ճկվող, կլորացող տեսք ունի (աղ. LXXVI, 20-22): Սև կամ գորշ անփայլ մակերեսներով այս անոթներն ուսի մասում զարդարված են ակոսագոտիներով ու փորագիր ալիքագծերով. Ինչպես նախորդ փուլերի համանման անոթները, սրանք ևս իրանի հակադիր կողմերում տափակ օղակաձև կանթեր ունեն:

*Քրեղաններ*- ներկայացված են ինչպես նախկինից եկող տեսակներով, այնպես էլ նոր ձևերով: Առաջինների թվին են պատկանում կլորացող և կամ վերին մասում ուղիղ կողերով իրան ունեցողները, որոնք ավարտվում են դուրս ճկված կլորացող շուրթով (աղ. LXIII, 3-5, LXVI, 6-7'): Նորույթ չեն կոնաձև իրանով (աղ. LXVII7) և կամ ծալքավորված կողերով քրեղանները, որոնց մի մասը ավարտվում է իրանից առանձնացող ուղիղ շրթով (աղ. LXVI, 8, LXVII, 8, LXXI, 18, LXXIII, 6-9, LXXVI, 18): Հայտնի ձևերով ու ստացման եղանակներով են ներկայացված և ամանների սև. դեղնակարմրավուն, շագանակագույն ու գորշ խամրած, երբեմն փայլեցրած մակերեսներին տարված զարդերը, դրանք ակոսագոտիներ են, սեղմամբ ստացված գծեր, որոնք առանձին դեպքերում տարված են ամանի երկու մակերեսներին: Այդուհանդերձ այս ամանների վրա տեսնում ենք հատկանիշներ, որոնք նախորդ փուլում հազվադեպ հանդիպելով. այս շրջանում բնորոշ են դառնում և կամ առաջին անգամ են

հանդիպում: Այս տեսակետից հետաքրքիր են օղակաձև, բայց հատկապես ծնկաձև, ճկվածքների միջոցով եռագագաթ տեսք ունեցող կանթերը (աղ. LXVI, 8. LXVII, 8. LXXIII, 6): Ուշագրավ են և շեշտված երկկտցաձև շուրթ ունեցող քրեղանները, որոնք իրենց եզակե նախշածևը ունենալով նախորդ դարաշրջանի վերջում (ավերված դամ-րարանից հայտնաբերվածի շուրթը ավելի շուտ միակտուց տեսք ունի), այս փուլին բնորոշ գծերից են հանդիսանում (աղ. LXIX, 34,35): Ուշադրություն է գրավում և ծալքի ձևը, նախորդ շրջանին հասւկանշական, կլորացող գագաթներով ալիքները ձեռք են բերում շեշտված անցումներ:

Քրեղանների նկարագրված տարբերակների զուգահեռները բազմաթիվ են մ.թ.ա. IX-VIIIդդ. հուշարձաններում: Այդպիսիները տեսնում ենք Կարմիր-բլուրում, Մեծա-մորում, Դվինում, Գեղամի-աղբյուր և Աստղի-բլուր հուշարձաններում, Բեշտաշենում և համաժամանակյա այլ հուշարձաններում (*Мартиросян А.А.,*1961, նկ.21b: *Есаян С.А.,* 1976. աղ.120, 17,20, 125, 2, 126, 5-7, 129, 8: *Խանզադյան Է.Վ.*, *Մկրտչյան Կ.*, *Պարսամյան Է.,* 1973, նկ.72, 165, աղ. XIV, XV: *Кушнарева К.Х.,* 1977, նկ. 36. XXI: *Куфтин Б.А.,*1941, աղ. LXVIII և այլն):

*Սկուտեղներ* - սև կամ գորշ անփայլ, երբեմն դեղնա-կարմրավուն մակերեսով այս խոշոր, փռված տեսքով ամանները մի դեպքում ունեն թեթևակի կլորացող, մյու-սում՝ հատակից կտրուկ թեքվող ուղիղ կողեր: Ամաններն ունեն դեպի դուրս թեք կտրած կամ կլորացող դուրս ճկված շուրթ, որոնց տակից ակոսագոտիներ են անցնում: Վեր-ջիններս առանձին նմուշների վրա օղակում են և ամանի ներքին մակերեսը (աղ. LXIX, 34,35. LXXI, 17, LXXII, 11, LXXV, 9): Այս ամանների զուգահեռները տեսնում ենք Էլառից, Դվինից (*Խանզադյան Է. Վ.,*1979, էջ 85-86, նկ. 120: *Кушнарева К.Х.,* 1977, նկ. 36, 3, 39, 1), Մինգեչաուրից (*Асланов Г., Ваидов А.« Ионе И.,* 1959, աղ. XXXVIII, 15), Սամթավրոյից (*Абрамишвили Р.,* 1957, էջ 20) և հետազոտվող ժամա-նակաշրջանի այլ հուշարձաններից:

*Թաս-գավաթներ* - երկուսը սև, անփայլ մակերեսով, շրթից սկեվեղ օղակաձև ու կամարաձև կանթերով, օղակաձև բարձր նստուկով ամաններ են: Դրանցից մեկի կողերը ծալքավորված են և ստորին՝ կտրուկ նեղացող մասում զարդարված են փորա-գիր, անկյունաձև գծերով (աղ. LXVIII, 1): Մյուսը, որը թերի է, նստուկը եզրին պարա-նաձև զարդ ունի (աղ. LXXV, 7):

Գավաթների այլ տարբերակ են ներկայացնում սև կամ դարչնագույն, թույլ փայ-լեցրած մակերեսով, երկկոնիկ իրանով ամանները, որոնք նույնպես կամարաձև կան-թեր ունեն: Այս խեցանոթների վերին հատվածները ծալքավորված են (աղ. LXV, 5. LXVII, 9): Զգված օղակաձև կանթ ունի և ամաններից վերջինը, որի ուղիղ կողերը իրանին գլանի տեսք են հաղորդում: Այս թասի իրանը վերին մասում ակոսագոտի ունի (աղ. LXXV, 8):

Խեցանոթների քննված տարրերակների զուգահեռները րազմաթիվ են հետա-զոտվող ժամանակաշրջանի հուշարձաններում (Ոսկեհասկ, Քեթի, Սիսիան, Անզեղա-կոթ, Կարալա և այլն: Տե՛ս *Петросян Л.А.,* 1989, աղ. 70, 2, 67, 17, 64, 6, 66, 9-11: *Խնկիկյան Օ.*, 1978, աղ. II: *Казиев С.М.,* 1965, էջ 246-247, աղ.II, 8 և այլն):

*Ջնարակված ամաններ*- Ներկայացված են ֆայանսից պատրաստված երկու նմուշների պատկանող բեկորներով: Դրանցից մեկի քառակող զարդատուփի մաս է, որի կողերից մեկի վրա անցք է արված: Իրը ծածկված է երկնագույն ջնարակով (աղ. LXIII, 7): Երկնագույն ջնարակով է ծածկված և ամաններից մյուսը, որը, ինչպես և նախորդը, կոտրվածքում սպիտակ գույն ունի: Այս բեկորները, սակայն, կիսագնդաձև թասի մասեր են, որոնցից երևում է, թե այն ավարտվել է նուրբ, սրվող շրթով: Թասի շրթի տակից իրար զուգահեռ տարված են սեղմամբ ստացված հորիզոնական գծեր: Ամանի ստորին մասը զարդարված է նույն եղանակով ստացված գծերի մի քանի շարքով, որոնցից չորսն են պահպանված (աղ. LXIII, 6):

Ֆայանսից պատրաստված տարբեր տեսակների ջնարակված ամանները Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում եզակի նմուշներով են հայտնաբերված: Այդպիսիները հայտնի են Մեծամորից (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.*, 1973, էջ 44, 45), Լոռի-Բերդից (***Деведжян С.Г.***, 1981, էջ 53-55, նկ.17), Վանաձորից (***Караханян Г., Мирзоян В.***, 1976, էջ 66 ), Օշականից (***Есаян С., Калантарян А.***, 1988, էջ 97), Մելի-գելե II սրբարանից (***Мамаишвили Н.Ф.***, 1970, էջ 5-6) և մթա. X-VIIIդդ. թվագրվող այլ հուշարձաններից, ինչը և հաշվի առնելով, հետազոտողները դրանք թվագրող նյութ էին դիտում: Նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, որ ջնարակված իրերը Անդրկովկասում երևան են եկել մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկիզբ ընկած ժամանակաշրջանում (***Пицхелаури К.Н.***, 1979, էջ 41):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում ալերաստրից պատրաստված փոքր թասը: Յածրանիստ իրանով այս ամանը ունի փոքր նստուկ և օղակաձև լայն կանթ: Վերջինիս մակերեսը զարդարված է ոչ խորը ակոսներով, այդպիսիները զարդարում են սև թասի մակերեսը (աղ. LXXII, 2-2ր): Ամենայն հավանականությամբ ներմուծված արտաւորանք հանդիսացող այս իրի զուգահեռները ներկայումս մեզ հայտնի չեն: Կարող ենք նշել միայն, որ Օշականի № 97 դամբարանից, որը հետազոտողի կողմից թվագրված է մ.թ.ա. XI-Xդդ. (***Есаян С.А., Калантарян А.А.***, 1988, էջ 97, աղ. C, 1, հայտնաբերված է գավազանի ալերաստրե ծայրակալ:

Ավարտելով եայտնաբերված նյութերի քննությունը, նկատում ենք, որ դրանց մի զգալի մասը, շարունակելով նախկինից եկող ավանդույթները (այդ առավել ցայտուն է դիտվում № 5 դամբարանի նյութերի քննության ընթացքում, որոնք թերևս փոքրինչ վաղ են), հանդիպում է և հետազոտվող դարաշրջանում: Այդ նյութերին զուգահեռ, սակայն, երևան են գալիս և այնպիսիները, որոնք անծանոթ լինելով նախորդ փուլերում, լայն տարածում են ստանում ու բնորոշ դառնում մ.թ.ա. VIIIդ. սկսած (օր. ներճկված մեջքով ապարանջանները, շիգդերը, ընդերկայնական ճկվածքով կանթերը և այլն): Ելնելով նյութի այս երկվությունից, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ հատկանիշների առկայությունից (օր. երկսապատ կամ եռասապատ ու ձևավոր կանթերը և այլն) ինչպես և բերված զուգահեռներից, դամբարանների այս խումբն ու I պեղավայրի VIII կառույցը թվագրում ենք մ.թ.ա. IX-VIIIդդ.:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԵՐԿԱԹԻ ԼԱՅՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Այս դարաշրջանին են պատկանում ամրոցն ու I պեղավայրի կացարանների մեջ իջեցված երկու, ինչպես և II դամբարանադաշտի հյուսիսայի հատվածում պեղված դամբարաններից հինգը:

### 1 .ԱՄՐՈՑ
### (պեղ.՝ Թորոսյան Ռ. և Պետրոսյան Լ.)

Գտնվում է դարավանդի գագաթին: Ամրոցի հյուսիս-արևմտյան կողմը զառիթափ է, հարավում՝ սահմանափակվում է լանջերին տեղադրված բնակատեղիով, իսկ արևելքից և հյուսիսից շրջապատվում է Նոր Շիրակավանի տներով ու վարելահողերով: Այսպիսով ամրոցը ռազմապաշտպանական տեսակետից խոցելի է հյուսիսային և արևելյան կողմերից (*Պետրոսյան Լ.,* 1999, էջ 7-19):

Այս հատվածներում գետնի մակերեսին ուրվագծվում էին պարսպի որոշ հատվածներ:

Բարձունքը, որի գագաթին տեղադրված է ամրոցը, աեղացիները անվանում են «Մինասի դար»: Վերջինիս գագաթն իրենից ներկայացնում է անկանոն ձվաձիր տարածք, որտեղ երևում էին առանձին շինությունների փլատակների որոշ հատվածներ: Սրանք զբաղեցնում են տարրեր ժամանակաշրջանների պատկանող հնագիտական նյութերով հագեցված շուրջ մեկ հեկտար տարածություն (հանույթ, նկ.12): Պեղումների համար ընտրվեց ամրոցի հյուսիս-արևմտյան հատվածը: Այստեղ 1979-1981 թթ. ուսումնասիրվեց ավելի քան 1500մ2 մակերես: Պեղումներով պարզվեց, որ այստեղ մշակութային շերտի հզորությունը տատանվում է 1.5-2մ միջև: Պեղումները սկսվեցին ընտրված հատվածի ծայր հյուսիս-արևմտյան անկյունից, ուր զառիթափի եզրին, հողի կտրվածքի մեջ նկատելի էին խոշոր քարերով շարված միաշար պատի մնացորդներ: Այստեղից արևելք, պատի արտաքին կողմում, պեղումների միջոցով բացվեց ամրոցի հյուսիսային պարսպի 35մ երկարությամբ մի հատված: Պատը կառուցված է ճեղքված խոշոր քարաբեկորներով, որոնք իրար են միացած կավացեխով և մանր քարաբեկորներով: Այն որոշ հատվածներում ունի 1.1-1.4մ լայնություն: Հյուսիսային

պարսպի ուսումնասիրված հատվածից 8մ դեպի արևելք առկա է քառանկյունաձև հատակագծով հզոր որմնահեց (երկ. 7.5մ, արևմտյան լայնքը 3.4մ, արևելյանը 2.6մ), որից դեպի արևելք ձգվող պասը խիստ քայքայված է: Որմնահեցի արևմտյան անկյան երկու շարք պահպանված միաշար պատը ունի 8մ երկարություն: Այն դրված է 0.4-0.5մ հաստություն ունեցող մոխրախառն ողղաշերտի վրա, որից ցած բնական ժայռերն են:

Պարսպի արտաքին կողմում, վերին մակարդակից սկսած մինչև 1մ խորություն, լցված էր պարսպից թափված քարերով ու հողով, որի մեջ հնագիտական նյութերը բացակայում էին: Վերոհիշյալ խորությունից ցած 20-30սմ հզորությամբ շերտում հայտնաբերվեցին մանր քարեր ու խեցանոթների բեկորներ: Այս հորիզոնում բացված խարամով ու փայտածխի մնացորդներից առաջացած 1.2-2մ տրամագծով և շուրջ 20-30սմ բարձրությամբ մոխրակույտը իրենից ներկայացնում էր ամրոցից դուրս թափված աղբ: Այս փաստի օգտին են վկայում նաև մոխրակեւյտի պատն ի վեր բարձրացող մակերեսը և պատի չմրոտված վոճակը: Նույն հատվածում, ամրոցի պատի հիմքի ստորին մակարդակեց ցած, մոխրախառն հողաշերտի մեջ, հայտնաբերվեցին մ.թ.ա. III հազ. խեցեղենի բեկորներ: Այս փաստը ցույց է տալիս, որ պարսպապատը կառուցելու ժամանակ վաղ բրոնզեդարյան շերտը հարթեցվել է:

Ինչպես նշվեց վերը, պարիսպը հյուսիսային կողմում ունի որմնահեց, որը պահպանված է երկու լար բարձրությամբ. յուրաքանչյուր լարի բարձրությունը 0.5մ է: Որմնահեցի արտաքին երեսը շարված է համեմատաբար լավ մշակված մակերես ունեցող ժայռաբեկորներով: Նշենք, որ այս երևույթը դիտվում է և Հայաստանի այլ ամրոցներում (*Есаян С.А.*, 1976, էջ 15-98; *Միքայելյան Գ.Հ.*, 1968; *Ղաֆադարյան Կ.Կ.*, 1972, էջ 151-162):

Որմնահեցի և նրանից դեպի արևելք ձգվող պատի մոտից գտնվեցին օգտագործումից դուրս եկած աղորիքներ, տրորիչներ, տուֆ քարից պատրաստված ջրավազանի ու խեցանոթների բեկորներ, ոսկրե նետասլաք և վանակաuի խոշոր ցլեպ: Այս տարածքը հավանաբար հանդիսացել է աղբանոց:

Հյուսիսային պարսպից ներս բացվեցին միջնորմով միմյանցից բաժանված երկու սենյակ (a, b), որոնք եադորդակցվել են 0.8մ լայնություն ունեցող մուտքով: Նշենք, որ a սենյակի հյուսիսային պատը քարհանքի շահագործման հետևանքով ավերվել էր: Հարավային կողմի սենյակը (b) շարված էր համեմատաբար լավ մշակված քարերով և ուներ 0.9մ լայնությամբ մուտքի բացվածք: Այստեղ շերտի հզորությունը հասնում էր 1մ: Հյուսիսային սենյակից (a) նյութեր չհայտնաբերվեցին, իսկ b սենյակում գտնվեցին փայտածխի մնացորդներ, աղորիքի մասեր և այլ խեցանոթների բեկորներ ու կենդանիների բազմաթիվ ոսկորներ: Հատակը կավածեփ էր, որից ցած ամրացված եողաշերտ էր:

Այս սենյակներից դեպի հարավ և հարավ-արևելք ընկած տարածքում բացվեցին երկու համալիր: Պեղված ընակելի համակառույցներից յուրաքանչյուրը բաղկացած է երկու բաղադրամասերից` ընդարձակ գլխատնից և նրան կից փոքր սրահից: Դրանց պատերի և սալահատակների կառուցման համար օգտագործված են նախկին

շինությունների և հնավայրերի մոտ գտնվող տուֆի հանքերից կտրված քարերը:

Շենքերի պատերի հիմքերը և հատակները, ինչպես նշվեց վերը, դրված են հին շինությունների փլատակների մեջ, որոնք գետնի մակերեսից 0.8-1.3մ խորության մեջ են գտնվում: Պատերի գետնի մեջ իջեցված հատվածները միաշար են և հենված են հողի կտրվածքին: Գետնի մակերեսին ազատ կանգնած պատերը երբեմն երկշար են և ունեն 1-1.4մ հաստություն: Նշենք, որ այն դեպքում, երբ գետնից վեր բարձրացող պատը միաշար է, ապա այն կառուցվել է համեմատաբար խոշոր քարերով: Միաշար պատերը հաճախ հենված են նրանց ետևում լցված քարալիցքին, որի բարձրությունը երբեմն հավասար է պասի բարձրությանը:

*I համալիրը*- գտնվում է նախորդ սենյակների հարավ և հարավ-արևմտյան կողմերում (տե՛ս սենյակ 1 և 2): Ինչպես նշվեց, այն բաղկացած է ընդարձակ գլխատնից և նրա հյուսիս-արևմտյան կողմում կառուցված փոքր սրահից:

Կիսագետնափոր կառույցների պատերը առանձին հատվածներում պահպանվել են 1.3մ բարձրությամբ:

*Փոքր սրահ (№1)* -զբաղեցնում է շուրջ 25մ² մակերես: Նրա հյուսիսային և արևելյան պատերը պահպանված են երեք, իսկ հարավայինն ու արևմտյանը՝ ընդամենը մեկ շարք բարձրությամբ: Սրահի հարավ-արևելյան անկյունում 1.3մ երկարությամբ, 0.3մ բարձրությամբ և շուրջ 0.8մ լայնությունն ունեցող կավածեփ փոքրիկ հարթակ էր կառուցված, որի վրա դրված էր բազալտե աղորիքը իր տրորիչի հետ միասին: Այստեղ գտնվեցին նաև խեցանոթների մի քանի բեկորներ:

Փոքր սրահի կենտրոնում տեղադրված էր իրար վրա դրված 0.5մ տրամագծով անկանոն շրջանաձև երկու քարից կազմված խարիսխը: Քարերից ստորինը 0.2մ խորությամբ իջեցված էր կավաշեն հատակի մեջ և լրացուցիչ ամրացված էր շուրջը դրված մանր քարերով ու կավացեխով: Այան հիմնաքարերի ընդհանուր բարձրությունը 0.3մ է:

*Գլխատուն I* - գտնվում է սրահի հարավ-արևելյան կողմում և զբաղեցնում է 72մ² մակերես: Սրանք միմյանց հետ կապված են փոքր սրահի հարավային պասի մեջ արված 0.7մ լայնությամբ, երկու մետր երկարությամբ նեղ միջանցքով: Վերջինին հատակը սալապատ է, որը հարևան սենյակի հատակից բարձր է 0.3 մետրով: Մուտքի պատերի անկյունաքարերը պահպանված են երեք լար բարձրությամբ: Գլխատան ներսում, մուտքի հարավային կողմում, սալապատ հատակի վրա, անխաքար վեճակում պահպանված էր տուֆ քարից պատրաստված կրնկաքարը: Սենյակի հատակը հյուսիս-արևելյան և արևելյան պատերի առջև սալապատ է: Այն ունի 2.5մ լայնություն: Արևելյան պասի երկարությամբ, սալահատակի վրա կառուցված էր քարաշեն մսուր (երկարությունը՝ 6.5մ, բարձրությունը՝ 0.6մ, լայնությունը՝ 0.4մ): Սենյակի հարավ-արևելյան անկյունում քարաշար պատերով առանձնացված էր շուրջ 6մ² մակերեսով ամբար, որի պատը ունի 1.1մ բարձրություն: Ամբարի դիմաց՝ արևմտյան պատին հենած էր ասաիճանի դեր կատարող մի քար: Այս կառույցի սալապատ հատակը սվաղված էր կավացեխով, որի միջից գտնվեցին որձաքարից պատրաստված թասի, աղորիքների և սակավաթիվ խեցանոթների բեկորներ: Ամբարի

մոտ գլխատան արևելյան պասփն կից, պատրաստված էր 0.4մ բարձրությամբ, 1.5մ երկարությամբ, 0.3մ լայնությամբ նստարան: Սենյակի հարավ-արևմտյան կորացող անկյունում, կավածեփ հատակի վրա դրված էր երկար բանեցված մակերեսով մի աղորիք իր տրորիչի հետ միասին: Դրա մոտ բացվեց քարերով կառուցված օջախ, որի մեջ պահպանված էր մոխրի շեղջը:

Սենյակում բացվեցին չորս խարիսխ: Դրանց տուֆ քարից պատրաստված, անկանոն քառանկյունաձև հիմնաքարերը գտնվեցին գրեթե անխախտ վիճակում: Սրանցից հյուսիս-արևելյանը, որը արևմտյան և հյուսիսային պատերից հեռու էր 2.5մ, փոքր սրահի սյան հիմնաքարերի նման բաղկացած էր իրար վրա դրված երկու քարերից, իսկ մյուսները միակտոր են: Պատերից նույնպիսի համաչափ հեռավորություն ունեցող հարավ-արևելյան սյունը դրվել է վերոհիշյալից 4մ դեպի հարավ-արևելք, գլխատան ներսում գտնվող ամբարի պատերի կազմած արտաքին անկյունում: Սյան հիմնաքարի տվյալ տեղում լինելը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ ամբարի պատերը չեն բարձրացել մինչև սենյակի առաստաղը:

Նույնպիսի պատվեր դիտվեց և II համակառույցի գլխատանը: Այդպիսիք առկա են նաև Թմբադիր ամրոցի սենյակներում (***Есаян С.А.,*** 1976, էջ 55-56): Հյուսիս-արևմտյան սյան հիմնաքարը արևմտյան պատից հեռու էր 1.5մ, հյուսիսայինից՝ 2.5մ: Հարավ-աբևմտյանը գտնվեց արևմտյան պատից 1.65մ հեռավորության վրա:

*II համալիր* - գտնվում է նախորդի հարավ-արևմտյան կողմում: Այն ևս բաղկացած է երկու բաղադրամասերից ընդարձակ գլխատնից և փոքր սենյակից:

***Փոքր սենյակ (№ 3)*** - գտնվում է մեծի հարավ-արևելյան կողմում: Հատակագծում ուղղանկյունաձև այս կառույցը գբաղեցնում է շուրջ 25մ2 մակերես և մեծ սենյակի հետ կապված է արևելյան պատի մեջ գտնվող մուտքի միջոցով: Տուֆ քարերով շարված 0.8-0.9մ բարձրությամբ պահպանված պատերից արևելյանն ու հարավայինը միաշար են և հենված են հողի կտրվածքին:

Կառույցի արևմայան պատը երկշար է և ունի մեկ մետր լայնություն: Պատերի ներսի երեսները թեթևակի մշակված են և սվաղված հաստ կավացեխով: Արևմտյան պատի մեջ գտնվող մուտքը շարված է համեմատաբար լավ մշակված քարերով: Դուռն ունի 0.7մ լայնություն: Դռան շեմը գլխատան հատակից բարձր է 30սմ: Սենյակի ներսում, մուտքից ձախ, դրված էր դռան կռնկաքարը: Սալապատ եատակը սվաղված էր կավաշաղախով: Սենյակի կինտրոնում հայտնաբերված խարիսխը ուներ 0.6մ բարձրություն և 0.5մ տրամագիծ: Սենյակի հարավային պատի երկայնքով կառուցված էր քարաշեն, կավացեխով ծեփված նստարան: Այն ունի 0.8մ լայնություն, 0.4մ բարձրություն:

Նսաարանի քարերից երկուսը տուֆից պատրաստված ամբողջացող (երկարությունը 0.8մ, լայնությունը 0.44մ, խորությունը 0.3մ) ջրավազանի բեկիրներ էին: Սա Շիրակավանի ամրոցի այս շերտում գտնված երրորդ ջրավազանն էր: Մուտքի երկու կողմերում եայտնաբերվեցին աղորիքներ, տրորիչներ, կոկիչներ և գետաքարերից պատրաստված տարբեր ձևերի ծեծիչ-եդկիչներ: Ուշագրավ են նաև այս գործիքների միջավայրում գտնված սովորական գետաքարերը: Սրանք, ամենայն հավանա-

կանությամբ եղել են գործիքների պատրաստուկները: Հետաքրքիր է, որ նման իրավիճակ է բացվել նաև Շիրակավանի II պեղավայրի № 1 շինությունում և Արգիշտիխինիլիի № 11 առանձնատանը*: Սենյակում գտնվեցին նաև խեցանոթների սակավաթիվ բեկորներ:

*Գլխատուն II*- սա ամրոցում բացված ամենից ընդարձակ ու հետաքրքիր սենյակն է: Այս կառույցի քարաշար պատերը սյահպանված են 0.8-1.3մ բարձրությամբ: Գլխատունը ունի երկու մուտք: Դրանցից մեկը գտնվում է հարավ-արևմտյան անկյան մոտ՝ արևմտյան պատի մեջ, իսկ երկրորդը, ինչպես նշվեց՝ արևելյան պատի մեջ, որով և գլխատունը հաղորդակցվել է փոքր սենյակի հետ: Մուտքերն ունեն 0.7մ լայնություն: Մեծ սենյակի ներսում, արևմտյան դռան մոտ, սալահատակի վրա գտնվեց դռան կրնկաքարը: Ի տարբերություն սովորական կրնկաքարերի, վերջինիս մակերեսներին առկա են ոչ թե մեկ այլ՝ երկու շրջանաձև փոսիկ: Դրանցից մեկը խորն էր, իսկ մյուսը՝ ոչ: Ինչպես երևում է տուֆ քարից պատրաստված այս կինկաքարը միևնույն նպատակին ծառայել է երկորդ անգամ: Մուտքի բացվածքում, շեմի վրա ընկած էր հարթեցված մակերեսով երկարավուն մի քար, որի վրա աբված էր 10սմ երկարությամբ, 8սմ լայնությամբ և 6-7սմ խորություն ունեցող քառանկյունաձև փոսիկ: Թվում է, որ այդ քարը դրված է եղել մուտքի շարվածքի մեջ և ծառայել է դուռը սողնակով փակելու նպատակին: Վերոհիշյալ միջավայրում գտնվեց մակերեսին շրջանաձև փոսիկ ունեցող մեկ այլ քար, որը հավանաբար հանդիսացել է դռան վերին հիմնաքարը: Ինչպես առաջին եամալիրում, այնպես էլ այստեղ, իրենց տեղում գտնված կինկաքարերը ցույց են տալիս, որ դռները բացվել են դեպի սենյակների ներսը: Այս տեսակետից հետաքրքիր է ժողովրդական այն հավատալիքը, համաձայն որի. «եթե տան դուռը դուրս բացվի բարիքն էլ կգնա դուրս»:

Նույն սկզբունքով են կառուցված Արգիշտիխինիլիի (***Мартиросян А.А.,*** 1974, էջ 53-73; *Ղաֆադարյան Կ.Կ.,* 1984) և Կարմիր բլուրի (***Мартиросян А.А.,*** 1961, էջ 7-26) քաղաքային թաղամասերի առանձնատների բոլոր դռները: Գլխատան արևմայան մուտքից աջ, պատի դիմաց, սալահատակի վրա կառուցված էր մի նստարան: Հարավ-արևելյան անկյունում պատրաստված էր շուրջ 11մ2 մակերեսով ընդարձակ թմբիկ-մահիճ, որի եզրերը շարված էիս տուֆե անմշակ քարերով, իսկ մակերեսը կավածեփ էր: Սբա հարավ-արևելյան անկյունում տեղադրված էր շարժական օջախ, որի մոտից գտնվեցին կավակերտ շրջանաձև կիղերով սաջերի բեկորներ և մոխրակույտ: Մահիճ-թմբիկի եզրաշարի քարերից մի քանիսի վրա առկա են փոքրիկ անցքեր, որոնք ամենայն հավանականությամբ, ծառայել են մանր եղջերավոր անասուններ կապելուն:

Գլխատան արևմտյան պատի եբկայնքով ևս կառուցված էր մի նստարան: Այն ունի 1.7մ երկարություն, 0.5մ բարձրություն և նույնքան էլ լայնություն: Գլխատան հյուսիկադին կեսում կավաշեն հատակի մեջ ամրացված էին անկանոն քառանկյունաձև երկեւ խարիսխ (չափերը՝ տրամագիծը 0.5-0.6, իսկ բարձրությունը 10սմ): Անխախտ վիճակում հայտնաբերված այս խարիկխները տեղադըված են արևելյան և արևմտյան պատերից 1.7մ, իսկ հյուսիկայիկից՝ 2.85մ հեռավերության վրա: Դըանց

հեռավորությունը արևելք-արևմուտք առանցքով 3.8մ է: Մեկ այլ խարիսխ էլ գտնվեց մահիճ-թմբիկի անկյունում:

Ամենայն հավանականությամբ եղել է և չորրորդ խարիսխը, որը բացակայում էր: Չի բացառվում, որ վերջինիս դերը կատարած լինի և սալահատակի քարերից մեկը: Գլխատան արևմտյան մասում բացվեց 4.8մ2 մակերեսով մի տարածություն, որը գլխատնից բաժանված էր միջնորմով: Հավանորեն այն հանդիսացել է տնտեսական մաս, որտեղից էլ բարձրանում էին գլխատունը բակի հետ կապող քարակերտ աստիճանները:

Տնտեսական անկյան հատակին հայտնաբերվեց կարմիր տուֆ քարից պատրաստված մի խոշոր՝ 1.2մ երկարությամբ, 0.8մ լայնությամբ, 0.5մ խորությամբ ջրավազան, որի պատերի հաստությունը 0.1մ է: Հայտնաբերման ժամանակ այն ճաքած էր և իջեցված սալահատակի մակարդակից ցած: Սա Շիրակավանի ամրոցում հայտնաբերված երեք ջրավազաններից միակն էր, որ գտնվում էր իր նախնական տեղում՝ անխախտ վիճակում և մեծ կարևորություն ունի բնիկների կենցաղի ճանաչման գործում: Ջրավազանների գոյությունը հնավայրի վերին շերտում վկայում է մոտակայքում աղբյուրների բացակայության և ջուր ամբարելու անհրաժեշտության մասին: Ուշագրավ է, որ ջրասակավ և բնական աղբյուրներից հեռու գտնվող ուրարտական բնակատեղիներում և ամրոցներում ևս առկա են ոչ մեծ ծավալի ժայռերի մեջ փորված կամ մեծ մասամբ տուֆ քարերից պատրաստված ջրամբարներ (*Burney C.* and *Lasson T.R.J.* 1960, p 178-182; *Ղաֆադարյան Կ.Կ.*, 1984, էջ 89-93): Այսպիսով, II բնակելի համալիրի գլխատունը ներկայացնում է նստարաններով, մահիճ-թմբիկով ու տնտեսական անկյունով կահավորված մի ընդարձակ դահլիճ, որի հատակը մասամբ սալապատ է: Դահլիճի հարթ գմբեթաձև տանիքը հենված է եղել չորս փայտե սյուների վրա: Ծածկի կենտրոնում հավանաբար գտնվել է լույսի ներթափանցման ու օդափոխության նպատակին ծառայած երդիկը: Նման ծածկերով կացարանները բնորոշ են Հայաստանի նախնադարյան տնաշինական ավանդույթներին (***Мартиросян А.А.***, 1961, էջ 7-37): Սրանք առավել մեծ տարածում են ստանում մասնավորապես ուրարտական (***Мартиросян А.А.***, 1974, էջ 7-73) և նրան հաջորդած ժամանակաշրջաններում՝ գոյատևելով մինչև մեր օրերը: Ներկայացված գլխատները իրենց ներքին կահավորմամբ ու ծածկի հորինվածքով մի տեսակ միջանկյալ օղակ են ուրարտական առանձնատների կենտրոնական միջուկը հանդիսացող սյունազարդ դահլիճների և հռչակավոր անտիկ ժամանակաշրջանի տնաշինության միջև: Սա ակնառու է դառնում, երբ համադրության մեջ ենք վերցնում Արգիշտիխինիլիի № 5 և 10 առանձնատների* և Շիրակավանի անտիկ բնակավայրի** կացարանների ներքին կահավորման մանրամասները: Այն իր հաստատումն է գտնում նաև գրավոր աղբյուրներում: Շիրակավանի կիսագետնափոր գլխատները նման են «Անաբասիս»-ում նկարագրված, մարդկանց և կենդանիների համատեղ բնակությանը ծառայած տներին (*Քսենոփոն*, 1970, էջ 97):

---

* Պեղումները *Ռ.Թորոսյանի*. չհրատարակված նյութեր:

** Պեղումները *Ֆ.Տեր-Մարտիրոսովի*. չհրատարակված նյութեր:

Այժմ անցնենք հայտնաբերված նյութերի քննարկմանը, որոնք ներկայացված են քարից, ոսկրից և կավից պատրաստված աշխատանքային գործիքներով, զենքերով, խեցեղենով և այլ առարկաներով:

*Աշխատանքային գործիքներ-* ներկայացված են հացահատիկային մթերքների մշակման, կաշեգործության, մանածագործության և այլ բնագավառներում օգտագործված քարե և ոսկրե գործիքներով: Դրանցից են որձաքարից պատրաստված նավակաձև աղորիքները (աղ. LXXIX, 5), կիսագնդաձև սանդերը (աղ. LXXIX, 1), գետաքարից պատրաստված ծեծիչներ - տրորիչները, որոնք ունեն երկարուկ, կլորացված անկյուններով քառակող տեսք (աղ. LXXIX, 3):

Առանձին խմբով են ներկայացված կոկիչները, որոնց շարքում մեծ թիվ են կազմում գետաքարից պատրաստված բազմանիստ (աղ. LXXIX, 4) և հրաբխային խարամից՝ ուռուցիկ մեջքի մասով (աղ. LXXIX, 6) տեսակները: Այս գործիքները, գրեթե անփոփոխ հանդես են գալիս բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններում:

Նման ժամանակագրական ընդգրկում ունեն նաև տուֆից պատրաստված անվականման, կլոր միջանցիկ անցքով ծանրոց-կախիկները (աղ. LXXIX, 8,11), քարից ու խեցու բեկորներից պատրաստված շրջանաձև իրերը (աղ. LXXIX, 14): Ի տարբերություն վերոհիշյալ աշխատանքային գործիքների, Շիրակավանի ամրոցից հայտնաբերված, որձաքարից պատրաստված 9սմ տրամագծով և մի կողմից քիչ ներճկված կողով, 3սմ խորությամբ թասը (աղ. LXXIX, 2) հանդիսանում է ուրարտական մշակույթին բնորոշ թասերի (***Мартиросян А.А.,*** 1974, էջ 164-167, նկ. 103-105а) ընդօրինակված ձևը տեղական մշակույթում, որը սակայն իր բնօրինակներից փոքր-ինչ տարբերվում է քարի մշակմամբ և ձևի կատարելությամբ:

Շիրակավանի ամրոցից հայտնաբերված աշխատանքային գործիքների մեկ այլ խումբ են կազմում ոսկրից պատրաստված իլիկի գլուխները, ծակրչները և քերիչը: Իլիկի գլուխները (աղ. LXXIX, 12) հանդիսանում են դեռևս Հայաստանի վաղ երկրագործական դարաշրջանում սկիզբ առած և հետագայում լայն տարածված, մանածագործության բնագավառում օգտագործված գործիքներ:

Այդ են ապացուցում Հայաստանի բրոնզի և երկաթի ժամանակաշրջաններին պատկանող բազմաթիվ հուշարձաններից հայտնաբերված, ոսկրից և քարից պատրաստված օրինակները:

Գոյատևման երկար ժամանակագրական ընդգրկում ունեն նաև Շիրակավանից հայտնաբերված ծակիչները: Դրանք երկու տեսակի են. մի տեսակը իրանը ունի սահուն անցումներով քառակող տեսք, որի ստորին մասը սրածայր է, ինկ վերին մասում առկա է ուղղահայաց, շրջանաձև միջանցիկ անցք (աղ. LXXIX, 10): Մյուս տեսակը ստորին ծայրը սուր է, ինկ վերինը հարթ կտրված (աղ. LXXIX, 16): Վերջին տեսակը իրանները կտրվածքում շրջանաձև են: Ոսկրե գործիքների շարքում առկա է նաև քերիչ (աղ. LXXIX, 7): Այն պատրաստված է կենդանու կողոսկրից և ունի հարթ, հղկված մակերես ու կլորացված կողեր, որը վկայում է նրա երկարատև գործածության մասին: Գործիքի վերին մասը կտրված է, ըստ ստորինը հարմար է կաշի և այլ իրեր քերելու համար: Այս գործիքի հեռավոր զուգահեռ կարող է հանդիսանալ Թեղուտի

վաղ երկաթագործական բնակատեղիից հայտնաբերված ոսկե քերիչը (*Թորոսյան Ռ.Մ.*, 1976, էջ 57, տախտ. III, 13):

*Զենքեր* - ներկայացված են ոսկե նետասլաքների երկու տարբերակով, առաջին տարբերակն է կազմում կտրվածքում քառանիստ իրանով և շրջանաձև պոչուկով նմուշը (աղ. LXXIX, 13): Սա իրանի հիմնամասի ձևով նմանվում է Շենգավթի (*Ենգիբարյան Ն.Գ.*, 1982, էջ 102, նկ. 1, 2) և Քեթիի (*Պետրոսյան Լ.Ա.*, 1983, էջ 67, նկ. 1, 2, մ.թ.ա. X-IX դարեր) նետասլաքներին, իսկ իրանի քառանիստ տեսքով՝ Ստեփանավանից (*Хачатрян Т.С.*, 1959, նկ. 38; *Ենգիբարյան Ն.Գ.*, 1982, էջ 102, նկ. 13), Գավառից (*Есаян С.А.*,1966, էջ 46), Բջնիից (*Ենգիբարյան Ն.Գ.*, 1982, էջ 102, նկ. 20) և Նորաշենի ամրոցի մ.թ.ա. V-IVդդ. թվագրվող շերտից հայտնաբերվածներին (*Есаян С.А.*, 1976, էջ 76, աղ.621): Ի տարբերություն մեր նմուշի, նշված հնավայրերից հայտնաբերվածների իրանի եիմքում առկա է եռանկյունաձև կտրվածք: Ճիշտ նման հիմնամասի ձև ունի նաև Շիրակավանի ամրոցից հայտնաբերված նետասլաքների երկրորդ տարբերակը, որի իրանը, սակայն, կտրվածքում շեղանկյունաձև է (աղ. LXXIX, 12 ա): Ինչպես տեսնում ենք Շիրակավանի նետասլաքների երկու տարբերակներն էլ առանձին-առանձին վիրցված, իրենց վիա կոում են բրոնզի և երկաթի դարաշրջանների հատկանիշներ և հայտնի են Բեղենիից (*Гобеджишвили Г.*, 1980, աղ. XI), Սակորիանոյի (Ալազանի հովիտ) դամբարանադաշտերից (*Дедабришвили Ш.Ш.*, 1979, աղ. XIII), Բեշտաշենից (*Чубинишвили Т.Н.*, 1957, նկ. 16), Բաբա-Դերվիշից (*Алиев В.*, 1971, էջ 230, նկ. 63) և այլ վայրերից:

Ամրոցի նյութերի շարքում առկա է նաև իժնունքից պատրաստված կախիկ-զարդ (աղ. LXXIX, 15): Նման զարդերը լայն տարածում ունեն ուշ բրոնզի և երկաթի ժամանակաշրջաններին պատկանող հուշարձաններում. հայտնի են Շիրակավանի համաժամանակյա (մ.թ.ա. VII-VIդդ.) դամբարաններում, Դվինում (*Кушнарева К.Х.*, 1977, էջ 38, նկ. 5, աղ. XXVII), Քեթիում (*Петросян Л.А.*, 1989, աղ. 72) և բազմաթիվ այլ հուշարձաններում: Այս հավաքածուի մեջ առկա է կավից, ձեռքով պատրաստված քառաթև իրի եզակի նմուշ (աղ. LXXIX, 9): Հայաստանի նախնադարյան մշակույթում նման իրեր մեզ հայտնի չեն: Բացառված չէ, որ այն հանդիսացել է ինքնատիպ մի խաղալիք:

Այսպիսով, ինչպես պարզվից, Շիրակավանի ամրոցից հայտնաբերված քարե և ոսկե գործիքների և զենքերի ուսումնասիրությունից, դրանք լայն տարածում են ունեցել բրոնզի և երկաթի դարաշրջաններում, ուստի և դժվար է ժամանակագրական սանդղակում որոշել դրանց տեղը: Այդ տեսակետից մեծ կարևորություն ունեն ամրոցից ձեռք բերված տարատեսակ խեցեգործական արտադրանքի նմուշները (աղ. LXXVII, LXXVIII):

*Քրեղաններ*- ներկայացված են վեց տարբերակով: Առաջին տարբերակն են կազմում սև հարդարված արտաքին և զորշ, կոկիչով հղկած շուրթով և ներքին մակերեսով, երկբեք իրանով, դեպի ներս թեքված կլոր շուրթով նմուշները:

Ամանները զարդարված են թույլ ներճկված ակոսներով և կամ վերադիր զոտիով (աղ. LXXVII2; աղ. LXXVIII1): Քրեղանների այս տեսակը իր ձևով նման է Հայաստա-

ստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի նյութերին: Սակայն Շիրակավանի ամրոցից հայտնաբերվածները վերոհիշյալ ներից տարբերվում են արտաքին և ներքին, ինչպես նաև շուրթերի կոկոչով հարդարվածությամբ, հատկանիշ, որը բնորոշ է Հայաստանի երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի խեցեղենին, որոնք հայտնի են Կարմիր-բլրի մ.թ.ա. VII-VI դարերին պատկանող շերտից*: Երկրորդ տեսակն են կազմում կարմիր հարդարված արտաքին և ներքին մակերեսով, երկթեք իրանով, դուրս թեքված շուրթով օրինակները (աղ. LXXVIII, 2): Սրանք իրենց ձևով և գույնով նմանվում են Գոլովինոյից հայտնաբերված բաց դարչնագույն, սև և կարմիր քրեղաններին (***Мартиросян А.А.,*** 1954, աղ. XII, 1-4, մ.թ.ա. VII-VI դդ.), Կարմիր-բլուրի կարմիր թասերին (***Мнацаканян А.О., Тирацян Г.А.,*** 1961, էջ 80, աղ. 1, 1), Աթարբեկյանի մ.թ.ա. VII-VIդդ. թվագրվող գորշ փայլեցվածներին (***Мнацаканян А.О.,*** 1955, էջ 32, նկ. 6) և Սուրբ-Նահապետի ամրոցի III շուրֆից հայտնաբերվածներին (***Есаян С.А.,*** 1976, էջ 72, աղ. 58, 5), որոնք նույնպես թվագրվում են մ.թ.ա. VII-VIդդ:

Երրորդ տարբերակն են կազմում կարմիր, դարչնագույն և գորշ հարդարված կամ փայլեցված մակերեսներով, դուրս թեքված շուրթով քրեղանները (աղ. LXXVII, 3,12,13): Սրանցից մեկի ուսերը զարդարված են փայլեցմամբ արված ալիքաձև գծերով և քիչ բարձր ելունդազոտիով (աղ. LXXVII, 3), մյուսի իրանի ուռուցիկ մասում արված է մեկ հորիզոնական ակոսազոտի (աղ. LXXVII, 13), իսկ երրորդը անզարդ է (աղ. LXXVII, 12): Սրանց զուգահեռները ևս հայտնի են Գոլովենոյից** և Քեթիի մ.թ.ա. VII-VI դարերին պատկանող դամբարաններից (***Петросян Л.А.,*** 1989, աղ. 71,73): Չորրորդ տարբերակն են կազմում գորշ հարդարված մակերեսներով, իրանի շեշտված անցումով, դեպի դուրս լայնացող կլոր շուրթով, հարթ հատակով նմուշները (աղ. LXXVII, 1,4,5; աղ. LXXVIII, 3,5): Այս քրեղանների զուգահեռները համաժամանակյա մշակույթում հայտնի են Կարմիր-բլուրից***, Գոլովենոյից****, Քեթիի կոկլոպյան ամրոցի վերին հորիզոնից (*Պետրոսյան Լ.Ա.,* 1983, էջ 67, աղ. I, 25) և այլ վայրերից: Այդպիսիք հայտնի են և հետագա ժամանակաշրջանից, որը փաստարկվում է Ջրաշենից (***Мнацаканян А.О., Тирацян Г.А.,*** 1961, էջ 80, 7, 2, մ.թ.ա.V-IV դդ.), Շահլամա II -ի № 8 փոսորակի վերին շերտից (***Есаян С.А.,*** 1976, էջ 31, աղ. 17, մ.թ.ա. VI-Vդդ), Նորաշենի բերդից (***Есаян С.А.,*** 1976, էջ 75, աղ. 61, մ.թ.ա. VI-Vդդ) հայտնաբերված նյութերով,

Հինգերորդ տարբերակը ներկայացված է դարչնագույն, կոկիչով հարդարված արտաքին և ներքին մակերեսներով, դեպի դուրս քիչ լայնացող վերին մասով, կլոր շուրթ ունեցող քրեղաններով, որոնց իրանի վրա առկա է մեկ հորիզոնական ակոսազոտի (աղ. LXXVII, 9): Սրա նմանակները կարելի է տեսնել Մեծամորի «հնոցների» շերտից (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.Հ., Պարսամյան Է.Ս.,* 1973, աղ. XV, 2) հայտնաբերված ակոսազոտիներով և կանեյուրներով զարդարված խեցեղենի շարքում:

---

* ՀՊՊԹ, 2285/9, 2286/31:

**ՀՊՊԹ, 291/49,57:

***ՀՊՊԹ, 2286/57,85,91:

****ՀՊՊԹ, 209/31:

*Թասեր-* Ներկայացված են երկու տարրեր չափերի կարմիր անգոբապատ մակնրեսներ, կոսազնդաձև իրան, կլոր շուրթեր ունեցող օրինակներով (աղ. LXXVII, 6,7): Սրանց շուրթերի տակ արված է մեկական հորիզոնական ակոսագոտի: Այս թասերը հանդիսանում են ուրարտական խեցեգործական արտադրանքին բնորոշ նմուշներ և իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Երևանի Մոսկովյան փողոցում բացված ուրարտական դամբարանում (***Мартиросян А.А.,*** 1964, աղ. XXIII, 5,6), Յոոոմում (*Badalyan R., Kohl P., Stronach D., Tonikyan A.,* 1994, նկ. 5) և մի շարք ուրարտական այլ հուշարձաններում (*Kroll S.,* 1976, տ. 28):

*Ափսեներ-* Ներկայացնում են երկու տարբերակով, Առաջին տարբերակն են կազմում սև, գորշ և կոեմագույն հարդարված մակերեսներով, դեպի դուրս փռված կողերով և կլոր շուրթով նմուշները (աղ. LXXVII, նկ.10,11; աղ. LXXVIII, նկ.4,8): Սրանց մի մասի շուրթի տակ արված են մեկական եորիզոնական ակոսագոտի, իսկ մի դեպքում էլ այն արված է ներսի կողմում (աղ. LXXVII, նկ.11): Բացի այդ դրանց մի մասի շուրթի վրա առկա են մեկ կամ երկու շրջանաձև միջանցիկ անցքեր:

Խեցեղենի այս տեսակը սկոզբ առնելով վաղ երկաթի ժամանակաշրջանում, իր զարգացումն է ապրել մինչև մ.թ.ա. VI դարը: Սրանց բազմաթիվ զուգահեռները հայտնի են Շիրակավանի մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող դամբարաններից, Ոսկեհասկից (***Петросян Л.А.,*** 1989, աղ. 66, 6, աղ. 67, 16), Աստղաձորից*, Մեծամորից (*Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.Յ., Պարսամյան Է.Ս.,* 1973, աղ. XV, 3), Գավառից (*Լալայան Ե.,* 1931, էջ 146, նկ. 80), Թրիալեթիից (***Менабде М., Давлианидзе Ц.,*** 1968, աղ. IV), Ուչ-թեփեի (***Иессен А.А.***, 1965, էջ 123, նկ. 19) մ.թ.ա. X-IX դարերով թվագրվող շերտից և այլն:

Երկրորդ տարբերակն են կազմում սև և գորշ եարդարված մակերեսներով, դեպի դուրս փռված կողերով, դուրս թեքված կլոր շուրթով օրինակները (աղ. LXXVIII, 6,7): Սրանցից մեկի շուրթի վրա սեղմմամբ արված է մեկ շարք հորիզոնական ալիքագոտի: Վերջիններս իրենց ձևերով նման են Վարդենիկի (***Мнацаканяна А.О.,*** 1955, էջ 41, նկ. 13, 6) մ.թ.ա.VI դարին պատկանող դամբարանից հայտնաբերվածին:

*Կճուճներ* - Ներկայացված են երկու տեսակով, Առաջին տեսակն են կազմում գորշ, դարչնագույն և վարդագույն եարդարված մակերեսներով, կլորացող իրանով, դուրս ճկված շուրթով, անզարդ և եասիկաշարով, ակոսագոտիներով ու ալիքագոտիներով զարդարված նմուշները (աղ. LXXVII, 16,17,19,20,21): Սրանք հանդիսանում են ուշ բրոնզի և երկաթի դարաշրջաններում լայն տարածված խոհանոցային արտադրանքի նմուշներ և չունեն որոշակի թվագրող հատկանիշներ: Իրենց զարդարման ձևով և եդանակներով այս խմբից մի փոքր առանձնանում է աղ. LXXVII, 20 նմուշը: Վերջինիս ուսերը զարդարված են կտրելու եղանակով արված հորիզոնական ակոսագոտիների և ալիքագոտիների միջև ներառված, անկյունաձև միացող, թեք գծերի խմբերով: Նման զարդ ունի և Գոլովինոյի (***Мартиросян А.А.,*** 1954, աղ. X) մ.թ.ա.VII-VIդդ. թվագրվող կճուճը, տարբերությամբ, որ թեք գծերը արված են սեղմմամբ: Նույն ձևի զարդեր են կրում նաև Գոլովինոյի միականթ սափորները

* ՅՊՊԹ. 1908/30

(***Мартиросян А.А.,*** 1954, աղ. XI, 8): Մյուս՝ բաց վարդագույն հարդարված մակերեսով կճուճի ուսերը զարդարված են սեպաձև հատիկներից կազմված գոտիով և թույլ ներճկված լայնակոս հորիզոնական ժապավենով (աղ. LXXVII, 19): Սեպաձև զարդատեսակը սկիզբ է առել ուշ բրոնզի ժամանակաշրջանում (Արթիկ, Լոռի-Բերդ, Ղմշկուտ) և հարատևել մինչև մ.թ.ա. VI-V դարերը (օր. Աստղի-Բլուրի № 20 դամբարանը: ***Есаян С.А.,*** 1976, էջ 212, աղ. 139, 5): Շիրակավանի կճուճների շարքում առկա է նաև կարմիր, անգոբապատ, տիպիկ ուրարտական կճուճի շուրթի բեկոր (աղ. LXXVIII, 17), որի նմանակները հայտնի են Արգիշտիխինիլիի բուժակի տնից հայտնաբերված կճուճների շարքում (***Мартиросян А.А.,*** 1974, էջ 76, նկ. 48):

*Կարասներ*- ներկայանում են երկու ուրարտական և երկու տեղական տարբերակներով: Առաջին՝ տեղական տարրերակն ունի գորշ հարդարված մակերեսներ, դեպի ներս թեքված վերին մաս, կլոր շուրթ: Շուրթի տակ արված է մեկ լայնակոս հորիզոնական գոտի (աղ. LXXVII, 24): Սա իր կավի բաղադրությամբ և մակերեսների եարդարմամբ եարում է տեղական խեցեղեն արտադրանքին, ինչ ձևով՝ մի կողմից վերը ներկայացված տեղական կճուճների երկրորդ տարբերակին, մյուս կողմից՝ ուրարտական փոքր կարասներին: Տեղական երկրորդ տարբերակն են կազմում գորշ հարդարված մակերեսներով, դուրս ճկված շուրթով նմուշները (աղ. LXXVII, 23): Սրանց զուգահեռները հայտնի են Շիրակավանի եամաժամանակյա (մ.թ.ա. VII-VIդդ.) դամբարաններից և որոշ չափով նմանվում են Դվինի մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող նմուշներին: Ուրարտական կարասների առաջին տեսակը ներկայանում է կարմիր անգոբապատ, վերին մասում հարթ կտրած և դեպի ներս նեղացող շուրթի բեկորով (աղ. LXXVIII, 15): Այս կարասի շուրթը իր գույնով և ձևով տիպական է ուրարտական հուշարձաններից հայտնաբերվածներին *(Եսայան Ս.Ա.,* 1967, աղ. XX; ***Мартиросян А.А.,*** 1974, էջ 80, նկ. 50ա):

Ուրարտական երկրորդ տարրերակը ներկայանում է կարմիր և կոեմագույն անգոբապատ մակերեսներով, քիչ բարձր վզով: դեպի դուրս կլորացող շուրթ ունեցող կարասների բեկորներով: Շուրթը գոտևորված է լայն ակոսով: ինչը և կտրվածքին ատիճանաձև տեսք է տալիս (աղ. LXXVII, 18,22; աղ. LXXVIII, 14,16): Սրանցից մեկի ուսերին պահպանված է կենդանակերպ խոշոր բռնակ (աղ. LXXVIII, 14): Այս կարասը իր ձևով ու կենդանակերպ բռնակի տեսքով նման է Կարմիր-բլուրից (***Пиотровски Б.Б.,*** 1950, էջ 71, նկ. 43) հայտնաբերվածներին:

*Սափորներ* - ներկայացված են միականթ սափորների և դրանց կանթերի բազմաթիվ բեկորներով: Վերջիններս գորշ հարդարված մակերեսով, կտրվածքում կլոր տեսք ունեցող, աղեղնաձև կանթերի բեկորներ են (աղ. LXXVIII, 11): Սրանց վերին մասը զարդարված է ներճկված, ընդհատվող գծիկներով և կոճակնման ելուստներով: Նման փորվածքներով կանթերը սկզբ առնելով մ.թ.ա. VIII դարում (Լոռի-Բերդ, Թեյշերաինի և այլն: ***Деведжян С.Г.,*** 1981, աղ. XXII, 1; ***Мартиросян А.А.,*** 1961, էջ 102, նկ. 41), լայն տարածում են գտնում մ.թ.ա.VII-IV դարերում: Դրանք հայտնի են Գոլովենոյում (***Мартиросян А.А.,*** 1961, աղ. XI), հյուսին-արևելյան Հայաստանի մի շարք հուշարձաններում (***Есаян С.А.,*** 1976, էջ 68, աղ. 54, 4, էջ 69,

աղ. 55, 3,11,13, էջ 74, աղ. 60, 8), Կույրիշևում (*Խնկիկյան Օ.*, 1987), Լոռի-Բերդում (*Деведжян С.Г.*, 1981, աղ. XXVIII) և այլուր: Նման կանթ ունի նաև սև և գորշ երանգներով, հարդարված մակերեսով, գնդաձև իրանով, գլանաձև վզով մյուս սափորը: Իրանի ուսերը զարդարված են ակոսազույգերով, վիզը՝ ուղղահայաց լայն փայլազծերով, իսկ կանթը՝ ընդերկայնական, ճկված ակոսով (աղ. LXXVIII, 10): Այն իր ձևերով և զարդանախշմամբ բնորոշ է Հայաստանի մ.թ.ա. I հազ. առաջին կեսին պատկանող բազմաթիվ հուշարձաններից հայտնաբերված նմուշներին, սակայն նրանցից տարբերվում է կանթի ձևավորմամբ: Սրա կանթի վրայի ճկվածքը բնորոշ է ուրարտական խեցեղենի կանթերին: Այս հանգամանքը վկայում է տեղական խեցեգործ արհեստավորների կողմից ուրարտական որոշ ձևերի և հնարքների ընդօրինակման փաստի մասին: Այդ են վկայում նաև Շիրակավանի միջնադարյան հայտնաբերված որոշ նմուշների վրա արված նետասլաքի և խաչի պատկերները (աղ. LXXVIII, 20,21), ինչպիսիք հաճախ են հանդիպում ուրարտական ամանների վրա:

*Գավաթներ* - ներկայանում են երկու տեսակով, Առաջին տեսակն է կազմում սև փայլեցված արտաքին մակերեսով, գնդաձև իրանով, դեպի ներս թեքված վերին մասով, կլոր շուրթով նմուշը, որի վերին մասը զարդարված է երեք շարք ծալքագոտիներով (աղ. LXXVII, 14; աղ. LXXVIII, 12): Սրանց զուգահեռները հայտնի են Թեյշեբաինիից (*Мартиросян А.А.*, 1961, էջ 58, նկ. 25a), Անգեղակոթից (*Խնկիկյան Օ.Ս.*, 1978, էջ 101, տախ. II, 15,24,25) և բազմաթիվ այլ հնավայրերից:

Երկրորդ տարբերակը ունի կլորացող իրան, դեպի դուրս թեքված շուրթ: Անոթի սև փայլեցված մակերեսը զարդարված է հորիզոնական ակոսագոտիով, որից ներքև, կտրելու եղանակով, արված են եղնաձև պատկերներ (աղ. LXXVII, 15): Սա իր ձևով նման է Գուլովինոյից մ.թ.ա. VIII-VIIդդ. (*Мартиросян А.А.*, 1954, աղ. XIII, 21,22), Սուրբ Նահապետի ամրոցից (*Есаян С.А.*,1976, էջ 72, աղ. 586), Բերդատեղի մ.թ.ա.VI-Vդդ. (*Есаян С.А.*, 1976, էջ 46, աղ. 32, 3) և Թմբադիրի ամրոցից մ.թ.ա. VI-Vդդ. (*Есаян С.А.*, 1976, էջ 68, աղ. 54, 7) հայտնաբերված գավաթներին:

Ամրոցից հայտնաբերված խեցեղենի մյուս նմուշները իրենցից ներկայացնում են հորիզոնական ակոսագոտիներով զարդարված սեղանաձև հարթակ ունեցող կանթով (աղ. LXXVIII, 12), գորշ փայլեցված եռրիզոնական և ուղղահայաց ակեսներով զարդարված (աղ. LXXVIII, 13) և գորշ հսյրդարված մակերեսով, հորիզոնական ուղղագիծ և ալիքագոտիներով ու կամարաձև գարդերով զարդարված (աղ. LXXVIII, 18) խեցանոթների բեկորներ: Սրանք հանդիսանում են Հայաստանի մ.թ.ա. I հազարամյակն առաջին կեսին բնորոշ խեցանոթների բեկերներ և զուրկ են առավել կոնկրետ թվագրող հատկանիշներից:

Շիրակավանի ամրոցից հայտնաբերված խեցեղենի մյուս նմուշը բաց դարչնագույն մակերեսով, մի ծայրը կոտրված, խողովակաձև իրն է (աղ. LXXVIII, 19): Նմանատիպ առարկաները օգտագործվել են ձուլման գործում, որոնց վրա հստակ երևում են կրակի ազդեցության հետքերը, հանգամանք, որը բացակայում է մեր նմուշի վրա և հիմք է տալիս ենթադրելու, որ Շիրակավանի օրինակը, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է ինչ-որ իրի բռնակ, ինչպիսին է վերը ներկայացված, Շիրակավանի II պեղավայրից հայտնաբերվածը:

Այսպիսով, հայտնաբերված նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս Շիրակավանի ամրոցում պեղված համալիրները թվագրել մ.թ.ա. VIII-VI դարերով*:

## 2. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ
## (պեղ.՝ Խնկիկյան Օ.)

Նախորդ դարաշրջանների հուշարձանները ներկայացնելիս նշվեց, որ I պեղավայրի շինություններում իջեցված են եղել մ.թ.ա. VIII-VIդդ. թվագրվող դամբարաններ: Դրանք, ինչպես և խրամուղու տարածքում գտնվողները, շինարարական և հողամշակման աշխատանքների ընթացքում վերգետնյա նշաններից զրկված, երկու-երեք սալով ծածկված, մանր ու միջին չափերի քարերից պատրաստված քարարկղիր էին: Բացառություն էր կազմում դամբարաններից մեկը, որը սալ արկղ էր (*Խնկիկյան Օ.*, 1999, էջ 20-31):

*Դամբարան № 36* (4-1979թ) - կիսով չափ ավերվել էր խրամուղու բացման ընթացքում: Դամբարանի պահպանված մասից երևում էր, որ այս քարարկղը ուղղված է եղել արևելքից - արևմուտք (պահպանված չափերը՝ 1.4x0.8x0.6մ), իսկ կմախքը պառկած է եղել հարավային պատի մոտ: Կմախքից պահպանվել էին թևերի ու ոտքերի առանձին ոսկորներ: Թևերի ոսկորների վրա հայտնաբերվեցին երկաթից ու բրոնզից պատրաստված երեք ապարանջան, որոնցից բրոնզյա նմուշը երկճայլ է, իսկ երկաթից պատրաստվածները զանգվածեղ են և կտրվածքում ունեն կլոր տեսք (աղ. LXXX, 11-13):

*Դամբարան ր 67* (35-1979թ) - հատակագծում սեղանաձև տեսք ունեցող այս խոշոր սալարկղը (ուղղութ.՝ արևելք-արևմուտք, չափ.՝ երկար. 5.4մ, լայն. արևմտ. մասում 1.6մ, իսկ արևելյան հատվածում 1.2մ, խորութ.՝ 1.4մ) գտնվում էր I պեղավայրի կողքով անցնող ճանապարհից մոտ 30-35մ հեռավորության վրա անցնող խրամուղու տարածքում և մասամբ վնասվել էր վերջինիս բացման ընթացքում: Դամբարանախցի արևմտյան կեսում, առավել ստույգ՝ հարավ-արևմտյան անկյունում, սև տուֆից պատրաստված տաշտակ էր դրված, որն ուներ 1x1.3մ չափեր: Անկյուններում թեթևակի կլորացող, տաշտակաձև փորվածքով այդ սալը շրջանակված էր 15սմ լայնություն և 22 սմ բարձրություն ունեցող կողերով: Սալ գտնվել է և Ոսկեհասկի դամբարանների պեղումների ժամանակ (***Петросян Л.А.,*** 1989, էջ 69-70), իսկ Կարճաղբյուր գյուղում պեղված, հիտազոտվող ժամանակաշրջանին պատկանող դամբարաններից մեկում (դաշտ. համարակալմամբ դ 23, 1972թ) 1.57x 0.78սմ չափերի սալը, որը նույնպես դամբարանի հարավ-արևմտյան անկյունում էր գտնվում, դրված էր չորս քարերի վրա և հատակից բարձր էր 25սմ: Այդ սալի տակ գտնվեցին մարդու գանգ և անկյունաձև դրված ազդրոսկրներ: Այդ դամբարանից հայտնաբերվեցին նաև 43 կմախք և տարատեսակ նյութեր (պեղումները՝ *Մնացականյան Հ.Հ.*, նյութը հրատարակված չէ): Շիրակավանի դամբարանում սալը անմիջապես հատակի վրա

էր դրված: Այս տաշտակաձև մշակված սալի հյուսիսային անկյան մոտ մարդու գանգ հայտնաբերվեց: Մեկ այլ գանգ դրված էր դամբարանի հյուսիսային պատի տակ: Վերջինիս հարևանությամբ հայտնաբերվեց ձիու կոտրատված ոսկորներ ու ստորին ծնոտը. կենդանու գանգը և թիակոսկրները, մարդկանց կմախքների հետ գտնվեցին դամբարանի արևելյան պատի տակ: Ձիու գանգի մոտ հայտնաբերվեցին երեք վահանիկ, սանձ, զանգակ, դաշույնի շեղբ և կճուճ: Երկու այլ կճուճների ու խոշոր քրեղանի կամ սկուտեղի բեկորներ, միականթ գավաթի մասի հետ, ընկած էին մարդկանց գանգերի ու ձիու ոսկորների միջև, գրեթե դամբարանի կենտրոնական հատվածում (աղ. LXXX, 1-10):

*Դամբարան № 74* (5-1980թ.) - հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղված այս դամբարանը (չափ.՝ 2.2x1.1x0.5մ), ինչպես նշվեց վերևում, ավերելով № 7 կառույցի սալահատակը, կիսով չափ «կախվել» էր № 3 սենյակի մեջ: Գլխով հյուսիս ուղղված կմախքը աջ կողքի վրա էր պառկած, վերջույթները կծկած դիրքով: Գանգի մոտ դրված էին երեք խեցանոթ, որոնցից մեկի մեջ հայտնաբերվեցին հավի ու ոչխարի առանձին ոսկորներ: Մյուս նյութերը՝ ուլունքներ, կախիկ և շղթայիկի մաս, գտնվեցին վզի շրջանում, իսկ դեպի դեմքը բարձրացված ձեռքերի մոտ ընկած էր ծարիրե օղ (աղ. LXXXI, 1-7):

*Դամբարան № 75* (6-1980թ.) - գտնվում էր «հողաքափի» տեսք ունեցող № 6 կառույցի հարավ-արևելյան մասում և ուներ հյուսիս-հարավ ուղղվածություն: Այս դամբարանում ևս (չափ.՝ 1.1x0.6x0.4մ) կմախքը աջ կողքի վրա էր գտնվում գլխով՝ հյուսիս: Գանգի մոտ դրված էր երկու խեցանոթ, իսկ վզի մասում բրոնզե մանյակ հայտնաբերվեց: Կոնքոսկրի մոտ գտնվեցին զանգակ և հիլկի գլուխ, իսկ ձեռքին ապարանջան էր հագցված: Դամբարանից հայտնաբերված վերջին նյութերն էին ոսկոե հերունի մասն ու շիգը (աղ. LXXXI, 8-15):

*Դամբարան № 120* (33-1981թ.) - Խրամուղու տարածքում գտնվող այս դամբարանը (չափ.՝ 1.8x0.9x0.9մ) արևելքից արևմուտք էր ուղղված: Դամբարանախցի հարավ-արևելյան անկյունում բացվեց ձախ կողքի պառկած, գլխով հյուսիս ուղղված կմախք, որի գանգի մոտ դրված էր երեք խեցանոթ, իսկ ձեռքերին հագցված էին բրոնզից ու երկաթից պատրաստված ապարանջաններ: Էրկլաթյա նմուշի մակերեսին «զմռսվել» էին կիծքավանդակի մոտ ընկած ուլունքաշարից անջատված մի քանի սարդիոնե ուլունք: Թիակոսկրների շրջանում գտնվեցին վանակատե երկու ցլեպ և բազալտե սանդի մաս (աղ. LXXX II):

*Դամբարան № 122* - (35-1981թ.) - նախորդից 2.5մ արևմուտք գտնվող այս քարարկղում (չափ.՝ 2.6x1.1x1մ, ուղղութ.՝ հյուսիս-հարավ) կմախքը պառկած էր աջ կողքի վրա, գլխով՝ հյուսիս: Գանգի մոտ դրված էր հրեք խեցանոթ, չորս օղ, ապարանջան, զարդավահանիկի բեկոր: Վզի շրջանում գտնվեցին երկու շիգդ, խողովակներ, լուսնաձև զարդ, սարդիոնե ուլունքներ, ճանկաձև կախիկներ և «կաուրի» խխունջատեսակ, իսկ դեմքի մոտ՝ դաշույն և երկու դանակ: Դամբարանի հարավ-արևմտյան անկյունում գտնվեցին դանակ և երեք նիգակ, իսկ արևելյան հատվածում՝ ձիու կմախքի մնացորդներ: Կենդանու՝ արևմուտք ուղղված գանգի մոտ դրված էին սանձի մաս և երկու շիգդ (աղ. LXXX III):

*Դամբարան № 123* (36-1981թ.) - գտնվում էր նախորդից 1.5մ հեռավորության վրա և կոկրն հյուսիս-հարավ ուղղվածություն ուներ (չափ.՝ 1.7x0.7x0.9մ): Մարդու կմախքի առանձին մասերը բացվրցին հյուսիս-արևմտյան անկյունում: Դրանց մոտ դրված էին երեք խեցանոթ, որոնցե մանյակ, սրոց և օծաազլուխ ապարանջանի բեկոր: Դամբարանի արևելյան պատի մոտ հայտնաբերվեց երկու նիզակ և դանակ (աղ. LXXXIV):

Ավարտելով դամբարանների քննությունը, նշենք որ դրանցից հայտնաբերված նյութերի մի մասը, ինչպիսին են օրինակ անցքի մեջ բրոնզյա կեռիկով, ոսկուց պատրաստված իլիկո գլուխը (աղ. LXXXI, 15), հիրունի բեկորը և բրոնզե շղթայիկը (աղ. LXXXI, 5,11), կենտրոնական հատվածում կրսազնդաձև տեսք ունեցող բրոնզյա զայրդավահանիկը (աղ. LXXXIII, 4), օղերը (աղ. LXXXI, 4), հեռացող, մոտեցող և իրար վրա բերած ծայրերով բրոնզյա ապարանջանները (աղ. LXXXII, 5), սանդը (աղ. LXXXII, 4) և այլն, երկար են գոյատևում: Դրանք թվագրության համար էական նշանակություն չունեն: Ինչ վերաբերում է մյուս նյութերին, ապա դրանք ժամանակաշրջանին բնորոշ նմուշներ են: Դրանցից դաշույնները երեքն են, որոնցից երկուսը միանման՝ աստիճանաբար նեղացող երկաթյա շեղբերի մասեր են, որոնց երկու երիսներով ընդերկայնական ողեր են տարված (աղ. LXXX, 10): Ձենքերի թեքի վիճակը թույլ չի տալիս պարզել դրանց տեսակը: Ինչ վերաբերում է նմուշներից երրորդին, ապա այն պատկանում է մաեիկածև գլխամասով ավարտվող շրջանակավոր դաստակ ունեցող դաշույնատեսակին: Վերջինիս դաստակում առկա է 6 մեխ, որոնցով ամրացվել են փայտե ներդիրները: Դաշույնի շեղբը ձգված եռանկյունաձև է, որի երկու երեսներից ձգվում են երկուական ընդերկայնական ողեր (աղ. LXXXIII, 12):

Երկաթից պատրաստված նման դաշույններ, ինչպես տեսանք վերը, Շիրակավանում եսյտնաբերված են և մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող դամբարաններից: Դրանց շեղբերը, սակայն, զուրկ լինելով ընդերկայնական ողերից, սրվում են ծայրերում: Մահիկածև գլխամասով դաշույններ հետազոտվող ժամանակաշրջանի հուշարձաններում հայտնի են Ակներից (Պետ. էրմիտաժ, գույք ? 16731), Խրտանոցից, Աստղի-բլուրից և այլն (***Есаян С.А.,*** 1976, էջ 186-187):

*Նիզակներ* - ներկայացված են համեմատաբար կարճ (պահպանված մասը 7.5-10 սմ) խողովակածև կրթան և բավական երկար (17-30սմ) մարտական սայր ունեցող հինգ նմուշներով: Բոլոր օրինակների փետրածև սայրերն ունեն կենտրոնական ընդերկայնականող (աղ. LXXXIII, 13-15, LXXXIV, 7-8):

Համադրելով Խրտանոցից հայտնաբերված նմանօրինակ նիզակները ավելի փոքր չափեր ունեցող նմուշների հետ, Հ.Ա.Մարտիրոսյանը եանգում է այն եզրակացության, որ. «մարտական երկար սայրով խոշոր նիզակները լավագույնս կապվում են ուրարտական նմուշների հետ, այն դեպքում, երբ նիզակների երկրորդ խումբը, բաղկացած լինելով փոքր չափերի նմուշներից, իր զուգահեռները չունի ուրարտական բնակավայրերում» (***Мартиросян А.А.,*** 1954, էջ 68): Փետրածև սայրով նման խոշոր նիզակներ մ.թ.ա. VIII-VIդդ. նյութերի միջավայրում հայտնի են Ակնիցից, Թեյշեբաինիից, Մատուռից, Աստղի-բլուրից և այլ հուշարձաններից (***Есаян С.А.,*** 1976,

աղ. 26,33,63,116): Փետըածև սայրով նիզակնիրը րնոըոշ են տեղական մշակույթին և րնական է, որ տեղի մետաղագործները կարող էին ընդօրինակել ուրարտական զենքերի որոշ տաըրեր և համատեղել դրանք տեղական զինագործական ավանդույթների հիտ:

Նյութերի հաջորդ խումըն են ծիասարքի մասերը: Դրանցից *վահանիկները* ներկայացված են երկու տարրերակով: Առաջին տաըրիրակը շրջանաձև, կենտրոնում կիսագնդաձև տեսք ունիցող իր է, որի հարթ հզըում անցք կա կաշվե կամ կտորե հիմքին ամրացնելու համար: Վաեանիկների այս տարրերակի զուգահեռները րազմաթիվ են րըոնզ-երկաթիդարյան հուշարձաններում: Ինչ վերարիրում է վահանիկ-ների եըկիրրդ տարրերակին, ապա նշենք, որ երեք օրինակով ներկայացված, բրոնզե այս սկավառակաձև իրերի (տրամագիծը՝ 11.5սմ) ուռուցին մակնըեսի կենտրոնում րրգաձև ելուստ կա, ինկ եափն՝ գոգավորվող մասում փոքրիկ կամըջակներ են ամրացված (աղ. LXXX, 7,8): Այսօրինակ իրեր հայտնի են Գավառից (ՀԱՊՄ, գույք 20-38), Շինաեողից, Մեղրիից, Մակարաշենից, Արգիշտիխինիլիից, Կարմիր-բլուրից և հետազոտվող ժամանակաշրջանի այլ եուշաըծաններից (*Мартиросян А.А.,* 1964, էջ 84, աղ. XXI: Նույնի, 1974, նկ.84): Նշենք, որ Կարմիր-բլուրից հայտնարերված նմուշների վրա առկա են Սարդուրի, և Մենուա թագավորների անունները և իրա-վացի է Հ.Ա.Մարտիրոսյանը նշելով թվագրության համար այդպիսիների ստուգա-նմուշ հանդիսանալը (*Мартиросян А.А.,* 1964, էջ 219): Նույնը կարելի է ասել և երկու նմուշով ներկայացված րրոնզյա *զանգակների* վերարերյալ: Դրանցից մեկը եռանկյունաձև անցքերով զարդարված կինաձև իր է, որը երկաթե լեզվակ ունի, ինկ մյուսն առանձնանում է իրանի սաեուն, կլորացող անցումներով (աղ. LXXXI, 14, LXXX, 6): Այս նյութերի զուգահեռները Կարմիր-բլուրից, Վանաձորից, Երևանի ուրարտական դամրարանից (*Есаян С.А.,* և համահեղինակներ, 1991, աղ. XIV, 5-7, X, 14-15) և համաժամանկյա այլ հուշարձաններից հայտնարերվածների շարքում են, որոնցում առկա են և Շիրակավանի նմուշից չտարրերվող րրոնզյա *սանձեր* (հմմտ. Մակարաշենից հայտնարերվածը): Վերջիններս, իրենց նախաձևերն ունենա-լով Թեփե-Սիալկից, Լուրիստանից հայտնարերվածների շարքում է (*Shaeffer Cl.,* 1948, նկ. 252, 266), լայն տարածում են ստանում Հայաստանում մ.թ.ա. II հազ. վերջից (Վանաձոր, Արջաձոր, Գետարեկ-Կալաքենդ և այլն): Շիրակավանից հայտնարերվածը, սակայն, վերջիններից տարրերվում է երասանակների թեթևակի կլորացող տեսքով ու դրանց ծայրերի սկավառակաձև կամ կոնաձև ելուստների րացակայությամր (աղ. LXXX9), ինչպես և կտրվածքում ուղղանկյունաձև երասնակի եզըերում տեղադրված կիսաշրջանաձև անցքերի (վաղ շրջանի նմուշների վրա այդ անցքերը երասնակի կինտրոնում են) ձևով: Այս հատկանիշներով Շիրակավանի նմուշը եիշեցնում է Մեխչին-Ցիխեի գանձից եայտնարերված օրինակը, որը հեղինա-կի կողմից թվագրված է մ.թ.ա. X-VIIIդդ. (*Коридзе Д.Л.,* 1965, նկ. 30): Տարրեր դարաշրջանների նյութերի շարքում իր զուգահեռներն ունի և սանձերի երկիրրդ տարրերակը, որը թերի պաեպանված, վրան րրգաձև ելուստներ ունեցող, կտրվածքում շրջանաձև երկաթյա ձող է: Վերջինին մեկ ծայրր օղակի տեսք ունի,

իսկ մյուսի կեռացող ծայրը կոտրված է. այդ մասում ամրացվել է սանձի համանման տեսք ունեցող կեսը (աղ. LXXXIII22): Երկաթից պատրաստված նման սանձ հայտնի է Արգիշտիխինիլիից (*Мартиросян А.А.,* 1974, նկ. 87a): Սանձերի այս տարրերակի նախաձևերը, սակայն, հայտնի են վաղ շրջանի հուշարձաններում: Տվյալ դեպքում նկատի ունենք Գյումրիից պատահականորեն հայտնաբերված բրոնզյա նմուշը (*Мартиросян А.А.,* 1964, նկ. 49, էջ 125), ինչպես և Գետարեկ-Կալաքենդից, Մեւլաանիից և այլ վայրերից հայտնաբերվածները: Պեղածոների հաջորդ խումբն են կազմում երկաթե *դանակները*: Վերջիններս պատկանում են կեռ կամ մանգաղաշեղբ դանակների տեսակին, որոնցից երկուսի կոթառը շրջանակավոր է. դրանց մեջ պահպանված են փոքրիկ մեխերով ամրացված փայտե ներդիրների մնացորդներ: Դանակներից մեկը պատրաստված է երկաթի ամբողջական կտորից (աղ. LXXXIII16), իսկ մյուսի շիղը առանձին է պատրաստվել ու տեղադրվել կիթի հիմքում արված երկճղի ճեղքվածքում (աղ. LXXXIV9): Երկաթի ամբողջական կտորից է պատրաստված և երրորդ դանակը, որն առաջինից տարբերվում է հարթ կոթով: Դանակներից վերջինի գլանաձև կիթը հիմքի մասում թեթևակի լայնանալով ձևավորում է յուրատեսակ դաստապան, որտեղ և միջանցիկ անցք է բացված (աղ. LXXX III17):

Ուրարտական մշակույթի ազդեցությամբ հատկապես մ.թ.ա.VII-VIդդ. լայն տարածում գտած այսօրինակ դանակների զուգահեռները հայտնի են Վանաձորից, Մակարաշենից, Ակներից, Յաղպասից (Պետ. էրմիտաժ, գույք № 16954, 16812), Լոռի-Բերդից (*Деведжян С.Г.*, 1981, էջ 62, աղ. XXIII3,5), Կարճաղբյուրի № 23 դամբարանից և հետազոտվող ժամանակաշրջանին պատկանող այլ հուշարձաններից:

Ժամանակաշրջանի բնորոշ նյութերից են և զնդիկավոր տեսքով *ապարանջաններն* ու նույնաձև կախիկները (վերջիններս սոսկ օղակաձև կախիկ ունեն), որոնցից շիրակավանյան նմուշի մակերեսին, իրեք տեղում զույգ-զույգ բրոնզե գնդիկներ են տեղադրված (աղ. LXXXIII19): Նախորդ դարաշրջանում անհայտ այս զարդիրի զուգահեռները հայտնի են Իյրտանոցից, Իջևանի շրջանից ու Դիլիջանից, Մալաքլուի ուրարտական աճյունասափորից և այլ վայրերից (*Мартиросян А.А.*, 1964, էջ 272, նկ.1066,7: *Куфтин Б.А.,* 1944, էջ 38-40: *Есаян С.А.,* 1976, էջ 130, աղ.115): Հետազոտվող ժամանակաշրջանի բնորոշ զարդերից են և երկճալ (աղ. LXXXII6), օձագլուխ (աղ. LXXXIV5), ներճկված մեջքով (աղ. LXXXI12), ինչպես և երկաթից պատրաստված, կտրվածքում շրջանաձև տեսք ունեցող զանգվածեղ ապարանջանները: Վերջիններիս վաղ նմուշներր հայտնի են մ.թ.ա. I հազ.I քառորդով թվագրվող հուշարձաններից (Նորատուս, Արթիկ, Ցամաքաբերդ ևն: Տե՛ս *Մնացականյան Հ.Հ.,* 1952, տախ. 2: *Мартиросян А.А.,* 1964, էջ 194-196: *Хачатрян Т.С.,* 1975, նկ.154): Շիրակավանի նմուշները, սակայն, եայտնաբերված են երկճալ ապարանջանի հետ, որը մ.թ.ա.VII-VIդդ. բնորոշ նյութերից է (Լոռի-Բերդ, Մուխան, Լճաշեն, Գյումրի, Խրտանոց ևն: Տե՛ս *Եսայան Ս.Ա.,* 1964, էջ 88): Կարևոր են և ներճկված մեջքով նմուշները: Այդպիսիները, ինչպես նշվեց, Շիրակավանում հայտնի են մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող դամբարաններից: Ապարանջանների այս տեսակը,

սակայն, լայն տարածում է գտնում հետազոտվող ժամանակաշրջանում և հետագա դարերում (Խրտանոց, Գավառ, Բջնի, Դվին և այլն: Տե՛ս ***Мнацаканян А.О., Тирацян Г.А,*** 1961, էջ 73, աղ. II: ***Мартиросян А.А.,*** 1954, աղ. VI6):

Զարդերի հաջորդ խումբն են կազմում մանյակները: Երկու նմուշով ներկայացված այս զարդերից մեկը կտրվածքում շրջանաձև, անզարդ մակերեսով լար է, որի հեռացված ծայրերը ոլորված են (աղ. LXXXI18): Օղակաձև ծայր ունի և մանյակներից հաջորդը, որի իրանը ոլորուն է (աղ. LXXXIV6): Այս զարդերի զուգահեռները հետազոտվող ժամանակաշրջանի հուշարձաններում բազմաթիվ են: Դրանք հայտնի են Խրտանոցից, Լոռի-բերդից, Շիկահողից և այլ վայրերից: Նշված եուշարձաններում իրենց զուգահեռներն ունեն և գլանաձև սնամեջ իրանով և երեք ուսիկներով ավարտվող բրոնզաձույլ կախիկները (աղ. LXXXIII20-21):

Զարդերի վերջին խումբն են հինգ օրինակով ներկայացված բրոնզաձույլ շիգղերը: Դրանցից մեկը կամարաձև իրան ունի, որի թկիկներից մեկը տափակեցված և ծալված է, իսկ մյուսի վրա ասեղն է ամրացված (աղ. LXXXIII28): Իրանի նույն ձևն ունի և հաջորդը, տարբերությամբ, որ այս նմուշի մեջքը կենտրոնում փոքր-ինչ ուռուցիկ է, իսկ թևիկներից մեկը զարդարված է երեք ելունդագոտիներով (աղ. LXXXI10): Շիգղերի այս տարբերակն իր զուգահեռներն ունի հետազոտվող ժամանակաշրջանի հուշարձաններում (Դիլիջան, Լոռի-Բերդ, Կարմիր-բլուր, Արգիշտիխինիլի և այլն):

Շիգղերից մյուս երկուսի կամարաձև իրանները տավակեցված տեսք ունեն. մեկը փոքր-ինչ ձվաձիր տեսքով, ակեսազարդ է (աղ. LXXXIII27), իսկ մյուսի մեջքն ատամնավոր եզրագիծ ունի (աղ. LXXXIII26): Այս շիգղերի զուգահեռները նույնպես բազմաթիվ են հետազոտվող ժամանակաշրջանի հուշարձաններում (Գավառ, Կարճաղբյուր, Արգիշտիխինիլի, Խրտանոց և այլն): Ինչ վերաբերում է շիգղերից վերջինին, ապա այն ունի լայն բացված աղեղնաձև իրան, որի թկիկներից մեկը կեսազնդաձև է, մյուսը՝ սեգմենտաձև (աղ. LXXXIII 29): Այս իրը հեռավոր կերպով հիշեցնում է Ն.Յա. Մառի Ակներից հայտնաբերած, մ.թ.ա. VII-VIդդ. թվագրվող նմուշը, որի կամարաձև իրանի ծայրի ելուստը զրեթե գնդաձև է (Պետ. էրմիտաժ, գույք № 16868):

Հայտնաբերված նյութերի վերջին խումբն են կազմում տաբատեսակ խեցանոթները: Դրանցից սափորները չորսն են: Մեկը սև, անփայլ մակերեսով, փքուն իրանով և լայն, թեթևակի գոգավորվող կարճ վզով անոթ է, որի կլորացող շրթից ուսն է իջնում ծնկաձև, կենտրոնական մասում ելուստ ձևավորող կանթը: Վերջինին վերին կեսում ատամնավոր հանվածքներ են արված: Անոթի ուսն ու գոտկամասը զարդարված են ելունդագոտիներով, իսկ դրանց միջև եղած տարածքը՝ սեղմմամբ ստացված եռանկյունաձև պատկերներով, Անոթի շրջանաձև, շեշտված պսակով եզերված հատակը կենտրոնում անցք է բացված (աղ. LXXXI1): Իրանի նույն ձևն ունի և եաջորդ սափորը, որի դեպի վեր թեթևակի լայնացող վիզն ավարտվում է սրվող շրթով: Շրթից իջնող կանթը աղեղնաձև է: Անոթի թեթևակի փայլեցված մակերեսը զարդարված է ակոսագոտիներով ու դրանց միջև տարված թեք գծերով (աղ. LXXXI8): Սափորներից հաջորդի սև անփայլ մակերեսը անզարդ է: Նախորդ դարաշրջանից եկող ավանդույթները շարունակող և ժամանակաշրջանին բնորոշ հատկանիշներն (օր.

ծնկածև կանթի ելուստն ու ատամնավոր ևանվածքները) ունեցող այս սափորները իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Հայաստանի և հարակից տարածքների հետազոտվող ժամանակաշրջանի հուշարձաններում (Խըտանոց, Աստղի-բլուր, Դիլիջան, Լոռի-Բերդ և այլն), ինչը չի կարելի ասել վերջին սափորի վերաբերյալ: Այն ձգված իրան, փողածև լայնացող վիզ ու եռապսակ շուրթ ունի, որից ուսն իջնող աղեղնածև կանթի վերին մակերեսի կենտրոնով ընդերկայնական ճկվածք է տարված: Ուրարտական նմուշների բավական հաջող ընդօրինակումը հանդիսացող (նմանը գտնված է և Կարճաղբյուրի № 28 դամբարանից սկյութական նետասլաքների և մ.թ.ա.VII-VIդդ. այլ նյութերի հետ) այս անոթի մակորեսը, ինչպես և ուրարտական խեցանոթները (վերջիններիս իրանը ավելի շուտ գնդաձև է, վզի հիմքը շեշտված է ելունդագոտիներով ևն), վառ կարմիր գույն ունի (աղ. LXXXIV, 2):

*Երկկանթ խոշոր անոթներ* - մեկը լայն բերանով, կարճ վզով, հարթահատակ անոթ է, որի կլորացող իրանի ուսին, եականդիր կողմերից, օղակածև կանթեր են ամրացված: Դրանց վերին մասը եռանկյունածև հաղթակի տեսք ունի: Անոթի սև, թույլ փայլեցրած մակորեսը զարդարված է ակոսներով ու եասւիկներով, իսկ վիզը՝ սեղմելու եղանակով ստացված ուղղահայաց գծերով (աղ. LXXXI2): Անոթներից մյուսն ունի կլորացող իրան, որն ավարտվում է կարճ վզով և դուրս ճկված շուրթ ունեցող լայն բերանով: Անոթի գոտկամասում, եականդիր կողմերից, սեղանածև, գրեթե տափակ կանթեր են ամրացված, որոնց վերին մակորեսները զարդարված են կաղճ ու լայն ակոսներով: Վերին եատվածում թեթևակի փայլեցված, իսկ ստորինում սև խամրած գույն ունեցող այս փոքր կարասի ուսն ու փորը գոտևորող ակոսների միջև եղած տարածությունը լցված է սանրատամ կետերով (աղ. LXXXIII, 1): Կանթերի նույն ձևն ունի և խոշոր անոթներից եաջորդը, տարբերությամբ, որ կանթերի մակերեսը գարդարված է ժամանակաշրջանին բնորոշ, դրոշմելու եղանակով ստացված եռանկյունածև փոսիկներով: Սև, թույլ փայլեցրած մակերես ունեցող, փքուն իրանով այս անոթն ավարտվում է կլորացող շուրթ ունեցող կարճ, գլանաձև վզով, իսկ եարթ հատակի վրա անցք է բացված (աղ. LXXXIV1): Այսօրինակ անոթներ հայտնի են Ջարիխեչից, Թեյշեբաինիից, Վանաձորից և եետազոտվող ժամանակաշրջանի այլ հուշարձաններից (***Мартиросян А.А.,*** 1961, էջ 119, նկ. 49: Նույնի, 1964, աղ. XXII: *Խնկիկյան Օ.Ս.,* 1987, աղ. 1, նկ. 24, 32):

*Փոքրածավալ անոթներ* - երկուսն են. մեկը սև, թեթևակի փայլեցրած մակերեսով կարճ վզով և դուրս ճկված շուրթով, գնդաձև իրանով կճուճ է, որի ուսին, հակադիր կողմերից, թեթևակի վեր բարձրացված, գրեթե տափակ, կենտրոնում միջանցիկ անցք ունեցող կանթեր են ամրացված: Դրանց միջև, անոթի հակադիր կողմերից, ամրացված են պտկիկածև ելուստներ (աղ. LXXXIII, 3): Առանձին գեղեցկությամբ ու պատրաստման նրբությամբ է առանձնանում գավաթը: Բարձր, թեթևակի դուրս թեքվող վգով ավարտվող այս անոթի փքուն իրանը եանգչում է բարձր նստուկով եզերված փոքր հատակի վրա: Անոթի ուսին ծվածիր ձգվող խոշոր կանթ է ամրացված, իսկ վերին մասում գորշ, անփայլ մակերես ունեցող իրանը զարդարված է նուրբ մատնեքով, որը ալիքի տպավորություն է թողնում: Անոթի ստորին եատվածը ագաթափայլ սև

գույն ունի (աղ. LXXXIV, 3): Անոթներից վերջինը օղակաձև կանթով գավաթ է, որի սև անփայլ մակորեսով երկեռնիկ իրանը զարդարված է եռեք ակոսներով (աղ. LXXX, 1): Իր նախաձևը նախորդ փուլերում ունեցող այս անոթի զուգահեռները հայտնի են Լոռի-Բերդից, Լճաշենից, Անգեղակոթից և այլ վայրերից:

Նյութերի վերջին խումբն են խոհանոցային, ձեռքով պատրաստված, անշուք տեսքով անոթները: Դրանցից մեկը գնդաձև իրանով, ուղիղ բարձրացող կարճ վզով կճուճ է, որի դեղնա-վարդագույն մակերեսը մրոտված է (աղ. LXXXI, 3): Նույնպիսի դեղնավուն, մրոտված մակերես ունի և անոթներից հաջորդը, որի հարթահատակ, գրեթե գլանաձև իրանը ավարտվում է կարճ, թեթևակի դուրս թեքված վզով (աղ. LXXXII, 3): Մրոտված, սև անփայլ մակորեսով հաջորդ կճուճի ստորին կեսում կլորացող իրանը շեշտված անցումով միանում է գոգավորվող բարձր վզին (աղ. LXXXI, 9): Անոթներից մյուս երկուսի իրանները ձգված, գոտկամասում փոքր-ինչ փքուն տեսք ունեն: Դրանցից մեկը, որի վիզը նախապես կոտրվելուց հետո դամբարան չի դրվել, գոտկամասում սեգմենտաձև տափակ կանթ ունի, իսկ մյուսն ավարտվում է թեթևակի դուրս թեքվող կարճ վզով (աղ. LXXXII, 1,2): Իրանի ձգված տեսքով անոթներից երկրորդին է մերձենում սև անփայլ, մրոտված մակերեսով կճուճը, որն ունի ուղիղ բարձրացող կարճ վիզ, իսկ թեթևակի կլորացող իրանը զարդարված է երկու ակոսագոտիներով (աղ. LXXX, 4): Այս խմբի անոթներից վերջին երկուսը անիվի վրա պատրաստված կճուճներ են. ունեն մեկ դեպքում սև, թույլ փայլեցրած (աղ. LXXX, 3), մյուսում՝ զորշ անփայլ մակերեսով (աղ. LXXX2) կլորացող իրաններ, որոնք ավարտվում են դուրս թեքված և կլորացող շուրթով: Անոթների մակերեսները զարդարված են նախորդ դարաշրջանից եկող երկշարք եռանկյուններով ու ռելյեֆ ժապավենի տեսք ունեցող գոտիով ու թեք գծիկներով լցված ակոսներով: Քննված անոթների զուգահեռները հայտնի են Արգիշտիխինիլից, Գոլովինոյից, Վարդենիսից և հետազոտվող ժամանակաշրջանին պատկանող այլ հուշարձաններից (*Мнацаканян А.О.,* 1955, նկ. 13):

Ավարտելով հայտնաբերված նյութերի քննությունը, նկատում ենք, որ դրանք, բացառությամբ առանձին դեպքերի (վահանին, զանգակ, սանձ, դանակ, սափոր ևն), տեղական մշակույթում իրենց արմատներն ունեցող և հետազոտվող ժամանակաշրջանին բնորոշ հատկանիշները կրող, տեղական արտադրանք են: Ինչ վերաբերում է ուրարտական արտադրանքին և կամ դրան ընդօրինակող նմուշներին, ապա դրանց առկայությունը Շիրակին տիրած և դրանով ինկ Կարս-Կուր-Արաքս տանող ճանապարհների հանգուցակետին իշխած ուրարտացիների գերիշխանության տակ գտնվող Շիրակավանի համար օրինաչափ է: Հետաքրքիր է, որ Շիրակավանի ամրոցից հայտնաբերված նյութերը նույնպես մ.թ.ա. VIII-VIդդ. են թվագրվում: Նյութերի քննությունն, այսպիսով: աներկբայորեն փաստում է, որ առաջին պեղավայրում կյանքի բնականոն ընթացքը մ.թ.ա.VIIIդ. դադարում է: Նշված ժամանակաշրջանում բնակատեղին տեղափոխվում է բարձունքի գագաթը, ինկ առաջին պեղավայրում գտնվող լքված բնակատեղին վեր է ածվում դամբարանադաշտի: Ուշագրավ է և այն հանգամանքը, որ առաջին դամբարանադաշտում բացված, հարուստ,

ծիերի կմախքներ պարունակող թաղումները, որոշակիորեն առանձնանալով մյուսներից, գույքի ճոխության առումով համեմատության եզր չեն գտնում մ.թ.ա. IX-VIIIդդ. թվագրվող, ավագանու ներկայացուցիչներին պատկանող դամբարանների պարունակության հետ համադրելու ընթացքում. հետազոտվող ժամանակաշրջանին պատկանող դամբարանների գույքը ավելի քան համեստ է: Այս երևույթների պատճառը բացահայտում են ուրարտական արձանագրությունները: Արգիշտե Ա-ն 785 և 774թթ. արշավում է Էրիախի, իսկ նրա որդի Սարդուր Բ-ն 7-8 անգամ արշավելով Էրիախի, նշում է, որ երկու տարում կատարած արշավանքների ընթացքում գերեվարել է 30142 մարդ, տարել հազարավոր անասուններ, կողոպտել 150 ամբար, ավերել քաղաքներ (***Меликишвили Г.А.,*** 1960, էջ 254, 284-286): Այդ քաղաքներից մեկը Շիրակավանն է եղել և բնական է, որ մարդկանց գերեվարումը, ավարառությունները սնանկացրել են մնացած բնակչությանը. դամբարանների գույքի ակնառու տարբերությունը (համեմատած մ.թ.ա. IX-VIIIդդ. դամբարանների հետ), այլ բացատրություն չի գտնում:

# ԱՄՓՈՓՈՒՄ

Շիրակավանի բազմաշերտ բնակավայրի տարբեր հատվածներում և դամբարանադաշտերում կատարած պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ սկիզբ առնելով մ.թ.ա. III հազարամյակում՝ կյանքն այստեղ շարունակվել է մինչև մ.թ.ա. VII-VI դդ.:

Լույս սփռելով նախնյաց կյանքի տարբեր կողմերի վրա, ձեռք բերված հսկայական նյութը աներկբայորեն փաստում է Շիրակը՝ Հայաստանի ողջ տարածքն ընդգրկող միասնական մշակույթի անքակտելի օղակներից մեկը հանդիսանալը: Իբրև այդպիսին, այն արտացոլում է տվյալ մշակույթի զարգացման ընթացքը, կրած փոփոխությունները, դրսևորում վերջինիս՝ տարբեր դարաշրջանների պատկանող օղակների միջև եղած կապը և այլն: Այս առումով ևս պեղումների արդյունքները, դուրս գալով տեղական նեղ շրջանակներից, առավել ընդգրկուն իմաստ են ձեռք բերում ու կարևորվում, քանի որ ճանապարհների խաչմերուկում ընկած Շիրակավանի պեղումները այս կամ այն չափով լուսաբանում են և Հայաստանի ու հարևան երկրների միջև եղած տարաբնույթ կապերը, արտացոլում պատմական վայրիվերումները: Այդ հատկապես ցայտուն է արտացոլվում վաղ բրոնզի դարաշրջանի վերջին փուլում. ինչպես համաժամանակյա այլ հուշարձաններում, այստեղ ևս ի հայտ են գալիս ուժեղ ըտքինի հետքեր, ինչը հավանական է դարձնում այդ երևույթը հարձակմամբ բացատրելու տեսակետը:

Շիրակավանում միջին բրոնզի դարաշրջանի վաղ փուլին պատկանող նյութեր չեն հայտնաբերված, ինչը և ենթադրել է տալիս, թե կյանքը մի զգալի ժամանակահատվածում ընդհատված է եղել: Այն վերսկսվել է մ.թ.ա. XVIIIդ. վերջ - XVIIդ.: ժամանակաշրջանի մշակույթը բնորոշվում է մի կողմից տեւլական ավանդույթները շարունակող, բայց մյուս կողմից էլ նոր՝ գունազարդ խեցեղենի առկայությամբ, որն ազդարարում է նոր էթնոսի ներկայությունը տարածաշրջանում: Տեղականին զուգահեռ զարգացող գունազարդ խեցեղենը ուշ բրոնզի դարաշրջանում անհետանում է. ժամանակաշրջանի մշակույթը բնորոշվում է տեղական ավանդույթների զարգացման հիման վրա ձևավորված տարատեսակ նյութերի առկայությամբ: Միաժամանակ դամբարանների քննությունը փաստում է հզոր ռազմական ուժի, այն ղեկավարող և այլ հարցեր վճռող ցեղային առաջնորդների առկայությունը. վերջիններիս պատկանող դամբարանները առանձնանում են գույքի հարստությամբ: Այս երևույթը արտահայտվում է և մ.թ.ա. IX-VIIIդդ. դամբարանների քննության

ընթացքում, ինչը խոսում է զարգացած տնտեսության, ռազմական հզոր ուժի և սոցիալական բավական բարդ հարաբերություններ ունեցող հասարակության մասին: Այս պատկերը հարստացվում է բնակավայրերի պեղումնիրից ստացված, դեռևս նախնական բնույթ կրող տվյալներով: Այս տեսակետից առանձին կարևորություն են ստանում II պեղավայրի՝ «սրբարան» կամ «տաճարական տեղամաս» անվանված համալիրի պեղումների արդյունքները, որոնք կրկին մատնանշում են տաճարական արհեստանոցների առկայությունը, հավատալիքնիրի համակարգում ունեցած մետաղագործի դերը, որը, հանդիսանալով հին արևելյան քաղաքակրթության ընորոշ գծերից մեկը, փաստված է և այլ հուշարձանների պեղումներից ստացված արդյունքներով: Իրավիճակը փոխվում է մ.թ.ա. VIII-VI դդ.: Պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ այդ ժամանակաշրջանում Շիրակավանի բնակչությունը, լքելով դարավանդի լանջերին տեղադրված բնակատեղիները, տեղափոխվում է բլրի գագաթը, ամրացնում այն եզոր պարիսպնիրով, իսկ լքված բնակատեղիների տարածքը փոխակերպվում է դամբարանադաշտի: Այս երևույթը լավագույնս արտացոլվում է ամրոցի և ժամանակաշրջանին պատկանող դամբարանների պեղումներով: Վերջիններս իջեցված լինելով I պեղավայրի կացարանների մեջ, ինչպես և գտնվելով մերձակա տարածքում, գույքի եարստությամբ տարբերվում են նախորդ դարաշրջանների դամբարաններից: Այս երևույթի պատճառը ուրարտական արշավանքներն էին: Ճիշտ է, Շիրակավանում ուրարտական տարրն ամրապնդելուն ուղղված, ցայտուն ընդգծված երևույթ չի դիտվում. առկա նյութերը մատնանշում են սոսկ ուրարտական մշակույթի որոշակի ազդեցությունը: Այդուհանդերձ նյութի համեստությունը պերճախոս կերպով փաստում է բնակչության վիճակի ծանրացումը, որը արտացոլում են և ուրարտական արձանագրությունները:

# ДРЕВНИЙ ШИРАКАВАН
## (Результаты раскопок 1977 – 1981 гг.)

ТОРОСЯН Р.М., ХНКИКЯН О.С., ПЕТРОСЯН Л.А.

В 1977 - 1981гг. в связи со строительством Ахурянского водохранилища были проведены раскопки на территории древнего поселения Ширакавана и двух его некрополей (рис.1).

Памятник находится на левом берегу р.Ахурян близ села Ширакаван (Анийский р-он) на высоте 1460м от уровня моря и расположен на западном склоне и верхней части невысокой возвышенности, где и находится первый некрополь: второй некрополь расположен у подножия западного склона. Памятник, площадь которого превышает 10га, многослойный: мощность культурных слоев в разных частях поселения колеблется от 0.3 до 3м. Жизнь на территории поселения с неодинаковой интенсивностью продолжалась с III тыс. по VIв. до н.э.

В культурных напластованиях III тыс. до н.э. были обнаружены прямоугольные в плане жилые помещения с подсобными сооружениями и хозяйственными ямами. Помещения построены на искусственных террасах по западному склону возвышенности (рис.2). В центре помещения N1 был выявлен глинобитный круглый культовый очаг, рядом с которым находился хозяйственный очаг в виде небольшого углубления, обложенного камнями. Глинобитный очаг, состоящий из двух соединенных друг с другом подковообразных частей, был выявлен и во второй комнате. Во всех трех раскопанных помещениях четко наблюдались следы пожара. Богатые археологические материалы- большие карасы, горшки, кубки, миски, зернотерки, терочники и пр., выявленные из трех помещений, синхронны и датируются третьей четвертью III тыс. до н.э. (табл. I-V).

Результаты раскопок показывают, что жизнь в поселении после пожара затухла: она возобновилась в XVIII-XVIIвв. до н.э. Этим временем датируются материалы, выявленные из комнаты IV, где четко наблюдались два слоя отделенные друг от друга глинобитным полом. Материалы этих слоев синхронны (табл. VI-VIII).

Более молодой облик имеют материалы из смешанных слоев помещений III и V (табл. IX), а материалы из трех грунтовых погребений второго некрополя относятся к концу среднебронзовой эпохи (табл. X).

Следующий этап в поселении представлен малочисленными материалами (табл. XI) из потревоженных слоев позднебронзовой эпохи (XIV-XII вв. до н.э.). Однако богатые материалы, обнаруженные из погребальных комплексов позднебронзовой эпохи (они занимали северную половину первого некрополя), красноречиво свидетельствуют о бурной жизни. Эти грунтовые, перекрытые плитами погребения, представляли собой небольшие курганы (диаметр в основном 4 — 6 м при высоте 0.4 - 0.6м), состоящие из земляной насыпи. Во всех погребениях были совершены индивидуальные захоронения со скорченными конечностями. Богатые материалы, среди которых имеются и уникальные находки, а также расположение погребений (богатые захоронения занимают северо-западную часть некрополя) указывают на далеко зашедшую имущественную и социальную дифференциацию (табл. XII-XLVIII).

Период раннего железа представлен строительными слоями, выявленными в первом раскопе,что расположен у подножия западного склона (табл.XLIX), а также культовым комплексом второго раскопа (т.н. «святилище») в верхней части склона (рис. 6). В культовом комплексе находились подсобные сооружения и мастерские. Здесь особый интерес представляет большая туфовая глыба, на лицевой, западной, части которой имеется змееобразное изображение (рис. 10). Разнообразные материалы,выявленные из помещений второго раскопа (табл. L-LV), датируются концом II- нач. I тыс. до н.э. К этому времени относятся и материалы из нижнего слоя стратиграфического шурфа: два верхних слоя относятся к началу 1 тыс. до н.э. (табл. LVI). Концом II- нач.I тыс. до н.э. датируются и материалы, выявленные из каменных ящиков второго некрополя (табл. LVII-LXII).

Более молодой облик имеют материалы из каменных ящиков, расположенных в южной части первого некрополя. В этих погребениях, заполненных камнями и землей и имеющих низкие курганы из каменной насыпи, были совершены как индивидуальные, так и коллективные захоронения. Материалы из этих погребений датируются IX-VIII вв. до н.э. (табл. LXIII-LXXVI).

К последней фазе относится поселение-крепость (третий раскоп), расположенная на юго-западной части вершины возвышенности (рис.12). Разнообразные материалы, обнаруженные из помещений, имеют черты, свидетельствующие о сильном влиянии урартской культуры (табл. LXXVII-LXXIX), и датируются VIII-VI вв. до н.э. Этим временем датируются и материалы, выявленные из семи погребений в форме каменных ящиков, построенных из небольших камней и перекритых плитами, которые расположены в север-

ной части второго некрополя. Некоторые из этих каменных ящиков оказались сооруженными в помещениях первого раскопа. Инвентарь этих погребений скромен (табл. LXXX-LXXXIV). Причина тому не только социальная дифференциация, но и походы урартских царей.

# ANCIENT SHIRAKA VAN
## (Results of the 1977 — 1981 Excavations)

## SUMMARY

The results of the excavations at ancient Shirakavan showed that human activities began here since the $3^{rd}$ miliennium BC and continued until the $7^{th}$- $6^{th}$ centuries BC.

The excavated ample material sheds iignt on various sides oИЬe life of ancient inhabitants oИЬe region, testifying convincingly that a complex culture existed all over the Armenian Highiand and that Shirakavan was an iinportant element of this system. That is why the settlement reflects the links and changes in cultural development that passed tiirough ages. So that the excavations exceed the local frames, since Shirakavan was an iinportant crossroad connectng some regions of the Highland with the neighbouring countries. Artifacts of Shirakavan give a clue to different contacts between Transcaucasus, Asia Minor and Northern Mesopotamia, which are especially well reflected in the latest phase of the Early Bronze Age. Like other contemporary sites, Shirakavan was destroyed by fire probably in consequence of military attacks.

There is a lack of evidence on the Middle Age Shirakavan; it seemed that life had interrupted here and revived only in the late $18^{th}$ - early $17^{th}$ centuries BC after a long gap of time. Local traditions have been continued at Shirakavan, as well as some innovations like a new painted pottery had emerged here — probably as a result of a new ethnic infiltration. In the beginning of the Late Bronze Age, the painted pottery that has been developing simultaneously with the local ceramics suddenly vanished. A diversity of new-type artifacts based on local traditions spread here and there. At the *same* time, as an analysis oГthe burial contents show, powerful tribal leaders and well-organized military troops *came* to be the crucial factors oГthe era. Burials of leaders are rich, especially in the $9^{th}$ - $8^{th}$ centuries BC: early $1^{st}$ millennium seemed to be a time oИечеI opeд social and economic relations and high military potency.

Excavations of some settiements confirm this supposition. In particular, such findings as the «sanctuary» or «sacred compartment» (Zone 2) are especially important

in this perspective, stating the existence of sanctuary workshops and the great religious role of blacksmiths, which was characteristic to the civilizations of the Ancient East. Conditions changed since the $8^{th}$ - $7^{th}$ centuries BC. The population abandoned the bouses on the terraces and moved to the top oИЪe mound reinforcing it with massive fortifications, while former terraces were used as a new cemetery. This is well testified both by excavations oИЪe fortress and the burial field. Necropolis was laid on the soil of the terrace-houses, and the inventory of the burials is quite different from the forner artifacts indicating that the reason of these transformations was an Urartian aggression. Although Urartian elements were slightly expressed in Shirakavan, the complex of the artifacts indicates a definite Urartian infiuence. Life conditions became hard, which could be supported also by Urartian cuniiform inscriptions.

## Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ԱՆ   Ց Ա Ն Կ


1. *Բդոյան Վ.,Հ.,* Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972
2. *Դևեջյան Ս.Հ.,* Տաշիր-Ձորագետի րրոնզեդարյան մի քանի ոսկե և արծաթե իրեր, ԼՀԳ, 1966, № 12
3. *Եսայան Ս.Ա.,* Հայաստանի պատմական թանգւարանի րրոնզե ապարանջանները, ՏՀԳ № 2, 1964
4. *Եսայան Ս.Ա., Հովհաննիսյան Հ.Ա.,* Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգւարանի հնագիտական իրերի, Եըևան, 1969
5. *Եսայան Ս.Ա.,* Երևանի պատմության թանգարանի հնագիտական իրեըի կատալոգ, հատ. II, Երևան,1967
6. *Եսայան Ս.Ա.,* Այգևանի գունազարդ խեցեղենի շերտագրությունը, Հայկ. ՍՍՀ-ում դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան,1979
7. *Ենգիբարյան Ն.,* Ոսկրե նետասլաքները Հայաստանում մ.թ.ա. III-I հազ. ԼՀԳ, 1982, № 4
8. *Թորոսյան Ռ.Մ.,* Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը (մ.թ.ա. IV հազ.), Երևան, 1976
9. *Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ..* Շիրակավանի նախնադարյան բնակատեղին և դամբարանադաշտը, ՊԲՀ, 1980, Հայկ. ՍՍՀ-ում դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, 1979
10. *Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ..* Շիրակավանի դամբարանները, ՊԲՀ, 1980, № 2
11. *Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ..* Հին Շիրակավան (հնագույն բնակավայրն ու դամբարանադաշտը) հնագիտական աշխատանքները

Հայաստանի նորակառույցներում (1986-87թթ. պեղումների արդյունքները), Երևան, 1992
12. *Թումանյան Բ., Մնացականյան Հ.Հ.,* Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965
13. *Լալայան Ե.,* Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931
14. *Խանզադյան Է.Վ.,* Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա.III հազ., Երևան,1967
15. *Խանզադյան Է.Վ.,* Գառնի IV,Երևան, 1969
16. *Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.Հ., Պարսամյան Է.Ս.,* Մեծամոր (Ուսումնասիրություն 1965-1966թթ. պեղումների տվյալներով), Երևան, 1973
17. *Խանզադյան Է.Վ.,* Էլառ-Դարանի, Երևան, 1979
18. *Խանզադյան Է.Վ.,* Լճաշենի № 6 կուրգանը, ՏՀԳ, 1960, № 2
19. *Խնկիկյան Օ.Ս.,* Արեեստները բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1977
20. *Խնկիկյան Օ.Ս.,* Դամբարանադաշտեր Սիսիանի շրջանում, ԼՀԳ, 1984, № 9
21. *Խնկիկյան Օ.Ս.,* Սակրերի տեղայնացման փորձ, ՊԲՀ, 1981, № 1
22. *Խնկիկյան Օ.Ս.,* Հին Հայաստանի դաշույնատեսակների տեղայնացման փորձ (ուշ բրոնզ-վաղ երկաթ), ԲԵՀ, 1991, № 2
23. *Խնկիկյան Օ.Ս.,* Պեղումներն Անգեղակոթում, ԼՀԳ,1978,N3
24. *Խնկիկյան Օ.Ս.,* Պեղումներ Գորիսի շրջանում, Պ Բ Հ, 1985, № 3
25. *Խնկիկյան Օ.Ս.,* Դամբարանների պեղումներ Կույրիշև գյուղում, ԼՀԳ, 1987, № 5
26. *Խնկիկյան Օ.Ս.,* Շիրակավանի մ.թ.ա. VII-VII դդ. դամբարանները, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 1999
27. *Ղաֆադարյան Կ.Գ.,* Դամբարանների պեղումներ Կիրովականում, ՏՀԳ, 1941, № 3-4
28. *Ղաֆադարյան Կ.Կ.,* Դիտողություններ ուրարտական ամրաշինության վերաբերյալ, ՊԲՀ, 1972, № 2
29. *Ղաֆադարյան Կ.Կ.,* Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 1984
30. *Միքայելյան Գ.Հ.,* Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968
31. *Մնացականյան Հ.Հ.,* Հնագիտական պեղումներ Սևանա լճի ցամաքած տերիտորիայում, ՏՀԳ, 1952, № 8
32. *Մնացականյան Հ.Հ.,* Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները, ՊԲՀ, № 2, 1965
33. *Պետրոսյան Լ.Ս.,* Հետախուզական պեղումներ Քեթիում (1970թ), ՊԲՀ, 1973, № 4
34. *Պետրոսյան Լ.Ս.,* Քեթիի կիկլոպյան ամրոցը, ԼՀԳ., 1983, № 2
35. *Պետրոսյան Լ.Ս.,* Շիրակավանի ամրոցը, Գիտական աշխատություններ

II, Շիրակի Հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 1999

36. *Պետրոսյան* Լ.Ա., Հին Շիրակավան, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական առաջին գիտաժողով, զեկ. թեզիսներ, Գյումրի, 1994

37. *Սարդարյան Ս.Հ.,* Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967

38. *Փիլիպոսյան Ա.Ս.,* Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Երևան, 1998

39. *Քսենոփոն,* Անաբասիս (թարգմ. և ծանոթ. Ս.Կրկյաշարյանի), Երևան, 1970

40. ***Абдушелишвили М.А.,*** К датировке нескольких погребений могильника Певреби, ТКАЭ, т.IV, Тбилиси, 1980

41. ***Абрамишвили Р.М.,*** К вопросу о датировке памятников эпохи поздней бронзы и широкого освоения железа,обнаруженных на Самтаврском могильнике, ВГМГ, т. XIX-А и XXI-В,Тбилиси,1957

42. ***Абрамишвили Р., Султанишвили И., Кахиани К., Окропиридзе Н.,*** Тбилиси I, Археологические памятники,Тбилиси,1978

43. ***Абрамишвили Р.М.,*** К вопросу об освоении железа на территории Восточной Грузии, ВГМГ,т., XXII-В,Тбилиси,1961

44. ***Абибулаев О.А.,*** Остатки жилищ во II слое поселения Кюль-тепе около Нахичевани, МИА, 125, М-Л., 1965

45. ***Абибулаев О.А.,*** Энеолит и бронза на территории Нахичеванской АССР, Баку,1982

46. ***Арешян Г.Е.,*** Материалы из раскопок Кармирбердского /Тазакендского/ могильника в музее Грузии, ВЕУ, 1970, № 1

47. ***Арешян Г.Е.,*** Оганнесян В., Мурадян Ф., Аветисян П., Петросян Л., Конец среднего бронзогого века в междуречье Аракса и Кури, ИФЖ, № 1, 1990

48. ***Асланов Г., Ваидов Р., Ионе Г.,*** Древний Мингечаур, Баку, 1959

49. ***Алиев В.Г.,*** Археологические раскопки в урочище Баба-Дервиш, СА, 1971, № 2

50. ***Бадалян Р.С.,*** Раннебронзовая культура Ширака (автореферат канд. дис.), Ереван,1986

51. ***Бадалян Р.С.,*** Раннебронзовое поселение близ с.Карнут, ИФЖ, 1984, № 1

52. ***Биягов Л.Н.,*** Новые находки из মеградзора, ВОН., 1984, № 1

53. ***Гогадзе Э.М.,*** Периодизация и генезис курганной культуры Триалети, Тбилиси, 1972

54. ***Гобеджишвили Г.,*** Бедени, Культура курганных погребений, Тбилиси, 1980

55. ***Гуммель Я.И.***, Археологическая разведка на Килик-даге, Изв. Аз. ФАН СССР, 1938, № 2

*56. Дедабришвили Ш.Ш.*, Курганы Алазанской долины, ТКАЭ, т. I, Тбилиси, 1979
*57. Деведжян С.Г.*, Лори-Берд I, Ереван, 1981
*58. Даниелян О.А.*,К хронологии некоторых курганов Азербайджана, МКА, т. VII, Баку, 1973
*59. Есаян С.А.*, Древняя культура племен Северо-Восточной Армении, Ереван,1976
*60. Есаян С.А.*,Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966
*61. Есаян С.А.*,Скульптура древней Армении, Ереван, 1980
*62. Есаян С.А.*, Стратиграфия расписной керамики Айгеванского поселении (по материалам раскопок 1971-80гг.), ИФЖ, 1981, № 2
*63. Есаян С.А.*, Биайнская гробница в Ереване, Археологические памятники Армении, 15, Урартские памятники вып. II, Ереван, 1991
*64. Есаян С.А.,Калантарян А.А.*, Ошакан I (Основные результаты раскопок 1971-1983гг), Ереван, 1988
*65. Есаян С.А., Мнацаканян А.О.*, О статуэтках из Лчашена, ИФЖ, 1975, № 2
*66. Есаян С.А.*, Ереван (Археологический очерк), Ереван, 1969
*67. Жоржикашвили Л., Гогадзе Э.*, Памятники Триалети эпохи ранней и средней бронзы, Тбилиси, 1974
*68. Иессен А.А.*, Поселение Уч-тепе (1958-1960гг.), МИА, 1965, № 125
*69. Ивановский А.А.*, По Закавказью, МАК, вып. VI, Москва, 1911
*70. Исмаилов Г.С.*, Археологическое исследование древнего поселения Баба-Дервиш, Баку, 1977
*71. Караханян Г., Мирзоян В.*, Древнее захоронение с поливной керамикой, ВОН, 1976, № 11
*72. Казиев С.М.*, О древних погребальных обрядах на территории Кабалы, МКА, т. VI, Баку, 1965
*73. Кушнарева К.Х.*, Тазакендский могильник в Армении, СА № 1, 1960
*74. Кушнарева К.Х.*, Древнейшие памятники Двина, Ереван, 1977
*75. Кушнарева К.Х.*, Новые данные о поселении Узерлик-тепе около Агдама, МИА, 1965, № 125
*76. Кушнарева К.Х.*, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, XXVII, 1957
*77. Куфтин Б.А.*, Археологические раскопки в Триалети,Тбилиси, 1941
*78. Куфтин Б.А.*, Археологические раскопки 1947г в Цалкинском районе, Тбилиси, 1948
*79. Куфтин Б.А.*, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Араксский энеолит, ВГМГ, XIII-В, Тбилиси, 1944
*80. Кесаманлы Г.*, Медные котлы эпохи поздней бронзы из Азербайджана, КСИА, вып., 108, 1968

81. ***Коридзе Д.Л.,*** К истории Колхской культуры,Тбилиси, 1965
82. ***Лев Д.М.,*** К истории горного дела, Л., 1934
83. ***Мартиросян А.А.,*** Раскопки в Головино, Ереван, 1954
84. ***Мартиросян А.А.,*** Город Тейшебаини, Ереван, 1961
85. ***Мартиросян А.А.***, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964
86. ***Мартиросян А.А.***, Аргиштихинили, Ереван, 1977
87. ***Мамаишвили Н.Ф.,*** Производство и потребление фаянса в средневековой Грузии (автореферат канд.дис.), Тбилиси, 1970
88. ***Меликишвили Г.А.,*** Урартские клинообразные надписи, Москва, 1960
89. ***Мнацаканян А.О.,*** Археологические находки в селении Басаргечар, КСИИМК, 1955, вып. 60
90. ***Мнацаканян А.О.,*** Раскопки могильников у сел. Атарбекян (в Арм.ССР), КСИИМК, 1955, вып. 60
91. ***Менабде М., Давлианидзе Ц.,*** Могильники Триалети, Каталог I, Тбилиси, 1968
92. ***Мнацаканян А.О., Тирацян Г.А.,*** Новые данные о материальной культуре древней Армении, ВОН, 1961, № 8
93. ***Мнацаканян А.О.,*** Раскопки курганов на побережье оз.Севан в 1956г., СА, 1957, № 2
94. ***Мнацаканян А.О.,*** Находки предметов бронзового века в с.Толорс /в Зангезуре/ Арм. ССР, КСИИМК, вып. LIV, 1954
95. ***Мочанов Ю.А.,*** К вопросу об употреблении и технике изготовления каменных орудий в конце эпохи бронзы (по материалам Уч-тепе), МИА, 1965, № 125
96. ***Мунчаев Р.М.,*** Кавказ на заре бронзового века, М., 1975
97. ***Отчеты*** археологической комисии за 1899 г., М., 1902
98. ***Петросян Л.А.,*** Раскопки памятников Кети и Воскеаска (III-1 тыс. до н.э.), Ереван, 1989
99. ***Пиотровский Б.Б.,*** Археология Закавказья, Л., 1949
100. ***Пиотровский Б.Б.,*** Кармир-блур I, Ереван, 1950
101. ***Пиотровский Б.Б.,*** Кармир-блур III, Ереван, 1955
102. ***Пицхелаури К.Н.***, Древняя культура племён населявших территорию Иоро-Алазанского бассейна, Тбилиси, 1965
103. ***Пицхелаури К.Н.***, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979
104. ***Пицхелаури К.Н.,*** Основные проблемы истории племен Восточной Грузии в XV- VII вв.до н.э., Тбилиси, 1973
105. ***Пицхелаури К.Н.,*** Локализация археологических культур на территории Восточной Грузии, ТКАЭ, т. I, Тбилиси, 1969

*106. Пицхелаури К.Н., Дедабришвили Ш.Ш.,* Археологические исследования на новостройках ГССР, Тбилиси, 1976
*107. Техов Б.В.,* Центральный Кавказ в XVI-Хвв. до н.э., М., 1977
*108. Тушишвили Н.Н.,* Маднисчальский могильник, Тбилиси, 1972
*109. Торосян Р., Хикикяи О., Петросян Л.,* Работы в Ширакаване, АО за 1978г., Москва, 1979
*110. Симонян А.,* Могильник эпохи бронзы Верин Навер, КСИА, № 176, 1983
*111. Уварова Т.И.,* Могильники Северного Кавказа, МАК, вып. VIII, М., 1900
*112. Хачатрян Т.С.,* Комплекс бронзов
*113. Чайлд Г.,* У истоков европейской цивилизации, М.,1952
*114. Чубинишвили Т.Н.,* Древнейшие археологические памятники Мцхета, Тбилиси, 1957
*115. Badalyan R., Kohl P., Stronach D., Tomkyan A.,* Prediminary report on the 1993 excavations at Horom, Iran, XXXII, 1994
*116. Barton-Brown T.,* Third millehium diffusion, vol. I, Oxsford,1970
*117. Burney C.,* Eastern Anatolia in the Chalcolitic and Early Bronze Age, AS, VIII, Ankara,1958
*118. Burney C. and Lawson T.R.J.,* Measured plans of Urartian fortresses, AS, X, 1960
*119. Deshayes J.* Les outlls de bronze de l' Indus au Danube (IV-e au II-e mill.), Paris, 1960.
*120. Diamont S.* and *J.Rutter,* Horned objects in Anatolla and niar East and posslble connexions with the Minoun ,Horns of Consecrationsъ, AS, XIX, 1969.
*121. Kroll S.,* Keramlk Urartisher festungen in Iran Archaeloglsdhen Mittellungen ans Iran, Band 2, Berlln, 1976
*122. Mellaart J.,* Pottery from the lower levels of Beyce-Sultan AS., VIII, 1958
*123. Morgan J.,* La prehistoire Orientale, tome III, Paris, 1927
*124. Nagel W., Strommenger E.,* Kalakent, Fruheisenzeltllche Grabfunde aus dem
Transkaukaslschen Gehiet von Klrovabad, Berlln, 1985
*125. Schaeffer Cl.,* Stratigraphie comparee et chronologle de l' Asle Occldentale (III-II mll.), London,1948
*126. Vanden Berghe,* Archeologle le l' Iran ancien, Leiden, 1959.

## Հ Ա Պ Ա Վ ՈՒ Մ Ն Ե Ր

ԱՀՊՊԹ (ТГИМА) - Աշխատությունններ Հայաստանի պետական պատմական թանգարանի

ԲԵՀ (ВЕУ) - Բանրեր Երևանի համալսարանի

ԼՀԳ (ВОН) - Լրարեր հասարակական գիտությունների

ՀԱՊԹ - Հայաստանի ազգագրության պետական թանգարան

ՊԲՀ (ИФЖ) - Պատմա-բանասիրական հանդես

ՏՀԳ -

**ВГМГ**- Вестник Государственного музея Грузии

**КСИИМК** - Краткие сообщения Института истории материальной культуры

**КСИА** - Краткие сообщения Института археологии

**МАК**- Материалы по археологии Кавказа

**МИА**- Материалы и исследования по археологии СССР

**МКА** - Материальная культура Азербайджана

**ОАК** - Отчеты археологической комисии

**ТКАЭ** - Труды Кахетской археологической экспедиции

**СА** - Советская археогия

**AS** - Anatolian Studies

## Ն Կ Ա Ր Ն Ե Ր Ի    Ց ՈՒ Ց Ա Կ

Նկ.1 - Հուշարձանի և պեղավայրերի տեղադրությունը
Նկ.2 - Առաջին պեղավայրի կառույցների հատակագիծը
Նկ.3 - № 44 դամբարանից հայտնաբերված աղեղի վերականգնված տեսքը
Նկ.4 - Աղեղի մի հատվածը
Նկ.5 - № 48 դամբարանից հայտնաբերված աղեղի վերականգնված տեսքը
Նկ.6 - Երկրորդ պեղավայրում պեղված շինությունների հատակագիծը
Նկ.7 - Հարթակի կտրվածք (II պեղավայր)
Նկ.8 - Երկրորդ պեղավայրի II կացարանում բացված հորի կտրվածքը
Նկ.9 - Երկրորդ պեղավայրի IV շինության մանրամասներ
Նկ.10 - Օծապատկեր հիշեցնող փորվածքով ժայռը և մի հատված երկրորդ պեղավայրից
Նկ.11 - Երկրորդ պեղավայրի ծախակողմյան հատվածի № 1-3 փոսորակներով ժայռերը
Նկ.12 - Երրորդ պեղավայրում բացված բնակարանների հատակագիծը
Նկ 13 - № 10 դամբարանից հայտնաբերված բրոնզե գոտի
Նկ.14 - Բրոնզե գոտու բեկոր № 11 դամբարանից
Նկ.15 -Առաջին դամբարանադաշտից պատահական հայտնաբերված երկաթե սուր
Նկ.16 -Առաջին դամբարանադաշտից պատահական հայտնաբերված գավազանի բրոնզյա գլխակալ

## Ա Ղ Յ ՈՒ Ս Ա Կ Ն Ե Ր Ի    Ց ՈՒ Ց Ա Կ

I - Առաջին պեղավայրի № 1 կացարանից գտնված խեցանոթներ
II - Առաջին պեղավայր: Օջախի հենակ-պատվանդաններ և խեցանոթներ №1 կացարանից
III - Առաջին պեղավայրի № 2 կացարանից հայտնաբերված նյութերը
IV - Առաջին պեղավայր: Վաղ բրոնզեդարյան նյութեր հայտնաբերված № 3 կացարանից

V - Առաջին պեղավայր: №1 (նկ.2, 4-10, 12, 13), № 2 (նկ.1, 3) և № 3 (նկ.11) կացարաններից հայտնաբերված տարաաեսակ գործիքներ

VI - Առաջին պեղավայր: № 4 սենյակից հայտնաբերված միջին բրոնզեդարյան գործիքներ

VII -Առաջին պեղավայր: № 4 սենյակի ստորին շերտից հայտնաբերված միջին բրոնզեդարյան նյութերը

VIII - Առաջին պեղավայր: № 4 սենյակի վերին շերտից հայտնաբերված միջին բրոնզեդարյան նյութերը

IX - Առաջին պեղավայր: Միջին բրոնզեդարյան նյութեր III սենյակի խառը շերտից (նկ. 2, 3, 7, 9, 17) և V կառույցից (նկ. 1, 4-6, 8, 10-13,14-16, 18, 19) գտնված նյութերը

X - II դամբարանադաշտ: № 40 (նկ.12-15), № 41 (նկ. 1) և № 42 (նկ. 2-11) դամբարաններից հայտնաբեբված նյութիրր

XI - Առաջին պեղավայր: № 8 կառույցից (նկ.1-4, 7) և № 4 սենյակի վերին շերտում պահպանված շինությունից (նկ. 5, 6, 8-10) հայտնաբերված ուշ բրոնզեդարյան նյութերը

XII - Առտջին դամբարանադաշտ: № 2 (նկ.1-3) և № 14 (նկ.4-10) դամբարաններից հայտնաբերված նյութերը

XIII - Առաջին դամբարանադաշա: № 15 (նկ.1-11) և № 16 (նկ.12-16) դամբարաններից գտնված նյութերը

XIV - Առաջին դամբարանադաշտ: № 17 (նկ.1-4), № 18 (նկ. 5-10) և № 22 ավերված դամբարանից (նկ.11-14) հայտնաբերված նյութերը

XV - Առաջին դամբարանադաշտ: № 19 (նկ.1-2) և № 20 (նկ.3-4) դամբարանների նյութերը

XVI- Առաջին դամբարանադաշտ: № 21 դամբարանի նյութերը

XVII - Առաջին դամբաբանադաշտ: № 23 դամբարանի նյութերը

XVIII- Առաջին դամբարանադաշտ: № 24 դամբարանի նյութերը

XIX - Առաջին դամբարանադաշտ: № 26 (նկ.1-2), № 28 (նկ.3-11), № 37 (նկ.13) և № 38 (նկ.12) դամբտրաններից հայտնաբերված նյութերը

XX - Առաջին դամբաբանադաշտ: № 30 դամբաբանի նյութերը

XXI - Առաջին դամբարանտդտշտ: № 43 դտմբարանի նյութերը

XXII - Առաջին դամբարանադաշտ: № 44 դտմբարանից հայտնաբերված նյութերը

XXIII - Առաջին դամբարանադաշտ: № 47 դամբարանի նյութերը

XXIV - Առաջին դամբարանադաշտ: № 48 դամբաբանի նյութերը

XXV - Առաջին դամբաբանադաշտ: № 49 դամբաբանի նյութերը

XXVI- Առաջին դամբաբտնտդաշտ: № 51 դամբաբանի նյութերը

XXVII - Առաջին դամբարանադաշտ: № 52 դամբաբանի նյութերը

XXVIII - Առաջին դամբաբանադաշտ: № 53 (նկ.1-9) և № 54 (նկ.10-18) դամբարաններից հայտնաբերված նյութերը

XXIX - Առաջին դամբարանադաշտ: № 55 դամբարանի նյութերը

XXX - Առաջին դամբարանադաշտ: № 56 (նկ.1-3) և № 58 (նկ.4-7) դամբարաննե-րից հայտնաբերված նյութերը

XXXI - Առաջին դամբարանադաշտ: № 61 (նկ.1-2), № 62 (նկ.3-5), № 63 (նկ. 6) և № 70 (նկ.7-10) դամբարաններից գտնված նյութեր

XXXII - Առաջին դամբարանադաշտ: № 65 (նկ.1-4), № 66 (նկ.5), № 67 (նկ. 6-9), № 69 (նկ.10-11) և № 71 (նկ.12-22) դամբարաններից հայտնաբերված նյութե-րը

XXXIIա - Առաջին դամբարանադաշտ: № 76 դամբարանի նյութերը

XXXIII - Առաջին դամբարանադաշտ: № 77 դամբարանի նյութերը

XXXIV - Առաջին դամբարանադաշտ: № 78 դամբարանի նյութերը

XXXV - Առաջին դամբարանադաշտ: № 80 (նկ.1-6), № 81 (նկ.7-10) և № 83 (նկ.11-13) դամբարաններից հայտնաբերված նյութերը

XXXVI - Առաջին դամբարանադաշտ: № 82 դամբարանի նյութերը

XXXVII - Առաջին դամբարանադաշտ: № 84 (նկ.1-7) և № 85 (նկ.8-9) դամբա-րաններից գտնված նյութերը

XXXVIII - Առաջին դամբարանադաշտ: № 88 (նկ.1-7) և № 89 (նկ.8-12), № 93 (նկ.15-17) և N96 (նկ.13-14) դամբարանների նյութերը

XXXIX - Առաջին դամբարանադաշտ: № 94 (նկ.1-8ա) և № 95 (նկ.9-15) դամբա-րաններից հայտնաբերված նյութերը

XL - Առաջին դամբարանադաշտ: № 104 (նկ.1-7) և № 113 (նկ.8-13) դամբարան-ներից հայտնաբերված նյութերը

XLI - Առաջին դամբարանադաշտ: № 106 դամբարանի նյութերը

XLII - Առաջին դամբարանադաշտ: № 108 (նկ.16), № 116 (նկ.1-15, 17-18) դամ-բարաններից հայտնաբերված նյութերն ու դամբարանադաշտի տարածքից պատահականորեն գտնված դաշույն (նկ.19)

XLIII - Առաջին դամբարանադաշտ: № 3 (նկ.1-3), № 4 (նկ.4-9) և № 6 (նկ.10-19) դամբարաններից հայտնաբերված նյութերը

XLIV - Առաջին դամբարանադաշտ: № 79 դամբարանի նյութերը

XLV- Առաջին դամբարանադաշտ: № 90 (նկ.6), № 91 (նկ.7), № 92 (նկ.1-5), № 99 (նկ.8-12) և № 109 (նկ.13-16) դամբարաններից հայտնաբերված նյութերը

XLVI - Առաջին դամբարանադաշտ: № 102 (նկ.1-7), № 103 (նկ.8-15) և № 110 (նկ.16-25) դամբարաններից հայտնաբերված նյութերը

XLVII - Առաջին դամբարանադաշտ: № 111 (նկ.15-19) և № 112 (նկ.1-14) դամբա-րանների նյութերը

XLVIII - Առաջին դամբարանադաշտ: № 114 դամբարանի նյութերը

XLIX - Առաջին պեղավայր: VI (նկ.1-24), VIII (նկ.25-37) շինություններից հայտ-նաբերված նյութերը

L - Երրորդ պեղավայր:

LI - Երրորդ պեղավայր:

LII - Երկրորդ պեղավայր:
LIII - Երկրորդ պեղավայր:
LIV - Երկրորդ պեղավայր:
LV - Երկրորդ պեղավայր:
LVI - Շերտագրական փոսորակից հայտնաբերված նյութերը
LVII - Երկրորդ դամբարանադաշտ: № 72 (նկ.1-3) և № 98 (նկ.4-9) դամբարաննե-
րից գտնված նյութերը
LVIII - Առաջին դամբարանադաշտ: № 107 դամբարանի նյութերը
LIX- Երկրորդ դամբարանադաշտ: № 101 (նկ. 9-15) և № 118 (նկ. 16-18) ու
I դամբարանադաշտի № 115 (նկ. 1-8) դամբարաններից հայտնաբերված
նյութերը
LX- Երկրորդ դամբարանադաշտ: № 117 (նկ. 1-8) և № 119 (նկ. 9-12) դամբա-
րաններից ու առաջին դամբարանադաշտի տտրածքից պատահականորեն
հայտնաբերված նյութերը (նկ. 13-16)
LXI-LXII - Երկրորդ դամբարանադաշտ: № 121 դամբարանից հայտնաբերված
նյութերը
LXIII- Առաջին դամբարանադաշտ: № 5 դամբարանի նյութերը
LXIV- Առաջին դամբարանադաշտ: № 9 դամբարանի նյութերը
LXV- Առաջին դամբարանադաշտ: № 10 դամբարանի նյութերը
LXVI- Առաջին դամբարանադաշտ: № 11 դամբարանի նյութերը
LXVII- Առաջին դամբարանադաշտ: № 12 դամբարանի նյութերը
LXVIII-Առաջին դամբարանադաշտ: № 13 դամբարանի նյութերը
LXIX- Առաջին դամբարանադաշտ: № 27 դամբարանի նյութիրը
LXX- Առաջին դամբարանադաշտ: № 29 դամբարանի նյութերը
LXXI- Առաջին դամբարանադաշտ: № 31 կիսավեր դամբարանի նյութերը
LXXII- Առաջին դամբարանադաշտ: № 32 ավերված դամբարանի նյութերը
LXXIII- Առաջին դամբարանադաշտ: № 50 դամբարանի նյութերը
LXXIV- Առաջին դամբարանադաշտ: № 53ա ավերված (նկ. 1-14) և № 86
(նկ.
15-21) դամբարաններից հայտնաբերված նյութերը
LXXV- Առաջին դամբարանադաշտ: № 100 կիսավեր դամբարանի նյութերը
LXXVI- Առաջին դամբարանադաշտ: № 105 դամբարանի նյութերը
LXXVII- Ամրոցի բնակարաններից հայտնաբերված նյութիրը
LXXVIII- Ամրոց: Բնակելի կառույցներից հայտնաբերված իլեցանոթներ
LXXIX - Ամրոց: Բնակարաններից հայտնաբերված գործիքները
LXXX - Երկրորդ դամբարանադաշտ: № 67 (նկ. 1-10) և № 36 (նկ. 11-13)
դամբարաններից հայտնաբերված նյութիրը
LXXXI - Առաջին պեղավայր: № 74 (նկ. 1-7) և № 75 (նկ. 8-15) դամբարաններից
հայտնաբերված նյութերը:
LXXXII - Առաջին պեղավայր: № 120 դամբարանի նյութերը

LXXXIII - Առաջին պեղավայր: № 122 դամբարանի նյութերը
LXXXIV - Առաջին պեղավայր: № 123 դամրարանի նյութերը

## СПИСОК РИСУНКОВ

1. Ситуационный план памятника и раскопов
2. План построек первого раскопа
3. Реставрированный вид лука из погребения № 44
4. Фрагмент лука
5. Реставрированный вид лука из погребения № 48
6. План раскопанных помещений II раскопа
7. Вертикальный разрез террассы (второй раскоп)
8. Разрез хозяйственной ямы из II помещения II раскопа
9. Детали IV постройки II раскопа
10. Глыба с змееобразным изображением и часть II раскопа
11. Ямки № 1-3 на скалах левосторонной части II раскопа
12. План жилых помещений III раскопа
13. Бронзовый пояс из погребения № 10
14. Фрагмент бронзового пояса из погребения № 11
15. Железный меч. Случайная находка.
16. Случайная находка

VI - I раскоп. Орудия труда эпохи средней бронзы из помещения №4
VII - I раскоп. Среднебронзовые материалы из нижнего слоя помещения №4
VIII- I раскоп. Среднебронзовые материалы из верхнего слоя помещения №4
IX - I раскоп. Среднебронзовые материалы из смешанных слоев помещений III (рис.2,3,7,9,17) и V (рис1,4-6,8,10-13,14-16,18-19).
X - Второй некрополь.Материалы из погребений №40 (рис.12-15), №41 (рис.1) и № 42 (рис.2-11)
XI- Первый раскоп. Материалы эпохи поздней бронзы,обнаруженные из разрушенной постройки верхнего слоя IV помещения (рис.5,6,8-10) и в слое простирающегося под полом помещения № 8 (рис.1-4,7)
XII- Первый некрополь. Материалы из погребений № 2 (рис.1-3) и № 14 (рис.4-10)
XIII - Первый некрополь. Материалы из погребений № 15 (рис.1-11) и № 16 (рис.12-16)
XIV - Первый некрополь. Материалы из погребений №17 (рис.1-4), № 18 (рис.5-10) и № 22 (рис.11-14)
XV - Первый некрополь. Материалы из погребений № 19 (рис.1-2) и

XVI - Первый некрополь. Материалы из погребения № 21
XVII - Первый некрополь. Материалы из погребения № 23
XVIII - Первый некрополь. Материалы из погребения № 24
XIX - Первый некрополь. Материалы из погребений № 26 (р.1-2), № 28 (р.3-11), № 37 (р.13) и № 38 (р.12)
XX - Первый некрополь. Материалы из погребения № 30
XXI- Первый некрополь. Материалы из погребения № 43
XXII - Первый некрополь. Материалы из погребения № 44
XXIII- Первый некрополь. Материалы из погребения № 47
XXIV - Первый некрополь. Материалы из погребения №48
XXV- Первый некрополь. Материалы из погребения №49
XXVI - Первый некрополь. Материалы из погребения № 51
XXVII - Первый некрополь. Материалы из погребения № 52
XXVIII- Первый некрополь. Материалы из погребений № 53 (р.1-9) и № 54 (р.10-18)
XXIX- Первый некрополь. Материалы из погребения № 55
XXX - Первый некрополь. Материалы из погребений № 56 (р.1-3) и № 58 (р.4-7)
XXXI- Первый некрополь. Материалы из погребений № 61 (р.1-2), № 62 (р.3-5), № 63 (р.6) и № 70 (р.7-10)
XXXII- Первый некрополь. Материалы из погребений № 65 (р.1-4), № 66 (р.5), № 67 (р.6-9), № 69 (р.10-11) и № 71 (р.12-22)
XXXIIа - Первый некрополь. Материалы из погребения № 76
XXXIII- Первый некрополь. Материалы из погребения № 77
XXXIV- Первый некрополь. Материалы из погребения № 78
XXXV - Первый некрополь. Материалы из погребений № 80 (р.1-6), № 81 (р.7-10) и № 83 (р.11-13)
XXXVI- Первый некрополь. Материалы из погребения № 82
XXXVII- Первый некрополь. Материалы из погребений № 84 (р.1-7) и № 85 (р.8-9)
XXXVIII- Первый некрополь. Материалы из погребений № 88 (р.1-7), № 89 (р.8-12), № 93 (р.15-17) и № 96 (р.13-14)
XXXIX- Первый некрополь. Материалы из погребений № 94 (р.1-8а) и № 95 (р.9-15)
XL- Первый некрополь. Материалы из погребений № 104 (р.1-7) и № 113 (р.8-13)
XLI - Первый некрополь. Материалы из погребения № 106
XLII- Первый некрополь. Материалы из погребений № 108 (р.16) и № 116 (р.1-15, 17-188): случайная находка (р.19)
XLIII- Первый некрополь. Материалы из погребений № (р.1-3), № 4 (р.4-9) и № 6 (р.10-19)

XLIV - Первый некрополь. Материалы из погребения № 79
XLV- Первый некрополь. Материалы из погребений № 90 (р.6), № 91 (р.7), № 92 (р.1-5), № 99 (р.8-12) и № 109 (р.13-16)
XLVI- Первый некрополь. Материалы из погребений № 102 (р.1-7), № 103 (р.8-15) и № 110 (р.16-25)
XLVII- Первый некрополь. Материалы из погребений № 111 (р.15-19) и № 112 (р.1-14)
XLVIII - Первый некрополь. Материалы из погребения № 114 (р.1-9)
XLIX - Первый раскоп. Материалы из VI (р.1-24) и VIII (р.25-37) помещений
L - LV - Материалы из помещений второго раскопа
LVI - Материалы из трех слоев стратиграфического шурфа
LVII - Второй некрополь. Материалы из погребений № 72 (р.1-3) и № 98 (р.4-9)
LVIII- Первый некрополь. Материалы из погребения № 107
LIX- Второй некрополь. Материалы из погребений № 101 (р.9-15) и № 118 (р.16-18) а также из погребения № 115 (р.1-8) первого некрополя
LX - Второй некрополь. Материалы из погребений № 117 (р.1-8) и № 119 (р.9-12) а также случайные находки из первого некрополя
LXI-LXII - Второй некрополь. Материалы из погребения № 121
LXIII- Первый некрополь. Материалы из погребения № 5
LXIV- Первый некрополь. Материалы из погребения № 9
LXV - Первый некрополь. Материалы из погребения № 10
LXVI - Первый некрополь. Материалы из погребения № 11
LXVII- Первый некрополь. Материалы из погребения № 12
LXVIII- Первый некрополь. Материалы из погребения № 13
LXIX- Первый некрополь. Материалы из погребения № 27
LXX - Первый некрополь. Материалы из погребения № 29
LXXI - Первый некрополь. Материалы из погребения № 31
LXXII- Первый некрополь. Материалы из погребения № 32
LXXIII - Первый некрополь. Материалы из погребения № 50
LXXIV- Первый некрополь. Материалы из погребений № 53а (р.1-14) и № 86 (р.15-21)
LXXV- Первый некрополь. Материалы из погребения № 100
LXXVI- Первый некрополь. Материалы из погребения № 105
LXXVII-LXXIX-Третий раскоп.Разнообразные материалы из помещений крепости
LXXX- Второй некрополь. Материалы из погребений № 67 (р.1-10) и № 36 (р.11-13)
LXXXI - Первый раскоп. Материалы из впускных погребений № 74 (р.1-7)

и № 75 (р.8-15)

LXXXII- Первый раскоп. Материалы из погребения № 120

LXXXIII- Первый раскоп. Материалы из погребения № 122

LXXXIV- Первый раскоп. Материалы из погребения № 123

# ՆԿԱՐՆԵՐ ԵՎ
# ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ


գ. ՇԻՐԱԿԱՎԱՆ
գ. ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
I - ԱՌԱՋԻՆ ՊԵՂԱՎԱՅՐ
II - ԵՐԿՐՈՐԴ ՊԵՂԱՎԱՅՐ
III - ԵՐՐՈՐԴ ՊԵՂԱՎԱՅՐ
C - ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՓՈՍՈՐԱԿ
I ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ
II ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ

Նկար 1



Նկար 2




Նկար 3-5



Նկար 6




Նկար 7



Նկար 8



Նկար 9



Նկար 10



Նկար 11



Նկար 12



18



14

Նկար 13-14




16




15

Նկար 15-16




Աղյուսակ I




Աղյուսակ II



Աղյուսակ III



1
2
3
4
0 4
0 3
0 4
0 4
5
6
7
0 4
0 4
0 4
8
9
10
0 4
0 5
0 6
11
12
13
0 4
0 4
14
15
0 3
0 4
0 2


Աղյուսակ IV




Աղյուսակ V



Աղյուսակ VI




Աղյուսակ VII



Աղյուսակ VIII


1
2
3
0 8
0 8
0 8
4
0 3
5
0 4
6
0 4
7
0 5
8
0 3
9
0 4
10
0 1
11
0 1
12
0 1
13
0 1
14
0 2
15
0 2
16
0 2
17
18
0 1
19
0 1
0 2

Աղյուսակ IX




Աղյուսակ X




Աղյուսակ XI




Աղյուսակ XII




Աղյուսակ XIII



Աղյուսակ XIV




Աղյուսակ XV




Աղյուսակ XVI




Աղյուսակ XVII




Աղյուսակ XVIII




Աղյուսակ XIX




Աղյուսակ XX




Աղյուսակ XXI



Աղյուսակ XXII




Աղյուսակ XXIII



Աղյուսակ XXIV




Աղյուսակ XXV




Աղյուսակ XXVI




Աղյուսակ XXVII



Աղյուսակ XXVIII




Աղյուսակ XXIX




Աղյուսակ XXX




Աղյուսակ XXXI




Աղյուսակ XXXII




Աղյուսակ XXXIIա



Աղյուսակ XXXIII




Աղյուսակ XXXIV




Աղյուսակ XXXV




Աղյուսակ XXXVI




Աղյուսակ XXXVII




Աղյուսակ XXXVIII



Աղյուսակ XXXIX



Աղյուսակ XL




Աղյուսակ XLI




Աղյուսակ XLII



Աղյուսակ XLIII




Աղյուսակ XLIV



Աղյուսակ XLV



Աղյուսակ XLVI




Աղյուսակ XLVII




Աղյուսակ XLVIII



Աղյուսակ XLIX




Աղյուսակ L




Աղյուսակ LI




Աղյուսակ LII




Աղյուսակ LIII



Աղյուսակ LIV




Աղյուսակ LV



Աղյուսակ LVI




Աղյուսակ LVII




Աղյուսակ LVIII



Աղյուսակ LIX



Աղյուսակ LX




Աղյուսակ LXI




Աղյուսակ LXII




Աղյուսակ LXIII




Աղյուսակ LXIV




Աղյուսակ LXV



Աղյուսակ LXVI



Աղյուսակ LXVII




Աղյուսակ LXVIII



Աղյուսակ LXIX



Աղյուսակ LXX




Աղյուսակ LXXI



Աղյուսակ LXXII




Աղյուսակ LXXIII




Աղյուսակ LXXIV




Աղյուսակ LXXV




Աղյուսակ LXXVI




Աղյուսակ LXXVII




Աղյուսակ LXXVIII




Աղյուսակ LXXIX




Աղյուսակ LXXX



Աղյուսակ LXXXI




Աղյուսակ LXXXII




Աղյուսակ LXXXIV




Աղյուսակ LXXXIII

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան........................................................................ 5

*ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.*
ՎԱՂ ԵՎ ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ........................ 8
1. *Վաղ բրոնզեդարյան կացարաններ*
(Ռաֆիկ Թորոսյան, Օնիկ Խնկիկյան)............................................... 8
2. *Միջին բրոնզեդարյան հուշարձաններ*
(Օնիկ Խնկիկյան)............................................................................ 15
3. *Միջին բրոնզեդարյան դամբարաններ*
(Լևոն Պետրոսյան)......................................................................... 25

*ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.*
ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ........................................29
1. *Ուշ բրոնզեդարյան դամբարաններ*
(Օնիկ Խնկիկյան)..............................................................................30
2. *Հայտնաբերված նյութերի և դամբարանների թվագրությունը*
(Օնիկ Խնկիկյան)............................................................................ 40

*ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.*
ՎԱՂ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ........................................ 66
1. *Բնակատեղի* ......................................................................66
Ա. *Առաջին պեղավայր* (Օնիկ Խնկիկյան)....................................66
Բ. *Երկրորդ պեղավայր* (Ռաֆիկ Թորոսյան, Լևոն Պետրոսյան)...... 69
Գ. *Ներտագրական փոսորակ* (Ռաֆիկ Թորոսյան)....................... 84
2. *Մ.թ.ա. XI-IXդդ. դամբարանները.*(Օնիկ Խնկիկյան)....................90
Ա. *Մ.թ.ա.IX-VIIIդդ. դամբարանները.*(Օնիկ Խնկիկյան)............. 97
Բ. *Նյութական մշակույթն ու թվագրությունը*(Օնիկ Խնկիկյան)102

*ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ*
ԵՐԿԱԹԻ ԼԱՅՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ....116
1. *Ամրոց* (Ռաֆիկ Թորոսյան, Լևոն Պետրոսյան)..................................116
2. *Դամբարաններ*.......................................................................... 128

Ամփոփում ........................................................................................ 137
*Древний Шираван*............................................................................................... 139
Ancient Shirakavan ............................................................................................... 142
*Օգտագործված գրականություն*........................................................... 144
*Հապավումներ* ............................................................................................ 150
*Նկարների և աղյուսակների ցուցակ*...........................................................151
*Список рисунков и таблиц* .........................................................................155
*Նկարներ և աղյուսակներ*............................................................................ 159

Ռ.Մ. Թորոսյան, Օ.Ս. Խնկիկյան, Լ.Ա. Պետրոսյան

# ՀԻՆ ՇԻՐԱԿԱՎԱՆ
## (1977-1981 թ.թ. պեղումների արդյունքները)

Հրատ. խմբագիր՝ *Ա. Հովակիմյան*
Համակարգչային շարվածքը՝ *Ս. Սարգսյանի*
Նկարների մուտքագրումը և ձևավորումը՝ *Մ. Հակոբյանի*

Ստորագրված է տպագրության 09.09. 2002 թ.:
Հրատ. պատվեր 094. Թուղթ օֆսեթ ն. 1: Չափսը 70 108$^{1}/_{16}$
16,25 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 500: Գինը պայմանագրային:
ՀՀ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0196294